

ՄԱՐԳԱՐՏԱՇԱՐՔ ՄԸ

ՆԵՐԿԱՅ ԶԵՄԱՐՏՈՒԹԵԱՆ

ԳՈՂԱՐԱՏՈՒՓԷՆ


*«Ինչ որ առաջուրն է գրուեցաւ,  
Մեր ստրկելուն համար գրուեցաւ,  
Որպէս զի համբերութիւնով և Գիրքերուն  
Մխիթարութիւնովը յոյս ունենանք»*  
Հ—ւ. Ժ. 4:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏԵՏՐԱԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ  
ՄԱՍՆԱՃԻՂ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ  
ԳԵՐՄԱՆ Նամակասուն, Արկղ 109, Կալաթա  
և. ՊՈԼԻՍ









ՎԷՄԻ ՎՐԱՅ ՇԻՆՈՒԱԾ ՏՈՒՆԸ (Մ—ԴԲ. Է. 24, 25)



## Յ Ա Ն Կ

Թիւ	Էջ
1. Գիրքերը ֆննեցե՛ք . . . . .	9
2. Մարգարեութեանց կարեւորութիւնը . . .	13
3. Քրիստոսի երկրորդ գալուստը . . . . .	22
4. Աշխարհի մարգարեական պատմութիւնը . .	27
5. Դանիէլ Է. . . . .	35
6. Դանիէլ Ը. . . . .	41
7. Մարգարեական քուականներուն նագրութիւնը . . . . .	46
8. Սրբարանը . . . . .	53
9. Դասասանը . . . . .	61
10. Երկնային սրբարանին մաքրութիւնը, Դասասանին ժամը . . . . .	66
11. Մեր Տերոջը կարեւոր մարգարեութիւնը . .	73
12. Սուրբերուն ժողանգութիւնը . . . . .	79
13. Ասուծոյ հրեշտակները . . . . .	85
14. Սասանան եւ իր գործը . . . . .	94
15. Անմահութիւն՝ լո՛կ Քրիստոսով . . . . .	100
16. Քրիստոս՝ յարութիւնը եւ կեանքը . . . . .	105
17. Յարութիւնը . . . . .	111

18.	Ամբարիւսներուն վախճանը . . . . .	117
19.	Ժամանակաւոր հազարամեան . . . . .	123
20.	Գարձի գալը՝ ըստ Ս. Գրոց . . . . .	130
21.	Ասուծոյ օրէնք . . . . .	136
22.	Երկու օրէնքներ . . . . .	144
23.	Ասուծոյ հանգստեան օրը . . . . .	150
24.	Շաբթուան առաջին օրը . . . . .	156
25.	Հնագանդուրեան կարեւորութիւնք . . . . .	161

---

# Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

«Գիրքերը ֆենեցե՛ք»

ՅԻՍՈՒՍ

Մեր նւարաբան շնորհաբանիկ մարգարիս «Քայլեր դէպ ի Քրիստոս» գրքին Հայ հասարակութեան կողմէ գտած սիրալիր ընդունելութենէն խրատուած, ահա ներկայ հատորն ալ կը հրատարակենք, կարեւոր պէտքի մը գոհացում տուած ըլլալու զիտակցութեամբ և գոհունակութեամբ:

«Մարգարտաշարք»ը կը պարունակէ՝ ներկայ ճշմարտութեան կենսական կարեւորութիւն ունեցող ինչ ինչ նիւթերու վրայ ընթերցումներ, յորինուած՝ հարց-պատասխանի ձևով: Ընթերցողը պիտի տեսնէ որ այս էջերուն մէջ տիրական տեղը Ս. Գրքին է տրուած. ու առանց պատճառի չէ այդ:

Սոյն գործին հրատարակիչը համոզուած են որ Ս. Գրքի հրատարակային ուսուցմանց մեծագոյն մասը կը պարունակէ խիստ շատ տեսութիւն (spéc.) և իմաստութիւն (phil.), և խիստ քիչ Աստուծոյ խօսք, — մարդկային խօսքէն շատ քան, և շատ քիչ՝ Ս. Գրքին ուղղակի վկայութենէն... Համար մը կրնայ՝ իբր բնաբան՝ հիմքը կազմել պերճախօս և փայլուն քարոզի մը, որ, թէ և հասնելի կը թուի մարդկային մտքին, բայց վերջապէս կրնայ առանց պատասխանի ձգել անոր «Ս. Գիրքը ի՞նչ կ'ըսէ» կարեւոր հարցման:

Սոյն գիրքը կազմող ընթերցմանց ծրագիրն է եղած՝ թողլու որ ներշնչեալ Մատեանը ի՞նքը վկայէ ներկայացուած այլազան նիւթերուն նկատմամբ: Ա՛յս է միակ ապահով և ստոյգ կանոնը՝ Ս. Գիրքը հասկնալու, — ձգել որ այդ խօսքը ինքզինքը մեկնէ: Ուշիմ ընթերցողը պիտի տեսնէ որ, հարցումները՝ բնութեան առարկայ եղող նիւթերէն թելադրուած են, և յետոյ մէջ բերուած՝ Ս. Գրքի հատուած մը կամ հատուածներ, իբր ուղղակի պատասխան հարցումներուն: Իսկ պատասխանները տրուած են՝ մեծ մասամբ՝ առանց ծանօթութեան կամ մեկնութեան, այն համոզմամբ թէ՛ երբ Աստուած կը խօսի, հարկ չէ շատ խօսիլ, — թէ այս պարագային մէջ՝ պարտ է լսել, խոկալ և հնազանդիլ յարգանք և երկիրազածութեամբ:

Անգլիերէն, Ֆրանսերէն, Գերմաներէն, Հոլանտերէն, Տանիմարերէն, Շուէտերէն և այլ լեզուներով այսօրինակ հրատարակութիւնք հարիւր հազարներով լոյս տեսած և լափուած են յիշեալ լեզուներուն պատկանող հասարակութեանց կողմէ:

Քաջայոյս ենք որ սոյն երկը պիտի ոչ նուազ գնահատուի, օրհնեալ միջոց մ'ըլլալով շատերու մէջ արժարժելու հրայրքը լրջօրէն բննելու գիրքերու Գիրքը, որ զիրենք իմաստուն պիտի ընէ փրկութեան՝ և պատրաստէ Փրկչին վերահաս, փառաւոր գալստեան: — Ա՛յս է ահա մարդամարտը զրդապատճառը՝ որ մեզ միեց սոյն գործը հրատարակելու. «Քանզի Քրիստոսի սէրը մեզ կը ստիպէ»

ՀՐԱՏԱՐԱԿԻՉՔ



«Ասոնք Թեսաղոնիկէի մէջ եղողներէն աւելի ազնիւ մարդիկ էին, որոնք Աստուծոյ խօսքը կատարեալ յօժարութեամբ ընդունեցին, և ամէն օր Գիրքերը կը քննէին Թէ այս բաները այսպէ՞ս են: Ուստի անոնցմէ շատերը հաւատացին»: Գործք Ժէ. 11, 12:

«Բայց ամէնը հնազանդ չեղան Աւետարանին. բանզի Եսայի կ'ըսէ. Տէ՛ր, ո՞վ հաւատաց մեր տուած լուրի՛: Ուրեմն հաւատքը լսելէն է, ու լսելը Աստուծոյ խօսքէն»: Հռովմ. Ժ. 16, 17:

ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ, կեանք է համակ.  
Ո՛վ որ ապրիլ կը սիրէք,  
Չայն ձեր բարձի գիրքն ըրէք  
Կեանքերնուդ մէջ բովանդակ:

Ճիզմ հասակէս մինչ հիմակ՝  
Ան՛վ անուցի հոգիս հէք . . .  
Անոր նրման գիրք երբէ՛ք  
Չեմ զըտած ես երկնից տակ:

Երկինք տանող նեղ ճամբան  
Առաջնորդ-Գիրքն է ան բուն,  
Մ'անբամարտէք զայն բընաւ.

Այլ՝ ուղեցոյց ըրէք զայն ձեզ,  
'Ի ալեաց մէջէն փրկրաղէզ՝  
Անբոյժ՝ սահի թող ձեր նուս:

Յ. ՊԷՋԻՐՃԵԱՆ

Եթէ Սուրբ Գիրքը չըլլա՛ր,  
Շատոնց դարձեր էի հող . . .  
Տերև մ'է ան՝ կեանք տուող՝  
Կենաց Ծառէն միշտ դալար:

Շուրջս՝ անկուսներ՝ դանկիս յար  
Խոճէր տային՝ ո՛հ, մաշող . . .  
Եթէ Սուրբ Գիրքը չըլլա՛ր,  
Շատոնց դարձեր էի հող . . .

Մարդկային ո՛ր մէկ հանճար՝  
Պիտի կըրնար, ընթերցող,  
Սըրբելով մեր աչնց ցօղ,  
Յոյց տալ մեզ մեր անկման ճար՝  
Եթէ Սուրբ Գիրքը չըլլա՛ր . . . :

ՆՈՅՆ

## ԳԻՐՔԵՐԸ ՔՆՆԵՑԷ՛Ք

1. Քրիստոս երկրի վրայ եղած ատեն՝ ի՞նչ ընել յորդորեց իր ժողովուրդը :  
«Գիւրեմերը ԲՆՆԵՑԷ՛Ք. վասնզի դուք անոնցմով կը սեպէք յաւիտենական կեանքը ունենալ, և բուն անոնք են որ ինծի համար կը վկայեն» ՅովՏ. Ե. 39:
2. Այն ժամանակ Սուրբ Գիրքերը չէին կարդացուեր ժողովարաններուն մէջ ամէն Շաբաթ օր :  
«Բանդի Երուսաղէմ՝ բնակողները և անոնց իշխանները ոչ զԱնիկա ճանչցան, ոչ ալ մարգարէներուն ձայները՝ որոնք ամէն Շաբաթ օրերը կը կարդացուին, հազա զանոնք կատարեցին՝ զինք դատապարտելով :» Գործք ԺԳ. 27:
3. Թէպէտ Աստուծոյ Խօսքը կար ժողովարաններուն կամ ժողովուրդին տուններուն մէջ, սակայն ո՞ւր տեղ չէր բնակէր ան :  
«Եւ ոչ Անոր Խօսքը ձեր մէջ բնակած ունիք, քանզի Ան որ ինք զրկեց, դուք Անոր չէք հաւատար» ՅովՏ. Ե. 38:
4. Քրիստոս ի՞նչ կ'ըսէ իր մասին :  
«Ես եմ Ալֆա և Օմէղա, Առաջինը ու վերջինը, Սկիզբը և Վախճանը» Յայտն. ԻԲ. 13: Ըստ որում Քրիստոս «Սկիզբն» էր, կ'իմանանք որ Ան աշխատեցաւ սկիզբէն՝ իբր Խօսքը :
5. Որո՞ւ միջոցաւ ստեղծուեցաւ ամէն ինչ :  
«Սկիզբէն էր Խօսքը, ու Խօսքը Աստուծոյ քաջն էր, և Խօսքը Աստուած էր: Անիկա սկիզբէն Աստուծոյ քով էր: Ամէն բան Անով եղաւ, եւ առանց Անոր բան մը չեղաւ՝ ինչ որ եղաւ: ՅովՏ. Ա. 1-3:
6. Հետեւապէս՝ որո՞ւ միջոցաւ Հայրը ստեղծեց զաշխարհ :  
«Այս վերջին օրերս իր Որդիովը խօսեցաւ մեզի հետ, զոր ամէն բանի ժառանգ դրաւ, որով աշխարհին ալ ստեղծեց: Եբբ. Ա. 2:

7. Որո՞ւ խօսքն է որ կը բռնէ զաշխարհ :  
«Անհկա իր փառաց լոյսն է և իր էութեան բուն պատկերը. Իր զօրութեան խօսքովը ամէն բան կը բռնէ» : Եբր. Ա. 3.
8. Քրիստոս ե՞րբ ճանչցուած էր իբր մեր Փրկիչը :  
«Եւ անոր երկրպագութիւն պիտի ընեն երկրի վրայ բոլոր բնակողները, որոնց անունները առխարհի սկիզբէն ի վեր մտրուած գառնուկին կենաց գիւղքին մէջ գրուած չեն» : Յայտ. Ժ. Գ. 8 :
9. Նախ ո՞ւր ծանուցուած է Ան իբր մեր Փրկիչը :  
«Քուկին ու կնկանը միջև, և քու սերունդիդ ու անոր սերունդին միջև թշնամութիւն պիտի դնեմ. ան փոքր զուխոյ պիտի օղակալուի, և դուն անոր դարշապարը պիտի խայթես» : Ծն. Գ. 15 :
10. Աւետարանը որո՞ւ քարոզուած էր :  
«Եւ դիրքը նախատեսելով թէ Աստուած չեթանոսները հաւատաբով կ'արդարացնէ, առաջուց աւետարտութեամբ, թէ Քիզմով պիտի օրհնուին բոլոր ազգերը» : Գաղ. Գ. 8 :
11. Որո՞ւ Աստուծոյն միջոցաւ պիտի օրհնուէին բոլոր ազգերը :  
«Երկրի բոլոր ազգերը փոքր սերունդով պիտի օրհնուին. որովհետեւ իմ ձայնիս ականջ դրիր» : Ծն. ԻՖ. 48 : Ո՞վ է այս Աստուծոյն : «Արդ խոստմունքները Արքայհամբ ու անոր սերունդին եղան. չըսեք՝ եւ քու սերունդներուդ՝ որպէս թէ շատերու համար. հապա որպէս թէ մէկի համար. Եւ փոքր սերունդիդ, որ Քրիստոս է» : Գաղ. Գ. 16 :
12. Ասոր համաձայն՝ Արքայհամբ ծանօթութիւն ունեցած ըլլալու չէ՞ Քրիստոսի Աւետարանին նկատմամբ :  
«Ձեր հոյսը Արքայհամբ ցանկացաւ Իմ օրս տեսնել, ու տեսաւ և ուրախացաւ» : Յովհ. Ը. 56 :
13. Իսրայելացիք ալ լսեցին Աւետարանը :  
«Վասն զի մենք ալ անոնց պէս աւետարտուած ենք. բայց անոնց շահ մը չըրու այն խօսքը լսելը, քանզի հաւատաբով խոսուած չէր լսողներուն մէջ» : Եբր. Գ. 2 :
14. Ի՞նչ էր որ Մովսէսի լքել տուաւ Եգիպտոսի զանձները :



«Եւ աւելի մեծ հարսուրիւն սեպեց Քրիստոսի նախաձեռնը՝ քան թէ Եգիպտոսի գանձերը. վասնզի զիտելով կը ոպասէր վարձքի հատուցումին»։ Երբ. ԺԱ. 26:

15. Անապատին մէջ՝ Իսրայէլացւոց հոգեւոր ուսուցիչքն ու խմելիքն ի՞նչ էր :

«Եւ ամէնն ալ Մովսէսով մկրտուեցան ամպին ու ծովին մէջ, և ամէնն ալ նոյն հոգեւոր կերակուրը կերան, ու ամէնն ալ նոյն հոգեւոր խմելիքը խմեցին, վասնզի կը խմէին այն հոգեւոր վեմէն որ անոնց հետ կ'երբար, ու այն վեմը Քրիստոս էր»։ Ա. կորն. Ժ. 2-4:

16. Ուստի՞ Փիլիպպոս ի՞նչ բանէ կրնար Յիսուսը քարոզել :

«Իսկ Փիլիպպոս իր բերանը բացաւ, և զիրքին այս խօսքէն սկսելով՝ Յիսուսը բարոզեց անոր»։ Գործք Ը. 35:

- 17.\* Մարգարէներուն մէջ որո՞ւ հոգին կար :

«Որ այն փրկութեանը համար փնտռեցին ու քննեցին մարգարէները՝ որոնք մարգարեացան ձեզի ըլլալու շնորհքին համար, ու կը քննէին թէ ե՛րբ կամ ի՛նչպիսի տանն կ'իմացնէր իրենց մէջ եղած Քրիստոսի հոգին, որ առաջ կը վկայէր Քրիստոսի չարչարուիլը, ու անկէ ետեւ փառաւորուիլը»։ Ա. Պետ. Ա. 10. 44:

18. Ո՞վ է՝ հետեւապէս՝ գլխաւոր անկիւնաքարը Հին և Նոր կտակարաններուն :

Առաքեալներուն ու մարգարէներուն հիման վրայ շինուած, որուն անկիւնիցն գլուխը Յիսուս Քրիստոս է»։ Եփ. Բ. 20:

Շատ շիտակ ըսուած է թէ՛ «Նոր կտակարանը Հինին մէջ պահուած է, և Հին կտակարանը Նորին մէջ բացատրուած»։

19. Սուրբ Գիրքերուն ո՞րչափը գործածելու ենք մեր ուսուցման մէջ :

Քսյոյր զիրք Աստուծոյ շունչն է, եւ օգտակար է սորվեցնելու, յանգիմանելու, օրհակելու եւ արդարութեան խրատելու համար, որպէսզի Աստուծոյ մարգը կատարեալ ըլլայ՝ ամէն բարի գործերու պատրաստուած»։ Բ. Տիմ. Գ. 46. 47:

20. Սուրբ Գիրքերը՝ իբր ամբողջութիւն մը՝ ինչ ընե-  
լու կարող են ։  
«Նաև քու մանկութենէդ ի վեր Սուրբ գիրքերը գիտես, որոնք  
կրնան իմասունք ընել քեզ փրկուելու՝ Քրիստոս Յիսուսի  
վրայ եղած հաւատքովը» ։ Բ. Տիմ. Գ. 15 :
21. Մարդ ինչո՞վ պէտք է ապրի ։  
«Գրուած է թէ ոչ միայն հացով կ'ապրի մարդ, այլ այն  
ամէն խօսքով որ Աստուծոյ բերնէն կ'ելլէ» ։ Մատթ. Գ. 4 :
22. Ինչ բան ճշագ մ'է մեր ոտքերուն ։  
«Քու խօսքի իմ ոտքերու» ճշագ է, ու իմ շաւիղներու լոյս» ։  
Սաղմ. ճժԹ. 105 :
23. Բերիացիք ինչ բանով աւելի ազնիւ էին քան Թե-  
սաղոնիկէցիք ։  
«Ասոնք Թեսաղոնիկէի մէջ եղողներէն աւելի ազնիւ  
մարդիկ էին, որոնք Աստուծոյ հօսքը կատարեալ յօժա-  
րութեամբ ընդունեցին, եւ ամէն օր զիրենք կը բնէին  
թէ այս բաները այսպէ՞ս են ։ Գործք Ժէ. 11 :
24. Աստուած ո՞րչափ մեծցուցած է Իր Խօսքը ։  
«Երկրպագութիւն պիտի ընեմ դէպ ի Քու սուրբ տաճարդ, և  
Քու անուանդ գահութիւն պիտի մատուցանեմ Քու սղարմու-  
թեանդ և ճշմարտութեանդ համար, քանզի Քու բոլոր  
անունէդ վեր մեծցուցիր Քու խօսքը» ։ Սաղմ. ճԼԸ. 2 :
-

## ՄԱՐԳԱՐԷՈՒԹԵԱՆՑ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

1. Ի՞նչպէս կրնանք որոշել տարբերութիւնը ճշմարիտ Աստուծոյն և բոլոր չաստուածներուն միջև :  
«Ձեր դատը յառաջ բերէ՛ք, կ'ըսէ Տէրը. ձեր զօրաւոր փաստերը մօտեցուցէ՛ք կ'ըսէ Յակոբին թագաւորը: Թող մօտեցնեն, ու ի՛նչ ըլլալիքը մեզի պատմեն, առջիները մեզի յայտնեն քէ ի՛նչ էին, որպէսզի միտքերնիս պահենք ու անոնց վախճանը գիտնանք. կամ ապագայ բաները մեզի գիտցնեն: Սակէ ետք ի՛նչ ըլլալիքները պատմեցէ՛ք որ ձեր Աստուած ըլլալը գիտնանք. կամ աղէկ կամ դէշ բան մը ըրէ՛ք, որ զարմանանք ու մէկտեղ տեսնենք: Ահա՛ դուք ոչինչ էք, ու ձեր գործքն ալ ոչինչ է. ձեզ ընտրողը պղծութիւն է»: Ես. ԽԱ. 24 - 23:
2. Կարեւոր գործ մը ընելէն առաջ ի՞նչ կ'ընէ Տէրը :  
«Յիրաւի Տէր Եհովան բան մը չըներ, մինչև որ իր գաղտնիքը իր ծառաներուն՝ մարգարէներուն չյայտնէ:» Ամսլս. Գ. 7:
3. Հետեւապէս՝ ի հնումն ի՞նչ կը կոչուէին մարգարէները :  
«Առաջուց Խորայէլի մէջ մէկ մարդ մը երբոր Աստուծոյ հարցնելու կ'երթար, այսպէս կ'ըսէր. Եկո՛ւր տեսանողին երթանք. քանզի այսօր մարգարէ բռնողը առաջուց տեսանող կ'ըսուէր»: Ա. Թագ. Թ. 9:
4. Մարգարէները գլխաւորապէս ի՞նչ քննեցին :  
«Որ այն փրկութեանը համար փնտուեցին ու քննեցին մարմարգարէները՝ որոնք մարգարէացան ձեզի ըլլալու շնորհքին համար»: Ա. Պեա. Ա. 40:
5. Որո՞ւ հոգին կը լուսաւորէր մարգարէները այդ փրկութեան նկատմամբ :  
«Ու կը քննէին թէ ե՛րբ կամ ի՛նչպիսի տոնն կ'իմացնէր իրենց մէջ եղած Բրիտանոսի Հոգին, որ առաջ կը զկայէր Բրիտանոսի չարչարուելը, ու անկէ ետեւ փառաւորուելը»: Ա. Պեա. Ա. 41:



«Քանզի մարգարէութիւն մը երբէք մարդոց կամքին պէս չարքուեցաւ, այլ Աստուծոյ սուրբ մարդիկը Սուրբ Հոգիէն ցարժուած՝ խօսեցան»: Բ. Պետ. Ա. 24:

6. Աշակերտները ինչ տեսան այլակերպութեան լեռան վրայ:

Վասնզի ոչ բէ մենք վարպետութեամբ շինուած առասպելներու ետեւէ երթալով՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի զօրութիւնն ու գալուստը ձեզի ցուցուցինք, այլ անոր մեծափառութեանը ակնասեսն ըլլալով: Քանզի ինք Հօր Աստուծոյ փառք ու պատիւ առաւ, այն մեծ վայելչութեան փառքէն այնպիսի ձայն մը գալով, թէ Ատիկա է Իմ սիրելի Որդիս, որու հաւաներ եմ: Եւ երկինքէն եկած այս ձայնը մենք լսեցինք, որու հետ էինք սուրբ լեռանը վրայ»: Բ. Պետ. Ա. 46—48:

7. Այսու ամենայնիւ՝ ունինք աւելի արժանահաւատ վկայութիւն Քրիստոսի գալստեան նկատմամբ:

«Եւ մարգարէական խօսքն ալ ունինք՝ որ աւելի հաստատուն է. ու աղէկ կ'ընէք՝ եթէ անոր մտադրութիւն ընէք, որպէս թէ մեթ տեղը ըյս տուող ճրագի մը, մինչև որ ցորեկը լուսնայ ու արուսետիկը սիրտերնուդ մէջ ծագի»: Բ. Պետ. Ա. 49:

8. Տէրը կ'ընէ՞ ինչ որ կ'ըսէ ընել:

«Վասն զի Տէրոջը խօսքը շիտակ է, ու Անոր բոլոր գործերը նշանակութեամբ են » Սողմ ԼԳ. 4: «Քանզի տեսիլքը տակաւին որոշուած ժամանակի համար է, բայց վախճանին կ'արտօրայ, սուտ պիտի չելլէ:» Ամբ. Բ. 3:

9. Տէրը կարեւոր դէպքեր յայտնած է միշտ Իր ժողովուրդին:

«Եւ Տէրը ըսաւ, Աբրահամէն պահե՞մ ինչ որ ընելու եմ. որովհետեւ Աբրահամ անշուշտ մեծ ու զօրաւոր ազգ մը պիտի ըլլայ, ու երկրի բոլոր ազգերը անով պիտի օրհնուին: Քանզի գիտեմ զանիկա, որ իր որդւոցը, ու իրմէ ետքը իր տանը պիտի պատուիրէ, և անոնք արդարութիւնն ու իրաւունք ընելու համար՝ Տէրոջը ճամբան պիտի պահեն. որպէս զի Տէրը Աբրահամին վրայ բերէ ինչ որ խօսեցաւ: Եւ Տէրը ըսաւ, որովհետեւ Սողոմոնն ու Գոմորին ազաղակը շատցաւ, և անոնց մեղքը խիստ ծանրացաւ, հիմա պիտի իջնեմ՝ տեսնելու՝ թէ բոլորովին ինձի եկած ազաղակին պէս ըրին, և թէ որ չէ, գիտնամ:» Ծն. ԺԼ,

47—24: «Եւ Տէրը ըստ Արրահամին, Ասոյց զիսցիր որ Բու սերունդդ իրենցը չեղած երկրին մէջ պանդուխտ պիտի ըլլան, եւ ծառայութիւն պիտի ընեն. ու հոն չորս հարիւր տարի պիտի չարչարեն զանոնք. բայց այն ազգը՝ որուն պիտի ծառայեն, Ես պիտի դատեմ: Ու անկէ ետքը շատ ստացուածքով պիտի ելլեն: Եւ անոնք չորրորդ դարուն մէջ հոս պիտի դառնան. քանզի Ամօրհաց անօրէնութիւնը դեռ լեցուած չէ:» Ծն. Ժ. Ե. 43—46:

«Հաւաստով Նոյ պահգամ առնելով Աստուծմէ՝ դեռ չեբեցած բաներուն համար, վախճանով տապանը շինեց իր սունը փրկելու համար:» Երբ. Ժ. Ա. 7:

10. Որոշ մարգարէութիւնք կային՝ Քրիստոսի առաջին գալուստը ցոյց տուող:

(Ա) Ո՛ր ցեղէն ըլլալը.

«Իշխողութիւնը Յուդայէն պիտի չսպակսի, ո՛չ ալ անոր ոտքերուն մէջտեղէն օրէնագիրը. մինչև որ Սելավը գայ, ու ժողովուրդները անոր պիտի հնազանդին:» Ծն. ԽԺ. 10:

(Բ) Իր ծննդատեղին.

«Եւ դուն՝ ո՛վ Բեթղեհէմ Եփրատ, թէև Յուդայի հարաւորներուն մէջ ըլլալու պղտիկ ես, բայց Բեզմէ պիտի ելլէ ինձի ան որ Իսրայէլի վրայ իսխան պիտի ըլլայ, ու անոր ելքը ի հնուց՝ յաւիտենական օրերէն է:» Մկթ. Ե. 2:

(Գ) Որմէ՛ ծնած ըլլալը.

«Անոր համար Տէրը Ինքը նշան պիտի տայ ձեզի ահա՛ կոյսը պիտի յղանայ ու սրդի պիտի ծնանի, և անոր անունը Էմմանուէլ պիտի կոչէ:» Ես. Է. 14:

(Դ) Իր օժուելուն և մահուան ժամանակը.

«Յանցանքը վերջացնելու, ու մեղքը հատցնելու, և անօրէնութիւնը քաւելու, ու յաւիտենական արդարութիւնը բերելու, և տեսիլքը ու մարգարէութիւնը կնքելու, ու սրբոց Սուրբը օժեւելու համար՝ քու ժողովուրդիդ վրայ ու սուրբ քաղաքիդ վրայ եօթանասուն եօթնակ որոշուած է: Եւ գիտցի՛ր ու հասկցի՛ր, որ Երուսաղէմը նորէն շինելու հրամանը ելլելէն մինչև Օծեալ Իսխանը եօրը եօթնակ ու վարունգներկու եօթնակ կայ, և նորէն հրապարակը ու պարիսպը պիտի շինուին նեղութեան ժամանակներու մէջ: Եւ վարսուցներկու եօթնակէն վերջը Օծեալը պիտի կտուի,

բայց չէ թէ իրեն համար. ու գալու իշխանին ժողովուրդը քա-  
ղաքը ու քրքարանը պիտի աւրէ, և վերջը հեղեղով պիտի ըւ-  
լայ, ու մինչև պատերազմին վերջը աւերումներ սահմանուած  
են: Ու մէկ եօրնեակ մը շատերուն հետ ուխտ պիտի  
հաստատէ, և եօրնեակին մէջսեղը գոհը ու պատարա-  
զը պիտի դադրեցնէ:» Դան. Թ. 24—27:

(Ե) Իր չարչարանայր նկարագրութիւնը .

«Անիկա մարդոցմէ անարդուեցաւ, ու երեսէ ձգուեցաւ. վճաց  
եւր ու ցաւոց տեղեակ եղաւ. և անկէ երես դարձնելու  
մարդու պէս եղաւ, անարդուեցաւ ու զԱնիկա չյարդեցինք:  
Իրացրնէ Անիկա մեր ցաւերը վերցուց, ու մեր վիճ-  
տերը Իր վրան առաւ. ու մենք զԱնիկա վիրաւոր-  
ուած, Ստուծմէ զարնուած ու չարիքի հանդիպած  
սեպեցինք: Քայց Անիկա մեր մեղքերուն համար վի-  
րաւորուեցաւ, և մեր անօրէնութիւններուն համար  
ձեծուեցաւ. մի խաղաղութեան պատիժը Անոր վրայ  
եղաւ, և Անոր վերերովը մենք բժշկուեցանք: Ամենքս  
ոչխարներու պէս մոլորեցանք, ամէն մէկերնիս իր ճամբուն  
դարձաւ, և Տէրը մեր ամենուն անօրէնութիւնը Անոր վրայ  
դրաւ: Անիկա անիրաւութիւն կրեց ու չարչարուեցաւ,  
բայց Իր բերանը չբացաւ. մարթուելու տարուող ոչխարի պէս,  
ու իր խուզողներուն առջև մունճ կեցող մաքիի պէս՝ անանկ  
Իր բերանը չբացաւ: Նեղութեամբ և դատապարտու-  
թեամբ վերցաւ. ու Անոր աղգատոհմը ս<sup>ո</sup>վ կրնայ պատմել .  
քանզի Անիկա կենդանեաց երկրէն կտրուեցաւ: Անիկա իմ  
ժողովուրդիս յանցանքին համար զարնուեցաւ: Եւ ա-  
նոր գերեզմանը ամբարիշտներու հետ դրուեցաւ. բայց երբ մե-  
ռաւ, հարուստին հետ եղաւ. քանզի Անիկա անօրէնութիւն մը  
չգործեց. ու Անոր բերնին մէջ նենգութիւն մը չգտնուեցաւ:»  
Ես. ԾԳ. 3—9:

«Վասն զի շուները չորս կողմս առին, չարերուն ժողովքը զիս  
պատեցին, ձեռներս ու ոտներս ծակեցին: Իմ ամեն ոս-  
կորներս կրնամ համբել, անոնք կը նային, կը տեսնեն զիս  
Իմ հանդերձներս իրենց մէջ կը բաժնեն, ու պատմուածանիս  
վրայ վիճակ կը ձգեն:» Սաղմ. ԻԲ. 16—18:

11. Բրիստոսի նախակարապետն ալ ծանուցուած էր  
մարդարէութեանց մէջ:

«Անապատի մէջ կանչողին ձայնը. Տէրջը ճամբան պատրաս-



տեղէ՛ք, ու ամայութեան մէջ մեր Աստուծոյն համար շուե՛ղ շիտկեցէ՛ք:» Ես. 10. 3: «Ահա՛ Ես Իմ գետազնն կը դրկեմ՝, ու Իմ առջեւ ճամբայ պիտի պատրաստէ. և մեր փնտռած Տէրը՝ սոյսինքն ու խտին հրեշտակը՝ որուն կը հաւնէք, յանկարծ Իր տաճարը պիտի գայ. ահա՛ կուգայ՝ կ'ըսէ զօրաց Տէրը:» Մաղ. Գ. 4:

12. Յովհաննէս Ի՞նչ յիշեց՝ իբր վկայութիւն իր գործին մասին :

98516  
H 31586  
A


«Ու Յովհաննէսի վկայութիւնը այս է, երբ Հրեաները Երուսաղէմէ քահանաներ ու Աւետացիներ դրկեցին որպէս զի հարցնեն անոր թէ Ի՞նչն ո՞վ էս: Եւ անիկա խոստովանեցաւ ու չուրացաւ. խոստովանեցաւ թէ Ես Քրիստոսը չեմ: Ու հարցուցին անոր, հապա Ի՞նչ, Եղիա՞ն էս. և ըսաւ, Չեմ. Այն մարգարէ՛ն էս. պատասխան տուաւ թէ Ոչ: Այն ատեն ըսին անոր, Ի՞նչն ո՞վ էս. ըսէ՛ մեղի, որպէս զի պատասխան տանինք մեզ զրկողներուն. դուն Ի՞նչ կ'ըսես քեզի համար: Ըսաւ, Ես անոր ձայնն եմ, որ անապատին մէջ կը կանչէ. Շիտկեցէ՛ք Տէրոջը ճամբան, ինչպէս Եսայի մարգարէն ըսաւ: Եւ Յովհ. Ա. 19 - 23:

13. Քրիստոս Ի՞նչ յիշեց՝ Յովհաննէսի գործին մասին խօսելով :

«Վասն զի ասիկա է՝ որու համար գրուած է, Ահա ես իմ դեսպանս կը դրկեմ փու երեսիդ առջեւէն, որ փու քամբաղ պիտի պատրաստէ փու առջեւէդ . . . Քանզի բոլոր մարգարէները ու օրէնքը մինչև Յովհաննէս մարգարէութիւն ըրին. եւ երբ կ'ուզէր ընդունիլ, անիկա է Եղիան որ պիտի գար:» Մատ. Ժ.Ա. 10 - 14:

14. Քրիստոս Ի՞նչ յիշեց՝ իբր Նիմ Իր պաշտօնին :

«Եւ տունն Անոր Եսայի մարգարէին գիբքը. ու երբ գիբքը բացաւ, գտաւ այն տեղը՝ ուր գրուած էր, Տէրոջը հոգին իմ վրաս է. վասն զի զիս օծեց աղբասնեսուն աւեսարան ֆարգելու, զիս դրկեց՝ կոտրած սիւրս ունեցողները բժշկելու, զերինքուն ազատութիւն եւ կոյրերուն տեսութիւն ֆարգելու, հարսահարութիւն կրողները ազատ քոյ տալու, Տէրոջը ընդունելի տալին ֆարգելու, եւ գիրքը գոցելով՝ տուաւ սպասուորին ու նստաւ. և ժողովարանը եղողներուն ամենը աչքերնին անկած Անոր կը





նայէին Եւ սկսաւ անոնց ըսել, Այսօր այս գրուածը կասարուեցաւ ու ձեր ականջները լսեցիք.» Ղուկ. Գ. 17-21:

15. Յարուցեալ Մեսիան ինչպէս յանդիմանեց իր աշակերտները :

«Ան ալ ըսաւ անոնց, Ո՛վ ամիսներ ու քուլասիրտներ հաւատարմութիւն այն բոլոր բաներուն՝ զոր մարգարէները խօսեցան. չէ՞ որ Քրիստոսի պէտք էր այս շարժարանքները կրել. և իր փառքը մտնել, ու սկսելով Մովսէսէ և բոլոր մարգարէներէն, կը մեկնէր անոնց, ինչ որ իրեն համար բոլոր գիրքերուն մէջ գրուած էր.» Ղուկ. Ի՛. 25-27:

16. Մարգարէական խօսքին մեկնութիւնը ինչ ազդեցութիւն յառաջ բերաւ աշակերտներուն վրայ :

«Ու իրարու կ'ըսէին, Չէ՞ որ սիրտերնիս մեր ներսիցից կը բորբոքէր, երբ Թնփ մեզի հետ կը խօսէր նամբուն մէջ, եւ գիրքերը կը մեկնէր մեզի:» Հմբ. 32:

17. Քրիստոս ինչպէս համոզեց աշակերտները այն իրիկուն :

«Եւ ըսաւ անոնց, ասոնք են այն խօսքերը զոր ձեզի խօսեցայ երբ դեռ ձեզի հետ էի, թէ Պէտք է որ կասարուին այն ամէնը՝ որ Մովսէսի օրէնքին մէջ ու մարգարէներուն մէջ եւ սաղմոսներուն մէջ Թնփի համար գրուած են: Այն ատեն անոնց միտքը բացաւ որպէսզի գիրքերը հասկնան: Եւ ըսաւ անոնց թէ պէտք էր Քրիստոսի շարժարանիլ, ու երրորդ օրը մեռելներէն յարուցիւն առնել. և Անոր անունովը ապաշխարութիւն ու մեղքերու յոռութիւն քարոզուիլ բոլոր ազգերու մէջ՝ Երուսաղէմէ սկսած:» Հմբ. 44-47:

18. Պետրոս ինչի՞ վրայ հիմնեց իր պէնտէկոստեան քարոզը :

«Ասիկա այն է որ Յովէլ մարգարէին ձեռքով ըսուեցաւ... Եւ պիտի ըլլայ որ ամէն ով որ Տերոջը անունը կանչէ՝ պիտի փրկուուի... Վասնզի Քաւթի Անոր համար կ'ըսէի Ամէն ատեն Տէրը կը տեսնէի իմ առջեւ, քանզի իմ աջ կողմս, է որպէսզի չսասանիմ. անոր համար ուրախ եղաւ իմ սիրտս, ու իմ լեզուս ցնծաց. նաև իմ մարմինս ալ յոյսով պիտի հանգստանայ. վասն զի իմ անձս գերեզմանին մէջ պիտի չի թողու, ու Քու Սուր-

բիդ ալ ապականութիւն տեսնել պիտի չտաս կենաց ճամբաները ինծի ճանչցուցիր. Բու երեսիդ ուրախութիւնովը զիս պիտի լեցնես Մարդիկ եղբայրներ, արժան է համարձակ զրուցել ձեզի Գաւթի Նահապետին համար, թէ մեռաւ ու թաղուեցաւ, և անոր գերեզմանը մինչև այսօր մեր մէջ է: Արդ որովհետեւ անկա մարգարէ էր, և գիտէր թէ Աստուած հաստատ երդում ըրաւ իրեն, թէ իր երկամունքներուն պտուղէն մարմնի կողմանէ Քրիստոսը պիտի յարուցանէ որ իր աթոռը նստի, ինք կանխատեսութեամբ խօսեցաւ Քրիստոսի յարութեանը համար, թէ Անոր անձը գերեզմանը չթողուեցաւ, և Անոր մարմինը ապականութիւն չտեսաւ»: Գործք Բ. 16, 21, 25—31:

19. Պօղոսի պաշտօնին հիմը ի՞նչ էր ի Հռովմա:

«Ու օր մը որոշելով անոր, շաբերը անոր գացին իր բնակած տեղը, որոնց Աստուծոյ թագաւորութիւնը կը ծանուցանէր զկայսութիւնով, եւ կը համոզէր զանոնք Յիսուսի վրայօք Մովսէսի օրէնքէն ու մարգարէներէն՝ առտուընէ մինչև իրիկուն»: Գործք ԻԷ. 23:

20. Ինչո՞ւ ամէնքը չընդունեցան մարգարէական վկայութիւնը:

«Եւ իրարու հետ չմիաբանած՝ գացին, երբ Պօղոս խօսք մը ըսաւ, թէ Հոգին Սուրբ աղէկ խօսեցաւ մեր հոյրերուն, Եսայի մարգարէին ձեռքով, և ըսաւ, գնա՛ այս ժողովուրդին ու ըսէ՛, Լսելով պիտի լսէ՞՝ ու չիմանա՞, եւ տեսնելով պիտի տեսնէ՞ ու չտեսնէ՞. վասնզի այս ժողովուրդին սիրքը քանձրացաւ, եւ իրենց ականջներովը ծանր լսեցին, ու աչքերնին գոցեցին, որ չըլլայ թէ իրենց աչքերովը տեսնեն. ու ականջներովը լսեն, եւ սիրտերովը իմանան, ու դարձի գան, եւ ես բժօկեմ զանոնք»: Հմբք. 25—27:

21. Վերջին օրերը ապրող սուրբերը որո՞ւ խօսքերը պէտք է յիշեն:

«Որպէսզի սուրբ մարգարէներէն առաջուրնէ գուցուած խօսքերը, և մեր, այսինքն Տէրօջը ու Փրկչին առաքեալներուն, պատուէրները միտքերնիդ բերէք»: Բ. Պետ. Գ. 2:

22. Ո՞ր մարգարէութիւնը մասնաւորապէս կը յարմարի վերջին ժամանակին:

«Եւ անիկա ըսաւ, Գնա՛ ս'վ Դանիէլ, քանզի այս խօսքերը մինչեւ վերջին ժամանակը զոցուած ու կնկուած են:»  
Դան. ԺԲ. 9:

23. Քրիստոս Ինք ի՞նչպէս ուշադրութիւն հրաւիրեց Դանիէլի մարգարէութեան կարեւորութեանը վրայ :  
«Ուստի երբ տեսնէք աւերմունքին պղծութիւնը՝ որ Դանիէլ մարգարէին ձեռքով ըսուած է, թէ սուրբ տեղը կը կենայ. (ով որ կարգայ, թող հասկնայ.) Մատ. ԻՊ. 15:

24. Ի՞նչպէս միայն կարելի է մեղ հասկնալ մարգարէական խօսքը : — Եւանդուն քննութեամբ :  
«Եւ դուն՝ ս'վ Դանիէլ՝ այս խօսքերը գոցէ և գիրքը կնքէ՛ մինչեւ վերջին ժամանակը. Շատերը ուշադրութեամբ պիտի կարդան, ու գիտութիւնը պիտի շատնայ:» Դան. ԺԲ. 4:

25. Ի՞նչ նպատակի համար Յովհաննէս ստացաւ Յիսուս Քրիստոսի յայտնութիւնը :  
«Յիսուս Քրիստոսի յայտնութիւնը՝ զոր Աստուած Անոր տուաւ Իր ծառաներուն ցուցնելու ինչ որ շուտով պէտք է ըլլալ. և իր հրեշտակին ձեռքով զրկելով՝ իր Յովհաննէս ծառային իմացուցի» Յայտ. Ա. 4:

26. Հոն ի՞նչ ներկայացուած է իբր օրհնեալ յոյս :  
Ա.հա՛ ամպերով կուգայ, ու ամէն աչք պիտի տեսնէ զԱնիկա, և անոնք որ զԱնիկա խոցեցին» «Ա.հա՛ Սա շուտով կուգամ, երանի՛ անոր՝ որ կը պահէ այս գիրքին մարգարէութեան խօսքերը:» «Ա.հա՛ Սա շուտով կուգամ, և Իմ վարձքս ինձի հետ է՝ ամէն մէկուն իր գործին համեմատ հասուցանելու:» «Այս բաներուն վկայութիւն տուողը կ'ըսէ, Այո՛, շուտով կուգամ Սա և ամէն, եկո՛ւր, Տէր Յիսուս:» Յայտ. Ա. 7: Եր. 7. 12, 20:

27. Ո՞ւր կը գտնենք աւելի մանրամասն մէկ նկարագրութիւնը Տէրոջը գալստեան :  
«Եւ տեսոյ, և հաս՛ ճերմակ ամպ մը, ու այն ամպին վրայ մէկը նստեր էր Որդւոյ մարդոյ նման. և իր գլուխը սփիէ պսակ մը՝ ու իր ձեռքը սուր մանգաղ մը ունէր: Եւ ասճարէն ուրիշ հրեշտակ մը կ'ելէր, քր ամպին վրայ նստողին մեծ ձայնով կ'աղաղակէր ու կ'ըսէր, Երկնցո՛ւր Քու մանգաղդ ու հնձէ՛:



վասն զի երկրի հունձքը հասունցած է: Եւ Ան որ ամպին վրայ կը նստէր, Իր մանգաղը երկրի վրայ երկնցուց, ու երկիրը հընձուեցաւ:» Յայտ. ԺԴ. 14—16:

28. Հրեշտակներ կամ պատգամաւորներ պիտի ծանուցանե՞ն Քրիստոսի երկրորդ գալուստը, ինչպէս Յովհաննէս Մկրտիչ քարոզեց Անոր առաջին գալուստը: «Եւ ուրիշ հրեշտակ մը տեսայ, որ կը թռչէր երկինքի մէջ, և ունէր յաւիտենական աւետիսը՝ քարոզելու բոլոր ազգերուն ու ցեղերուն և լեզուներուն ու ժողովուրդներուն որ երկրի վրայ կը բնակին. և մեծ ձայնով կ'ըսէր, Աստուծո՛ւ վախճէ՛ք ու փա՛ռք տուէ՛ք Անոր, վասն զի Անոր դատաստանին ժամը եկաւ. ու երկրպագութիւն ըրէ՛ք Անոր՝ որ ստեղծեց երկինքն ու երկիրը և ծովն ու ջուրերուն աղբիւրները: Եւ անոր ետեւէն ուրիշ հրեշտակ մը եկաւ ու ըսաւ, Ինկաւ, ինկաւ մեծ Բարիլոն, վասն զի բոլոր ազգերը արբեցուց իր կատաղի պռանկութեանը գինիէն: Եւ անոնց ետեւէն երրորդ հրեշտակ մըն ալ եկաւ, ու մեծ ձայնով մը ըսաւ, Ով որ գազանին ու անոր պատկերին երկրպագութիւն կ'ընէ, և դրոշմը իր ճակատին վրայ կամ իր ձեռքին վրայ կ'ընդունի, անիկա Աստուծոյ սրամտութեան գինիէն պիտի խմէ, որ անխառն լեցուած է Անոր բարկութեանը դաւաթին մէջ, և կրակով ու ծծումբով պիտի տանջուի սուրբ հրեշտակներուն առջև ու Գառնուկին առջև: Եւ անոնց տանջանքին ծուխը կ'ելլէ յաւիտեանս յաւիտենից. և ցորեկ ու գիշեր հանգստութիւն չունին անոնք՝ որ գազանին ու անոր պատկերին երկրպագութիւն կ'ընեն, և անոր անուանը դրոշմը կ'ընդունին: Հոս է սուրբերուն համբերութիւնը, որոնք Աստուծոյ պատուիրանները ու Յիսուսի հաւատքը կը պահեն:» Յայտ. ԺԴ. 6—12:

29. Ո՞վ ուշադրութիւն պիտի ընէ պատգամին: «Շատերը պիտի մտքբուին, ու պիտի ճերմկնան, ու պիտի փորձուին, բայց ամբարիշտները ամբարշտութիւն պիտի ընեն, ու ընաւ մէկ ամբարիշտ մը պիտի չհասկնայ, այլ իմաստուններ պիտի հասկնան:» Գան. ԺԲ. 10:

30. Որ՞նչ վրայ օրհնութիւն արտասանուած է: «Երանի՛ անոր որ կը կարգայ, ու անոնց որ կը լսեն այս մարգարէութեան խօսքերը, և կը պահեն ինչ որ անոր մէջ գրուած է. վասն զի ժամանակը մտա է:» Յայտ. Ա. 3:



ՔՐԻՍՏՈՍԻ ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՈՒՍՏԸ

1. Ի՞նչ եղած է միշտ հաւատացեալներուն երջանիկ յոյսը :  
«Ու սպասե՛ք այն երջանիկ յոյսին, եւ մեծ Աստուծոյ ու մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսի փառքին յայտնուելուն:» Տրտ. Բ. 13:
2. Քրիստոս երկրորդ անգամ պիտի գա՞յ :  
«Նշոյնպէս ալ Քրիստոս մէկ անգամ պատարագ մատուցուեցաւ՝ շատերուն մեղքերը վերցնելու համար, բայց երկրորդ անգամին առանց մեղքի պիտի յայտնուի փրկութեան համար անոնց՝ որոնք անոր կը սպասեն:» Եբբ. Թ. 28:
3. Տէրը ի՞նչպէս մխիթարեց իր աշակերտները :  
«Սիրտերնիդ շխուովի՛. Աստուծո՛յ հաւատացե՛ք. Ինծի ալ հաւատացե՛ք. Իմ Հօրս տունը շատ բնակարաններ կան. սպա թէ ոչ՝ ես ձեզի պիտի ըսէի. հիմա կ'երբամ ու ձեզի տեղ կը պատրասեմ: Եւ երէ երբամ ու ձեզի տեղ պատրասեմ, նորէն կուգամ եւ ձեզ ֆովս կ'առնեմ, որպէս զի ուր ես եմ՝ դուք ալ հոն ըլլաք:» Յովհ. ԺԴ. 1—3:
4. Անձա՞մբ պիտի գայ Ան :  
«Ու քանի որ աչքերնին անկած գէպ ի երկինք կը նայէին Անոր երթալուն վրայ, ահա՛ երկու մարդ իրենց քով կայնեցան ճերմակ հանգերձներով, որոնք նաև ըսին, Ո՛վ Գալիլեացի մարդիկ՝ ինչո՞ւ կոյներ գէպ ի երկինք կը նայիք. այս Յիսուսը որ ձեզմէ երկինք համբարձաւ, այսպէս պիտի գայ՝ ինչպէս տեսաք Անոր երկինք երթալը: Գործք Ա. 10—11:
5. Անոր գալուստը յայտնապէ՞ս տեղի պիտի ունենայ բովանդակ աշխարհի առջև :  
«Վասն զի ինչպէս փայլակը արեւելքէն կ'ելլէ ու մինչև արեւմուտք կ'երեւայ, այնպէս պիտի ըլլայ Որդւոյ մարդոյ զալուստը:» Մատ. ԻԴ. 27:

6. Ո՞վ պիտի ընկերանայ Անոր :

«Վասն զի Ուրբն մարդոյ իր Հօրը փառքովը պիտի գայ Իր հրեօսակներուն հետ:» Մատ. ԺԶ. 27:

7. Ո՞վ պիտի տեսնէ զԱնի :

«Ահա՛ ամպերով կուգայ. ու ամէն աչք պիտի տեսնէ զԱնիկա, եւ անոնք որ զԱնիկա խոցեցին:» Յայտ. Ա. 7.

8. Տէրը. ի՞նչ նպատակի համար պիտի գայ :

«Եւ տեսայ՝ և ահա ճերմակ ամպ մը, ու այն ամպին վրայ մէկը նստեր էր Ուրբուդ մարդոյ նման. և իր գլուխը ոսկիէ պսակ մը՝ ու Իր ձեռքը սուր մանգաղ մը ունէր: Եւ տաճարէն ուրիշ հրեշտակ մը կ'ելէր, որ ամպին վրայ նստողին մեծ ձայնով կ'աղաղակէր ու կ'ըսէր, Երկնցո՛ւր Քու մանգաղդ ու հնձի՛: Վասն զի հնձելու ժամանակը եկաւ, վասն զի երկրի հունձքը հասունցած է: Եւ Ան որ ամպին վրայ կը նստէր, իր մանգաղը երկրի վրայ երկնցուց, ու երկիրը հնձուեցաւ.» Յայտ. ԺԴ. 14—16:

9. Հունձքը ե՞րբ է :

«Եւ թշնամին որ զանիկա ցանեց, Սատանան է, և հունձքը աշխարհիս վերջն է, ու հնձողները հրեշտակներն են:» Մատ. ԺԳ. 39:

10. Ի՞նչ կարեւոր դէպք տեղի կ'ունենայ յայնժամ :

«Վասն զի Տէրը Ինք ազդարարութեան հրամանով, Հրեշտակապետի ձայնովը ու Աստուծոյ փողովը երկինքէն պիտի իջնէ և Քրիստոսով մեռածները առաջ յարութիւն պիտի առնեն:» Ա. Թես. Գ. 15:

11. Ո՞վ պիտի ժողվէ ընտրեալները :

Եւ այն ատեն Իր հրեօսակները պիտի շրկէ, ու իր ընտրեալները պիտի ժողվէ չորս հովերէն, երկրի ծայրէն մինչև երկինքի ծայրը:» Մարկ. ԺԴ. 27: (\*)

12. Յայնժամ ո՞ւր պիտի առնուին անոնք :

«Ետքը մենք ալ որ ողջ մնացած ենք՝ անոնցմով մէկտեղ պիտի յափշտակուինք ամպերով Տէրոջը առջեւ ելլելու օրին մէջ, եւ այնպէս յաւիտեան Տէրոջը հետ պիտի ըլլանք:»

(\*) 11րդ հարցման իբր պատասխան՝ լաւագոյն է Մատ. ԻԴ. 31

Ա. Թեո. Գ. 16: «Եւ եթէ երթամ ու ձեզի տեղ պատրաստեմ, նորէն կուգամ և ձեզ քովս կ'առնեմ, որպէս զի ուր Յսեմ՝ դուք ալ հոն ըլլաք»: Յովհ. ԺԳ. 3:

13. Ամբարիչաները ի՞նչ պիտի ըսեն՝ երբ Որդւոյ մարդոյ գալը տեսնեն:

«Եւ լեռներուն ու տապաւածներուն կ'ըսէին, Պարանիս ինկէք ու մեզ ծածկեցէք Անոր երեսէն՝ որ արողին վրայ կը նստի, ու Պառնոսիկին բարկութեանցէն. վասն զի Անոր բարկութեանը մեծ օրք եկաւ, եւ ո՞վ կրնայ դիմանալ:» Յայտ. 2. 16—17: «Ողբացէ՛ք, վասն զի Տէրոջը օրը մօտ է, անկեալ Ամենակարողէն եկած աւերման պէս կուգայ: Անոր համար ամէն ձեռքերը պիտի թուլնան, ու ամէն մարդու սիրտը պիտի հալի:» Ես. ԺԳ. 6, 7:

14. Յայնժամ ամբարիչաները ի՞նչ պիտի կրեն:

«Եւ ձեզի նեղութիւն կրողներուդ՝ մեզի հետ հանգիստ, Տէր Յիսուսի երկինքէն յայտնուելու ատենը Իր զօրաւոր հրեշտակներովը: Բորբոքած կրակով վրէժ առնելու անոնցմէ՝ որ զԱստուած չեն ճանչնար, և որ մեր Տէր Յիսուս Քրիստոսի աւետարանին չեն հնազանդիր:» Բ. Թեո. Ա. 7. 8:

15. Աշխարհը պատրաստուած պիտի ըլլայ՝ Տէրոջը գալը ստեանը համար:

Վասն զի բոլոր երկրին երեսը բնակողներուն ամէնուն վրայ որոգայքի մը պէս պիտի հասնի: «Եւ ինչպէս Նոյի օրերը եղաւ, այնպէս պիտի ըլլայ Որդւոյ մարդոյ օրերն ալ. կ'ուտէին, կը խմէին, կին կ'առնէին, էրկան կը տրուէին, մինչև այն օրը որ Նոյ տապանը մտաւ, և ջրհեղեղը եկաւ ու ամէնը կորսնցուց: Նմանապէս, ինչպէս Ղովտի օրերը եղաւ, կ'ուտէին, կը խմէին, ծախու կ'առնէին, կը ծախէին, կը անկէին: կը շինէին. Բայց այն օրը որ Ղովտ Սողոմէն ելաւ, երկինքէն կրակ ու ծծումբ տեղաց և բոլորն ալ կորսնցուց. նոյնպէս պիտի ըլլայ այն օրը որուն մէջ Որդին մարդոյ պիտի յայտնուի:» Ղուկ. ԻԱ. 35. ԺԷ. 26—30:

16. Այս պատճառաւ՝ Աստուծոյ զաւակները ի՞նչ բանէ զգոյշ կենալ ջանալու են:

«Իսկ դուք զգուշացէ՛ք ձեր անձերուն. չըլլայ որ սիրտերնիդ կերուխումով ու զինովութիւնով եւ աշխարհային



գրադմուսներով ծանրանայ, ու յանկարծակի այն օրը  
ձեռ վրայ հասնի»։ Ղուկ. ԻԱ. 34:

17. Անոնք ի՞նչ ընել յորդորուած են :

«Ձեր մէջքերը գօտեւորուած ըլլան, ու նրազները վառ.  
ուած. եւ դուք այն մարդոց նման՝ որոնք իրենց տիրոջը կը  
սպասեն, թէ ե՛րբ պիտի դառնայ հարսնիքէն. որպէսզի երբ գայ  
և դուռը զարնէ՝ իսկոյն բանտն անորս, Ղուկ. ԺԲ. 35, 36:

18. Այս ազդարարութիւնը յարգողները պիտի յանկար-  
ծակիի գա՞ն որպէս գողէ մը (\*):

«Բայց դուք՝ եղբայրնե՛ր, խաւարի մէջ չէք, որ այն օրը  
գողի մը պէս ձեռ վրայ հասնի»։ Ա. ԹԵՍ. Ե. 4:

19. Տէրոջը գալստեան մօտաւորութիւնը պիտի ցուցուի՞  
նշաններով :

«Ու արեգակին և լուսնին ու աստղերուն վրայ նշաններ  
պիտի ըլլան, ու երկրի վրայ ազգերը ապշուածեամբ պիտի տագ-  
նապին, և ծովն ու ալիքները պիտի գոռան. մարդոց սիրտերը  
պիտի նուազին իրենց վտիէն և աշխարհի վրայ գալու բաներուն  
սպասելէն, վասն զի երկինքի ղորութիւնները պիտի շարժին»։  
Ղուկ. ԻԱ. 25, 26:

20. Տէրը ի՞նչ առակ տուաւ՝ որով կրնանք գիտնալ թէ  
Իր գալուստը դռներուն քով է :

«Առակ մը ըսաւ անոնց, Տեսէ՛ք թզենին՝ ու ամէն ծառերը. երբ  
կը բողբոջին, տեսնելով՝ դուք ձեզմէ կ'իմանաք թէ ալ ամառը  
մօտ է: Նոյնպէս դուք երբ այս բաները եղած կը տես-  
նէք, գիտցէ՛ք որ Աստուծոյ քաղաւորութիւնը մօտ է»։  
Հմբ. 29—31:

21. Հաւատարիմ պատգամաւորներ ճիշդ ատենին պիտի  
ծանուցանե՞ն Քրիստոսի երկրորդ գալուստը :

«Սիօնի մէջ փո՛ղ հնչեցուցէ՛ք, և իմ՝ սուրբ լեռանս վրայ ազ-  
դարարութեան ձայն վերցուցէ՛ք. երկրին բոլոր բնակիչները  
դողան, քանզի Տէրոջը օրը կուգայ, վասն զի մօտ է»։ Յովէլ.  
Բ. 4:

22. Ամբարիչները ի՞նչպէս պիտի ընդունին այս ազ-  
դարարութիւնը :

«Բայց առաջ զայս գիտնաք, որ վերջին օրերը ծաղր ընողներ



պիտի գան, որոնք իրենց ցանկութիւններուն համեմատ պիտի քալեն, և պիտի ըսեն. «Մը է անոր գալուն խոստումներ, վասնզի քանի որ հայերը բնացան, ամէն բան այնպէս կայ կը մնայ արարածներուն սկիզբէն հետէ»։ Բ. Պետ. Գ. 3. 4:

23. Աստուծոյ ժողովուրդը ի՞նչ բանի պէտք է սպասէ :  
«Ուստի որովհետեւ այս ամէն բաները պիտի լուծուին, ձեզի ի՞նչպիտի մարդիկ ըլլալ կը վայելէ՝ սուրբ վարմունքով ու բարեպաշտութեամբ, սպասելով ու արտօնելով Աստուծոյ օրուանը գալուն՝ որուն մէջ երկինք կրակով այրուած պիտի լուծուի, ու տարերքները բռնկած պիտի հային»։ Բ. Պետ. Գ. 41. 42:

24. Ո՞ր դէպքին նկատմամբ պէտք է աղօթեն անոնք :  
«Քու բազաւորութիւնը գայ. Քու կամքդ ըլլայ, ինչպէս երկինքը՝ նոյնպէս երկրի վրայ»։ Մատթ. 2. 10:

25. Սակայն՝ չար ծառան ի՞նչ պիտի ընէ :  
«Հապա եթէ այն չար ծառան իր սրտին մէջ լսէ, Իմ հետ իր գալը կ'ուզեցնէ. և սկսի իր ծառայակիցները ձեռնել, ու գինովներուն հետ ուտել ու խմել»։ Մատ. ԻԳ. 48. 49:

26. Ի՞նչ պատիժ պիտի վրայ հասնի այդպիտի չար ծառաններուն :  
«Այն ծառային տէրը պիտի դայ այնպիտի օր մը՝ որ չ'սպասեր, և այնպիտի ժամ մը որ չգիտեր. և զանիկա մէջտեղէն պիտի կտրէ, ու անոր բաժինը կեղծաւորներուն հետ պիտի դնէ. հոն պիտի ըլլայ լալ ու ախաաներ կրնակ»։ Հմբք. 50. 51:

27. Իմաստուն ծառան ի՞նչ պիտի ընէ :  
«Ուստի ո՞վ է այն հաւատարիմ ու իմաստուն ծառան՝ զոր իր տէրը իր ծառաններուն վրայ դրաւ, որպէս զի ասեցին անոնց կերակուր տայ. երանի՛ է այն ծառային՝ զոր իր տէրը եկած ատեն այնպէս քրած պիտի զսնէ»։ Հմբք. 45. 46:

28. Հաւատարիմ ծառաններուն ի՞նչ վարձք պիտի տրուի :  
«Ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի որ իր բոլոր ունեցածին վրայ պիտի կեցնէք զանիկա»։ Հմբ. 47:  
«Երանի՛ այն ծառաններուն, որ տէրը երբ գայ՝ զանոնք արթուն պիտի գտնէ. Ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի, որ ինք գօտին մէջքը պիտի կապէ ու սեղան նսեցնէ զանոնք, և առաջ անցնելով սպասաւորութիւն պիտի ընէ անոնց»։ Գուկ. ԺԲ. 37:

## ԱՇԽԱՐՀԻ ՄԱՐԳԱՐԷԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

1. Աստուած իր ծառային՝ Եսայիի ձեռքով ի՞նչ մարգարէութիւն տուաւ Եղեկիայի :

«Ու Եսայի մարգարէն Եղեկիա թագաւորին եկաւ, ու անոր ըսաւ, Այս մարգիկները ի՞նչ ըսին, և ուսկից եկանք թեզի. ու Եղեկիա ըսաւ, Հեռու տեղէ՛ Բաբելոնէ՛ եկանք»: Դ. Թագ. Ի. 14:


2. Ե՞րբ՝ և ո՞ւր կատարուեցաւ այս մարգարէութիւնը :

«Յուդայի թագաւորին՝ Յովակիմին թագաւորութեանը երրորդ տարին՝ Քաբելլանի Նաբուզոդոնոսոր քաղաւորը Երուսաղէմ՝ եկաւ, ու զանիկա պաշարեց: Եւ Տէրը անոր ձեռքը տուաւ Յուդայի Յովակիմ՝ քաղաւորը, ու Աստուծոյ տանը անօրներուն մէկ մասը, եւ անիկա զանոնք Սենաաթ երկիրը՝ իր աստուծոյն տունը տարաւ, ու անօթները իր աստուծոյն գանձարանը դրաւ:

«Եւ թագաւորը իր ներքնապետին Ասփանեզին ըսաւ որ Խորայէի որդիներէն ու թագաւորական սերունդէն և իշխաններէն՝ բնաւ արատ չունեցող, գեղեցիկ գէմքով, ու ամէն իմաստութեան հմուտ, ու գիտութեան տեղեակ՝ հանճարեղ, և թագաւորին պալատին մէջ կայնելու կարողութիւն ունեցող աղաքներ բերէ, և անոնց՝ Քաղզէացաց զինն ու լեզուն սորվեցնէ: Ու թագաւորը անոնց օրական ռոճիկ սահմանեց՝ թագաւորին ազնիւ կերակուրէն ու իր խմած գինիէն, սրպէսպի զանո՛ք երեք տարի սյուպէս սնուցանէ, ու ետքը թագաւորին առջև կայնին: Եւ անոնց մէջն էին Յուդայի որդիներէն՝ Դանիէլը, Անանիա, Միսայէլ ու Ազարիա»: Դան. Ա. 1-6:

3. Նաբուզոդոնոսորի ոգին ի՞նչու խռովեցաւ :

«Ու Նաբուզոդոնոսորի թագաւորութեանը երկրորդ տարին՝ Նաբուզոդոնոսոր երազներ տեսաւ, եւ անոր ոգին խռովեցաւ ու քունը փախաւ»: Դան. Բ. 1:



ԴԱՆԻԷԼ ԵՐԿՐՈՐԴ ԳԼԽՈՒՆ ՄԵՄ ԱՐՉԱՆԸ

4. Այս երազին մասին ի՞նչ ըսուած է :

«Եւ թագաւորը հրամայեց որ մագերը, հմայողները, կախարդները ու Քաղղեանները կանչեն, որպէսզի թագաւորին իր երազները պատմեն. և անոնք եկան ու թագաւորին առջեւը կայնեցան :

«Եւ թագաւորը անոնց ըսաւ, երազ տեսայ, ու իմ՝ ոգիս կը խափի որ այն երազը գիտնամ : Ու Քաղղեանները թագաւորին Ասորերէն ըսին, Ո՛վ թագաւոր՝ յաւիտեան ո՛ղջ կեցիր. ըսէ՛ երազը քու ծառաներուդ, ու մենք անոր մեկնութիւնը իմացնենք : Թագաւորը պատասխան տուաւ ու Քաղղեաններուն ըսաւ. Բանը ինձմէ ելաւ. եթէ երազը ու անոր մեկնութիւնը ինձի չյայտնէք, դուք կտոր կտոր պիտի ըլլաք, ու ձեր տունները աղբանոց պիտի ըլլան : Բայց եթէ երազը ու անոր մեկնութիւնը ինձի իմացնէք, ինձմէ պարգեւներ, տուրքեր ու շատ պատիւ պիտի առնէք. ուրեմն երազը ու անոր մեկնութիւնը ինձի իմացուցէ՛ք» :

5. Քաղղեանները ի՞նչ պատասխան տուին թագաւորին :

«Քաղղեանները թագաւորին առջև պատասխան տուին ու ըսին. Երկրի վրայ չկայ այնպիսի մարդ մը որ՝ կարող ըլլայ թագաւորին պահանջած բանը իմացնելու. անոր համար բնաւ մէկ թագաւոր մը, նախարար մը կամ իշխան մը ոչպիսի բան մը պահանջած չէ մէկ մոգէ մը կամ հմայողէ մը կամ Քաղղեայէ մը» : Կան. Բ. 10. 41 :

6. Չայրացած թագաւորէն ի՞նչ հրաման ելաւ :

«Ասոր վրայ թագաւորը սրգողեցաւ ու խիստ բարկացաւ, և հրամայեց որ Քաթելիմի բոլոր իմաստունները կոտորեն» : Հմր. 12 :

7. Դանիէլ ի՞նչ խնդրեց թագաւորէն և Աստուծմէ :

«Ու հրամանը ելաւ, և իմաստունները կը կտորուէին, ու փրնտուեցին Դանիէլը ու անոր ընկերները որպէս զի մեռցնէն : Այն ատեն Դանիէլ իմաստութեամբ ու խոհմութեամբ խօսեցաւ թագաւորին դահճապետին Արիովքին հետ՝ որ Բաբելոնի իմաստունները կտորելու ելեր էր. ու թագաւորին իշխանին Արիովքին խօսեցաւ ու ըսաւ, Ինչո՞ւ համար այս հրամանը թագաւորին երեսէն արտորնօք ելաւ. այն ատեն Արիովք բանը Դանիէլի յայտնեց : Եւ Դանիէլ մտաւ ու թագաւորէն խնդրեց որ իրեն ժամանակ տայ, որպէս զի մեկնութիւնը թագաւորին ի-



մացնէ։ Աւ Դանիէլ իր տունը դնաց, և այս բանը իր ընկերներուն՝ Անանիային, Միսայէլին ու Ազարիային յայտնեց, որ այս գաղտնիքին համար երկնից Աստուծոյն գլխաւորութիւն խնդրեն, որպէս զի Դանիէլը ու անոր ընկերները Բաբելոնի միւս իմաստուններուն հետ չկորսնցնեն» Հմբ. 13—18:

8. Թագուն երազը ինչպէս յայտնուեցաւ Դանիէլի :  
«Եւ գաղտնիք գիշերուան տեսիլքի մէջ Դանիէլի յայտնուեցաւ. այն ատեն Դանիէլ երկնից Աստուածը օրհնեց» Հմբ. 19:
9. Թագաւորը ինչ հարցում քրաւ Դանիէլի :  
«Պատասխան տուաւ թագաւորը ու ըսաւ Դանիէլի. Կարո՞ղ ես դուն իմ տեսած երազը ու անոր մեկնութիւնը ինձի գիտցնելու» Հմբ. 26:
10. Դանիէլ ինչ համեստ և պատշաճ պատասխան տուաւ :  
«Բայց երկնիքի մէջ՝ գաղտնիքներ յայտնող Աստուած կայ, ու Նարուգոդոնոսոր թագաւորին կը յայտնէ ինչ որ ետքի օրերը պիտի ըլլայ» Հմբ. 28:
11. Թագաւորը ինչ տեսաւ իր երազին մէջ :  
«Իսկն՝ ո՞վ թագաւոր՝ կը տեսնէիր որ ահա՛ մէկ մեծ արձան մը կար. այս մեծ ու խիստ պայծառ արձանը քու զիմացդ կայներ էր, և անոր երեւոյթը ահաւոր էր» Հմբ. 31:
12. Արձանին զանազան մասերը ինչէ կը բաղկանային :  
«Այս արձանին գլուխը զուտ ոսկիէ, անոր կուրծքը ու թեւերը՝ արծաթէ, մէջքը ու աղդրերը պղնձէ, սրունքները երկաթէ, ու ստրեբրուն մէկ մասը՝ երկաթէ, ու մէկ մասը կաւէ էր» Հմբ. 32, 33:
13. Վերջապէս ինչ պատահեցաւ արձանին :  
«Իսկն կը տեսնէիր, մինչև որ մէկ քար մը կտրուեցաւ տասնց ձեռքի, ու այն արձանին երկաթէ ու կաւէ ստրեբրուն զարկաւ, ու զանոնք փշրեց» Հմբ. 34:
14. Քարը ինչ եղաւ :  
«Այն ատեն՝ երկաթը, կաւը, պղինձը, արծաթը ու ոսկին մէկ-տեղ փշրուեցան և ամառուան կալերուն քիմիկին պէս եղան, ու հովը զանոնք տարաւ, ու ամենեւին անոնց տեղ չգտնուեցաւ. բայց արձանը զարնոյ քար մեծ լեռ մը եղաւ, ու բոլոր երկիրը լեցուց» Հմբ. 35:

15. Գանիէլ ի՞նչպէս բացատրեց ոսկի գլուխը :  
«Ո՛վ թագաւոր, դուն թագաւորաց թագաւոր ես, վասն զի երկնից Աստուածը քեզի թագաւորութիւն, կարողութիւն, զօրութիւն ու պատիւ տուեր է. և մարդոց որդիներուն բոլոր բնական տեղերուն մէջ՝ դաշտի գազանները ու երկինքի թռչունները քու ձեռքդ տուեր է, և անոնց ամենուն վրայ քեզ իշխան դրեր է. ան ոսկի գլուխը դուն ես:» Հմբք. 37, 38:

16. Եսայի ի՞նչպէս կը նկարագրէ այս թագաւորութեան փառքը, ու որո՞ւ միջոցաւ պիտի կործանէր ան :

«Ահա՛ անոնց վրայ Մարաց ազգը պիտի յարուցանեմ. որ անոնք արծաթը բանի տեղ չեն դներ, ու ոսկիէն չեն ախորժիր: Անոնց աղեղները երեսասարգները պիտի խոցեն, ու անոնք որովայնի պտուղին զթութիւն պիտի չընեն, և անոնց աչքը պիտի չխնայէ տղաքներուն: Ու քաղաւորութիւններուն փառք եւ Քաղղէացոց փառաւորութեանը պաշտանքը եղող Քաբելոն ասկե ու վրայ պիտի ըլլայ, ինչպէս որ Աստուած Սոգամը ու Գամբը կործանեց:» Ես. ԺԳ. 47—49: (\*)

17. Ո՞վ էր Բարիլոնի վերջին թագաւորը, և ո՞վ յաղթեց զանի :

«Փարէս, քու քաղաւորութիւնդ բաժնուեցաւ եւ Մարաց ու Պարսից տուեցաւ:

... «Նոյն գիշերը Քաղղէացոց Քաղսասար քաղաւոր սպանուեցաւ, ու քաղաւորութիւնը Մարաց Իարեհ քաղաւորը առաւ, երբ վաթսուներկու տարեկանի չափ էր» Իսն. Ե. 28—31:

18. Մարաց և Պարսից թագաւորութիւնները ո՞րտեղ ուրիշ խորհրդանշանով ներկայացուած են :

«Ան քու տեսած խոյզ՝ որ երկու եղջիւր ունէր, Մարաց և Պարսից թագաւորներն է:» Իսն. Ը. 20:

19. Իբր երրորդ՝ կամ՝ պղնձէ թագաւորութիւն՝ ի՞նչ յաջորդեց :

«Եւ այժմերու քօշը Յունաց քաղաւորն է, ու անոր աչքերուն մէջտեղի մեծ եղջիւրը առաջին թագաւորն է:»

(\*) Լաւագոյն է նախ 19րդ համարը դնել, ապա 17, 18 համարները՝ հարցման համապատասխանելու համար:

«Այս արձանին գլուխը զուտ սակիէ, անոր կուրծքը ու թեւերը՝ արծաթէ, մէջքը եւ ազդերը պղնձէ . . . էին»

«Ու քեզմէ ետքը մէկ ուրիշ թագաւորութիւն մը պիտի ելլէ քեզմէ ցած, ու պղնձէ մէկ ուրիշ երոզող քաղաւորութիւն մը՝ որ բոլոր երկրին պիտի տիրէ» Դան. Ը. 21. Բ. 32, 39.

20. Ո՛ւր նկարագրուած է չորրորդ տիեզերական թագաւորութիւնը :

«Եւ չորրորդ թագաւորութիւնը երկաթի պէս ամուր պիտի ըլլայ, ու ինչպէս որ երկաթը ամէն բան կը փշրէ ու կը մանրէ, տակաւ ալ այս ամէն բաները կտորոզ երկաթին պէս փշրելով պիտի կտորէ» Դան. Բ. 40:

21. (\*) Ե՞րբ և ո՞ւր ակնարկուած է չորրորդ տիեզերական թագաւորութիւնը :

«Ու եզու որ այն օրերը Յոգոսոս կայսրէն հրաման ելաւ որ բոլոր աւստրի գրուի» Դուկ. Բ. 4:

22. Բոլոր աշխարհը տուրքի ենթարկող այս թագաւորութիւնը վերջապէս պիտի բաժնուէ՞ր :


«Եւ որովհետեւ ոտքերը ու մտտերը՝ մէկ մտար բրուտի կաւէ ու մէկ մտար երկաթէ տեսար, այն քաղաւորութիւնը պիտի բաժնուի, բայց երկաթի սնդութ ենէ բաժին պիտի ունենայ, քանզի երկաթը տղմուտ կաւի հետ խառնուած տեսար» Դան. Բ. 44:

23. Ե՞րբ և ի՞նչ միջոցաւ այս փշրումը տեղի ունեցաւ : Թ. Տ. 356-384՝ բարբարոսաց մեծ արշաւանքովը :


24. Որո՞նք էին տասը մասերը կամ թագաւորութիւնները :— 1. Հոնք, 2. Ոստրոքոթք, 3. Վիզիկոթք, 4. Ֆրանքներ, 5. Վանտալք, 6. Սուէվիք, 7. Պուրկոնտեանք, 8. Հերուլի, 9. Սաքսոնք, 10. Լոմպարտք: Այս թագաւորութիւններէն յառաջ եկած են՝ Իտալիա, Բորթուկալ, Սպանիա, Գերմանիա, Ֆրանսա, Անգղիա, Աւստրիա, ևն . . :




25. Այս թագաւորներն ի՞նչ ընել պիտի ջանան ի դուրս  
աԵւ տղմուտ կաւին հետ երկաթ խառնուած տեսնելդ այս է  
որ՝ անոնք մարդոց սերունդին հետ պիտի խառնուին: Բայց ա.  
նոնք իրարու պիտի չփակցին, ինչպէս որ երկաթը կաւին  
հետ չխառնուիր:՝ Դան. Բ. 43:
26. Բայց այս թագաւորներուն օրերը՝ ի՞նչ պիտի հաս-  
տատուի:  
«Ու այն թագաւորներուն օրերը երկնից Աստուածը մէկ քա-  
ղաւորութիւն մը պիտի հանէ, որ յաւիտեան պիտի  
չաւրի, և այս թագաւորութիւնը ուրիշ ժողովուրդի պիտի  
չարուի. անիկա այս բոլոր թագաւորութիւնները պիտի փշրէ ու  
պիտի հատցնէ, ու ինքը յաւիտեան պիտի մնայ:» Հմբ. 44:
27. Ո՛ր և է անստուգութիւն կրնա՞յ ըլլալ երազին կամ  
անոր մեկնութեանը նկատմամբ:  
«Որովհետեւ դուն առանց ձեռքի լեռնէն կտրած քար մը տե-  
սար, և անիկա երկաթը, պղինձը, կաւը, արծաթը ու ոսկին  
փշրեց. մեծ Աստուածը ասկէ ետքը ի՞նչ ըլլալիքը քաղա-  
ւորին զիտցուց. ու երազը նեմարիս է, եւ անոր մեկ-  
նութիւնը հաւատարիմ:» Հմբ. 45:
-




Բարեյուն



Մարի եւ Պարսիկ



Յունաց Թագաւորն



Հոովմ



Պգսիկ եղջիւրը

ԴԱՆԻԷԼ ԵՑԹԵՐՈՐԻ ԳԼԽՈՅՆ ԽՈՐՀՐԴԱՊԱՏԿԵՐՆԵՐԸ

Դ Ա Ն Ի Է Լ Է.

1. Նախկին մարգարէներն ի՞նչ բանի վրայօք մարգարէացան :

« Ինծմէ առաջ ու քեզմէ առաջ՝ սկիզբէն ի վեր եղող մարգարէները շատ երկիրներու դէմ՝ ու մեծ թագաւորութեանց դէմ՝ պատերազմի, չարիքի, ու ժանտախտի՞ վրայօք մարգարէացան: » Երեմ. 19. 8:

2. Բաղտասար թագաւորին թագաւորութեանը առաջին տարին Դանիէլ ի՞նչ տեսիլք տեսաւ :

« Բարեկրօնի Բաղտասար թագաւորին առջի տարին Դանիէլ խրաղ տեսաւ, և իր անկողնին մէջ իր գլխուն տեսիլքները. և անիկա երազը գրեց ու բաներուն համառօտութիւնը ըսաւ: Դանիէլ խօսեցաւ ու ըսաւ, « Ի՞իշերը տեսիլքիս մէջ տեսայ որ տեսիլքիս երկինքից չորս հովերը մեծ ծովուն վրայ կը յարձակէին, ու ծովէն չորս մեծ գազաններ ելան, որոնք իրարմէ տարբեր էին: » Դան. 1. 4—3:

3. Չորս մեծ գազանները ի՞նչ կը ներկայացնեն :

« Այս չորս մեծ գազանները չորս՞ քաղաւորներ են, որոնք երկրէն չ'ախտի ելլեն: » Հմբ. 17:

4. Հովերը, ջուրերը, և ծովը ի՞նչ կը խորհրդանշեն. — Պատերազմներ և ժողովուրդներ :

« Այն ատեն այս ժողովուրդին ու Երուսաղէմին պիտի ըսուի, Այրող հով մը անապատին բլուրներէն կը փչէ իմ՝ ժողովուրդիս աղջկանը ճամբուն մէջ, չէ՛ թէ հոսելու համար, ոչ ալ մտքբելու համար: Ասկէ սաստիկ հով մը պիտի դայ ինծի. հիմա ես ալ անոնց՝ հետ դատաստաններով պիտի խօսիմ: Ահա անիկա ամպերու պէս պիտի ելլէ, և անոր կտուքերը մորիկի պէս. անոր ձիերը արծիւներէն արագընթաց են. վա՛յ մեզի՝ որ կ'աւրուինք: »

« Փճճա, փճճա. [մինչև որտիս շտեմարանները ցաւ կը զգամ. սիրտս իմ ներսիդիս կը խռովի. չեմ կրնար լսել. քանզի դուն՝ ս'վ իմ անձս, փողին ձայնը պատերազմին ազդակը



լսեցիր: կատորած կատորած ի վրայ կը կանչուի, վասն զի բոլոր երկիրը կործանեցաւ. վրաններս յանկարծակի՝ ու խորաններս մէկէն կործանեցան. մինչև ե՞րբ դրօշը պիտի տեսնեմ, և փողին ձայնը պիտի լսեմ:» Գ. 41—43, 49—21:

«Եւ ըսաւ ինձի, Այն ջուրերը որ «եսաւ» սրնց վրայ պռնիկը նստեր է, ժողովուրդներ են ու բազմութիւններ եւ ազգեր ու լեզուներ:» Յայտ. Ժ. 15:

«Վա՛յ շատ ժողովրդոց բազմութեանը՝ որ ծովու ձայնին պէս կը գոռան, ու ժողովուրդներուն աղմուկին՝ որ սաստիկ ջուրերու ձայնին պէս կը գոչեն.» Ես. Ժ. 12:

5. Բարեխոսի թագաւորութիւնը ի՞նչպէս ներկայացուած է:

«Առաջինը առիւծի պէս էր, որ արծիւի լքուեր ունէր. ու կը տեսնէի մինչև որ անոր թեւերը փրցուեցան, ու լերկրէն վերացաւ և մարդու պէս ոտքերու վրայ կայնեցաւ, ու անոր մարդու սիրտ տրուեցաւ:» Գան. Է. 4:

6. Պարսկական կայսրութիւնը ի՞նչպէս խորհրդանշուած է:

«Եւ ասա՛ մէկ ուրիշ երկրորդ գազան մը արջու նման՝ որ մէկ քովին վրայ կայնեցաւ, ու բերանը՝ ակռաներուն մէջ երեք կողի սկիոր կար. և անոր այսպէս ըսին. Ելի՛ր, շատ միս կեր:» Հմբ. 5-

7. Մակեդոնական տէրութիւնը ի՞նչ գազանով ներկայացուած է:

«Ասկէ ետքը կը տեսնէի, և ասա՛ ընձու նման մէկ ուրիշ մը՝ որուն կռնակին վրայ թռչունի շորս թեւեր կային. և այս գազանը շորս գլուխ ունէր. ու անոր իշխանութիւն տրուեցաւ:» Հմբ. 6:

8. Չորրորդ թագաւորութիւնը ի՞նչպէս ներկայացուած է:

«Ասկէ ետքը գիշերուան տեսիլքներու մէջ կը տեսնէի, և ասա՛ մէկ չորրորդ գազան մը. անիկա ասեղ՝ սոսկալի ու խիստ զօրաւոր էր, և անիկա մեծ երկաթէ ակռաներ ունէր. անիկա կ'ուտէր ու կը փշրէր ու մնացածը ոտքերովը կը կոթէր, ու իրմէ տառաջ եղող ամէն գազաններէն տարբեր էր, և տասը եղջիւր ունէր:» Հմբ. 7:

9. Դանիէլ ի՞նչ փափաք յայտնեց՝ չորրորդ դազանին նկատմամբ :

« Ետքը չորրորդ դազանին վրայօք նուարիսը գիտնալ ուզեցի, որ անիկա բոլոր միւսներէն տարբեր էր, ու խիտ ահեղ էր. անոր ակօսանքը երկաթէ, և եղունգները պղնձէ էին. անիկա կ'աւտէր, կը փշրէր ու ֆնացածը ոտքերովը կը կոխէր: » Հմբ. 49:

10. Ի՞նչ բացատրութիւն տրուեցաւ անոր :

« Անիկա այսպէս ըսաւ, Չորրորդ դազանը երկրի վրայ չորրորդ թագաւորութիւն պիտի ըլլայ. ու բոլոր երկիրը պիտի ուտէ, ու զանիկա պիտի կոխէ ու փշրէ: » Հմբ. 23:

11. Տասը եղջիւրները ի՞նչ կը խորհրդանշեն :

« Եւ այն տասը եղջիւրները այն թագաւորութենէն ելլելու տասը թագաւորներ են: » Հմբ. 24, առաջին մաս:

12. Մարգարէն ի՞նչ բանի ելլելը տեսաւ տասը եղջիւրներուն մէջէն :

« Երբ ես այն եղջիւրները կը գիտէի, ահա՛ անոնց մէջ մէկ ուրիշ պզտիկ եղջիւր մը ելաւ՝ որուն առջեւէն առջի եղջիւրներուն երեքը խլուեցաւ. և ահա՛ այս եղջիւրին վրայ մարդու աչքերու պէս աչքեր, ու մեծ բաներ խօսող բերան կար: » Հմբ. 8,

13. Փոքրիկ եղջիւրը ի՞նչ կը նշանակէր :

« Ու անոնցմէ ետքը մէկ ուրիշը պիտի ելլէ. ու անիկա առջիններէն արբեր պիտի ըլլայ, և անիկա երեք թագաւոր պիտի կործանէ: » Հմբ. 24. վերջին մաս:

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ. — Ըստ Դան. Բ.ի, չորրորդ կամ Հռովմէական կայսրութիւնը պէտք էր տեւէր մինչև վախճանը: Ըստ որում այս իշխանութիւնը տակաւ կը բարձրանայ տասը եղջիւրներուն մէջ, և կը հասնի մինչև վախճանը, ան պէտք է ելլէ նախկին Հռովմէական կայսրութեան մէջ, և մնայ տասը թագաւորութեանց մէջ՝ մինչև Քրիստոսի գալուստը: Ան պէտք է տարբեր ըլլայ այն թագաւորութիւններէն որոնք երեւան կուգան բարբարոսաց արշաւանքներովը. Պապական իշխանութիւնը կը յարմարի այս նկարագրութեան:

14. Ի՞նչ ըսուած է նաև այս իշխանութեան նկատմամբ : Աւկապուրկի դաւանանքի պաշտպանութիւնը՝ է և Ը յօդուածներուն մէջ՝ մարգարէութեան կատարումը կ'ընծայէ :

... «Ուստի՛ Պապն է աշխարհային աստուած մը, դերագոյն դատաւոր մը, և միակ ամենազօր տէրը բովանդակ աշխարհին, բոլոր թագաւորութիւններէն վեր, ամէն երկրէ և ժողովուրդէ վեր, ամէն հոգեւոր և մարմնաւոր բաներէ վեր, բոլոր բաները ունենալով իր ձեռքին մէջ, թէ՛ մարմնաւոր և թէ՛ հոգեւոր սուրբը» Այս սահմանումը՝ որ բնա՛ւ երբէք չի պատշաճիր ճշմարտ եկեղեցիին, շատ կը պատշաճի Պապական դրութեան, և կը գտնուի ոչ միայն եկեղեցական գրութեանց մէջ, այլ՝ Գահիէլ մարգարէն այս կերպով կը նկարագրէ՝ Նեաւը

15. Սուրբերը ո՞րքան ժամանակ այս իշխանութեան ձեռքը պիտի տրուէին :

«Ու Բարձրելոյն դէմ՝ խօսքեր պիտի ըսէ, ու Բարձրելոյն սուրբերը պիտի մտչէ, և պիտի մտածէ ժամանակներ և օրէնքներ փոխել . ու անոնք մինչեւ ժամանակ մը, ժամանակներ ու կէս ժամանակ անոր ձեռք պիտի տրուին:» Հմբ. 25:

16. Բանի՞ ամիս և քանի՞ օր խորհրդանիշուած են երեք ու կէս ժամանակով. — 42 ամիս, կամ՝ 1260 օր : Տե՛ս Յայտ . ԺԲ . 14 , 6 . ԺԳ . 5 :

17. Մարգարէական մէկ օրով ո՞րչափ ժամանակ ներկայացուած է :

«Ինչպէս որ երկիրը քառասուն օրուան մէջ լրտեսցիր, այնպէս ալ այն օրերուն թուոյն համեմատ՝ ամէն մէկ օրուան տեղ մէջ մէկ տարի սեպելով՝ քառասուն տարի պիտի կրէք ձեր անօրէնութիւնները, ու իմ՝ ձեզմէ հեռանալը ճանչնաք:» Թու. ԺԳ . 34: «Ու երբ այն օրերը լինցնես, նորէն պառկիս քու աջ կողմիդ վրայ, ու քառասուն օր Յուդոյի տանը անօրէնութիւնը կրես. բեզի ամէն մէկ տարին տեղ մէջ մէկ օր տուի:» Եզեկ. Գ . 6. — մէկ օրը՝ մէկ տարուան տեղ, կամ՝ 1260 օրը մարգարէութեան մէջ կը նշանակէ 1260 տառական տարի :

18. Վերջապէս՝ ի՞նչ պիտի պատահէր Պապականութեան :

Յ. Տ. 533ին՝ Յուստինիանոսի համբաւաւոր հրովարտակը՝ «բոլոր սուրբ եկեղեցիներուն պէտ» հռչակելով Հռովմայ եպիսկոպոսը, կատարեալ վաւերականութիւն դառա՛ Յուստինիանոսի զօրավարը յաղթելէ վերջ Արիստեանները — Հերուլի, Վանտալք և Օսարգթթ, Յ. Տ. 538ին, Այն ժամանակէն սկսեալ ճշդիւ 1260 տարի՝ (Յ. Տ. 1798), Ֆրանսոյի զօրավար Պէրթիէ Հռովմ



մտաւ, գերի բռնեց Պիոս Է. Պատր, և զանի սքսոր շրկեց սւր  
մեռաւ ան :

19. Վերջապէս ի՞նչ պիտի պատահի այս հայոյիչ իշխա-  
նութեան :


«Բայց տաեանը պիտի բազմի, ու անոր իշխանութիւնը պի-  
տի վերցնեն, զանիկա մինչեւ վերջը բնաջինջ պիտի բ-  
նեն ու կորսնցնեն» Հմբ. 26:

20. Որո՞ւ պիտի տրուի թագաւորութիւնն ու իշխանու-  
թիւնը :

«Եւ թագաւորութիւնն ու իշխանութիւնը, ու բոլոր երկինքին  
տակ եղբղ թագաւորութեանց մեծութիւնը Քարձրելոյն  
սուրբերուն ժողովուրդին պիտի տրուի. Անոր թագաւո-  
րութիւնը յաւիտենական թագաւորութիւն է, ու բոլոր իշ-  
խանները Անոր պիտի ծառայեն ու պիտի հնազանդին» Հմբ. 27:

21. Այս թագաւորութիւնը ո՞րքան ատեն և ո՞ր իշխա-  
նին օրով պիտի մնայ :

«Փիշերուան տնտիւքներու մէջ կը տեսնէի, և ահա՛ երկինքի  
ամպերով մազդոյ Որդւոյն նման մէկը կուգար, ու մինչև հին-  
աւուրցը եկաւ, և զԱնիկա Անոր առջև մօտեցուցին: Ու Անոր  
իշխանութիւն, պատիւ, ու թագաւորութիւն տրուեցաւ, որ  
ամէն ժողովուրդները, ազգերը ու լեզուները Անոր ծառայու-  
թիւն ընեն. Սնոր իշխանութիւնը յաւիտենական իշխա-  
նութիւն է որ չ'անցնիր, ու քաղաւորութիւնը չ'աւ-  
րուիր» Հմբ. 43, 44:



Մարդ եւ Պարսիկ



Յաւնաց իշխանութիւնը



Չորս բաժանումը

ԴԱՆԻԷԼ ՈՒԹԵՐՈՐԻ ԳԼԽՈՅՆ ԽՈՐՀՐԻԱՊԱՏԿԵՐՆԵՐԸ

Դ Ա Ն Ի Է Լ Ը.

1. Դանիէլ ե՞րբ և ո՞ւր տեսաւ իր յաջորդ տեսիլքը :  
«Բազմասար թագաւորին թագաւորութեանը երրորդ տարին ինծի Դանիէլիս տեսիլք երեւցաւ, ան առջի տեսածէս ետքը, եւ տեսիլքի մէջ տեսայ, ու եղաւ որ տեսած տեսնս, ևս եղաւ ի գաւառին մէջը եղող Շուշան մայրաքաղաքին էի, ու տեսիլքի մէջ տեսայ որ Ուլա գետին քով էի:» Դան. Ը. 4, 2:
2. Ո՞վ յանձնարարուած էր բացատրել այս տեսիլքը :  
«Ու երբ ես Դանիէլս տեսիլքը տեսայ, ու մեկնութիւնը կը փնտռէի որ հասկնամ, ահա իմ դիմացս մարդու կերպարանքով մէկը կը կայնէր: Եւ Ուլա գետին մէջէն մարդու ձայն լսեցի, որ կը կանչէր ու կ'ըսէր, Ո՞վ 'Գարիէլ' տեսիլքը ասոր հասկցո՞ւր:» Հմբք. 45, 46:
3. Նախ ի՞նչ տեսաւ Դանիէլ այս տեսիլքին մէջ :  
«Եւ իմ աչքերս վերցուցի ու տեսայ, և տեսաւ գետին քով խոյ մը կայնած էր, ու անիկա երկու եղջիւր ունէր, և այն եղջիւրները բարձր էին, ու մէկը միւսէն բարձր էր, ու այն բարձրը ետքէն ելաւ:» Հմբ. 3:
4. Այս խոյը և իր երկու եղջիւրները ի՞նչ կը նշանակեն :  
«Ան քու տեսած խոյդ՝ որ երկու եղջիւր ունէր, Մարաց և Պարսից թագաւորներն է:» Հմբ. 20:
5. Այս իշխանութիւնը ո՞րչափ լայնատարած եղաւ :  
«Եւ տեսայ այն խոյը՝ որ իր եղջիւրներովը դէպ ի արեւմուտք, դէպ ի հիւսիս, ու դէպ ի հարաւ կը զարնէր, ու բնաւ մէկ զազան մը անոր առջեւը չէր կրնար կայնիլ, և անոր ձեռքէն սղատող չկար. այլ անիկա իր ուղածին պէս ըրաւ ու մեծցաւ:» Հմբ. 4:  
«(Ու եղաւ որ Ասուերոսի օրերը՝ (այսինքն այն Ասուերոսի՝ որ Հնդկաստանէն մինչև Եթէովպիա հարիւր քառասուն զաւառի վրայ քաղաւորութիւն կ'ընէր.) այն օրերը, երբ Ասուերոս թագաւորը Շուշան մայրաքաղաքին մէջ իր թագա-



ւորութեանը յամուսին վրայ կը նստէր, իր թագաւորութեանը երրորդ տարին իր բոլոր իշխաններուն ու ծառաններուն կոչունք ըրաւ և Պարսից ու Մարաց մեծերը, նախարարները ու գաւառաց իշխանները անոր տաջև էին:» Եսթեր Ա. 4—3:

6. Մարգարէն ի՞նչ բանի գալը կը տեսնէ արեւմուտքէն:

«Ու երբ ես կը մտածէի, ահա արեւմուտքէն բոլոր երկրի երեսին վրայ այժերու ֆօժ մը եկաւ, ու գեանին չէր գպչեր. ու քօշը իր աչքերուն մէջտեղը մեծ եղջիւրը մը ունէր:» Գան. Ը. 5:

7. Բօշը զո՞վ կը ներկայացնէր: Մեծ եղջիւրը ո՞վ էր: «Եւ այժերու քօշը Յունաց քաղաւորն է, ու անոր աչքերուն մէջտեղի մեծ եղջիւրը առաջին քաղաւորն է:» Հմբ. 21:

8. Բօշը ո՞րչափ մեծցաւ, և ուժովցածին պէս ի՞նչ տեղի ունեցաւ:

«Ու այժերու քօշը խիստ մեծցաւ. ու անիկա ուժովցածին պէս՝ այն մեծ եղջիւրը կոտրեցաւ, եւ անոր տեղը դէպի երկինքին չորս հովերը չորս նուազութեամբ եղջիւրներ ելան:» Հմբ. 8:

9. Չորս մասերու բաժնուիլն ի՞նչ կը նշանակէ:

«Եւ ան որ կոտրեցաւ, ու անոր տեղը չորս ելաւ, այս է որ այն ազգէն չորս քաղաւորութիւն պիտի ելլէ, բայց չէ թէ անոր զօրութեամբը:» Հմբ. 22:

Լուտեր կ'ըսէ. «Բօշը Մեծն Աղեքսանդրն է՝ որ նուաճեց զԳարեհ, Պարսկաստանի վերջին թագաւորը, և առաւ անոր թագաւորութիւնը Գանիէլ կ'ըսէ որ քօշը գեանին չէր գպչեր, այլ միմիայն երկրիս վրայէն կը վազէր: Աղեքսանդր այնպիսի արագութեամբ յառաջացաւ որ աշխարհը նուաճեց տասերկու տարուան մէջ, քանզի քսան տարեկան էր երբ արշաւել սկըսաւ, և մեռաւ երեսուն երկու տարեկան: Ստուգիւ, ըստ աշխարհի ըսածին՝ անոր անձին նկատմամբ, աւելի մեծ մարդ մը չէ եղած երկրիս վրայ, և երբէք աւելի մեծ մը պիտի չըլլայ քան անիկա: Բայց ինչ որ շուտ կը հասուննայ, շուտով ալ կը գոսանայ. քանզի Աղեքսանդրի մահէն վերջ՝ իր կայսրութիւնը կործանեցաւ, և անոր աւերակներուն վրայ չորս թագաւորութիւններ ելան՝ որոնք հետեւեալներն են. Սիւրիա, Եգիպտոս, Ասիա, և Մակեդոնիա:»

10. Մարգարէն ի՞նչ տեսաւ ապա :

«Ու անանց մէկէն պղտիկ եղջիւր մը ելաւ, և անիկա դէպ ի արեւելք ու դէպ ի փառաւոր երկիրը խիստ մեծցաւ. ու մինչև երկնից զօրքը մեծցաւ, և զօրքէն ու ստողերէն գետինը ձգեց ու զանոնք կոխկռտեց. ու մինչև զօրաց Նշխանը զինքը բարձրացուց. ու անկէ մշտնջենաւորը վերցուեցաւ: և անոր սրբարանին բնակարանը կործանեցաւ: Ու զօրք մը ամբարշտութեամբ մշտնջենաւորին դէմ դրաւ, ու ճշմարտութիւնը գետինը զարկաւ, ու բան տեսաւ ու յաջողեցաւ:» Հմբ. 9—12:

11. Ի՞նչ պէս բացատրուեցաւ այս իշխանութիւնը :

«Ու անանց թագաւորութեան վերջը՝ երբ ամբարիշտները իրենց ամբարշտութեան չափը լեցնեն, մէկ պիտտերես ու խորագէտ թագաւոր մը պիտի ելլէ. և անոր իշխանութիւնը պիտի զօրանայ, բայց չէ թէ իր զօրութեամբը, ու անիկա սքանչելի կերպով պիտի աւրէ, և պիտի յաջողի ու բան պիտի տեսնէ, ու զօրաւորները և սրբոց ժողովուրդը պիտի աւրէ. ու իր խելքին միջոցով՝ իր ձեռքին մէջ նենգութիւնը պիտի յաջողի. և իր սրտին մէջ պիտի հպարտանայ, ու խաղաղութեան մէջ շատերը պիտի կարսնցնէ, և իշխանաց Նշխանին դէմ պիտի գնէ, բայց առանց ձեռքի պիտի կտորի:» Հմբ. 23—25:

12. Ո՞վ միայն կրնայ ըլլալ «իշխանաց իշխանը», ու որո՞ւ դէմ պիտի ելլէր այս իշխանութիւնը: — Քրիստոս :

«Եւ իր պատմութեան վրայ ու իր ազգերն վրայ գրուած գիր մը ունէր, ԹԱԳԱԻՈՐ ԹԱԳԱԻՈՐԱՅ ԵՒ ՏԷՐ ՏԷՐԱՆՅ:» Յայտ. ժ. 16:

13. Քրիստոս երկրի վրայ եղած ատեն՝ Հռովմ տիեզերական կայսրութիւնն էր :

«Ու եղաւ որ Օգոստոս կայսրէն հրաման ելաւ՝ որ բոլոր աշխարհ գրուի:» Առևկ. Բ. 4:

14. Դէպ ի ո՞ր կողմերը պիտի տարածուէր այս իշխանութիւնը :

Ըստ Գան. Բ. 9ի, Հռովմ Մակեդոնիայէն ելլելով՝ նուաճեց Սիւրիան (Նխ. քն. գՔր. 65), ցանկայի երկիրը կամ Պաղեստինը (Նխ. քն. գՔր. 63), և Եգիպտոսը (Նխ. քն. գՔր. 30): Մա-

- րաց և Պարսից իշխանութիւնը մեծ եղաւ, Յունաստան ցաւ,  
մեծ եղաւ, և Հռովմ՝ սաստիկ մեծ եղաւ:
15. Այս իշխանութիւնը զո՞վ պիտի կոխկռտէր:  
«Ու մինչև երկնից զօրքը մեծցաւ, և զօրքէն ու աստղերէն  
գետինը ձգեց, ու զանոնք կոխկռտեց»: Հմբ. 13:
16. Ո՞վ է «երկնից զօրքը», և «աստղերը»: — Զօրա-  
ւորները և սրբոց ժողովուրդը: Հմբ. 24:
17. Աստուծոյ «զօրաւոր» ժողովուրդէն աւելի բարձր  
մէկը յարձակում պիտի կրէ՞ր:  
«Ու մինչև զօրաց Եփսանը զինքը բարձրացուց», ինչպէս կը  
սորվինք մեկնութեանը մէջ, և «Եփսանաց Եփսանին դէմ  
պիտի գնէ»: Հմբ. 41, 25:
18. Հռովմ ի՞նչպէս կատարեց զայս: — Ըստ Մատթ. Բի՛  
Հռովմայ հպատակ-թագաւոր Հերովդէս էր՝ որ  
ցանկացաւ սպաննել Յիսուս մանուկը: Մատ. ԻԷ.  
26, 27էն կը տեսնենք որ Հռովմայեցի կուսակալ  
մըն էր որ զԱնի դատապարտեց, և Հռովմայեցի  
զինւորներ Անոր վրայ ի գործ դրին մահուան վը-  
ճիւղը:
19. Այս իշխանութիւնը ի՞նչ պիտի կործանէր:  
«Եւ անոր որբարանին բնակարանը կործանեցաւ»: Հմբ. 41,  
վերջին մաս: Տե՛ս նաև՝ Դան. Թ. 26, 27. ԺԱ. 31: Այս հատ-  
ուածները բաղդատելով Մատ. ԻԶ. 15ի հետ, կը տեսնենք որ երբ  
Քրիստոս երկրի վրայ էր՝ Դանիէ մարգարէին ակնարկած ա-  
ւերմունքին պղծութիւնը մօտ էր: Յ. Տ. 70ին՝ Առաքելոց  
ժամանակ՝ մարգարէական այս յատկանշանակութիւնը կա-  
տարուեցաւ Երուսաղէմի կործանմամբ՝ Հռովմայեցւոց ձեռքով:
20. Ի՞նչ պիտի ըլլար վերջապէս Հռովմ: — «Առանց  
ձեռքի պիտի կոտրի»: Դան. Ը. 25, վերջին մաս:  
Ասի ճշդիւ կը համապատասխանէ Դան. Բ. 34ի,  
յորում՝ քարը որ առանց ձեռքի լեռնէն կտրուած  
էր, զարկաւ արձանին ոտքերուն:
21. Հռովմ ի՞նչ բանի մէջ պիտի յաջողէր:



«Ու զօրք մը ամբարշտութեամբ մշտնջենաւորին դէմ դրաւ, ու ճշմարտութիւնը զեօթնը զարկաւ, ու բան տեսաւ և յստ ջողեցաւ:» Հմբ. 12:

22. Հետեւեալէս՝ ի՞նչ հարցում լսեց Գանիէլ:

«Ու լսեցի որ մէկ սուրբ մը կը խօսէր, և ան խօսողին մէկ ուրիշ սուրբ մը ըսաւ. Մշտնջենաւորին, ու աւրող ամբարշտութեանը, ու սրբարանին և զօրքին կոխուելու տրուելուն տեսիլքը մինչև ե՞րբ պիտի տեսէ:» Հմբ. 13:

23. Ի՞նչ պատասխան ստացաւ:

«Ու անիկա ինծի ըսաւ, Մինչև երկու հազար երեք հարիւր օր, ետքը սրբարանը պիտի մաքրուի:» Հմբ. 14:

24. Մեկնութեան մէջ ի՞նչ բան չբացատրուած մնաց:—

2300 իրիկուն ու առտուն (Հմբք. 13, 14), որոնց կատարումը երկար ժամանակ պիտի առնէր ասպաքային մէջ, չբացատրուեցաւ. ուստի Գանիէլ զարմացած էր տեսիլքին համար, և չհասկցաւ:

«Եւ իրիկուան ու առտուան տեսիլքը որ ըսուեցաւ, ճշմարիտ է. ու դուն տեսիլքը գոցէ՛, քանզի ցաւ օրերու համար է: Ու ես Գանիէլս մտրեցայ և քանի մը օր հիւանդացայ. . . ու տեսիլքին համար զարմացման մէջ էի, ու մէկը չկար որ ինծի հասկցնէր:» Հմբք. 26, 27:

25. Մինչև ո՞ր ատեն կը հասնի այս տեսիլքը:

«Ու ըսաւ, Ահա՛ քեզի կ'իմացնեմ բարկութեան վերջը ի՞նչ ըլլալիքը, վասն զի այս տեսիլքը վերջին ժամանակին համար է:» Հմբ. 19:

26. Ուստի՞ ի՞նչ պէտք է ընէ իւրաքանչիւր մարդու որդի՝ այս տեսիլքին վերաբերմամբ:

«Ու անիկա իմ կեցած տեղիս մտ եկաւ. ու երբ եկաւ՝ վախցայ, ու երեսիս վրայ ինկայ. եւ անիկա ինծի ըսաւ, հասկցի՛ր որդի մարդոյ, որ այս տեսիլքը վերջին ժամանակին համար է:» Հմբ. 17:

## ՄԱՐԳԱՐԷԱԿԱՆ ԹՈՒԱԿԱՆՆԵՐՈՒՆ ՃՇԳՐՏՈՒԹԻՒՆԸ

1. Ի՞նչ բան միևտուեցին վաղեմի մարգարէները :  
«Ու կը քննէին թէ ե՛րբ կամ ինտոր աստն կ'իմացնէր իրենց մէջը եղած Քրիստոսի Հոգին, որ առաջ կը վկայէր Քրիստոսի շարշարուիլը, ու անկէ ետև փառաւորուիլը :» Ա. Պետ. Ա. 11 :
2. Ո՞ր ժամանակաշրջանի համար Երեմիայ մարգարէացաւ :  
«Ասորջամար զօրաց Տէրը այսպէս կրտէ. Որովհետև իմ խօսքերս մտիկ չ'ըրիք, ասա Ես պիտի զրկեմ, ու բոլոր հիւսիսի ազգատոհմները, ու իմ ծառատ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը պիտի առնեմ կ'ըտէ Տէրը, ու զանոնք այս երկրին վրայ, ու բոլոր աս շրջակայ ազգերուն վրայ պիտի բերեմ, ու զանոնք նզովածի պէս բնաջինջ պիտի ընեմ, ու զանոնք զարմանքի ու սուլելու են թակայ պիտի ընեմ, ու յաւիտենական աւերակի պիտի դարձնեմ, և անոնցմէ ցնծու թեան ձայնը ու ուրախութեան ձայնը, փեսային ձայնը ու հարսին ձայնը, աղօրիւրն ձայնը ու ճրագին լոյսը պիտի կորսնցնեմ. և այս բոլոր երկիրը անպատ ու ամայութիւն պիտի ըլլայ. ու աս ազգերը եօրանասուն տարի Բաբելոնի թագաւորին պիտի ծառայեն :  
Եւ եօթանասուն տարին լմնալէն ետքը Բաբելոնի թագաւորին ու անոր ազգին այցելութիւն պիտի ընեմ իրենց անօրէնութեանը համար, նաև Քաղզէացաց երկրին այցելութիւն պիտի ընեմ կ'ըտէ Տէրը, ու զանիկա յաւիտենական ամայութեան պիտի դարձնեմ. ու ան երկրին վրայ պիտի բերեմ ան բոլոր խօսքերը որ Ես անոր դէմ խօսեցայ. այսինքն Երեմիային բոլոր ազգերուն վրայով ըրած մարգարէութեանը աս գրքին մէջ գրուած բոլոր բաները : Քանզի զանոնք ալ շատ ազգեր ու մեծ թագաւորներ իրենց ծառայ պիտի ընեն, ու Ես անոնց հասուցում պիտի ընեմ իրենց ջրածնեբուն ու իրենց ձեռացը գործքերուն համեմատ» Երեմ. ԻԵ. 8—14 :
3. Այս թուականը գիտնալը ի՞նչ ազդեցաւ թիւն ըրաւ Դանիէլի վրայ :

«Անոր թագաւորութեանը առաջին տարին ես Դանիէլս գրքերէն իմացայ ան տարիներուն թիւը՝ որոնց համար Տէրոջը խօսքը եղեր էր Երեմիայ մարգարէին, թէ եօթանասուն տարիով պիտի վերջացնէր Երուսաղէմի աւերումները: Ու ես իմ երեսու Տէր Աստուծոյս դարձուցի, որ ծոմապահուածեամբ, քուրձով, ու մոխիրով աղօթք ու աղաչանք մատուցանեմ:» Դանիէլ Թ. 2, 3:

4. Ի՞նչ փոփոխութիւն տեղի ունեցած էր կառավարութեան մէջ՝ Դանիէլի Ը. գլխոյն տեսիլքէն ի վեր. բաղդատէ՛ Դան. Թ. 1ը Ը. 1ին հետ:

«Բազատատար թագաւորին թագաւորութեանը երրորդ տարին ինծի Դանիէլիս տեսիլք երեւցաւ, ան առջի տեսածէս ետքը Դան. Ը. 1. — «Ասուերոսի որդւոյն Գարեհէին առաջին տարին՝ որ անիկայ Մարաց սերունդէն էր, ու Գաղղէացւոց թագաւորութեանը վրայ թագաւոր դրուեցաւ:» Դան. Թ. 1:

ԵՄԱՆՅԹՈՒԹԻԹԻԻՆ. — Այս երկու տեսիլքներուն, այսինքն Ը. ու Թ. զուկներուն տեսիլքներու ժամանակամիջոցին՝ Մարաց ու Պարսից Դարեհ Թագաւորը, Գաղղէացւոց յաղթած և Բաբելացւոց Թագաւորութեան իշխանութիւնը Մարաց ձեռքը անցած էր:

5. Ի՞նչ բանի համար Դանիէլ աղօթեց:

«Ո՛վ Տէր՝ Քու բոլոր բարութեանդ համեմատ շնորհք ըրէ, Քու սուրբ լեւնէդ՝ Երուսաղէմ՝ քաղաքէն Քու սրամտութիւնդ ու բարկութիւնդ դառնայ. վասնզի մեր մեղքերուն համար ու մեր հարցը անօրէնութիւններուն համար՝ Երուսաղէմ ու Քու ժողովուրդդ ամէն մեր բոլորտիքը եղողներուն նախատինք եղան: Եւ հիմայ ո՛վ Աստուած մեր՝ Քու ծառայիդ աղօթքը ու աղաչանքը լսէ՛, ու Տէրոջը համար՝ Քու ամայացած սրբաբանիդ վրայ երեսդ փայլեցուր:» Դան. Թ. 16—17:

6. Ո՞վ երեւցաւ այս մարգարէին՝ մինչդեռ ան աղօթքի մէջ էր:

«Ու երբոր ես տակաւին կը խօսէի, կ'աղօթէի, ու իմ մեղքս ու իմ ժողովուրդիս Խրայէլին մեղքը կը խոստովանէի, ու իմ Աս. ստուծոյս սուրբ լեռանը համար իմ աղաչանքս իմ Տէր Աստուծոյս առջեւ կը մատուցանէի, երբոր ես տակաւին աղօթքի մէջ կը խօսէի, ահա ան առջի սեսիլքի մէջը սեսած մարդս Դարբիէլ շուտ մը թուչեւով՝ ինծի դոյաւ իրիկուան զսհին տեսնը:» Դան. Թ. 20, 21:



7. Ի՞նչ բառերով Գարրիէլ խօսեցաւ :  
«Ու ինծի հասկցնելով, ինծի հետ խօսեցաւ ու ըսաւ. ո՛վ Գա-  
րիէլ, հիմայ ելայ որ բնդի իմաստուրիւն սորվեցնեմ:» Հմբ.  
22: Ութերորդ գլխոյն մէջ՝ Գարրիէլ յայտնած էր Գանիէլին թէ  
իշխանութիւն մը ելնելով՝ դեմ պիտի դնէր իշխանաց Իշ-  
խանին, ու սրբարանն ու զօրքը սոքի տակ պիտի առնէր  
2300 տարիներու Սակայն Գան. ութերորդ գլխոյն 27րդ. հա-  
մարէն կը տեսնենք որ մարգարէն չ'հասկցաւ այս ժամանակը,  
քանզի բացատրուած չէր իրեն «Եւ ես Գանիէլս մարեցայ  
ու քանի մը օր հիւանդացայ. ետքը ելայ թագաւորին դործը  
տեսայ, ու տեսիլքին համար զարմացման մէջ էի, ու մէկը չկար  
որ ինծի հասկցնէր:» ՔԼ. Բ. 27:
8. Ուստի Գարրիէլ՝ Դանիէլի թ. գլխոյն մէջ՝ ժամա-  
նակի նկատմամբ իր բացատրութիւնը ո՛ւրկէ կը սկսի.  
«Եօթնասունն եօթնեակ որոշուած է.» կամ՝ ըստ  
բնագրին՝ «կարուած է,» Հմբ. 24:
9. Ի՞նչ բանէ կտրուած է 70 եօթնեակը:— Դան. Ը. 14.  
համարի 2300 օրէն: «Ու անիկայ ինծի ըսաւ. մինչև  
երկու հազար երեք հարիւր օր, ետքը սրբարանը  
պիտի մաքրուի:»
10. Քանի՞ մասերու բաժնուած է տարիներու այս 70  
եօթնեակը :  
«Եւ գիտցի՛ր ու հասկցի՛ր, որ Երուսաղէմը նորէն շինելու հրա-  
մանը ելլելէն մինչև Օծեալ Իշխանը եօրր եօրնեակ ու վար-  
սուցուեցի ու եօրնեակ կայ. և նորէն հրատարակը ու պա-  
րիսպը պիտի շինուի նեղութեան ժամանակներու մէջ: Եւ վաթ-  
սուներկու եօթնեակէն ետքը Օծեալը պիտի կտրուի, բայց չէ թէ  
իրեն համար, ու գալու իշխանին ժողովուրդը՝ քաղաքը ու սրբա-  
րանը պիտի աւրէ, ու վերջը հեղեղով պիտի ըլլայ, ու մինչև  
պատերազմին վերջը աւերումներ սահմանուած են: Եւ մէկ եօր-  
նեակ մը շատերուն հետ ուխտ պիտի հաստատէ, ու եօթնեակին  
մէջտեղը զո՛հը ու պատարազը պիտի դադրեցնէ, ու աւրոզը  
պղծութեանց աշտարակին վրայ պիտի ըլլայ, մինչև որ աւրուա-  
ծին վրայ նախասահմանեալ կորուստը թափուի:» Դան. Թ.  
25—27: 7 եօթնեակ, 62 եօթնեակ, ու 1 եօթնեակ:

11. 7 ու 62 եօթնեակը ո՞ւրկէ կը սկսի և ո՞ւր կը վերջանայ :

«Եւ գիտցի՛ր ու հասկցի՛ր, որ Երուսաղէմը նորէն շինելու հրամանը ելլելէն մինչև Օծեալ Իօխանը եօթը եօթնեակ, ու վաթսուներկու եօթնեակ կայ. և նորէն հրապարակը ու պարխաքը պիտի շինուի նեղութեան ժամանակներու մէջ :» Հմբ. 25, Երբայց երէն «Մեծիա» և Յունարէն «Քրիստոս» Օծեալ կը նշանակեն. անանկ որ տարիներու 69 եօթնեակը, կամ 483 մարգարեական օրը, կամ 483 տառական տարին, կը հասնի հրամանը ելլելէն մինչև մեր Փրկչին օծուիլը :

12. Ե՞րբ և ի՞նչպէս օծուեցաւ Յիսուս :

«Պուք աղէկ գիտէք ան բանը, որ բոլոր Հրէաստանի մէջ եղաւ Գալիլէայէն սկսած, ան մկրտութենէն ետև որ Յովհաննէս քարոզեց, Յիսուսը որ Նազարէթէն էր, որ Աստուած զԱնիկայ օծեց Սուրբ Հոգիով եւ զօրութիւնով, որ պտըտեցաւ բարեք ընելով ու Ստատանայէն բոլոր ասնջուածները բժշկելով, քանզի Աստուած իր հետն էր :» Գոր. Ժ. 37, 38 :

«Ու երբոր Յիսուս մկրտուեցաւ, շուտ մը ջուրէն դուրս ելաւ, և աս հերկինքը Անոր բացուեցաւ, և տեսաւ Աստուծոյ Հոգին որ աղանձի պէս կ'իջնէր և կուգար իր վրայ : Եւ աս հերկինքէն ձայն մը եկաւ որ կըսէր, «Ատիկա է իմ սիրելի որդիս, որուն հաւանք եմ :» Մատթ. Գ. 16, 17 :

«Ու եկաւ Նազարէթ, ուր որ ինք մեծցած էր, և իր սովորութեանը պէս շաքարով օրը մտաւ ժողովարանը, ու ելաւ որ կարգայ : Եւ տուին Անոր Եսայի մարգարէին գիրքը, ու երբոր գիրքը բացաւ, գտաւ ան տեղը՝ ուր որ գրուած էր, Տէրոջը Հոգիին իմ վրաս է, ինչու որ զիս օծեց աղքատներուն աւետարան քարոզելու, զիս զրկեց կտորած սիրտ ունեցողները բժշկելու :» Դուկ. Գ. 16—18 :

Օծումը տեղի ունեցաւ Յիսուսի մկրտութեան տանն, Յ. Տ. 27ի աշնան :

13. Հասկնալով որ 69 եօթնեակը վերջացաւ Յ. Տ. 27ին, հրամանը ե՞րբ ելած պէտք է ըլլայ : — Ն. ք. զՔր. 457ին :

14. Այսպիսի հրաման մը կը գտնենք այդ ժամանակին : «Թագաւորաց թագաւորը Արտաշէս՝ Երբաս քահանային՝ երկնից Աստուծոյն օրինացը կատարեալ գրչին, և այլն. հրաման

կուտամ որ իմ թագաւորութեանս մէջ եզրղ Իսրայէլի ժողովուրդէն, ու անոր քահանաներէն, ու Վեւտացիներէն ամէն իրենց կամքովը՝ Երուսաղէմ ելլել ու զողնորը քեզի հետ ելլեն, և այլն... Երկնից Աստուածը ինչ որ կը հրամայէ շուտով ՚ի դործ դուրսի, երկնից Աստուծոյն տանը համար, որ չըլլայ թէ թագաւորին ու անոր որդւոցը թագաւորութեանը վրայ բարկութիւն գոյ:» Եզրաս Է. 42—23:

Ըստ Եզրաս 9. 14ի, տաճարին վերաշինութեանը համար երեք հրամաններ ելան. Ա. Կիւրոսի հրամանը՝ ն. ք. զՔր. 536, Բ. Դարեհի հրամանը՝ ն. ք. զՔր. 519, Գ. Արտաշէսի հրամանը՝ ն. ք. զՔր. 457:

15. Ինչ տեղի պիտի ունենար 70րդ եօթնեակին մէջ : «Եւ մէկ եօթնեակ մը շատերուն հետ ուխտ պիտի հաստատէ, և եօթնեակին մէջուզը զոհը և պատարագը պիտի դադրեցնէ:» Դան. Թ. 27:

16. Որո՞ւն հետ եղաւ երկրորդ ուխտը կամ նոր կտակարանը :

«Քանզի կը յանդիմանէ անոնք ու կ'ըսէ, Ահա օրեր կուգան կ'ըսէ Տէրը, որ Իսրայէլի սանր հետ ու Յուդայի սանր հետ նոր ուխտ պիտի ընեմ: Զէ՛ թէ ան ուխտին պէս որ անոնց հետ ըրի, ան օրը որ անոնց ձեռքէն բռնեցի, զանոնք Եզրիպտոսի երկրէն հանելու համար. ինչու որ անոնք իմ ուխտիս մէջ չկեցան, Ես ալ անհոգ եղայ անոնց վրայով՝ կ'ըսէ Տէրը: Քանզի տա է ան ուխտը՝ որ Իսրայէլի տանը հետը պիտի ընեմ ան օրերէն ետքը՝ կ'ըսէ Տէրը, իմ օրէնքներս անոնց սրտին մէջը պիտի գնեմ, և անոնց սրտին վրայ պիտի գրեմ զանոնք, ու Ես անոնց Աստուած պիտի ըլլամ ու անոնք ինծի ժողովուրդ պիտի ըլլան:» Եզր. Ը. 8—10:

17. Ամենէն առաջ որո՞նց զրկուեցան Տէրը և իր աշակերտները :

«Եւ Ինքը պատասխան տուաւ ու ըսաւ, Ես ուրիշի մը չ'զրկուեցայ, բայց միայն Իսրայէլի սանր կորսուած ոչխարներուն:» Մատթ. ԺԵ. 24:

«Աս տասներկուքը Յիսուս զրկեց, և անոնց պատուիրեց՝ ըսելով, Հեթ անոնք որու ճամբայ մի՛ երթաք, և Սամարացիներու քաղաք մի՛ մտնէք. հասցա աւելի Իսրայէլի սանր կորսուած ոչխարներուն գացէք:» Մատթ. Ժ. 5, 6:



18. Ի՞նչ պէտք էր տեղի ունենար եօթնեակին մէջտեղը  
և այս ի՞նչպէս կատարուեցաւ :

«Եւ եօթնեակին մէջտեղը գոհը ու պատարազը պիտի դադ-  
րեցնէ:» Գռն. Թ. 27:

Ի՞նչ պատահեցաւ՝ երբ Գառն Աստուծոյ մեռաւ  
խաչին վրայ :

«Ու Յիսուս դարձեալ մեծ ձայնով աղաղակեց ու հոգին ա-  
ւանդեց: Եւ ա՛հա թանաքին վարագոյրը վերէն ի վար եր-  
կուիի նեղուեցաւ, ու երկիրը շարժեցաւ, ու քարերը պատ-  
ուեցան,» և այլն: Մատթ. ԻԷ. 50, 51: Քրիստոսի պաշտօնը տե-  
ւեց 3½ տարի: Ըստ Յովհ. Բ. 43: Ե. 4: Զ. 4: ԺԳ. 1Ի, Յիսուս  
4 Զատիկ ըրաւ, որոնց վերջնոյն մէջ խաչուեցաւ Յ. Տ. 34ին:

19. Առաքեալներն ալ միայն Հրէից հետ ուխտ հաստա-  
տեցին 70րդ եօթնեակին վերջի կիսուն :

«Եւ Ստեփաննոսի մահուանը վրայ եկած նեղութենէն ցի-  
բուցան եղածները մինչև Փիւնիկէ ու Կիպրոս ու Անտիոք հա-  
սան, ու մէկուն Աստուծոյ խօսքը չէին խօսեր, միայն թէ Հըր-  
եաներուն:» Գործ. ԺԱ. 49:

20. Ի՞նչ փոփոխութիւն տեղի ունեցաւ Յ. Տ. 34ին  
եօթանասուն եօթնեակի վախճանին :

«Եւ ըսաւ անոնց, Գուք գիտէք թէ ի՞նչպէս ապօրինաւոր բան է  
Հրեայ մարդու մը օտարազգիի հետ հաղորդակցութիւն ընելը  
կամ անոր մօտենալը, բայց Աստուած ինծի ցուցուց որ մար-  
դոցմէն մէկուն պիղծ կամ անմաքուր չըսեմ:» Գործք. Ժ. 28:

«Ու երբոր Պետրոս աս խօսքերը կը խօսէր, Հոգին Սուրբ իջաւ  
ամենուն վրայ, որոնք խօսքը կը լսէին:» Հմր. 44:

«Եւ թլիփատուածներէն եղող հաւատացեալները, որոնք Պետ-  
րոսի հետը եկած էին, զարմացան որ Հեթանոսներուն վրայ ալ  
Հոգւոյն Սրբոյ պարգեւը կը լեցուէր:» Հմր. 45:

«Եւ առաքեալները ու եղբայրները որ Հրէաստանի կողմերն էին,  
լսեցին որ Հերանոսներն ալ Աստուծոյ խօսքը ընդունե-  
րն:» Գործ. ԺԱ. 4:

21. Տակաւին ի՞նչ պատահելու է 70 եօթնեակի վախ-  
ճանին :

«Ու աւրողը, պղծութեանց աշտարակին վրայ պիտի ըլլայ:

մինչև որ աւրուածին վրայ նախասահմանեալ կորուստը թափուի» Դան. թ. 27:


Հետեւարար՝ Յ. Տ. 70ին Երուսաղէմ ու տաճարը կործանեցան, և տաճարը աւերակ կը մնայ մինչև այս օրը: (Տե՛ս նաև Մատթ. ԻԳ. 45):

22. Եթէ 490 տարիները կտրենք 2300էն, ո՞րչափ կը մընայ: — 1810 տարի:
  23. Ըստ որում 490 տարիները վերջացան Յ. Տ. 34ին, ո՞ր թուականին պիտի հասնին 1810 յաւելուածական տարիները: — Յ. Տ. 1844:
  24. Ետքը ի՞նչ պէտք էր տեղի ունենար:  
«Ետքը Սրբաբանը պիտի մարբուի» Դան. Ը. 44:
  25. Ո՞ր ժամանակին 1844ի այս մաքրագործումը պիտի տեղի ունենար:  
«Վերջին ժամանակին» Դան. Ը. 47:
-


## ՍՐԲԱՐԱՆԸ

1. **Տէրը ի՞նչ պահանջեց Խորայէլէն :**  
«Զբուցէ՛ Խորայէլի որդւոցը որ ինծի ընծայ բերեն, ամէն յօժար կամօք տուող մարդէն պիտի առնէք իմ ընծասու : Ելից Ի՛ն. 2 : «Եւ ինձի սրբաբան մը շինեն՝ որ իրենց մէջը բնակիմ :» Լմբ. 8 :
2. **Ան ի՞նչ ցուցուց Մովսէսին , և ի՞նչ հրամայեց անոր :**  
«Խորանին օրինակը և անոր բոլոր կարասիքին օրինակը, բոլոր քեզի ցուցուցածիս պէս՝ ճիշդ անանկ պիտի շինես :» «Նայէ՛ որ լեռը բեզի ցուցուցած օրինակին պէս շինես զանոնք :» Ել. Ի՛ն. 9, 40 :
3. **Նկարագրէ խորանին կանգնումը :**  
«Եւ Մովսէս Տէրոջը իրեն բոլոր պատուիրածին պէս բրաւ. առնակ բրաւ : Եւ եղաւ որ երկրորդ տարին, առաջին ամսուն առաջին օրը խորանը կանգնուեցաւ : Եւ Մովսէս կանգնեց խորանը ու անոր խորիսինները դրաւ, և անոր տախտակները կանգնեց ու անոր նիղերը անցուց, ու սիւնները կանգնեց : Եւ խորանին վրայ տարածեց վրանը, և վերէն վրանին ծածկոցը անոր վրայ դրաւ, ինչպէս որ Տէրը անոր պատուիրեք էր : Եւ վկայութիւնը առաւ ու տապանակին մէջը դրաւ, ու ձողերը տապանակին վրայ անցուց, ու վերէն տապանակին վրայ քաւութիւնը դրաւ : Եւ տապանակը խորանին մէջը բերաւ ու ծածկող վարագոյրը դրաւ և վկայութեան տապանակը ծածկեց, ինչպէս որ Տէրը Մովսէսին պատուիրեք էր : Եւ ժողովքի վրանին մէջ խորանին հիւսիսային կողմը, վարագուրին գուրսիղին դրաւ սեղանը ու անոր վրայ շարուելաւ հասցերը շարեց Տէրոջը առջեւը, ինչպէս Տէրը Մովսէսին պատուիրեք էր : Եւ ժողովքի վրանին մէջ սեղանին զիմացը խորանին հարաւային կողմը դրաւ աշտանակը : Եւ Տէրոջը առջեւը ճրագները վառեց, ինչպէս որ Տէրը Մովսէսին պատուիրեք էր, ու ժողովքի վրանին մէջ վարագուրին առջեւը դրաւ սկի սեղանը, ու անոր վրայ անուշահոտ խունկ ծխեց, ինչպէս որ Տէրը Մովսէսին պատուիրեք էր, և խորանին զրան վարագոյրը դրաւ : Եւ խորանին, այսինքն ժո-






Տապանակը



Խառնկի ոսկի սեղանը



Եօթը նիւղով աւսանակը



Առաջաւորութեան հացի սեղանը

զովքի վրանին դրանք քով ողջակէզին սեղանը դրաւ, ու անոր վրայ ողջակէզը ու հացի ընծան մատուց, ինչպէս որ Տէրը Մովսէսին պատուիրեր էր: Եւ ժողովքի վրանին ու սեղանին մէջտեղը դրաւ աւազանը և անոր մէջը լուացուելու համար ջուր դրաւ:» Եւ. Խ. 46-30:

4. Ի՞նչ բան կը բաժնէր Սրբութիւնը՝ Սրբութիւն Սրբութեանցէն, և ի՞նչ կար Սրբութիւն Սրբութեանցին մէջ:

«Եւ կապուտակէ և ծիրանեղոյնէ և կրկնակի կարմիրէ և մանուած բարակ քթանէ վարագոյր մը շինես. անիկոյ վարպետի գործ, քերտվրէններով պիտի շինուի: Եւ անիկա Սատիմի փայտէ շորս սոկիտպատ սրեներու վրայ դնես. անոնց ճանկերը սոկի պիտի ըլլան, ու շորս արծաթ խարխոխներու վրայ պիտի ըլլան: Եւ վարագոյրը ճարմանդներէն վար կախես, և հոն վարագոյրին ներսի կողմը վկայութեան տապանակը բերես. և վարագոյրը ձեզի պիտի բաժնէ Սրբութիւնին ու Սրբութեանց Սրբութիւնին մէջտեղը:» Եւ. ԻԶ. 31-33:

5. Ի՞նչ կար վկայութեան տապանակին մէջն ու վրան:

«Որուն մէջն էր սոկի բուրջաբը, և ուխտին տապանակը ամէն կողմէն սոկիով պատած. որուն մէջն էր սոկի սափորը մանանայով լեցուն, և Ահարոնին գաւազանը որ ծաղկեցաւ, և ուխտին տախտակները:» Երբ. Թ. 4:

«Եւ վկայութիւնը առաւ ու տապանակին մէջը դրաւ. և ձողերը տապանակին վրայ անցուց, և վերէն տապանակին վրայ քառութիւնը դրաւ:» Եւ. Խ. 20:

6. Ի՞նչ կար Սրբութիւնին մէջ:

«Եւ սեղանը ներս բերես, և անոր վրայ շարուելու հացերը շարես, և առաքակը ներս բերես, և անոր ճրագները վառես: Եւ վկայութեան տապանակին առջեւը դնես խուճկիճ սոկի սեղանը ու խորանին դրանք վարագոյրը դնես:» Եւ. Խ. 4. 5:

7. Ո՞ւր կը գտնուէր ողջակէզի սեղանը:

«Եւ խորանին, սյսինքն ժողովքի վրանին դրանք առջեւը ողջակէզի սեղանը դնես:» Եւ. Խ. 6:

8. Ո՞վ կը կատարէր պաշտամունքը Սրբութիւնին մէջ:

«Առաջին խորանը ամէն տառն կը մտնէին քահանաները՝ պաշտամունքը կատարելու:» Երբ. Թ. 6:

9. Ո՞վ միայն Սրբութիւն Սրբութեանցին մէջ կը մըտնէր, և ո՞րքան յաճախ :
- «Բայց երկրորդը տարին անգամ մը միայն քահանայապետը կը մտնէր, ան ալ չէ՛ թէ առանց արիւնի, զոր իրեն համար ու ժողովուրդին սխալմունքներուն համար կը մատուցանէր» Երբ. թ. 7:
10. Սրբարանին պաշտամունքներուն մէջ ո՞րքան իշխաններ կ'օգնէին քահանայապետին :
- «Եւ Եղիազարի որդիներուն մէջ գտնուած իշխանները Խթամարի որդիներուն մէջ գտնուածներէն շատ էին. և զանոնք սյուպէս բաժնեցին. Եղիազարի որդիներուն համար թասերովեց իւլիան՝ իրենց ազգատոհմներուն համեմատ, ու Խթամարի որդիներուն համար ուրբ իւլիան՝ իրենց ազգատոհմներուն համեմատ, և ասոնք ու անոնք վիճակով բաժնուեցան, քանզի սրբարանին իշխանները ու Աստուծոյ տանը իշխանները Եղիազարի իշխաններէն ու Խթամարի որդիներէն էին» Ա Մնաց. ԻԳ. 5, 6:
11. Ի՞նչ էր սրբարանը :
- «Ուստի հարկ էր որ երկուսը բաներուց օրինակներ առնցմով մաքրուին. բայց բուն երկնաւորները ասոնցմէ աւելի ազէկ զօհեցով : Քանզի Քրիստոս չէ՛ թէ ձեռագործ սրբարանը մտաւ, որ նեմարիսին օրինակն է, հապա բուն երկնէքը, որ հիմա մեզի համար Աստուծոյ առջեւը ներկայանայ» Երբ. թ. 23, 24: Կոյ երկնային սրբարան մը, որուն մէջ Քրիստոս կը վարէ Իր քահանայական գործը, ճշմարիտ խորան մը զոր Տէրը կանգնեց և չէ՛ թէ մարդ: Այս ոյն խորանն է զոր Մովսէս տեսաւ Աինա լեռան վրայ:
12. Ի՞նչ կ'ըսէ Պօղոս առաքեալ բուն խորանին և անոր Քահանայապետին մասին որ երկինքն է :
- «Եւ զուցած խօսքերուս բովանդակութիւնը աս է. անոնկ Քահանայապետ մը ունինք մենք՝ որ Ինքը երկինքը Աստուծոյ մեծութեանը աթոռին աջ կողմը նստաւ. սրբարանին պաշտօնեայ և ճշմարիտ խորանին՝ զոր Տէրը կանգնեց և չէ՛ թէ մարդ» Երբ. 8: 1—2:
13. Քրիստոս ե՞րբ և ի՞նչպէս Քահանայապետ եղաւ :
- «Տէրը երդում՝ ըրաւ և պիտի չզղջայ. Իուն յաւիտեան քա-



Հանայ ես Մեղքիսեզեկի կարգին պէս:» «Ինչու որ օրէնքը ակա-  
րութիւնով պաշարուած մտրդիկը քահանայապետ կը կարգէ.  
բայց երգումին խօսքը որ օրէնքէն ետեւ էր, Որդին՝ որ յաւիտեան  
կատարեալ է:» Երբ. Է. 24, 28,

14. Ո՞վ կ'օգնէ Իրեն իրը քահանայ:

«Եւ երբոր զիրքը առաւ, շորս կենդանիները և քսանեւշորս ե-  
րէցները Գառնուկին առջեւը ինկան, և ամէնքն ալ քնարներ  
ունէին, և ոսկիէ խնկամաններ խունկով լեցուն, որ սուրբերուն  
ազօթքն է: Եւ նոր երգ մը կ'երգէին՝ ըսելով, Արժանի ես  
Գուն առ զիրքը առնելու և ասոր կնիքները բանալու, ինչու որ  
մորթուեցար, և մեզ ծախու առիր Աստուծոյ՝ Քու արիւնովդ  
ամէն ցեղէ և լեզուէ և ժողովուրդէ և ազգէ: Եւ մեզ մեր Աս-  
տուծոյ թագաւորներ և քահանաներ ըրիր, և երկրի վրայ պիտի  
թագաւորենք:» Յայտ. Է. 8—10:

15. Ի՞նչ անօթներ տեսաւ Յովհաննէս՝ Սրբութեան և  
Սրբութիւն Սրբութեանցին մէջ:

«Աթառն առջև եօրը հաս բորբոսած կրակի դամբարներ  
կային, որոնք Աստուծոյ եօրը Հոգիներն են:» Յայտ. Գ, 5:  
«Եւ ուրիշ Հրեշտակ մը եկաւ սեղանին առջեւը կայնեցաւ, ու  
ոսկեղէն խնկանոց մը ունէր, և իրեն շատ խունկ տրուեցաւ, որ  
ըստ սրբոց ազօթքներուն հետ արձաից առջեւը եղող ոսկի  
սեղանին վրայ մատուցանէ: Եւ խունկերուն ծուխը սրբոց ա-  
զօթքներուն հետ Հրեշտակին ձեռքէն Աստուծոյ առջեւը ելաւ:  
Եւ Հրեշտակը առաւ խնկանոցը և սեղանին կրակէն լեցուց և  
ձգեց երկրի վրայ, և եղան ձայներ և որոտումներ և փայլակներ  
և երկրաշարժ:» Յայտ. Ը. 3—5:

«Ու երկնից մէջ Աստուծոյ տաճարը բացուեցաւ, և ահոր ուխ-  
տին ճապանակը իր տաճարին մէջը երեւցաւ. և եղան փայ-  
լակներ, ձայներ և որոտումներ և երկրաշարժ և խոշոր կար-  
կուտ:» Յայտ. ԺԱ. 19:

16. Հին ուխտին ատեն մեղաւորը ի՞նչ պարտէր ընել իր  
փրկութեանը համար:

«Եւ թէ որ երկրին ժողովուրդին մէկը սխալմամբ մեղանչէ և  
Տէրոջը արգիլած բաներէն մէկը ընելով յանցաւոր ըլլայ, թէ որ  
իր ըրած մեղքը իրեն ծանուցուի, իր ըրած մեղքին համար իր  
ընծան այժեհէն անարատ էգ այժ մը պիտի ըրէ և իր ձեռքը  
մեղքի պատարագին զխուն վրայ պիտի դնէ, և մեղքի պատա-

բազ եղած անասունը սղջակէզներուն մերթուելու տեղը մերթ է:» Ղեւտ. Գ. 27—29:

17. Ի՞նչ պարտէր ընել քահանան՝ և ի՞նչ նպատակով :  
«Եւ քահանան իր մատովը անոր արիւնէն պիտի առնէ, և սղջակէզի սեղանին եղջիւրներուն վրայ դնէ, և մնացած բոլոր արիւնը սեղանին յատակը թափէ: Եւ անոր բոլոր ճարպը խաղաղութեան զոհին ճարպը փրցուելուն պէս պիտի փրցնէ, և քահանան պիտի այրէ անիկա սեղանին վրայ անոյշ հոտի համար Տէրոջը առջեւը. և քահանան անոր համար քաւութիւն ընէ ու անոր թողութիւն պիտի ըլլայ:» Ղեւտ. Գ. 30, 31:
18. Ո՞ր կը բերուէին մեղքերը և ինչի՞ պէտք ունէր սրբարանը :  
«Եւ սրբարանին համար քաւութիւն պիտի ընէ՝ Խորայէլի որդւոցը անմաքութիւններէն և անոնց բոլոր մեղքերուն յանցանքներէն սրբելով զանիկա. ստանկ պիտի ընէ ժողովքի խորանին համար ալ, որ անոնց հետ ու անոնց անմաքութիւններուն մէջը կը կենայ:» Ղեւտ. ԺԶ. 16:
19. Ասիկա ե՞րբ տեղի կ'ունենար :  
«Ծօքներոյ ամսուն մէջ, ամսուն քսաներոյ օրը ձեր անձերը պիտի խոնարհեցնէք, և բնաւ գործ մը չգործէք, թէ՛ երկրացին և թէ՛ ձեր մէջը գանուող օտարականը:» Ղեւտ. 16. 29:
20. Մեղքը իրապէս կը վերցուէ՞ր այս կերպով :  
«Քանզի օրէնքը դալու բարիքներուն շուքը, և չէ թէ այն բաներուն բուն կերպարանքը ունենալով, միշտ ամէն տարի մատուցուած նոյն զոհերով երբէ՛ք չի կրնար կատարել ընել անոք որ կը մօտենան: Ապա թէ ոչ՝ պիտի չգազարէին մատուցուելէն, պաշտօն մատուցանողները մէկ անգամ մաքրուելէն ետե՛ ալ մեղքի վրայօք խղճմտանքի յանդիմանութիւն մը չունենալուն համար: Բայց անոնցմով ամէն տարի մեղաց յիշատակութիւն կ'ըլլայ. ինչու որ նոխաղներուն և ցուլերուն արիւնը չի կրնար մեղքերը վերցնել:» Երբ. Ժ. 4—4:
21. Հետեւաբար, ի՞նչ էր լոկ այս պաշտամունքը :  
«Որ անոք երկնային բաներուն նմանութիւնովը և շուքովը կը ծառայեն:» Երբ. Ը. 5ին առաջին մասը:
22. Ո՞վ իրապէս կը քաւէ մեղաւորին մեղքերը :

«Ուստի պէտք էր Անոր բողոքողին եղբայրներուն նման ըլլալ, որ  
Խնքը ողորմած ըլլայ ու հաւատարիմ՝ քահանայապետ Աստու-  
ծոյ կողմանէ, ժողովուրդին մեղքերը քաւելու համար»։ Երբ.  
Բ. 17:

23. Հաճիկ էր նաև որ Քրիստոս բան մը ունենար մա-  
տուցանելու, և ի՛նչ:

«Քանզի ամէն քահանայապետ պատարագներ ու զոհեր մատու-  
ցանելու համար սրոշուած է. ուստի հարկ է որ Ասիկայ ալ  
բան մը ունենայ մատուցանելու»։ Երբ. Ը. 3: «Ո՛չ ալ նոխազ-  
ներու ու զուարտկներու արիւնով, հասա Իր արիւնովը մէկ  
անգամ՝ սրբարանը մտաւ՝ յաւիտենական փրկութիւն ստա-  
նալով: Վասն զի եթէ ցուլերուն ու նոխազներուն արիւնը և  
երինջին միտիւր սրսկուելով՝ պղծեալները կը սրբէր մարմինի  
մաքրութեան կողմանէ, ալ ո՛րչափ աւելի Քրիստոսի արիւնը՝  
որ յաւիտենական Հոգիին ձեռքովը Իր անձը պատարագ մա-  
տուց Աստուծոյ, պիտի սրբէ ձեր խղճմտանքը մեռած գործքե-  
րէն՝ կենդանի Աստուածը պաշտելու»։ Երբ. Թ. 12—14: Ըստ  
որում Քրիստոսի զոհը ազգու է միշտ (Երբ. Ժ. 12), ասոր հա-  
մար Ան պէտք չէ շարունակ զոհուի, այլ միայն Իր արեանն  
արժանաւորութիւնները կը ներկայացնէ:

24. Երկնային սրբարանն ալ պէ՛տք էր մաքրուէր:

«Ուստի հարկ էր որ երկնաւոր բաներուն օրինակները ասոնց-  
մով մաքրուին. բայց բուն երկնաւորները ասոնցմէ աւելի աղէկ  
զոհերով»։ Երբ. Բ. 23:

25. Մաքրութեան գործը ե՞րբ պիտի սկսէր:

Ըստ Դան. Ը. 14ի՝ 2300 օրերու վախճանին կամ Ա. Տ. 1844ին:

Պաշտամունքի օրական շրջանին մէջ՝ ապաշխարողին մեղքերը  
օրինակով մորթուած զոհին կը փոխանցուէին, սրուն միջոցաւ մեղա-  
ւորին համար քաւութիւն կ'ըլլար, և պատարագով քահանան այդ  
մեղքերը սրբարանը կը փոխադրէր, թէպէտև մեղաւորը անձնապէս  
սուրբ տեղը չէր մտնէր:

Քաւութեան մեծ օրը՝ Տէրը ներկայացնող նոխաղին արիւնովը  
ամէն մեղք գուրս կը հանուէր սրբարանէն, ու մեղաւորը, եթէ իր  
անձը խոնարհեցուցած էր, անպարտ կը յայտարարուէր, ու ամբողջ  
տարւոյն ընթացքին մէջ օրական զոհի պաշտամունքով սրբարանին  
մէջ հաւաքուած մեղքերը օրինակով կը դրուէին Սատանան ներ-



կայացնող ազատ արձակուելու նոխագին գլխուն վրայ, և յաւիտեան  
կը հեռացուէին սրբարանէն:

Հակատիպին մէջ՝ անկեղծ ապաշխարողը իր մեղքերը ճշմարիտ  
խոստովանութեամբ Յիսուսի բերելուն պէս՝ Անոր հետ կը հաշտուի:  
Այսպէս իր մեղքերը կը փոխադրուին երկնային սրբարանը ուր հիմա  
Քրիստոս կը պաշտօնավարէ իրրեւ քահանայապետ, ինչպէս որ Հին  
Կտակարանին զստգործութեան մէջ խորհրդանիշուած էր:

Քաւութեան հակառակ սրուան մէջ, կամ դատաստանի միջո-  
ցին, Յիսուս կը մտքի երկնային սրբարանը ժողովուրդին մեղքերէն,  
արգարները յաւիտեան արդարացած կը յայտարարէ, անոնց խոստո-  
վանած մեղքերը Սատանային գլխուն վրայ կը գնէ, և անոր միջոցաւ  
զանոնք յաւիտեան կը հեռացնէ իր թագաւորութենէն, ու Ան կը  
յայտնուի արդարացած սուրբերուն՝ առանց մեղքի փրկութեան հա-  
մար: «Անանկ ալ Քրիստոս մէկ անգամ՝ պատարագ մատուցուե-  
ցաւ՝ շատերուն մեղքերը վերցնելու համար, բայց երկրորդ անգամին  
առանց մեղքի պիտի յայտնուի փրկութեան համար անոնց որոնք  
Անոր կը սպասեն»: Եբր. Թ. 28:

## Դ Ա Տ Ա Ս Տ Ա Ն Ը

1. Ի՞նչ պիտի պատահի արդարներուն և մեղաւորներուն :

«Ու նաև արեւուն տակ տեսայ որ դատաստանի տեղ ամբարըշտութիւն, և արդարութեան տեղ անօրէնութիւն կար: Ես իմ՝ որտիս մէջ ըսի թէ Աստուած պիտի դասէ արգարք ու ամբարիօժք. վասն զի ամէն գիտաւորութիւն ու ամէն գործ ժամանակ ունի հոն:» Ժող. Գ. 16, 17:

2. Նոր-կտակարանական ի՞նչ խոստում ունինք թէ դատաստանի օր մը պիտի գայ :

«Քանզի Ինք մէկ օր մը սահմանեց, որուն մէջ աշխարհս արդարութեամբ պիտի դասէ այն մարդուն ձեռքովը, զոր սրտեց, ու ամենուն հաւատացուց՝ զԱնիկայ մեռելներէն յարուցանելով:» Գործք Ժլ. 31:

3. Ո՞վ պիտի ըլլայ դատաւորը, և ո՞վ պիտի գործէ իրբև Միջնորդ կամ Բարեխօս :

«Ու երկինքը գրուած անգրանիկներուն ժողովին ու եկեղեցիին, և Աստուծոյ որ ամենուն դատաւորն է, ու արդարաց հոգիներուն՝ որ կատարուեր են, և Յիսուսի՝ որ նոր ուխտին միջնորդն է, ու սրտուելու արեանը՝ որ Աքելին արիւնէն աւելի աղէկ կը խօսի:» «Ի՛մ՝ որդեակներս՝ այս բաները ձեզի կը գրեմ՝ որ մեղք չգործէք, և թէ որ մէկը մեղք գործելու ըլլայ, շօքը քով բարեխօս ունինք Յիսուս Բրիսոսս արդարը:» Եբր. ԺԲ. 23, 24: Ա Յովհ. Բ. 1:

4. Ի՞նչ չափանիչով պիտի դատուին մարդիկ :

«Անանկ խօսեցէ՛ք և անանկ ըրէ՛ք՝ որպէս թէ ազատութեան օրէնքովը պիտի դատուիք:» Յակ. Բ. 12:

5. Ի՞նչ պիտի բերուի դատաստանին մէջ :

«Քանզի Աստուած ամէն զործք՝ ամէն ծածուկ բաներու հետ՝ քէ՛ բարին եւ քէ՛ չարը դատաստանի պիտի բերէ:» Ժող. ԺԲ. 14:

6. **Տէրը պիտի խիստ հաչիւ պահանջէ՞ :**  
«Բայց ձեզի կ'ըսեմ թէ՛ Ամէն դասարկ խօսեցու համար՝  
որ մարդիկ կը խօսին, դասասանին օրը հաճի պիտի  
սան. քանզի քու խօսեցէդ պիտի արդարանաս, եւ քու  
խօսեցէդ պիտի դասապարտուիս:» Մատթ. ԺԲ. 36, 37:
7. **Դատարանին մէջ գիրքեր պիտի գործածուի՞ն՝ և ի՞նչ  
նպատակի համար :**  
«Եւ տեսոյ պզտիկ ու մեծ մեռելները՝ որ ամուսին առջեւը  
կայնած էին. ու գիրքերը բացուեցան, եւ ուրիշ գիրք մը  
բացուեցաւ՝ այսինքն կենաց գիրքը. և գիրքերուն մէջ  
գրուածներէն մեռելները դատուեցան իրենց գործքերուն հա-  
մեմատ:» Յայտ. Ի. 42:
8. **Որո՞նց անուանները կը պահուին կենաց գիրքին մէջ :**  
«Ան որ կը յաղթէ՛ ճերմակներ պիտի հազնի. ու Ես անոր  
անունը կենաց գիրքէն պիտի չաւրեմ, և Անոր անունը  
պիտի դաւանիմ իմ՝ Հօրս առջեւը:» Յայտ. Գ. 5:
9. **Որո՞նց անուանները պիտի աւրուին :**  
«Եւ Տէրը ըսաւ Մովսէսին, Ռ'վ որ Ինծի դէմ մեղանչեց,  
անիկայ Իմ գիրքէս պիտի աւրեմ:» Ել. ԼԲ. 33: «Կենաց  
գիրքէն քող ջնջուին, ու արդարեւեւունց հեռ չգրուին:»  
Սաղմ. ԿԺ. 28:
10. **Ո՞վ միայն յաւիտենական կեանք պիտի ունենայ :**  
«Եւ հոն բնաւ անմաքրութիւն մը պիտի չմտնէ. ո՛չ ալ պղծու-  
թիւն ու ստութիւն գործող մը. հապա միայն անոնք՝ որ  
Պառնուկին կենաց գիրքին մէջը գրուած են:» Յայտ.  
ԻԱ. 27:
11. **Ի՞նչ պիտի ըլլայ անոնց՝ որոնց անուանները կենաց  
գիրքին մէջ գրուած պիտի չգտնուին :**  
«Եւ ո՛վ որ կենաց գիրքին մէջը գրուած չգտնուեցաւ, կրակի  
լիճին մէջը ձգուեցաւ:» Յայտ. Ի. 15:
12. **Պէ՞տք է որ արդարք եւս ատեանին առջեւը կայնին :**  
«Վասն զի ամէնք ալ Քրիստոսի ասեանին առջեւ պիտի  
կայնին:» Հռոմ. ԺԳ. 10, վերջին մաս: «Վասն զի պէտք է  
որ ամէնք ալ Քրիստոսի ասեանին առջեւը ներկայա-  
նանք, որ ամէն մէկը իր մարմնովը ըրածներուն փոխարէնը առնէ  
ինչ որ գործեր է, թէ՛ բարի և թէ՛ չար:» Բ Կոր. Ե. 10:



13. Արդարները դատապարտութեան տակ պիտի իյնան :  
«Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, ան որ Իմ խօսքս մտիկ կ'ընէ  
և կը հաւատայ անոր որ զիս զրկեց, յաւիտենական կեանք ու-  
նի, ու դատապարտութեան տակ չիյնար, այլ մահուանէ  
դէպ ի կեանք անցած է:» Յովհ. Ե. 24:
14. Անոնք ամբարիշտներ՞ն հետ պիտի դատուին՝ թէ  
իրենք ամբարիշտները պիտի դատեն :  
«Չէ՞ք գիտեր որ սուրբերը պիտի դատեն աշխարհը:» Ա  
Կորն. 9. 2, առաջին մասս
15. Հետեւարար ո՞ւրկէ պէտք է սկսի դատաստանը :  
«Քանզի ժամանակ է որ դատաստանը Աստուծոյ օրհնէն  
սկսի. և թէ որ առաջ մեզմէ կը սկսի, հապա անոնց վերջը  
ի՞նչ պիտի ըլլայ՝ որո՞ք աւետարանին շէն հնազանդիր:» Ա  
Պետ. Գ. 47:
16. Տէրը Իրեն հետ ի՞նչ կը բերէ Իր եկած ատենը :  
«Ահա՛ Ես շուտով կուգամ, և Իմ վարձն Իմ հետս է՝ ա-  
մէն մէկուն իր գործիին համեմատ հասուցանելու:»  
Յայտ. ԻԲ 12:
17. Աստուծոյ զաւակներուն բարի գործքերը ե՞րբ պիտի  
վարձատրուին :  
«... Ու երանելի պիտի ըլլաս... քանզի արդարեւրուն յա-  
րուրիւն առած ասեմք փոխարէնը քեզի պիտի հասու-  
ցուի:» Ղուկ. ԺԳ. 14:
18. Ի՞նչ բանի մէջ պիտի կայանայ իրենց վարձքերուն  
զանազան աստիճանները :  
«Ու Աստուած անոր մարմին կուտայ ինչպէս որ կ'ուզէ, և ամէն  
մէկ սերմին իր յատուկ մարմինը: ... Ս. Բեռնին փառքը ու-  
րի՞ց է, ու լուսնին փառքը ուրի՞ց, եւ աստղերուն փառ-  
քը ուրի՞ց. ու մէկ աստղը միւս աստղէն քաղցր է փառ-  
քով. այսպէս ալ է մեռելոց յարուրիւնը. մարմինը ապա.  
կանութիւնով կը սերմանուի, ու անսպականութիւնով յա-  
րութիւն կ'առնէ:» Ա Կորն. ԺԵ. 38, 41, 42:
19. Քրիստոսի գալստեան ատեն՝ որո՞նք միայն պիտի  
յարութիւն առնեն :  
«Քանզի Տէրը ինքն սպարարութեան հրամանով՝ շրջապա-

պետին ձայնովը ու Աստուծոյ փողովը երկինքէն պիտի իջնէ, և Քրիստոսով մեռածները առաջ յարուրիւն պիտի առնեն:» Ա թեո. Գ. 15: Արդ բացայայտ է որ արդարները նախ քան Տէրոջը գալը Քրիստոսի ատենին առջեւը ներկայացած և իրենց վարձքի տատի ծաննները որոշուած պիտի ըլլան, այլ և բանիւ անոնց քննական դատաստանը Քրիստոսի գալէն առաջ պիտի ըլլայ երկնային սրբարանին մէջ:

20. Ո՞ւր նկարագրուած է արդարներուն քննական դատաստանը:

«Ես կը տեսնէի մինչև որ արուսներ դրուեցան, ու շինաւորեցը նստաւ. Անոր զգեստը ձիւնի պէս ճերմակ՝ ու զլիսուն մազը մաքուր բուրդի պէս էր. Անոր ամոռը կրակի բոցի պէս, ու անիւնները վառած կրակի պէս էր. Անոր առջեւէն կրակի դեռ կ'ելլէր ու կը վազէր. Հազարք հազարաց ծառայութիւն կ'ընէին Անոր, և բիւրք բիւրոց Անոր առջեւը կը կայնէին. ասեանք բազմեցաւ, ու զիտները բացուեցան:» Գան. Է. 9, 10:

21. Այս դատաստանին ատենը նաև ի՞նչ տեղի կ'ունենայ:

«Գիշերուան տեսիլքներու մէջ կը տեսնէի, և ահա՛ երկինքի ամպերով մարդոյ Որդւոյն նման մէկը կուգար, ու մինչև Հինաւուրցը եկաւ, և զԱնիկա Անոր առջեւը մտնեցուցին: Ու Անոր իշխանութիւնն, պատիւ ու թագաւորութիւնն արուեցաւ, որ ամէն ժողովուրդները, ազգերը ու լեզուները Անոր ծառայութիւնն ընեն. Անոր իշխանութիւնը յաւիտենական իշխանութիւն է որ շ'անցնիր, ու թագաւորութիւնը չ'աւրուիր:» Գան. Է. 13, 14:

22. Արդարները ի՞նչ պիտի ընեն երկինքը հազարամեայի միջոցին՝ իրենց յարութիւնէն ետե:

«Եւ ամոռներ տեսայ. ու նստան անոնց վրայ. եւ անոնց դասաւորուրիւն արուեցաւ. նաև Յիսուսի վկայութեանը համար գիտատուածներուն հոգիները տեսայ, և անոնք որ երկրպագութիւն չըրին դադանին՝ ո՛չ ալ անոր պատկերին, ու անոր դրոշմը իրենց ճակատներուն վրայ ու իրենց ձեռքին վրայ չընդունեցին. եւ ապրեցան՝ ու Քրիստոսի հետ հազար տարի քաղաւորեցին:» Յայտ. Ի. 4:

23. Յայնժամ զորո՞նք պիտի դատեն անոնք:

«Չէ՞ք գիտեր որ սուրբերը պիտի դասեն աշխարհը . . . :  
Չէ՞ք գիտեր որ մեզի հրեցսակներ պիտի դասենք. ո՞ւր կը  
մնան հասարակացիս ընկերները:» Ա կոր. 9. 2. 3:

24. Ամբարիչտներուն յարուժիւնը ի՞նչ կոչուած է նաև :  
«Ու դուքս պիտի գան, անոնք որ բարի գործեր են՝ կենաց յարուժեան համար, և անոնք որ չար գործեր են՝ դասապար, ռուրեան յարուրեան համար:» Յովհ. Ե. 29:

25. Ո՞ւր կը գտնենք ամբարիչտներուն վրայ ի գործ դրուելու դատաստանին նկարագրուած իւնը :  
«Եւ ծովը իր մէջի մեռելները տուաւ, ու մահը և դժոխքը իրենց մէջի մեռելները տուին. ու ամէն մէկը իրենց գործքերուն համեմատ դատուեցան: Եւ մահը ու դժոխքը կրակի լիճին մէջը ձգուեցան, ասիկա է երկրորդ մահը: Եւ ո՞վ որ կենաց գիրքին մէջը գրուած չգտնուեցաւ, կրակի լիճին մէջը ձգուեցաւ:» Յայտ. Ի. 43—45:

26. Ի՞նչ է մեր պարտականութիւնը՝ մեծ դատաստանին տեսակէտով :  
«Այս բոլոր խօսքին վախճանը լսենք. Ասուածմէ վախցի՛ր ու Անոր պատիւրանքները պահէ՛, վասն զի մարդու բոլոր պարտաւորութիւնը ասիկա է. բանգի Ասուած ամէն գործք՝ ամէն ծածուկ բաներու հետ՝ քէ՛ բարին եւ քէ՛ չարը դասասանի պիտի բերէ:» Ժող. ԺԲ. 43, 44:

27. Ի՞նչ պատգամ պէտք է քարոզուի աշխարհի՞ քրննական դատաստանին սկիզբը :  
«Եւ ուրիշ հրեշտակ մը տեսայ՝ որ կը թռչէր երկինքին մէջ, և ունէր յաւիտենական աւետիսը՝ քարոզելու բոլոր ազգերուն ու ցեղերուն և լեզուներուն ու ժողովուրդներուն որ երկրի վրայ կը բնակին: Եւ մեծ ձայնով կ'ըսէր, Ասուածմէ վախցէ՛ք ու փա՛նք տէ՛ք Անոր, բանգի Անոր դասասանին ժամը եկաւ, ու երկրպագութիւն քէ՛ք Անոր՝ որ անդծեց երկինքը ու երկիրը եւ ծովը ու ջուրերուն ազբիւրները:» Յայտ. ԺԳ. 6, 7:



## ԵՐԿՆԱՅԻՆ ՍՐԲԱՐԱՆԻՆ ՄԱՔՐՈՒԻԼԸ ԴԱՏԱՍՏԱՆԻՆ ԺԱՄԸ

1. Երկրաւոր սրբարանին մէջ՝ տարեկան պաշտամունքի շրջանը ո՞ր կարեւոր օրով կը վերջանար :  
 «Եւ այս ձեզի յաւիտենական կանոն ըլլայ, որ եօթներորդ ամսուն մէջ՝ ամսուն ճասններորդ օրը ձեր անձերը պիտի խոնարհեցնէք, ու բնաւ գործ մը չդորձէք. թէ՛ երկրացին և թէ՛ ձեր մէջը գտնուող օտարականը. քանզի այն օրը քահանան ձեզի ծառայութիւն պիտի ընէ ձեզ մաքրելու համար, որ ձեր բոլոր մեղքերէն մաքրուիք Տէրոջը առջեւը. ան ձեզի հանգսուրեան օտար պիտի ըլլայ. և յաւիտենական կանոնով մը պիտի խոնարհեցնէք ձեր անձերը» Ղեւ. ԺԳ. 29—31
2. Այդ օրուան մօտ ըլլալը ի՞նչպէս կը ծանուցուէր :  
 «Խօսէ՛ Իսրայէլի սրբւոցը ու ըսէ՛, եօթներորդ ամսուն մէջ, ամսուն առաջին օրը ձեզի հանգսուրեան օր՝ փող հնչեցնելու յիշատակը՝ սուրբ ժողով պիտի ըլլայ» Ղեւ. ԻԿ. 24
3. Ի՞նչ կը նշանակէ 7 թիւը :—  
 Լրում՝, կատարում՝, կատարելութիւն : Ըստ Ծնն. Բ. 2Ի՝ Աստուած Իր գործը եօթներորդ օրը լինցուց : Յայտ. Ժ. 7Ի մէջ ալ կը կարդանք թէ՛ երբ եօթներորդ հրեշտակը փողը հնչեցնէ, Աստուծոյ խորհուրդը պիտի կատարուի : Ուստի, երբ Իսրայէլ եօթներորդ ամսուն առաջին օրուան կը հասնէին, հասած կ'ըլլային այն ժամանակին, ուր պաշտամունքի տարեկան շրջանը պէտք էր աւարտէր : Փողերու հնչուիլը անոնց համար դատաստանի ծանուցուիլն էր :
4. Ժողովուրդը ի՞նչ պարտէր ընել քաւութեան օրը :  
 «Նաև այս եօթներորդ ամսուն տասներորդ օրը քաւութեան օրը ըլլալով՝ սուրբ ժողով ըլլայ ձեզի. և պիտի խոնարհեցնէ՛ք ձեր հոգիները, ու պատարագ մատուցանէ՛ք Տէրոջը : Եւ այն օրը բնաւ գործ չգործէ՛ք, քանզի Տէրոջը ձեր Աստու-

ծոյն առջեւը ձեզի համար քաւութիւն ընելու՝ օր քաւութեան է:» Ղեւ. ԻԳ. 27, 28:

5. Այս բանը զանց ընողին ի՞նչ կը պատահէր:  
«Քանզի ո՛վ որ նոյն օրը չխոնարհի՝ իր ժողովուրդին մէջէն պիտի կորսուի. եւ ո՛վ որ նոյն օրը գործ մը գործէ, այն անձը իր ժողովուրդին մէջէն պիտի կորսնցրնին:» Հմբք 29, 30: Այդ առթիւ՝ միայն ապաշխարողը կը մնար, սակայն ամբարիշտը կը կորուէր իր ժողովուրդէն. այդ օրը ամէն մէկուն ըսողը կը կնքուէր — դատաստանին հետեւութիւնը:
6. Քահանան ի՞նչ արարողութիւն պարտէր ընել:  
«Եւ Խորոյէլի որդւոցը ժողովքէն մեղքի պատարագի համար այծերէն երկու նոխաղ՝ ու ողջակէզի համար մէկ խոյ մը պիտի առնէ: Եւ Ա.հարոն իր մեղքի պատարագին զուարակը պիտի մատուցանէ, եւ իրեն համար ու իր օանը համար փաւութիւն պիտի ընէ: Եւ երկու նոխաղը պիտի առնէ, ու Տէրոջը առջեւը ժողովքի խորանին դուռը կեցնէ: Եւ Ա.հարոն այն երկու նոխաղներուն վրայ վիճակներ պիտի ձգէ. մէկ վիճակը Տէրոջը համար՝ ու միւս վիճակը ազատ արձակուելու նոխաղին համար: Եւ Ա.հարոն պիտի մօտեցնէ այն նոխաղը որուն վրայ Տէրոջը վիճակը ելաւ, ու մեղքի պատարագ ընէ զանիկայ:» Ղեւ. ԺԶ. 5—9:
7. Տէրոջը համար եղող նոխաղին արիւնը ի՞նչ կ'ընէր ան:  
«Եւ ժողովուրդին համար մեղքի պատարագ ըլլալու նոխաղը պիտի մտնէ, ու անոր արիւնը վարագոյրին ներսիդին պիտի բերէ, եւ զուարակին արիւնովը քրածին պէս ընէ անոր արիւնովը, այսինքն փաւութիւնին վրայ ու փաւութիւնին առջեւը սրսկէ զայն:» Հմբ 15:
8. Այսպէսով ի՞նչ մաքրուած կամ քաւուած կ'ըլլար:  
Եւ ամենասուրբ տեղին համար փաւութիւն պիտի ընէ, եւ ժողովքի խորանին համար ու սեղանին համար փաւութիւն ընէ, եւ փահաններուն եւ ժողովքին բոլոր ժողովուրդին համար փաւութիւն ընէ: Եւ ասիկայ ձեզի յաւիտենական կանոն ըլլայ՝ Եւրայէլի որդւոցը համար իրենց բոլոր մեղքերուն փաւութիւն ընելու տարին անգամ մը:» Հմբք 33, 34:

9. Այս պաշտամունքը իբրև կատարեալ թան մը կ'ընդունուէ՞ր՝ թէ սոսկ երկնայինին մէկ շուքն էր :  
« Բանդի օրէնքը գալու բարկքներուն շուքը, ու չէ թէ այն բաներուն բուն կերպարանքը ունենալով, միշտ ամէն օտար մասուցուած նոյն գոհեալ երբէք չի կրնար կատարեալ ընել զանոնք որ կը մօտեցան : » Երբ. Ժ. 1 : « Որ անոնք երկնային բաներուն նմանութիւնովը ու շուքովը կը ծառայեն, ինչպէս որ Մովսէսին հրամայուեցաւ՝ երբոր խորանը պիտի շինէր. քանզի ըստ, 'Նայէ՛ որ լեռը քեզի ցուցուած օրինակին պէս շինես սմէնը : » Երբ. Ը. 5 :
10. Երկնային սրբարանը իրապէս պիտի մաքրուի՞ մեր մեղքերէն :  
« Ուստի հարկ էր որ երկնուոր բաներուն օրինակները ասոնցմով մաքրուին. բայց բուն երկնաւորները ասոնցմէ աւելի ազէկ գոհեալ : » Երբ. Թ. 25 :
11. Այս մաքրութիւնը ե՞րբ պիտի տեղի ունենայ :  
« Ու անիկա ըստ ինծի, Մինչև երկու հազար երեք հարիւր օր. ետքը սրբարանը պիտի մաքրուի : » Գան. Ը. 14 :
12. 1844ին՝ այդ ժամանակին հասնիլը պիտի ծանուցուէ՞ր ամբողջ աշխարհի մէջ :  
« Եւ ուրիշ հրեշտակ մը տեսայ՝ որ կը թռչէր երկինքին մէջ, և ունէր յաւիտենական աւեախը՝ քարոզելու բոլոր ազգերուն ու ցեղերուն և լեզուներուն ու ժողովուրդներուն որ երկրի վրայ կը բնակին. և մ. ծ. ձայնով կ'ըսէր, Աստուծակէ վախցէ՛ք ու փառք տուէ՛ք Անոր, բանցի Անոր դաստատանին ժամը եկաւ. ու երկրպագութիւն ըրէք Անոր՝ որ ստեղծեց երկինքը ու երկիրը և ծովը ու ջուրերուն ազրիւրները : » Յայտ. ԺԿ. 6, 7 :
13. Դանիէլ ի՞նչպէս կը նկարագրէ՞ երկինքին մէջ տեղի ունեցող այս քննական դատաստանը :  
« Ես կը տեսնէի մինչև որ արձանք դրուեցան, ու Հիւսուուրցը նստաւ. Անոր զգեստը ձիւնի պէս ճերմակ՝ ու գլխուն մազը մաքուր բուրդի պէս էր. Անոր սիճոսը կրակի բոցի պէս, ու անիւները վառած կրակի պէս էին. Անոր առջեւէն կրակի զեռ կ'ելլէր ու կը վազէր. հազարք հազարաց ծառայութիւն կ'ընէին Անոր, և բիւրք բիւրոց Անոր առջեւը կը կայնէին. ասեանք բազմեցաւ, ու զիրենք բացուեցան : » Գան. Է. 9, 10 :



14. **Յովհաննէս Ի՞նչ բանի բացուիլը տեսաւ այս դատաստանին սկիզբը :**

«Ու եօթներորդ հրեշտակը փողը հնչեցուց, ու երկինքի մէջ մեծ ձայներ եղան որ կ'ըսէին, Աշխարհին թագաւորութիւնները Տէրօջը ու Իր Օծեալինը եղան, և Ինքը պիտի թագաւորէ յաւիտեանս յաւիտենից: Եւ քսանուչորս երէցները որ իրենց աթոռներուն վրայ ինկան, և Աստուծոյ առջեւը, իրենց երեսներուն վրայ ինկան, և Աստուծոյ երկրպագութիւն ըրին՝ ըսելով, Քեզի գօհութիւն կը մատուցանենք Ամենակալ Տէր Աստուած՝ որ ես և որ էիր, որ Քու մեծ զօրութիւնդ առիր ու թագաւորեցիր. և ազգերը բարկացան, ու Քու բարկութիւնդ եկաւ, և մեռելներուն ժամանակը՝ որ դատուին, ու վարձք ստա Քու ծառաներուդ մարդարէներուն և սուրբերուն ու Քու անունէդ վախցողներուն՝ պղտիկներուն ու մեծերուն, և երկրի ազականիչները ապականեաւ: **Ու երկիմեքի մէջ Աստուծոյ օսմանը բացուեցաւ, եւ Անոր ուխտին օտարանակը Իր օսմանին մէջ երեւցաւ:»** Յայտ. Ժ.Ա. 15 - 19.

15. **Ի՞նչ տեսաւ ան՝ Աստուծոյ բացուած տաճարին մէջ :**

«Ու խտին տապանակը Իր տաճարին մէջ երեւցաւ:» Ասկէ կը տեսնենք թէ Ի՞նչպէս ճշդիւ կը համապատասխանէ տիպը հակատիպին Տիպական պաշտամունքին մէջ՝ փողերը կը հնչէին տասը օր առաջ, ծանուցանելու համար քաւութեան մեծ օրուան դատաստանի գործին լրումը: Քաւութեան մեծ օրը՝ քահանայապետը սրբութեան սրբութեանց սրբութիւնը կը մշտնէր, տեսնելով այսպէս ուխտին տապանակը որ Սրբութեանց Սրբութեան մէջ էր: Անիկա հոն կը մտքէր սրբարանը Իսրայէլի բոլոր մեղքերէն, և ժողովուրդին համար քաւութիւն մը կ'ընէր նոխպին արիւնովը. ասի կը վերցնէր՝ իւրաքանչիւր ապաշխարող Իսրայէլացիի մեղքերը: Ասոր համաձայն՝ Տէրը Գանիէլ մարգարէին կու տայ որոշ ժամանակ մը՝ ուր սրբարանը պիտի մտքուէր, — որ պիտի սկսէր 2300 օրեաց վախճանին, կամ Ա. Տ. 1844ին, և Յայտ. Ժ.Գ. 6, 7ի մէջ՝ Ան կու տայ որոշ պատգամ մը որ կ'ընկերանայ երկնային սրբարանին մտքութեան, «Անոր դատաստանին ժամը եկաւ,» և հոս՝ հրատարակումը կը յառաջանայ իրբև սկիզբն եօթներորդ ամսուան — «Աստուծ մէ վախցէ՛ք, և փա՛ռք տուէ՛ք Անոր:»

16. **Այս գործին հետ Ի՞նչ բան պէտք է լրանայ :**

« Զապա եօթներորդ հրեշտակին ձայնին օրերը՝ երբոր փոզը հըն-  
չեցնէ, Աստուծոյ խորհուրդը պիտի կատարուի, ինչպէս որ  
իր ծառաներուն մարգարէներուն աւետիս տուաւ:» Յայտ. Ժ. 7:

17. Ի՞նչ է Աստուծոյ խորհուրդը:

« Արդ Անոր՝ որ կարող է ձեզ հաստատել Իմ աւետարանիս  
պէս, ու Յիսուս Քրիստոսի քարոզութեանը պէս, այն խոր-  
հուրդին յայտնուելուն պէս, որ յաւիտեանական ասեմ-  
ներէն ի վեր ծածկուած էր, եւ հիմա յայտնուեցաւ, ու  
մարգարէական գիրքերով յաւիտենական Աստուծոյ հրամանովը  
բոլոր Հեթանոսներուն ճանչցուեցաւ հաւատքի հնազանդելու  
համար:» Հռովմ. ԺԶ. 25-26:

18. Ի՞նչ երդում սերտ յարաբերութիւն ունի այս հրա-  
տարակման հետ:

« Եւ այն հրեշտակը որ ծովուն վրայ ու ցամաքին վրայ կայնած  
տեսայ, իր աջ ձեռքը երկիմբը վերցուց, ու երդում քաւ  
յաւիտեանս յաւիտեանից Կենդանի եղողին վրայ, որ  
ստեղծեց երկինքը ու ինչ որ անոր մէջն է, ու երկիրը և ինչ որ  
անոր մէջն է, և ծովը ու ինչ որ անոր մէջն է, քէ ալ ժամա-  
նակ պիտի չըլլայ:» Յայտ. Ժ. 5, 6:

19. Երկրային սրբարանին մաքրուելէն վերջ ի՞նչ տեղի  
կ'ունենար:

« Եւ սրբարանին ու ժողովքի խորանին և սեղանին համար քա-  
ւութիւն ընելը լինիցնելէն ետքը, ողջ նոխազը պիտի մօտե-  
ցրնէ. եւ Ահաբոն իր երկու ձեռքերը ողջ նոխազին  
գլխուն վրայ պիտի դնէ, ու Խարայէլի որդուցը բոլոր  
անօրէնութիւնները եւ անոց բոլոր յանցանքները եւ  
բոլոր մեղքերը պիտի խոստովանի անոր վրայ. եւ զա-  
նոնք նոխազին գլխուն վրայ դնելով՝ յարմար մարդու  
մը ձեռքով անապասը դրկէ:» Դեւ. ԺԶ. 20, 21:

20. Նոխազը ո՞ւր կը ձգուէր:

« Եւ նոխազը անոնց բոլոր անօրէնութիւնները իր վրան աւած՝  
անքնակ երկիր մը պիտի տանի. եւ մարդը անապասին  
մէջ բող տայ նոխազը:» Հմբ. 29: Ազատ արձակուելու նո-  
խազը, կամ՝ ըստ բնագրին, Ազադէլը, Սատանային մէկ օրի-  
նակն էր:

21. Ի՞նչ պիտի պատահի Սատանային՝ երբ Քրիստոս գայ:


«Եւ չրեշտակ մը տեսայ՝ որ երկինքէն կ'իջնէր, ու անդունդին բանալին և մէկ շղթայ մը ունէր իր ձեռքը. ու բռնեց վիճապը այսինքն առջի օձը՝ որ Քանսարկուն ու Սասանան է, և կապեց զանիկա հազար տարի, և անդունդը ձգեց զանիկայ՝ և զոցեց ու վրայէն կնկեց, որ ալ չմուտեցնէ ազգերը՝ մինչև որ հազար տարին լմննայ, և անկէ ետքը պէտք է որ արձակուի անիկայ քիչ մը ժամանակ» :

22. Ի՞նչ կարելու խօսքեր պիտի արտաբերուին քիչ ատենէն՝ երբ երկնային սրբարանին մաքրուիլը լմննայ : «Ան որ անիրաւութիւն կ'ընէ՝ ալ անիրաւութիւն թող ընէ, ու ան որ աղտոտ է՝ ալ աղտոտ ըլլայ, և ան որ արդար է՝ ալ արդար ըլլայ, ու ան որ սուրբ է՝ ալ սուրբ ըլլայ» Յայտ. ԻՖ. 41 :

23. Աստուծոյ ժողովուրդը ի՞նչ ընել պարտի՞ նախ քան այս վճիռն ելլելն՝ որպէս զի անոնք կարենան ծածկուիլ Անոր բարկութեան օրը :

«Քննեցէ՛ք ձեր անձերը, քննեցէ՛ք. ո՛վ չամէցող ազգ, դեռ նախաստձմանութիւնը չծնած. օրը մղեղի պէս չանցած, դեռ Տէրոջը սաստիկ բարկութիւնը ձեր վրայ չեկած, դեռ Տէրոջը բարկութեան օրը ձեր վրայ չեկած, Տէրը փնտռեցէ՛ք, ո՛վ երկրիս բոլոր խօնարհները, դուք որ Անոր իրաւունքի գործ կը դնէք, արդարութիւն փնտռեցէ՛ք, խօնարհութիւն փնտռեցէ՛ք, զուցէ Տէրոջը բարկութեան օրը պահուիք» : Աոփ. Բ. 4 - 3 :





ԱՍՏՂԵՐՈՒՆ ԹԱՓՈՒՆԻԼԸ, 1833, ՆՈՅ. 13

## ՄԵՐ ՏԷՐՈՋԸ ԿԱՐԵՒՈՐ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

1. Ի՞նչ մարգարէութիւն արտաբերեց մեր Տէրը՝ անկեալ Հրէականութեան դէմ:
 

«Ո՛վ Երուսաղէմ, Երուսաղէմ, որ մարգարէները կը սպաննէիր, ու քեզի զրկուածները կը քարկոծէիր, քանի՛ անգամ՝ քու արդաքներդ ժողովել ուզեցի՝ ինչպէս որ հաւը իր ձագերը թեւերուն տակը կը ժողովէ, և դուք չուզեցիր: Ահա՛ ձեր քունը ձեզի աւերակ պիտի մնայ:» Մատթ. ԻԳ. 37, 38:
2. Ի՞նչ գիտցած չէին անոնք:
 

«Ու երբոր մտեցաւ, քաղաքը տեսնելով՝ լացաւ անոր վրայ և ըսաւ, դո՛նէ այս քու օրուանդ մէջ՝ գիտնայիր քու խաղաղութիւնդ, բայց հիմա ծածկուեցաւ քու աչքերէդ. քանզի օրեր պիտի դոն քու վրագ, որ թշնամիներդ քու բոլորակքդ պատնէշ պիտի շինեն, ու քեզ պիտի պաշարեն, և ամէն կողմէ քեզ նեղը պիտի ձգեն, և հիմնայատակ պիտի ընեն քեզ ու քու մէջդ եղած զուակներդ, և քար մը քարի վրայ ամենեւին պիտի չթողուն քու մէջդ, անոր համար որ չնանցցար քու այցելութեան ժամանակդ:» Դուկ. ԺԹ. 41—44:
3. Իսրայէլ ե՞րբ պիտի նորէն տեսնէր իրենց Փրկիչը:
 

«Քանզի ձեզի կ'ըսեմ՝ որ ալ սակէ ետեւ պիտի չտեսնէք զիս, մինչև որ ըսեք, Օրհնեա՛լ է ան որ Տէրոջը անունովը կուգայ:» Մատթ. ԻԳ. 39:
4. Աշակերտները ի՞նչ ըրին՝ տաճարին կործանման նրկատմամբ Տէրոջը որոշ մարգարէութենէն վերջ:
 

«Եւ Յիսուս տաճարէն դուրս ելլելով՝ կ'երթար, ու աշակերտները Անոր քովը դացին՝ քանարին շէնքերը Իրեն ցուցնելու:» Մատթ. ԻԳ. 4: «Ու երբոր տաճարէն դուրս կ'ելլէր, Իր աշակերտներէն մէկը ըսաւ իրեն, վա՛րդապետ՝ նայէ՛ ինձօ՛ր քարեր եմ, եւ ի՛նչ կերպ շէնքեր:» Մարկ. ԺԳ. 4:
5. Տէրը երկրորդ անգամ ի՞նչպէս շեշտեց տաճարին կործանումը:

«Եւ Յիսուս անոնց ըսաւ. Զէ՞ք տեսներ այդ ամէն բաները. ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, պիտի չմնայ հոս քառ քառի վրայ՝ որ չհակուի:» Մատթ. ԻԿ. 2:

6. Ասոր վրայ՝ աշակերտները ո՞ր երկու հարցումները հարցուցին իրենց Տէրոջը:

«Ու երբոր Անիկայ Զիթենեաց լեռը նստեր էր, աշակերտները իրեն եկան առանձին ու ըսին, Ըսէ՛ մեզի՝ ե՞րբ պիտի ըլլան այդ բաները. եւ Քու գալստեանդ ու աւազանի վերջին նշանը ի՞նչ պիտի ըլլայ:» Հմբ. 3: (Ա) Երուսաղէմի և տա. ճարին նկատմամբ. (Բ) Իր դալատեան և աշխարհի վերջին նշան. ներուն նկատմամբ:

7. Փրկիչը ի՞նչ ազդարարութիւն տուաւ աշակերտներուն, իրենց հարցումներուն պատասխանելէ առաջ:

«Եւ Յիսուս պատասխան տուաւ ու ըսաւ անոնց, Զգո՛յ՛ց կիցէ՞՞ չըլլայ որ մէկը ձեզ խաբէ:» Հմբ. 4:

8. Յառաջ քան այս երկու դէպքերուն տեղի ունենալն՝ ի՞նչ պիտի պատահէր ընդհանրապէս:

«Քանզի շատերը պիտի գան Իմ անունովս ու ըսեն թէ Ես եմ Քրիստոսը, ու Շատերը պիտի մոլորեցնեն:» «Յւ Շատաւ մարգարէներ պիտի ելլեն, ու Շատերը պիտի մոլորեցնեն:» Հմբ. 5, 41:

9. Այս չարիքներուն հետեւանքն ի՞նչ պիտի ըլլար նոյն իսկ Աստուծոյ ժողովուրդին մէջ:

«Եւ անորէնութիւնը շատնալուն համար Շատերուն սեր պիտի պաղի:» Հմբ. 42:

10. Սակայն ո՞վ պիտի ազատէր:

«Բայց ո՞վ որ մինչև վերջը համբերէ, անիկայ պիտի ապրի:» Հմբ. 43:

11. Այս բոլոր բաներուն հակառակ, ի՞նչ պիտի երթայ բոլոր աշխարհի, ու անոր կատարման ի՞նչ պիտի յաջորդէ:

«Եւ արքայութեան այս աւետարանը բովանդակ աւազանի մէջ պիտի քարոզուի՝ բոլոր ազգերուն վկայութիւն ըլլալու, եւ անկէ ետեւ վերջը պիտի գայ:» Հմբ. 44:



12. Առաքեալները մասնաւորապէս ո՞ր մարգարէին պիտի ուշադրութիւն ընծայէին՝ Երուսաղէմի կործանման նկատմամբ :

«Ուստի երբոր տեսնէք աւերմուչքին պղծութիւնը՝ որ Պանիէլ մարգարէին ձեռնովը բաւած է, թէ սուրբ տեղը կը կենայ. (ս'՛վ որ կարդայ՝ թող հասկնայ)» Հմբ. 45:

13. Միեւնոյն գաղափարը ի՞նչպէս արտայայտուած է ուրիշ տեղ մը :

«Ու երբոր տեսնէք Երուսաղէմը չորս կողմէն զօրքերով պատած, այն ասե՛ն զիսցէ՛ք որ անօր աւերումը մօտ է:» Ղուկ. ԻԽ, 20:

14. Աշակերտներն ի՞նչ պէտք էր ընէին՝ երբ Երուսաղէմը բանակներով շրջապատուած տեսնէին :

«Այն ատեն Հրէաստանի մէջ եղողները լեռները բոզ փախչին. և ան որ տանկքին վրայ է՝ բոզ չիջնէ՛ իր տունէն բան մը առնելու. և ան որ արտին մէջն է՝ բոզ եւ չդառնայ իր հանդերձները առնելու:» Մատթ. ԻԲ, 46—48:

15. Աշակերտները ի՞նչ բանի համար պէտք էր աղօթէին :

«Եւ աղօ՛թք ըրէք որ ձե՛ր փախչիլը ձմեռը չըլլայ, ո՛չ ալ շարք օրք:» Հմբ. 20:

16. Թէպէտ աշակերտները մասնակի կերպով այս նեղութիւններուն պիտի հանդիպէին, դեռ ի՞նչ աւելի ահաւոր բան պիտի պատահէր տպագային մէջ :

«Քանզի այն ատեն այնպիսի մեծ նեղութիւն պիտի ըլլայ, որուն նմանը աշխարհի սկիզբէն մինչեւ հիմա եղած չէ, ո՛չ ալ պիտի ըլլայ:» Հմբ. 21:

17. Այս նեղութենէն քիչ յետոյ ի՞նչ տեղի պիտի ունենար :— Տէրօջը գալուստը :

«Եւ շուտ մը այն նեղութեան օրերէն ետեւ արեգակը պիտի խաւարի, ու լուսինը իր լոյսը պիտի չտայ, և աստղերը երկինքէն պիտի իյնան, ու երկնից զօրութիւնները պիտի շարժին. և այն ասե՛ն Ռդույ մարդոյ նշանը պիտի երեւնայ երկինքի մէջ. ու այն ասե՛ն երկրի բոլոր ազգերը կոծ պիտի ընեն, ու պիտի տեսնեն Ռդին մարդոյ երկինքի ամպե-

բուն վրայ եկած զօրութիւնով ու մեծ փառօով :  
Հմբ. 29, 30 :

18. Աստուծոյ խօսքը աւելի ճիշդ տեղեկութիւն կուտայ՝ այս նեղութեան ժամանակին տեւողութեան և հանգամանքին վրայօք :

«Ու Բարձրելոյն դէմ խօսքեր պիտի ըսէ, ու Բարձրելոյն սուրբերը պիտի մտչէ, և պիտի մտածէ ժամանակներ և օրէնքներ փոխելու. ու անոնք մինչեւ ժամանակ մը, ժամանակներ ու կէս ժամանակ անօր ձեռքը պիտի տրուին:» Դան. Ի, 25: «Եւ կնիկը անսպասու փախաւ, ուր որ անոր տեղ պատրաստուած էր Աստուծոյ, որ հոն կերակրուի հազար երկու հարիւր ու վարսուն օր:» «Եւ այն կնկանը մեծ արծիւի երկու թեւեր արուեցան, որ անսպաս իր տեղը թռչի, ուր որ պիտի կերակրուէր ժամանակ ու ժամանակներ ու կէս ժամանակ՝ օձին երեսէն:» Յայտ. ԺԲ, 6, 14 :

19. Որո՞նց ի սէր՝ այս ահաւոր հալածանքը պիտի չտեւէր ամբողջ 1260 տարի :

«Եւ թէ որ այն օրերը չքիչնային, բնաւ մէկ մարմին մը պիտի չսպրէր. բայց ընտրեալներուն համար այն օրերը պիտի քիչանն:» Մատթ. ԻԿ, 22, ԺՉրդ դարու բարեկարգութիւնը մտքի աւելի թողտուտ արամադրութիւն մը յառաջ բերաւ ընդհանրապէս, և նոր Աշխարհի (Ամերիկա) գիւտը՝ Աստուծոյ ժողովուրդին համար ապաստանի երկիր մը ընծայեց, այնպէս որ 1798էն առաջ՝ հալածանքը մեծապէս նուազած էր :

20. Նեղութենէն վերջ՝ և Տէրօջը գալուստէն առաջ ի՞նչ բան պիտի սպասուէր :

«Այն ստեն թէ որ մէկը ձեզի ըսէ թէ Ա.հա՛՛ հոս է Քրիստոսը կամ հոն, մի՛ հաւատարմ. բանգի սուս քրիստոսներ և սուտ մարգարէներ պիտի ելլեն, ու մեծ նշաններ և հրաշքներ պիտի ցուցնեն, որ եթէ կարելի էր՝ ընտրեալներն ալ մտլոցնեն:» Հմբ. 23, 24 :

21. Այն օրերուն նեղութենէն շուտ մը վերջ՝ ի՞նչ պիտի տեղի ունենար :

«Եւ շուտ մը այն նեղութեան օրերէն ետեւ արեգակը պիտի խաւարի, ու լուսինը իր լոյսը պիտի չսայ, եւ աստղերը

երկինքէն պիտի իյնան, ու երկնից գորութիւնները պիտի ցարժին:» Հմբ. 29:

22. Մարկոս ինչպէս աւելի ճշգորէն կը բացատրէ զայս: «Բայց այն օրերը այն նեղութենէն ետեւ արեգակը պիտի խաւարի, ու լուսինը իր լոյսը պիտի չտայ, եւն:» Մարկ. ԺԳ. 24:
23. Արեգակն ու լուսինը ե՞րբ խաւարեցան անիմանալի կերպով:  
Մայիս 19, 1780ին:
24. Աստղերուն անկման նկատմամբ եղած մարգարէութիւնը ե՞րբ կատարուեցաւ:  
Նոյ. 12, 13, 1833ին:
25. Ի՞նչ առակ տրուած է՝ վերջին օրերուն մէջ ապրողներուն հրահանգման համար:  
«Թ՛ղենիէն առա՛կ մը սորվեցէք. որ երբ անօր օսերը կը կակուղեան ու տեսները կը ցցուին, զիտէք թէ ամառը մօտ է:» Մատթ. ԻԳ. 32:
26. Տէրոջը գալստեան մօտ ըլլալուն նկատմամբ՝ արժանահաւատ նշաններ և մարգարէական յայտարարութիւններ ունի՞նք:  
«Նոյնպէս ալ դուք երբոր այս ամէն բաները տեսնէք, զիտէք որ մօտ է դուներուն փոխը:» Հմբ. 33:
27. Այս բոլոր նշանները երբ կատարուին, Տէրոջը գալուստը ռ՞բքան մօտեցած կ'ըլլայ:  
«Ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի որ այս ազգը պիտի չանցնի մինչեւ որ այս ամէն բաները ըլլան: Երկինք ու երկիր պիտի անցնին, բայց իմ խօսքերս ընտու պիտի չանցնին:» Հմբ. 34, 35:
28. Թէև գիտենք Անոր գալստեան մօտ ըլլալը, գիտենք Անոր յայտնուելուն օրը և ժամը:  
«Իսկ այն օրուան և այն ժամուն համար մէկը չգիտեր, ո՛չ ալ երկնից հրեշտակները, հապա միայն իմ Հայրս:» Հմբ. 36:
29. Փրկչին գալէն առաջ՝ ի՞նչ պիտի ըլլայ աշխարհի բարոյական վիճակը:  
«Բայց ինչպէս որ Նոյի օրերը եղաւ, Որդույ մարդոյ



գալուսն ալ այնպէս պիտի ըլլայ: Քանզի ինչպէս էին այն օրերը ջրհեղեղէն տաաջ, կ'ուտէին՝ կը խմէին՝ կին կ'առնէին ու էրկան կուտային, մինչև այն օրը որ Նոյ տապանը մտաւ, և չդիտցան՝ մինչև որ ջրհեղեղը եկաւ ու ամէնը վերցուց. Որդոյ մարդոյ գալուսն ալ այնպէս պիտի ըլլայ:» Հմբ. 37—39:

30. Եթէ Նոյի քարոզութիւնը վկայութիւն մըն էր անդրջրհեղեղեան աշխարհի, վերջին սերունդին ինչ պիտի տրուի՝ իբրև վկայութիւն:

«Շւ արհայուրեան այս աւեսաբանը բովանդակ աւխարհի մէջ պիտի փարգուի՝ բոլոր ազգերուն վկայութիւն ըլլալու, և անկէ ետև վերջը պիտի գայ:» Մատթ. ԻԳ. 44:

31. Քրիստոնէին պարտաւորութիւնն ինչ է՝ երբ կը տեսնէ և կը լսէ այս վկայութիւնները:

«Ուրեմն արքուն կեցէք, քանզի չէք գիտեր թէ ո՛ր ժամանակ ձեր Տէրը կուգայ: Բայց այս գիտցէ՛ք, որ եթէ տանուտէրը գիտնար թէ գիշերուան ո՛ր պահուն դողը կուգայ, արթուն կը կենար և թող չէր տար որ իր տունը ծակեն: Անոր համար դուք ալ պատրաստ կեցէք, քանզի Որդին մարդոյ կուգայ անանկ ժամու մէջ՝ որ դուք չէք կարծեր:» Մատթ. ԻԳ. 42—44:

32. Ինչ պիտի ընէ հաւատարիմ ծառան, և ինչ պիտի ըլլայ իր վարձքը:

«Ուստի ո՞վ է այն հաւատարիմ ու խնամտուն ծառան՝ զոր իր Տէրը իր ծառաներուն վրայ դրաւ, որ ասեցին անոնց կերակուր տայ: Երանի՛ է այն ծառային, զոր իր տէրը եկած ասեց անանկ ըրած պիտի գտնէ: Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի որ իր բոլոր ունեցածին վրայ պիտի կեցնէ զանիկա:» Հմբ. 45—47:

33. Ինչ պիտի պատահի չար ծառային:

«Հապա թէ որ այն չար ծառան իր սրտին մէջ ըսէ, Իմ տէրս իր գալը կ'ուշացնէ, և սկսի իր ծառայակիցները ծեծել, ու գինովներուն հետ ուտել ու խմել, այն ծառային տէրը պիտի գայ անանկ մէկ օր մը՝ որ չի սպասեր, և անանկ մէկ ժամ մը որ չի գիտեր. և զանիկայ մէջսեղէն պիտի կտրէ, ու անոր բաժինը կեղծաւորներուն հետ պիտի դնէ. հոն պիտի ըլլայ լա՞ ու ակռաներ կրնան:» Հմբ. 48—54:

## ՍՈՒՐԲԵՐՈՒՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ

1. *Տէրոջը՝ երկիրը ստեղծելուն նպատակն ի՞նչ էր :*  
 «Քանզի այսպէս կ'ըսէ երկինքը ստեղծող Տէրը, այն Աստուածը որ երկիրը կազմեց, զանիկայ շինեց և հաստատեց, զանիկայ պարսպ սեղը չստեղծեց, հապա բնակութեան համար կազմեց. Տէրը ես եմ՝ և ուրիշը չկայ:» Ես. ԽԵ. 48:
2. *Ան որո՞ւ տուաւ երկիրը :*  
 «Երկնից երկինքը Տէրոջն է. բայց երկիրը մարդոց որդիներուն տուաւ:» Սաղմ. ճԺԵ. 46:
3. *Ի՞նչ իշխանութիւն տրուեցաւ մարդուն :*  
 «Եւ ըսաւ Աստուած, Մեր պատկերին ու մեր նմանութեանը պէս մարդ ընենք, և ծովու ձուկերուն, ու երկինքի բրաշուներուն, եւ անասուններուն ու բոլոր երկրին, ու երկրի վրայ սողացող բոլոր սողուններուն բոլ իւխէ:» Ծն. Ա. 26:
4. *Տէրը ի՞նչ պայմանով երկրին տիրապետութիւնը մարդուն տուաւ :*  
 «Եւ Տէր Աստուած առաւ մարդը, ու Եդեմի պարտեզին մէջ դրաւ, որ զանիկայ գործէ ու պահէ: Եւ Տէր Աստուած պատուիրեց մարդուն՝ ըսելով, Պարտէզին ամէն ծառէն համարձակ կե՛ր. բայց բարիի ու չարի գիտութեան ծառէն մի՛ ուտեր. քանզի անկէ կերած օրդ անուշաք պիտի մեռնիս:» Ծն. Բ. 45-47:]
5. *Աղամ հնազանդեցա՞ւ Աստուծոյ պահանջած պայմանին :*  
 «Եւ կնիկը տեսնելով որ ծառը աղէկ էր կերակուրի համար, և հաճելի՛ աչքերուն, ու փափաքելի՛ իմաստուն ընելու համար, առաւ անոր պտուղէն ու կերաւ, եւ իրեն ևե՛ս իւ էրկանն ալ տուաւ, եւ անիկայ կերաւ:» Ծն. Գ. 6:

6. Մեղքը որո՞ւ իշխանութեան տակ զրաւ մարդկային ցեղը :  
«Անոնց աչքերը բանալու, խաւարէն՝ լոյսի, ու Սասանայի իշխանութենէն Աստուծոյ դարձնելու, որ անոնք մեղաց թուղութիւն տանեն, և սուրբերուն հետ մասնակից ըլլան ինծի հաւատարմով :» Գործք ԻԶ. 48:
7. Սատանան այսպէսով տէր եղա՞ւ երկրին :  
«Եւ Սատանան ըսու Անոր. Այս ամէն իշխանութիւնը ու անոնց փառքը Քեզի պիտի տամ, բանգի ինծի յանձնուած է, և որսւ որ ուզեմ՝ կուտամ զանիկայ :» Լուկ. Գ. 6:
8. Հետեւաբար՝ ի՞նչ կոչուած է Սատանան :  
«Ալ ձեր հետը շատ պիտի շօտիմ, քանզի այս աշխարհիս իշխանը կուգայ, և իմ վրաս բան մը չունի :» Յովհ. ԺԳ. 30:  
«Քանզի մեր պատերազմը արիւնի ու մարմինի հետ չէ. հոպա իշխանութիւններու ու պետութիւններու հետ, եւ այս խաւար աշխարհիս իշխաններուն հետ, երկնաւորներուն մէջը եղող չար սգիներուն հետ :» Եփես. Զ. 12:
9. Հաւատքի որդիները ի՞նչ են հոս՝ երկրիս վրայ :  
«Ասոնք ամէնն ալ հաւատքով մեռան՝ խոստմունքները չառած, այլ հեռուէն տեսան զանոնք ու ողջունեցին, և խոստովանեցան թէ իրենց օտարներ ու պանդուխտներ են երկրի վրայ :» Եբր. ԺԱ. 43:
10. Ի՞նչ բանի կը սպասեն անոնք :  
«Սակայն իր խոստմունքին համեմատ նոր երկինքի մը ու նոր երկրի մը կը սպասենք, որոնց մէջ արդարութիւն կը ըլլանակի :» Բ Պետ. Գ. 13:
11. Ո՞ւր կը գտնենք այս խոստմունքը :  
«Քանզի ահա՛ Յս նոր երկինք ու նոր երկիր կը ստեղծեմ. եւ առջիները պիտի չյիշուին, ու մարդուս միտքը պիտի չգան :» Ես. ԿԵ. 17:
12. Այս խոստմունքը նախ որո՞ւ տրուեցաւ :— Աբրահամի :  
«Քանզի սա բոլոր երկիրը՝ զոր կը տեսնես, բնգի ու քու սերունդիդ պիտի տամ յաւիտեան :» Ծն. ԺԳ. 15:



13. Արրահամի եղած այս խոստմունքը ո՞րքան բան կը պարունակէ :

«Քանզի Արրահամին եւ անոր սերունդին՝ աշխարհը ժառանգելու համար տրուած խոստմունքը չէ՛ թէ օրէնքով եղաւ, այլ հաւատքին արդարութիւնովը:» Հռովմ. Գ. 13:

14. Աստուած այս խոստմունքը կատարե՞ց Արրահամի՝ անոր կենդանութեան ատեն :

«Եւ անկիա ըսաւ, Մարդի՛կ եղբայրներ ու հայրեր, մտի՛կ ըրէք. Փառաց Աստուածը մեր հօրը Արրահամին երեւցաւ, քանի որ Միջագետի մէջ էր, դեռ Խառանի մէջ չընակած, և ըսաւ անոր, Ելի՛ր քու երկրէդ և քու ազգականներէդ, ու եկո՛ւր այն երկիրը զոր ես քեզի պիտի ցուցնեմ: Այն ատեն Քաղդէացեաց երկրէն ելլելով՝ Խառանի մէջ ընակեցաւ. և անոր հօրը մեռնելէն ետեւ անկէ փոխադրեց զանկիա այս երկիրը, ուր որ դուք հիմա կը բնակիք: Եւ ասոր մէջ անոր ժառանգութիւնը չտուաւ, ո՛չ իսկ ոսկի քան զարծառ, ըստ խոստացաւ որ ասիկա իրեն տայ իրրեւ կալուածք, և իրմէ ետեւ իր սերունդին, երբոր դեռ ինքը որդի չուներ:» Գործք Է. 2-5:

15. Իր սերունդը ընդունեցա՞ւ խոստմունքը :

«Եւ ասոնք ամէնը հաւատքով վկայուած՝ խոստմունքը չառին:» Եբբ. ժԱ. 39:

16. Ի՞նչո՞ւ խոստմունքը չընդունեցաւ :

«Քանզի Աստուած մեզի համար աւելի ազեկ բան մը նախապատրաստեց, քան անոնք առանց մեզի չկատարուին:» Եբբ. ժԱ. 40:

17. Ի՞նչպէս կրնանք ժառանգ ըլլալ Արրահամի և իր սերունդին :

«Հոպա թէ որ դուք Քրիստոսինն էք, ուրեմն Արրահամին սերունդն էք, ու խոստմունքին նայելով՝ ժառանգներ:» Գաղ. Գ. 29:

18. Տէրը ի՞նչպէս կարելի պիտի ընէ Իր խոստմունքին կատարումը՝ ժառանգութիւնը չընդունած մեռնողներուն :

«Անոր համար մտադարձութիւն ըրէ ու անոնց ըսէ՛, Տէր եհովան այսպէս կ'ըսէ. Ահա՛ ես ձեր գերեզմանները պիտի

բանամ, ու ձեր զերեգմաններէն ձեզ պիտի հանեմ՝ ո՛վ իմ ժողովուրդս, եւ ձեզ Բարայէլի երկիրը պիտի բերեմ: Ու երբոր ձեր գերեզմանները բանամ, ու ձեզ ձեր գերեզմաններէն հանեմ՝ ո՛վ իմ ժողովուրդս, պիտի գիտնաք թէ ես եմ՝ Տէրը: Եւ իմ Հսգիս ձեր ներսիղի՛ն պիտի դնեմ, ու պիտի կենդանանամ, ու ձեր երկրին մէջ ձեզ պիտի հանգստացնեմ, ու պիտի զիտնամ որ Ես Տէրս խօսեցայ ու ըսի, *Կ'ըսէ Տէրը*:» Եզ. ԼԷ. 42—44:

19. *Տէրը ի՞նչ ըրած է՝ մեր մտքերէն վերցնելու համար տարակոյսի ամէն պատճառ:*

«Որ անով Աստուած Իր խորհուրդին անփոփոխ ըլլալը ալ աւելի ցուցնել ու զելով խոտամուկքին ժառանգաւորներուն, երդումը մէջ ձգեց, որ երկու անփոփոխելի բաներով՝ որոնցմով անկարելի է Աստուծոյ սուս գրուցել, հաստատուն մխիթարուրիւն ունենանք մենք՝ որ ապաստանեցանք առջեւեհա դուրս ած յոյսը ամուր բռնելու. որ այն յոյսը ունենանք իբրեւ մէկ հաստատ ու անցարժ խարխիս մը մեր անձին, որ վարագուրին ներսի կողմն ալ կը մտնէ:» Եբբ. 2. 17—19:

20. *Հիմակուան երկիրը ի՞նչ բանի համար պահուած է:*  
«Եւ Հիմակուան երկիրն ու երկիրը նոյն խօսքով պահպանուած են, մինչև դատաստանին ու ամբարիշտ մարդոց կորստեան օրը կրակի համար պահուած:» Բ. Պետ. 9. 7:

21. *Տէրը ի՞նչ պիտի ընէ յայնժամ:*  
«Քանզի ինչպէս որ իմ ստեղծելու նոր երկինքս ու նոր երկիրս իմ՝ առջեւս պիտի կենան, կ'ըսէ Տէրը, այնպէս ալ ձեր սերունդը ու ձեր անունը պիտի կենայ:» Ես. 42. 22:

22. *Սրբոց բնակութեան տեղը յաւիտեան երկինքի՞ մէջ՝ թէ երկինքի տակ պիտի ըլլան:*  
«Եւ քաղաւորուրիւնը ու իշխանուրիւնը, ու բոլոր երկինքին տակը եղող քաղաւորութեանց մեծուրիւնը Քարճելոյն սուրբերուն ժողովուրդին պիտի տուի. Անոր թագաւորութիւնը յաւիտեանական թագաւորութիւն է, ու բոլոր իշխանները Անոր պիտի ծառայեն ու պիտի հնազանդին:» Դան. Է. 27:

23. *Հեզկելը ի՞նչ պիտի ժառանգեն:*

«Երանի՛ հեզերուն, քանդի անոնք պիտի ժառանգեն երկիրը: Մատթ. Ե. 5:

24. Ի՞նչ պիտի իջնէ երկրիս վրայ:

«Եւ սուրբ քաղաքը Նոր Երուսաղէմը տեսայ՝ որ երկինքէն Սասուծմէ կ'իջնէր, իր էրկանը համար զարդարուած հարսի մը պէս պատրաստուած:» Յայտ. ԻԱ. 2:

25. Յայնժամ ո՞վ պիտի բնակի մարդուն հետ:

«Ու երկինքէն մեծ ձայն մը լսեցի՝ որ կ'ըսէր, Ահա՛ Աստուծոյ խորանը մարդոց մէջը, ու Ս.Յիկա անոնց հետ պիտի բնակի. և անոնք Անոր ժողովուրդը պիտի ըլլան, և Ասուած Ինքը անոնց հետ պիտի ըլլայ իբրեւ անոնց Սասուածը:» Յայտ. ԻԱ. 3:

26. Նոր երկրին գեղեցկութիւնը ո՞ւր նկարագրուած է:

«Անապատը ու չոր երկիրը պիտի ուրախանայ, և անբնակ երկիրը պիտի ցնծայ ու շուշանի պէս պիտի ծաղկի: Անիկա բոլորովին պիտի ծաղկի, և ցնծութեամբ ու երգերով պիտի ուրախանայ. անոր պիտի արուի Լիբանանի փառքը, Կարմեղոսի ու Սարօնի վայելչութիւնը. անոնք Տէրոջը փառքը՝ մեր Աստուծոյ վայելչութիւնը պիտի տեսնեն. . . Քանզի անապատի մէջ ջուրեր, ու անբնակ երկրի մէջ հեղեղներ պիտի ըլլին: Եւ խորշակահար երկիրը լիճի պիտի դառնայ, ու ծարուուտ երկիրը ջուրի աղբիւրներ պիտի ըլլի: Եւ չափալներուն պառկած բնակարանը եղէգի ու կնիւնի գաւիթ պիտի ըլլայ: Եւ հոն պողոտայ ու ճամբայ պիտի ըլլայ, որ սուրբ ճամբայ պիտի ըսուի. անկէ պիտի մէկը պիտի չանցնի. . . ու փրկուածները հոն պիտի քալեն: Ու Տէրոջը փրկածները պիտի դառնան, ու երգերով Սիօն պիտի գան, և անոնց գլխուն վրայ յաւիտենական ուրախութիւն պիտի ըլլայ. անոնք ցնծութիւն և ուրախութիւն պիտի ստանան, ու արամութիւնը և հեծութիւնը անոնցմէ պիտի հեռանայ:» Ես. ԼԵ:

27. Այլ եւս ի՞նչ չպիտի ըլլայ յայնժամ:

«Եւ Ինքը անոնց աչքերէն բոլոր արցունքները պիտի սրբէ, ու ա՛լ մահ պիտի չըլլայ, ո՛չ սուգ եւ ոչ աղաղակ եւ ո՛չ ցաւ պիտի ըլլայ ասիլէ ետեւ. քանզի առջի բաները անցան:» Յայտ. ԻԱ. 4:

28. Քաղաքը ի՞նչպէս պիտի երեւայ:



«Եւ սուրբ քաղաքը Նոր Երուսաղէմը տեսայ՝ որ երկինքէն Աստուծմէ կ'իջնէր, իր էրկանը համար զարդարուած հարսի մը պէս պատրաստուած: . . . Եւ հոգիով մէկ մեծ ու բարձր լերան մը վրայ տարաւ զիս, և ցուցուց ինձի Սուրբ Երուսաղէմ՝ քաղաքը, որ երկինքէն Աստուծմէ կ'իջնէր. ու Աստուծոյ փառքը ունէր, եւ անոր լուսաւորութիւնը խիստ պատեական ֆարի նման էր, ակնվանիի երեւոյթով յասպիս ֆարի պէս: Եւ անոր պարիսպը մեծ ու բարձր էր, և տասներկու դռներ ունէր, ու դռներուն վրայ տասներկու հրեշտակներ կային, և դռներուն վրայ անուններ գրուած էին՝ այսինքն Իսրայէլի որդւոցը տասներկու ցեղերուն անունները: . . . Եւ անոր պարսպին շինուածքը յասպիս քարէ էր, ու քաղաքը զուտ սուկի էր մաքուր ապակիի նման: Եւ քաղաքին պարսպին հիմերը ամէն տեսակ պատուական քարերով զարդարուած էին. առջի հիմը յասպիս էր, երկրորդը՝ շափուղայ, երրորդը՝ քաղկեդոն, չորրորդը՝ զմբուխտ, հինգերորդը՝ եղնգնաքար, և ըն. . . Եւ տասներկու դռները տասներկու մարգարիտ էին, ամէն մէկ դուռը մէյմէկ ամբողջ մարգարիտէ էր, ու քաղաքին հրապարակը մաքուր ոսկի էր թափանցիկ ապակիի նման» Յայտ. ԻԱ:

29. Մեր ժառանգութեան փառքին վրայօք կրնա՞նք ճիշդ գաղափար մը կազմել:

«Այն բաները որ աչք չէ տեսնուելու և ականջ չէ լսելու ու մարդու սրտին մէջ չեն ինկեր, Աստուած զինքը սիրողներուն պատրաստեց:» Ա կոր. Բ. 9:

30. Ըստ Յիսուսի յայտարարութեան՝ ո՞վ միայն պիտի քաղաքը մտնէ:

«Երանելի են անոնք՝ որ Անոր պատուիրանները կը կատարեն, որ իբխանութիւն ունենան կենաց ծառին վրայ և դռներէն ներս քաղաքը մտնեն:» Յայտ. ԻԲ. 44:

## ԱՍՏՈՒԾՈՅ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԸ

1. Տէրը զո՞վ կարգած է՝ սպասարկելու համար Իր սուրբերուն :


«Եւ հրեշտակներէն որո՞ւն ըսաւ երբէք, Իմ՝ աջ կողմս նստէ, մինչև որ Քու թշնամիներդ ոտքերուդ պատուանդան դնեմ : 21<sup>o</sup> որ անոնք ամէնը սպասաւորող հոգիներ են, որոնք սպասաւորութեան կը դրկուին անոնց համար՝ որ փրկուիսն պիտի ժառանգեն :» Եբբ. Ա. 13, 14 :

2. Հրեշտակները յաճախ ի՞նչ կոչուած են Ս. Գրքին մէջ :

«Եւ Յակոբ իր ճամբան գնաց, ու Աստուծոյ հրեշտակները աւոր պատահեցան իւր Յակոբ երբ տեսաւ զանոնք, ըսաւ, Աստուծոյ բանակն է. և այն տեղին անուէր Մանայիմ՝ դըրաւ :» Ծն. ԼԲ. 1, 2 : «Ու Միքիտ ըսաւ, Ուրեմն Տէրոջը խօսքը մտի՛կ ըրէ. Տէրը իր աթոռին վրայ նստած տեսայ, ու Երկիցի բոլոր զօրքերը Անոր բոլորտիքը՝ աջ կողմը ու ձախ կողմը կայներ էին :» Գ. Թագ. ԻԲ. 19 : «Եւ իսկոյն այն հրեշտակին հետ երկնային զօրքերու բազմութիւն մը եղաւ, որոնք զԱստուած կ'օրհնէին ու կ'ըսէին, Երկնից բարձրութեանը մէջ Աստուծոյ փառք, ու երկրիս վրայ խաղաղութիւն, մարդոց մէջ հաճութիւն :» Ղուկ. Բ. 13, 14 :

3. Հրեշտակները ո՞րքան կանուխէն ակնարկուած են :

«Ո՞ւր էիր դուն՝ երբոր Ես երկրին հիմերը կը դնէի. ըսէ՛ ինձի՛ թէ որ իմաստութեան տեղեկութիւն ունիս . . . Երբոր առաւօտեան աստղերը մէկտեղ փառարանութիւն կ'ընէին, ու երբոր Աստուծոյ բոլոր ուղիները ցնծութեամբ կ'աղաղակէին :» Յոր ԼԼ. 4, 7 : «Այսպէս վառտեց Ադամը. ու Եդեմի պարտէղին արեւելեան կողմէն ֆերովքները ու ամէն կողմ դարձող բոցեղէն տարը դրաւ, կենաց ծառին ճամբան պահելու համար :» Ծն. Գ. 24 :



ԱՍՏՈՒԾՈՅ ԶՐԵՇՏԱԿՆԵՐԸ



4. Ս. Գիրքը ի՞նչպէս կը խօսի՝ հրեշտակներու թիւ  
ւին մասին :  
«Բայց դուք Սիօն լեռանը մօտեցեր էք՝ ու կենդանի Աստուծոյ  
քաղաքին՝ Երկնաւոր Երուսաղէմին, և բիւրաւոր հրեցակե-  
ցեալներուն :» Եբր. ժԲ. 22 : «Եւ նոյեցայ՝ ու շատ հրեշտակներու  
ձայն լսեցի, որոնք ամօռին ու կենդանիներուն և երէցներուն  
բողոքութիւն էին. ու անոնց քիւն էր բիւրք բիւրոց եւ հա-  
զարք հազարաց :» Յայտ. Ե. 41 :
5. Մեծ իմաստութիւն ունին անոնք :  
. . . «Ու իմ տէրս Աստուծոյ հրեցակի մը պէս իմաս-  
տուն է՝ բոլոր երկրիս վրայ եղած բաները գիտնալու :» Բ. Թագ.  
ԺԿ. 20 :
6. Ի՞նչ բան ցոյց կուտայ թէ անոնք մասնաւորապէս  
խօսելու ձիրքն ունին :  
«Թէ որ մարդոց ու հրեցակցեալ լեզուներ խօսիմ, ելն :»  
Ա. Կոր. ԺԿ. 4 :
7. Ի՞նչ կը կարդանք անոնց զօրութեանը մասին :  
«Օրհնեցէ՛ք Տէրը՝ ո՛վ Անոր հրեշտակները, որ ուժով զօրա-  
ւոր էք, որ Անոր խօսքին ձայնը լսելով՝ Իր հրամանը կը կատա-  
րէք :» Սաղմ. ձԿ. 20 :
8. Օրինակ մը ունինք անոնց զօրութեանը մասին :  
«Ու եղաւ որ այն գիշերը Տէրոջը հրեշտակը ելաւ, և Ասորես-  
տանի բանակին մէջ հարիւր ուրսուն հազար մտրդ զար-  
կաւ. ու երբոր առաւօտուն կանուխ ելան, ահա՛ անոնց ամէնը  
մեռած մարմիններ էին :» Դ. Թագ. ԺԹ. 35 :
9. Հրեշտակները ո՞րքան շուտ կ'երթան :  
«Եւ հրեշտակներուն վրայօք կ'ըսէ, Որ Եր հրեցակցեալները հո-  
գիներ կ'ընէ, ու Իր պաշտօնեաները կրակի բոց :» Եբր. Ա. 7 :  
Սաղմ. ձԿ. 4 :
10. Ասոր մէկ օրինակը ո՞ւր կը գտնենք :  
«Երբ ես տակաւին աղօթքի մէջ կը խօսէի, ահա՛ այն առջի  
տեսիլքին մէջ տեսած մարդս Գաբրիէլ շուտ մը քաջելով  
ինձի դպաւ իրիկուան զոհին տանը, ու ինձի հատկցեալ ինձի  
հետ խօսեցաւ ու ըսաւ, Ո՛վ Դանիէլ՝ հիմա ելայ, որ քեզի  
իմաստութիւն սորվեցնեմ. Բու աղաչանքիդ սկիզբը

պատգամ ելաւ, ու ես եկայ որ պատմեմ:» Դան. Թ. 21—23:

11. Հրեշտակները ի՞նչպէս նկարագրուած են :

«Ու աչքերս վերցուցի ու նայեցայ, և ահա՛ կտաւ հազած, ու մէջքը Ռփազի ոսկիէ գօտի կապած մարդ մը կար. եւ անոր մարմինը ոսկեփարի պէս, ու երեսը փայլակի երեւոյթի պէս, եւ աչքերը կրակի բոցերու պէս, ու թեւերը ու ոտները փայլուն պղնձի գոյնին պէս, եւ իր խօսքերուն ձայնը բազմութեան ձայնին պէս էր:» Դան. Թ. 5, 6: «Եւ անոր (հրեշտակին) տեսքը փայլակի պէս էր, ու անոր հասդերձները ձիւնի պէս ճերմակ» Մատթ. ԻԸ. 3:

12. Հրեշտակները կրնա՞ն ներկայ ըլլալ, առանց տեսանելի ըլլալու մարդոց :

«Եւ Բաղասամ առտուանց ելաւ, ու իր իշուէն համար զբաւ, և Մովսրի իշխաններուն հետ գնաց: Ու երթալուն համար Աստուծոյ բարկութիւնը բորբոքեցաւ, ու Տէրօջը հրեցակը քամբուն վրայ կայնեցաւ իբրեւ անոր քցնամի մը. և անիկայ իր իշուէն վրայ հեծած էր, ու անոր երկու ծառաները իր հետն էին: Եւ էշը տեսաւ Տէրօջը հրեշտակը, որ ճամբուն վրայ կայնած էր, ու իր ձեռքը մերկ սուր մը ունէր, ու էշը ճամբայէն դարձաւ և արտը մտաւ, ու Բաղասամ՝ էշը ձեծեց, որ իր ճամբուն դարձնէ զանիկայ: Եւ Տէրօջը հրեշտակը այդիներուն նեղ ճամբուն մէջ կայնեցաւ, ուր որ մէկ կողմէն պատ՝ ու միւս կողմէն պատ կար: Եւ երբոր էշը Տէրօջը հրեշտակը տեսաւ, պատին քովը խոթուեցաւ, և Բաղասամին ոտքը պատին քովը ճնշեց. ան ալ նորէն ձեծեց զանիկայ: Եւ Տէրօջը հրեշտակը առաջ գնաց, ու նեղ տեղ մը կայնեցաւ, որ աջ կամ ձախ կողմը խոտորելու ճամբայ չկար: Եւ երբոր էշը Տէրօջը հրեշտակը տեսաւ, Բաղասամին տակը նստաւ. ու Բաղասամին բարկութիւնը բորբոքեցաւ, և դաւազանով ձեծեց էշը: Եւ Տէրը իշուէն բերանը բացաւ, ու անիկայ Բաղասամին ըսաւ. Ի՞նչ ըրի քեզի՝ որ այսպէս երեք անգամ իս ձեծեցիր: Եւ Բաղասամ ըսաւ իշուէն, Իս ծաղր ընելուդ համար. երանի՛ թէ ձեռքս սուր մը ըլլար, որ հիմա քեզ մեռցնէի: Եւ էշը ըսաւ Բաղասամին, Ես ան քու էշդ չե՞մ, որուն վրայ կը հեծնէիր մանկութենէդ մինչև այսօր. քեզի ասանկ ընել իմ սովորութիւնս էր. ու անիկայ ըսաւ, Չէ՛:» Թու. ԻԲ. 21—30:

13. *Ի՞նչ պիտի պարզուի մեր աչքերուն՝ երբ այս երկ-  
նաւոր էակները տեսնել կարենանք :*  
«Եւ եղիտէ ազօթք ըրաւ ու ըսաւ, Ո՛վ Տէր՝ ատր աչքերը բա՛ց  
որ տեսնէ: Եւ Տէրը ծառային աչքերը բացաւ. ու տեսաւ որ  
տա՛ւ լեռը Յղիսէին չորս կողմը հրեղէն ձիերով ու  
կառնեով լեցուն էր:» Դ Թագ. 9. 17: «Այն ատեն Տէրը  
բացաւ Բաղամամին աչքերը. ու երբ տեսաւ որ Տէրոջը հրե-  
տակը համբուն վրայ կայնած էր, եւ իր ձեռքը մերկ  
սուր մը ունէր, իր երեսին վրայ ինկաւ ու երկրպագութիւն  
ըրաւ:» Թու. ԻԲ. 31:
14. *Հրեշտակները կը մասնակցի՞ն Աւետարանի գործին :*  
«Որոնց յայտնուեցաւ, որ չէ՛ թէ իրենց՝ հասպա մեղի մտտակա-  
րարեցին այն բաները, որոնք հիմա ձեզի պատմուեցան անոնց  
ձեռքով՝ որ Աւետարանը քարոզեցին ձեզի Հոգւով Սրբով որ  
երկինքէն զրկուեցաւ. ու այն բաներուն՝ հրեշտակները կը  
ցանկան ակնկառոյց ցայելու:» Ա Պետ. Ա. 42:
15. *Որո՞նց ծառայակիցներն են անոնք :*  
«Ես ալ անոր ստբերուն առջեւը ինկայ, որ անոր երկրպագու-  
թիւն ընեմ. ու ըսաւ ինձի, Զգուշացի՛ր՝ մի՛ ընել. քանզի ես  
այ քու ծառայակիցդ եմ ու քու եղբայրներուդ, որոնք  
ճիստուտի վկայութիւնը ունին. Աստուծո՛յ երկրպագութիւն  
ըրէ:» Յայտ. ԺԹ. 40: ԻԲ. 9:
16. *Ի՞նչ ծառայութիւն կը կատարեն անոնք՝ հաւատաց-  
եալներուն համար :*  
«Զգո՛ւշ կեցէք որ չանարգէք այս պղտիկներէն մէկը. քանզի  
կ'ըսեմ՝ ձեզի որ երկնից մէջ անոնց հրեշտակները միշտ  
կը տեսնեն Իմ Հօրս երեսը՝ որ երկինքն է:» Մատթ. ԺԷ. 40:
17. *Մեղաւորի մը դարձի գալը ի՞նչ ազդեցութիւն կ'ը-  
նէ անոնց վրայ :*  
[«Անտե՛կ ալ՝ ձեզի կ'ըսեմ, ուրախութիւն կ'ըլլայ Աստուծոյ  
հրեշտակներուն առջեւ մէկ մեղաւորի մը համար որ  
կ'ապագիտարէ:» Դու. Կ. ԺԵ. 40:
18. *Նկարագրէ՛ պարագայ մը՝ ուր հրեշտակ մը ներկայ  
էր մէկու մը դարձի գալուն մէջ :*  
«Եւ Տէրոջը հրեշտակը Փիլիպպոսին խօսեցաւ՝ ըսե-



լով, ելի՛ր ու գնա՛ դուն Հարաւային կողմը այն ճամբան, որ  
երուսաղէմէն գէտի Գաղա կ'իջնէ, որ անապատ տեղ մըն է:»  
Գործք Բ. 26:

19. Ո՞վ մղեց զԿոռնելիոս՝ կանչել Պետրոսը:

«Անիկայ օրուան ժամը իննին ատենները տեսիլքի մէջ Աստու-  
ծոյ հրեցտակը յայցնի տեսաւ, որ իր բովը մտաւ եւ իրեն  
բտաւ, կ'առնելիոս: Ան ալ անոր նայելով ու խիտ վախնալով,  
բտաւ, ի՞նչ է Տէ՛ր, Ան ալ բտաւ անոր. Քու աղօթքներդ ու ո-  
ղորմութիւններդ Աստուծոյ առջև ելան յիշատակի համար:  
Եւ հիմա Յոպպէ մարդի՛կ դիկէ, ու կանչէ՛ Սիմոն ա-  
նուեով մէկը որ Պետրոս մականուանեալ է: . . .»

«Անո՛ք ալ ըսին, կոռնելիոս հարեւապետը՝ արդար և  
Աստուածավաս մարդ՝ բարբ Հրէից սղգէն վկայուած՝ սուրբ  
հրեցտակէ մը հրաման առաւ, որ քեզ իր տունը կանչէ  
եւ քեզմէ խօսեց լսէ. . . : կոռնելիոս ալ ըսաւ, Չորս օր ա-  
ռաջ մինչև այս ժամն ծով կը պահէի, ու ժամը իննին  
տանն մէջ աղօթք կ'ընէի. և ահա՛ փայլուն հանդերձնե-  
րով մարդ մը կայնեցաւ առջես ու բտաւ, կ'առնելիոս՝  
բու աղօթք լսուեցաւ, եւ բու ողորմութիւններդ Աս-  
տուծոյ առջեւը յիշուեցան. ուստի մա՛րդ դիկէ Յոպպէ,  
ու կանչէ՛ Սիմոն՝ որ Պետրոս ալ կ'ըսուի, անիկա ծո-  
վուն մօտ Սիմոն անուեով կա՛թ բանողի մը տանը մէջ  
իբրև հիւր կը կենայ. որ երբ գայ, քեզի պիտի խօսի:»  
Գործք Ժ. 3—5, 22, 30—32:

20. Ի՞նչ նպատակի համար կոռնելիոս Պետրոսը պիտի  
կանչէր:

«Եւ անիկա մեզի պատմեց թէ ինչպէս իր տանը մէջ հրեշտա-  
կը տեսաւ՝ որ կայներ էր և իրեն կ'ըսէր, Մա՛րդ դիկէ Յոպպէ՛  
ու կանչէ՛ Սիմոն որ Պետրոս կը կոչուի. ան որ քեզի խօսեց  
պիտի խօսի, որոնցմով փրկուիս դուն եւ բու բոլոր  
տունդ:» Գործք ԺԱ. 43, 44.

21. Ղուլար Սողոմէն ո՞վ ազատեց:

«Եւ առտու եղածին պէս՝ հրեցտակները արտոցուցին  
Ղուլար՝ ըսելով, ելի՛ր՝ կնիկդ ու հաս գտնուած երկու  
աղջիկդ ա՛ռ, որ բաղափին անօրէնութեանը մէջ չկոր-  
սուիս: Եւ երբ անիկա կը անտնար, այն մարդիկը բռնեցին  
անոր ձեռքէն եւ անոր աղջիկներուն ձեռքէն՝ Տէրոջը

անոր ողորմելովը, ու հանեցին զանիկա, եւ քաղաքին զուրօրիցին դրին:» Ծն. ԺԹ. 15, 16:

22. *Ի՞նչ հրաշք գործեց հրեշտակը՝ որ Եղիային այցելեց:*  
«Ու զիհիկ մը տակ պառկեցաւ քնացաւ. և ահա՛ մէկ հրեօսակ մը անոր դպաւ, ու անոր ըսաւ, Սլի՛ր կե՛ր: Ու Յղիա նայեցաւ, եւ ահա՛ զլիսուն քովը մոխրի օակ կիսուած օօք մը ու մէկ կուժ ջուր կար. ու կերաւ խըմեց, ու նորէն պառկեցաւ: Եւ Տէրօջը հրեշտակը դարձաւ երկրորդ անգամ՝ անոր դպաւ, ու անոր ըսաւ, Ելի՛ր կե՛ր. քանզի քու երթալու ճամբադ շատ է: Եւ անիկա ելաւ, կերաւ ու խմեց. և այն կերակուրին ուժովը քառասուն օր ու քառասուն զիշեր դնաց, ու մինչև Քորեք՝ Աստուծոյ լեռը հասաւ:» ԳԹագ. ԺԹ. 5—8:

23. *Հրեշտակ մը ի՞նչպէս պաշտպանեց Դանիէլի կեանքը:*  
«Իմ Աստուածս Իր հրեօսակը դրկեց, ու առիճներուն բերանը զոցեց, ու ինձի վնաս չսուին. վասն զի Անոր առջեւը իմ՝ վրաս անմեղութիւն գտնուեցաւ:» Դան. 9. 22:

24. *Ո՞վ ծանուց Քրիստոսի ծնունդը:*  
«Ու վեցերորդ ամսուն մէջ Պարթիէլ հրեօսակը Աստուծմէ դրկուեցաւ Պալիլեայի մէկ քաղաք՝ որուն անունը Նազարէր էր, մէկ կոյսի մը՝ մարդու մը նօսնուած, որուն անունը Յովսէփ էր՝ Պաւլոսի օսուէն, եւ այն կոյսին անունը Մարիամ էր: Ու հրեօսակը էնոր գալով ըսաւ, Ողջո՛յն քեզ՝ ո՛վ շնորհակալ կոյս, Տէրը քու հետք է. դուն կանանց մէջ օրհնեալ ես: Եւ էնիկա տեսնելով՝ անոր խօսքին վրայ շփթեցաւ, ու ինքնիրեն կը մտածէր թէ ի՛նչպէս բան պիտի ըլլայ այս ողջոյնը: Եւ հրեօսակը էնոր ըսաւ, Մի՛ վախնար, Մա՛րիամ, քանզի Աստուծմէ շնորհ գար. եւ ահա՛ պիտի յղանաս ու որդի մը պիտի ծնանիս, եւ անոր անունը Յիսուս պիտի դնես: Անիկայ մեծ պիտի ըլլայ, ու Բարձրելոյն Որդին պիտի ըսուի, և Տէր Աստուած պիտի տայ Անոր Իր հօրը Պաւլոսի թաղաքը, ու Յակոբի տանը վրայ յաւիտեան պիտի թաղաւորէ, և Անոր թաղաւորութիւնը վերջ պիտի չունենայ:» Դուկ. Ա. 26—33:  
«Եւ այն տեղը հովիւներ կային դաշտի մէջ կեցած, որոնք իրենց հօտերուն գիշերուան պահպանութիւնը կ'ընէին: Եւ ահա՛ Տէրօջը հրեօսակը անոց վրայ իջաւ, ու Տէրօջը

փառքը անոնց բողբոջութիւնը ծագեցաւ. ու խիստ շատ վախցանս  
եւ հրեշտակը բաւաւ անոնց, Մի՛ վախնաք, քանզի ահա՛ ես  
ձեզի մեծ ուրախութեան աւեսիս կուտամ, որ բոլոր  
ժողովուրդին պիտի ըլլայ. վասն զի ձեզի այսօր Փրկիչ  
մը ծնաւ Պաւլոսի քաղաքին մէջ, որ ինքը Օծեալ Տէր է:  
Եւ այս ձեզի նշան մը ըլլայ. մանուկ մը պիտի գտնէ՞ք  
խանձաբուրով փարքած ու մտուրի մէջ պառկած: Եւ  
խնդրն այն հրեշտակին հետ երկնային զօրքերու բազմութիւնն  
մը իջաւ, որոնք զԱստուած կ'օրհնէին ու կ'ըսէին, Երկնից բարձ-  
րութեանը մէջ Աստուծոյ փառք, ու երկրիս վրայ խաղաղու-  
թիւն, մարդոց մէջ հաճութիւն: Ու եղաւ, որ երբ հրեշտակ-  
ները անոնցմէ երկինքը վերցան, հովիւները իրարու ըսին, Եկէ՛ք  
մինչեւ Բեթլէհէմ՝ երթանք. ու տեսներք թէ ի՞նչ է այս եղած  
բանը, զոր Տէրը մեզի ցուցուց:՝ Առկ. Բ. 8—15:

25. Ո՞վ սպասարկեց Յիսուսի՝ Իր փորձութենէն ետեւ:  
«Այն ասեւ Սատանան զԱնիկա թողուց, և ահա՛ հրեցակ-  
ներ եկան ու Անոր սպասաւորութիւն կ'ընէին:» Մատթ.  
Գ. 41:
26. Ո՞վ զօրացուց Յիսուսը՝ պարտէզին մէջ Անոր ոգե-  
ւարի պահուն:՝  
«Ու երկինքէն հրեցակ մը երեցաւ Անոր եւ կը գօ-  
րացնէր զԱնիկա:» Առկ. ԻԲ. 43:
27. Ո՞վ ծանուց Տէրոջ վերադարձը՝ երբ Ան երկինք  
կ'ելլէր:  
«Ու քանի որ աչքերնին տնկած դէպի երկինք կը նայէին Անոր  
երթալուն վրայ, ահա՛ երկու մարդ իրենց քովը կայնե-  
ցան ներմակ հանդերձներով, որոնք նաեւ ըսին, Ո՞վ  
Պաւլոսացի մարդիկ՝ ինչո՞ւ կայներ դէպի երկինք կը  
նայիք. այն Յիսուսը որ ձեզմէ երկինք համբարձաւ,  
ասանկ պիտի գայ՝ ինչպէս որ տեսաք Անոր երկինք երթալը:»  
Գործք Ա. 10, 41:
28. Ո՞վ բանտէն ազատ արձակեց զՊետրոս:  
«Եւ ահա՛ Տէրոջը հրեցակը եկաւ վրան կայնեցաւ,  
ու տանը մէջ լոյս մը ծագեց, եւ Պետրոսի կողը խօրե-  
լով՝ արքնուց զանիկա ու ըսաւ, Ետևո՞վ ելիր. ու  
եղբաները անոր ձեռքերէն վար ինկան: Եւ հրեշտակը



ըսաւ անոր, Գօտիդ կապէ՛ որ հսղաթափներդ ո՛տքդ հագիր, անիկա ալ այնպէս ըրաւ. և ըսաւ անոր, հանդերձդ վրա՛դ առ ու եկո՛ւր իմ՝ ետեւէս. ան ալ ելլելով անոր ետեւէն կ'երթար, և չէր գիտեր թէ այն հրեշտակէն եղած բանը իրաւ է, այլ կը կարծէր թէ տեսիլք կը տեսնէ: Ու երբ անոնք առաջին ու երկրորդ պահապաններէն անցան, եկան մինչև երկաթի դուռը, որ քաղաքին մէջ կը հանէր, որ ան ինքիւրմէն բացուեցաւ անոնց. և անկէ ելլելով՝ մէկ փողոց մը անցան, հրեշտակն ալ խոզոյն անկէ զատուեցաւ: Ու Պետրոս ինքզինքին գալով ըսաւ, Հիմա նամարեապէս գիտեմ որ Տէրը Իր հրեցակը դրկեց, եւ ազատեց զիս Հերովդէսի ձեռքէն ու Հրէից ժողովուրդին բոլոր ակնկալութիւնէն:» Գործք ԺԲ. 7—11:

29. Ո՞վ հաղորդեց Յիսուսի յայտնութիւնը:

«Յիսուս Քրիստոսի յայտնութիւնը, զոր Աստուած Անոր տուաւ իր ծառաներուն ցուցնելու ինչ որ շուտով պէտք է ըլլալ. և Իր հրեցակին ձեռնով դրկելով՝ Իր Յովհաննէս ծառային իմացուց, որ Աստուծոյ խօսքին վկայութիւնը ըրաւ, ու Յիսուս Քրիստոսի վկայութիւնը, ինչ որ տեսաւ:» Յայտ. Ա. 1:

30. Ո՞վ վերջ ի վերջոյ պիտի ժողվէ սուրբերը:

«Եւ թ շնամին որ անիկա ցանեց, Սատանան է, և հունձքը աշխարհիս վերջն է, ու հնձողները հրեցակներն են:» «Եւ Անիկա Իր հրեցակները պիտի դրկէ մեծածայն փողով, ու պիտի ժողվեն Իր ընտելակները չորս հովիւրէն՝ երկինքին մէկ ծայրէն մինչեւ միւս ծայրը:» Մատթ. ԺԳ. 39, ԻԳ. 31:

31. Տէրը ի՞նչ խոստմունք կուտայ Իրմէ վախցողներուն:

«Տէրսըը հրեշտակը իր բանակը Անկէ վախցողներուն չորս կողմը կը դնէ, ու զանոնք կ'ազատէ:» Սաղմ. ԼԳ. 7:

## ՍԱՏԱՆԱՆ ԵՒ ԻՐ ԳՈՐԾԸ

## 1. Հրեշտակները երբէք մեղանչած են :

«Վասն զի թէ որ Աստուած մեղք գործող հրեշտակներուն չինչայց, այլ խաւարի կապերով տարտարոր ձգած՝ դատաստանի պահել տուաւ զանոնք:» Բ Պետ. Բ. 4:

## 2. Անկեալ հրեշտակներուն գլուխը ի՞նչ անունով ճանչացուած է ընդհանրապէս :

«Այն ատեն ձախ կողմը եղողներուն պիտի ըսէ, Մէկդի՛ գացէք Ինծմէ՛՝ անիծեալներ՝ յաւիտենական կրակին մէջը, որ պատրաստուած է Սասանային ու իր հրեշտակներուն:»

## 3. Ուրիշ ի՞նչ տիտղոս տրուած է անոր յաճախ :

«Ու ըսնեց վիճապը յայտնքն առջի օձը որ Ռանսարկու ու Սատանան է, և կապեց զանիկայ հազար տարի:» Յայտ. Ի. 2:

## 4. Վատա՞ն ենք թէ Սատանան ինկաւ երկինքէն :

«Եւ ըսաւ անոնց, Սասանան փայլակի պէս երկինքէն վար ինկած կը ճեսնէի:» Դ.ու. Ժ. 48: «Ո՛վ առտուանց ծագող Արուսեակ՝ ի՛նչպէս երկինքէն ինկար ու մինչև դետինը կործանեցար, դուն որ ազգերը նկուշ կ'ընէիր:» Ես. Ժ. 42:

## 5. Սատանան իր անկումէն առաջ ի՞նչ զիրք կը գըրաւէր :

«Գուն ճարածուած ու ծածկող բերովքէ մըն էիր, ու ես քեզ գրի. և դուն Աստուծոյ սուրբ լեռանը վրայ էիր, դուն հրեղէն քարերուն մէջտեղուանքը կը շրջէիր:» Եզ. ԻԸ. 14:

## 6. Գերովքէները ո՞ւր են :

«Եւ հոն ես քեզի պիտի հանդիպիմ. ու Բաւուրեանը վրայէն՝ վկայութեան ճապանակին վրայ եղած երկու բերովքէներուն մէջտեղէն՝ Իսրայէլի որդւոցը համար բոլոր քեզի պատուիրելու բաներուս վրայօք պիտի խօսիմ քեզի:» Եւ. ԻԵ. 22: «Ակա՛նջ գիր՝ ո՛վ Իսրայէլի Հովիւը, որ Յովսէփին՝ հօտի պէս կ'առաջնորդես, Գուն որ բերովքէից վրայ կը նըս-

սիս, պայծառացի՛ր» Սաղմ. 2. 2. 4: «Տէրը կը թագաւորէ, ժողովուրդն էրը թող սարսափի՛ն. Եճքը քերովքից վրայ կը նստի, երկիրը թող շարժի՛» Սաղմ. 1. 10. 4:

7. Այս ծածկող քերովքէն մեղանչե՞ց :

Քու առուտուրիդ շատութեանը համար քու մէջդ զրկանքով լեցուցին, ու մեղք գործեցիր. ես ալ քեզ Աստուծոյ լեռնէն իրբև պիղծ վար նետեցի, և քեզ՝ ո՛վ ծածկող քերովքէ, հրեղէն քարերուն մէջէն բնաջինջ ըրի՛» Եղ. 18. 46:

8. Ան ի՞նչպէս եղած էր առաջ՝ իր ճամբաներուն մէջ : «Դուն քու ցամբաներուդ մէջ կասարեալ էիր, քու ստեղծուած օրէդ մինչև այն օրը՝ որ քու վրագ անօրէնութիւն գտնուեցաւ :» Հմբ. 15:

9. Ատենօք ո՞ւր եղած էր ան :

«Դուն Աստուծոյ դրախտին՝ Եդեմի մէջ էիր» Հմբ. 13, Ա մաս: Տիւրքոսի թագաւորի մասին չի կրնար ըսուիլ թէ Աստուծոյ դրախտին՝ Եդեմի մէջ էր. — Ան լոկ Սատանային իբր մէկ օրինակն առնուած է հոս :

10. Սատանան ի՞նչ ստացած էր :

«Տէր Եհովան այսպէս կ'ըսէ, դուն որ կասարելութեան կնիքն ես, իմաստութեամբ լեցուած, ու զեղեցիութեան մէջ կասարեալ ես :» Հմբ. 12:

11. Ինչ ո՞ւր ինկաւ այս քերովքէն :

«Քու զեղեցիութեանդ համար սիրցդ հպարտացաւ, քու վայելչութեանդ պատճառաւ քու իմաստութիւնդ աւրեցիր. ես ալ քեզ գետինը նետեցի, քեզ թագաւորներուն առջեւը դրի տեսարան ըլլալու համար» Հմբ. 17: «Դուն սրտիդ մէջ ըսած էիր, Երկինքը ելլեմ ու իմ արօսս Աստուծոյ աստեղէն վեր բարձրացնեմ. եւ ժողովքի լեռը հիւսիսի քովերը բնակիմ. ամպերու բարձրութիւններու վրայ ելլեմ, Քարձելոյն նմանիմ :» Ես. 14. 13, 14:

12. Ո՞ւրտեղ ձգուեցաւ Սատանան՝ իր հրեշտակներուն հետ :

«Եւ վար ձգուեցաւ մեծ վիշապը՝ այն առջի օձը որ Բանասրկու ու Սատանայ կ'ըսուի, որ ըզոր աշխարհ մտորցոց, ու իր հրեհօսակները իրեն հետ վար ձգուեցան երկրի վրայ :» Յայտ. 12. 9:



13. Սատանան ո՞ւր կ'իշխէ :

«Քանզի մեր պատերազմը արիւնի ու մարմինի հետ չէ, այլ էշխանութիւններու ու պետութիւններու հետ, և այս խաւար աշխարհիս իշխաններուն հետ, երկնաւորներու մէջ եղող չար ոգիներուն հետ:» Եփես. 2. 12: Այս խօսքին համեմատ՝ շար ոգիներու ընակած տեղը՝ ինչպէս լուսադոյն մեկնիչները կ'ըսեն, ոչ երկինքն է, ոչ գեհեմը, այլ՝ մեր երկրագունտը պարուրող մթնոլորտը, **Sarsarou** է, ինչպէս Բ Պետ. Բ. 4ի մէջ ըսուած է:

14. Սատանան ի՞նչպէս կը պտըտի երկրիս վրայ :

«Արթո՛ւն կեցէք, հսկեցէ՛ք, քանզի ձեր հակառակորդը Սատանան մահչող առիւծի պէս կը պարօթի, ու կը փնտռէ թէ ո՛վ կլլէ:» Ա Պետ. Ե. 8:

15. Ի՞նչ կը ցանէ ան :

«Ու երբոր մարդիկ կը քնանային, իր թշնամին եկաւ, ու ցորենին մէջ որով ցանեց ու քնաց: Եւ արտը աշխարհս է. իսկ բարի սերմը անոնք են՝ որ թագաւորութեան որդիքն են, բայց որով չարին որդիքն են. Եւ բռնամիտ որ զանիկայ ցանեց, Սասանան է, և հունձքը աշխարհիս վերջն է, ու հընձողները հրեշտակներն են:» Մատթ. ԺԳ. 25, 38, 39,

16. Մեղքը՝ ո՞վ մտցուց աշխարհի մէջ :

«Եւ Տէր Աստուծոյ բրած դաշտի բոլոր դազաններէն տեյի խորամանկ էր օձը, ու կնկանը ըսաւ, Իրաւ Աստուած ըսա՛ւ թէ պարտեզին ամէն ծառէն պիտի չուտէք:» Ծն. Գ. 1: «Գուք ձեր հօրմէն Սատանայէն էք, ու ձեր հօրը բողձանքը կ'ուզէք ընել. անիկա սկիզբէն հետէ մարդասպան էր, և ճշմարտութեան մէջ չկեցաւ, քանզի անոր ներթիզին ճշմարտութիւն չկայ. երբոր անիկա ստութիւն խօսի, բուն իրեններէն կը խօսի, Բանգի անիկա սախոս է եւ անոր հայրը:» Յովհ. Ը. 44:

17. Ո՞վ փորձեց զՓրկիչը :

«Այն ատեն Յիսուս անապատը տարուեցաւ Սուրբ Հոգիէն՝ որ Սասանայէն փորձուի. և քառասուն ցորեկ ու քառասուն զիշեր ծով՝ պահելէ հաք անօթեցաւ: Եւ փորձողը Անոր մօտեցաւ լով ըսաւ, Թէ որ դուն Աստուծոյ Որդին էս, ըսէ՛ որ այս քարերը հաց ըլլան: Անիկա պատասխան տուաւ ու ըսաւ, Գրքուած է թէ Ո՛չ միայն հացով կ'ապրի մարդ, այլ՝ այն ամէն

խօսքով՝ որ Աստուծոյ բերնէն կ'ելլէ: Այն ատեն Սասանացի առաւ արաւ զԱնիկա տաճարին աշտարակին վրայ, ու ըսաւ Անոր, թէ որ Գուռն Աստուծոյ Որդին ես, Քեզ ասկէ վա՛ր ձգէ, քանզի գրուած է թէ Լը հրեշտակներուն պիտի ապսպրէ Քեզի համար, ու ձեռքերնուն վրայ պիտի վերցնեն Քեզ, որ չըլլայ թէ ոտքդ քարի զարնեալ Յիսուս ըսաւ անոր, Գործեալ գրուած է թէ Քու Տէր Աստուածդ չփորձես: Սասանացի Գուռն առաւ հանեց զԱնիկա խիստ բարձր լեռան մը վրայ, և ցուցուց Անոր աշխարհի բոլոր թագաւորութիւնները ու անոնց փառքը, և ըսաւ Անոր, Աստուծոյ Քեզի կուտամ, թէ որ իյնաս՝ ինձի երկրպագութիւն ընես: Այն ատեն Յիսուս ըսաւ անոր, Եթո՞ս դնաս Սատանայ, քանզի գրուած է թէ Քու Տէր Աստուծոյ երկրպագութիւն ընես, ու միայն զԱնիկա պաշտես: Այն ատեն Սատանան զԱնիկա թողուց. և ասո՛ւ հրեշտակներ եկան ու Անոր սպասուարտութիւն կ'ընէին:» Մատ. Գ. 4—11:

18. Սատանան քանի՞ քանիներ մոլորցուց:

«Գիտենք որ մենք Աստուծով ենք, ու բոլոր աշխարհի չարիքն մէջ է:» Ա Յովհ. Ե, 19: «Եւ վար ձրուեցաւ մեծ վիշապը՝ այն առջի օձը որ Բանաստեղծ ու Սատանայ կ'ըսուի, որ բոլոր աշխարհի մոլորցուց, ու իր հրեշտակները իրեն հետ վար ձրուեցան երկրի վրայ:» Յայտ. ԺԲ. 49:

19. Փրկիչը ինչո՞ւ եկաւ:

«Ես ալ ըսի, Գուռն ո՞վ ես՝ Տէ՛ր. և Անիկա ըսաւ, Ես եմ Յիսուսը զոր դուն կը հալածես. բայց ելի՛ր ու սաքիք վրայ՝ կայնէ. քանզի ասոր համար քեզի երեւցայ, որ քեզ ձեռք առնեմ պաշտօնեայ և վկայ ընելու այն բաներուն զոր տեսար, ու այն բաներուն որոնցմով պիտի երեւնամ քեզի, քեզ ազատելով այդ ժողովուրդէն ու հեթանոսներէն, որոնց հիմա քեզ կը զրկեմ, անոնց ազգերը բանալու, խաւարէն՝ լսյսի, ու Սասանային իշխանութենէն Աստուծոյ դարձնելու, որ անոնք մեզաց բողոքիւն առնեն, և սուրբերուն հետ մասնակից ըլլան Ինձի հաւատալով:» Գործք ԻԶ. 15—18: «Ուստի որովհետեւ զաւակները մարմինին ու արիւնին հաղորդ եղան, ինքն ալ նմանազէս անոնց բաժանորդ եղաւ, որ Իմ մահովը փրկեցնէ անիկայ որ մահուան իշխանութիւնը ունէր, այսինքն է Սասանացի. և ազատէ զանոնք որ մահուան վախովը միշտ ծառայութեան մէջ կ'ապրէին:» Երբ. Բ. 44, 45:

20. Ի՞նչ բան ցոյց կուտայ թէ Սատանան մասնաւորապէս գործունեայ պիտի ըլլայ ետքի ատեններու մէջ : «Բայց Հոգին յայտնի կ'ըսէ, թէ ետքի ատենները մէկ քանինիները հաւատաբէն պիտի ապստամբին, և մոլորեցուցիչ ոգիներու և դիւցազններու ուշադրութիւն պիտի տան» Ա Տիմ. Գ. 1 :
21. Ի՞նչպէս պիտի գործէ ան : «Որուն գալը Սատանային ազդեցութիւնովն է բոլոր զօրութիւնով եւ նեւաններով ու սուս հրաւճներով, եւ կուտեսեալներուն վրայ անիրաւութեան բոլոր խաբէութիւնովը. որովհետեւ անոնք ճշմարտութեան սէրը չընդունեցին որ փրկուին, անոր համար Աստուած ալ պիտի զրկէ անոնց ուժով մոլորութիւն մը՝ որ ստույթեան հաւատան» Բ Թեա. Բ. 9, 10 :
22. Ի՞նչ տեսակ նշաններ և հրաշքներ պիտի ընէ ան : «Քանզի սուտ քրիստոսներ և սուտ մարդարէներ պիտի ելլեն, և մեծ նեւաններ եւ հրաւճներ պիտի ցուցնեն, որ եթէ կարելի էր՝ ընտրեալներն ալ մոլորեցնեն» Մատթ. ԻՎ. 24 :
23. Դեւերու ոգիները ի՞նչ պիտի ընեն : «Քանզի անոնք դեւերու ոգիներ են՝ որ նեւաններ կ'ընեն, ու բոլոր աշխարհին քաղաւորներուն կ'երբան, որ գանձնեմ Ամենակալ Աստուծոյ այն մեծ օրուանը պատերազմին համար ժողովն» Յայտ. ԺԶ. 11 :
24. Աստուծոյ զաւակներուն մասնաւոր օգնութիւն խոստացուած է : «Որովհետեւ իմ համբերութեան խօսքը պահեցիր, Ես ալ քեզ պիտի պահեմ փորձութեան ժամանակը, որ պատրաստ է գալու բոլոր աշխարհի վրայ՝ երկրիս երեսը բնակողները փորձելու համար» Յայտ. Գ. 10 :
25. Դեւերը այժմէն կը շարժարուին : «Եւ ահա՛ ազաղակեցին ու ըսին, Յիսուս Որդի Աստուծոյ՝ Դուն մեր հետը ի՞նչ բան ունիս, ահեղէն առաջ մեզ օանջելու՞ եկար հոս» Մատթ. Բ. 29 :
26. Հազարամեայի սկիզբը ի՞նչ տեղի կ'ունենայ : «Եւ հրեշտակ մը տեսայ՝ որ երկինքէն կ'իջնէր, ու անդունդին



բանալին և մեծ շղթայ մը ունէր իր ձեռքը. ու բռնեց վիճապը՝ այսինքն առջի օձը՝ որ Քանաւարկուն ու Սասանան է, և կապեց զանիկայ հազար տարի:» Յայտ. Ի. 1, 2:

27. Սատանան նորէն պիտի արձակուի :

«Եւ հազար տարին լրանալուն՝ պիտի արձակուի Սասանան իր բանակէն, և պիտի ելլէ ու մտրոցնէ երկրի չորս անկունները եղող ազգերը . . . » Հմբ. 7:

28. Ան՝ երբ կրակի լիճին մէջ պիտի ձգուի վերջնապէս :

«Եւ երկինքէն Աստուծոյ կրակ իջաւ ու սպառեց զանոնք. և բանասերկուն, որ զանոնք մտրոցուց, ձգուեցաւ կրակի ու ծրծումբի լիճին մէջ, ուր որ էր գազանը, և սուտ մարգարէն. ու պիտի չարչարուին ցորեկ ու գիշեր յաւիտեանս յաւիտենից: Հմբ. 9, 10:

29. Սատանան ինչպէս ինքզինքը կը ձեւափոխէ՝ որպէս զի խարէ զմարդ :

«Եւ զարմանք մը չէ, քանզի ինքը Սասանան ալ լուսաւոր հրեցօսակի կերպարանք կ'առնէ:» Բ. կոր. ԺԱ. 14:

30. Ինչ խոստամունք տրուած է՝ մեր զօրանալուն և քաջալերուելուն համար :

«Եւ խաղաղութեան Աստուածը խորհակէ Սասանան շուտով ձեր ոտքին տակը:» Հռոմ. ԺԶ. 20: «Ուստի հնազանդեցէ՛ք Աստուծոյ, Սասանային հակառակ կեցէ՛ք, և անկա ձեզմէ պիտի փախչի:» Յակ. Դ. 7:

## ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ՝ ԼՈ՛Կ ՔՐԻՍՏՈՍՈՎ

1. Աստուած ինչէ՞ շինեց մարդը :  
«Եւ Տէր Աստուած գեանի հողէն շինեց մարդը, և անոր  
աչքացը կենդանութեան շունչ փչեց, ու մարդը կենդանի հո-  
գի եղաւ» Ծն. Բ. 7:
2. Յոր ի՞նչպէս կը նկարագրէ այս դէպքը :  
«Քու ձեռքերդ զիս ստեղծեցին, ու իմ՝ բոլոր անդամներս կաղ-  
մեցին, ու զիս բնաջի՞ջ կ'ընես, կ'աղաչեմ» յիշէ՛ որ զիս կա-  
ւի պէս շինեցիր, ու զիս հո՞ղ պիտի դարձընես» Զէ՞ որ  
զիս կարի պէս բափեցիր, ու պանիրի պէս բանձրա-  
ցուցիր. զիս մորթով ու մսով հագուեցուցիր, ու զիս  
սակորներով ու ջիղերով իմեցիր:» Յոր. Ժ. 8—11:
3. Ուստի՞ Պօղոս ի՞նչպէս կը խօսի առաջին մարդուն  
նկատմամբ :  
«Առջի մարդը երկէն է՝ հողեղէն, բայց երկրորդ մարդը  
Տէ՛ր է՝ երկիրէն» Ա կոր. ԺԵ. 47:
4. Աստուած ի՞նչ փչեց մարդուն ռնգացը :  
«Եւ Տէր Աստուած գեանի հողէն շինեց մարդը, և անոր  
ռնգացը կենդանութեան շունչ փչեց, ու մարդը կենդանի  
հոգի եղաւ» Ծն. Բ. 7:
5. Բոլոր կենդանի արարածոց շունչը Աստուծո՞ւ կու-  
ազայ :  
«Երբոր քու երեսդ կը ծածկես, կը խռովին. երբոր անոնց հո-  
գին կ'առնես, կը մեռնին և իրենց հողը կը դառնան: Հողիդ  
կը դրկես ու անոնք կը սեղծուին. ու երկրիս երեսը  
կը նորոգես» Սաղմ. ճ՛Կ. 29, 30:
6. Մարդը ուրիշ արարածներէ տարբե՞ր շունչ ունի :  
«Վասն զի մարդոց որդիներուն պատահածը և անասուններուն  
պատահածը մէկ է. մէկը ինչպէս կը մեռնի, միւսն ալ այնպէս  
կը մեռնի. ու ամենուն շունչը մէկ է:» Ժող. Գ. 19:

7. Մարդը մեծապէս յարգուելո՞ւ է՝ որովհետև իր ուրն-  
գացը մէջ Աստուծոյ շունչն ունի:  
«Ծ՛ս կեցե՛ք մարդէն՝ որուն շունչը իր ունգացը մէջ է. վասն  
զի ի՞նչ բանի մէջ հաստատ կը համարուի ան:» Ես. Բ. 22:
8. Մարդը կենդանի հոգի՞ մը ստացաւ՝ իր ունգացը  
մէջ կենդանութեան շունչին շնչուելովը, թէ կեն-  
դանի հոգի՛ եղաւ:  
«Եւ Տէր Աստուած գեանի հոգէն շինեց մարդը, և անոր ուն-  
գացը կենդանութեան շունչ փչեց, ու մարդը կենդանի հո-  
գի եղաւ:» Ծն. Բ. 7:
9. Մարդը ի՞նչ փորձի պիտի ենթարկուէր:  
«Եւ Տէր Աստուած առաւ մարդը, ու Եդեմի պարտէղին մէջ  
դրաւ, որ զանիկա դորձէ ու պահէ: Եւ Տէր Աստուած պատ-  
ուիրեց մարդուն՝ ըսելով, Պարտէղին ամէն ծառէն համարձակ  
կե՛ր, բայց բարիի ու չարի գիտութեան ծառն մի՛ ու-  
տեր, քանզի անկէ կերած օրդ անուուց պիտի մեռնիս:»  
Ծն. Բ. 46, 47:
10. Ի՞նչպէս տեղի տուաւ ան այս փորձին:  
«Եւ կնիկը տեսնելով որ ծառը աղէկ էր կերակուրի համար, և  
հաճելի աչքերուն, ու փափաքելի իմաստուն ընելու համար,  
առաւ անոր պտուղէն ու կերաւ, և իրեն հետ իր էրկանն ալ  
տուաւ, և անիկա կերաւ:» Ծն. Գ. 6:
11. Ո՞վ խաբեց զմարդ:  
«Եւ Տէր Աստուած ըսաւ կնկանը, Ի՞նչ է աս քու ըրածդ. և  
կնիկը ըսաւ, Օճը զիս խաբեց, ու ես կերայ:» Ծն. Գ. 13:
12. Մարդը ի՞նչ պիտի դառնար դարձեալ:  
«Երեսիդ քրտինքովը ուտես քու հացդ, մինչեւ զեօթնը դառ-  
նալի, որ անկէ աւնուեցար. քանզի հոդ էիր դուն, ու  
հողին պիտի դառնաս:» Ծն. Գ. 49:
13. Այս մոլութեան պատճառով՝ Սատանան ի՞նչ կոչ-  
ուած է: — Մարդասպան:  
«Դուք ձեր հօրմէն Սատանայէն էք, ու ձեր հօրը բաղձանքը  
կ'ուզէք ընել. անիկայ սկիզբէն հետէ մարդասպան էք,  
և ճշմարտութեան մէջ չկեցաւ:» Յովհ. Ը. 44:



14. *Տէրը ի՞նչ բրաւ Աղամբ :*  
«Ուստի Տէր Աստուած Եդեմի պարտէզէն դուրս բրաւ զանիկա, որ երկիրը գործէ, ուսկից որ առնուեցաւ: Այսպէս վոնսեց Աղամբ:» Ի՛ն. Գ. 23, 24:
15. *Ի՛նչ՞ ո՞ւր զանի արտաքսեց դրախտէն :*  
«Եւ Տէր Աստուած ըսաւ, Ա՛հա՛ Աղամբ մեղով մէկուն պէս եղաւ՝ բարին ու չարը գիտնալու. և հիմա չըլլայ որ իր ձեռքը երկնցնէ, ու կենաց ծառէն ալ առնէ, եւ ուտէ ու յաւիտեան ապրի:» Հ՛մբ, 22:
16. *Աղամբի օրինազանցութեանը պատճառով՝ բոլոր մարդոց վրայ ի՞նչ տարածուեցաւ :*  
«Վասն զի ինչպէս որ մէկ մարդէ մը մեղքը աշխարհ մտաւ, և այն մեղքէն մահը, և այնպէս ամէն մարդոց վրայ տարածուեցաւ մահը, քանզի ամէնքը մեղանչեցին:» Հռոմ. Ե. 12:
17. *Ո՞վ միայն անմահութիւն ունի :*  
«Որ իր տանին պիտի ցուցնէ՝ Երանելին ու միմիայն Հօօրը, թագաւորներուն թագաւորը ու տէրերուն Տէրը. որ Ինքը միակ ունի անմահութիւն՝ անմերձեանալի լոյսի մէջ բնակած, զոր մարդիկներէն մէկը չտեսաւ, ո՛չ ալ տեսնելու կարող է, որուն պատիւ և զօրութիւն յաւիտեանս Ամէն:» Ա Տիմ. 2. 43, 46:
18. *Բոլոր մարդիկ ի՞նչ են իրենց բնական վիճակին մէջ :*  
«Որ տանեօք մենք ամէնքս ալ անոնց մէջը կը պտըտէինք մեր մարմինին ցանկութիւններովը, և մարմինին ու միտքին ուղածը կը կատարէինք. եւ բնութեամբ բարկութեան օրդի՞ք էինք ինչպէս ուրիշները:» Եփես. Բ. 3:
19. *Ի՛նչ պիտի չստանան անոնք՝ որ Աստուծոյ բարկութեանը տակ կը մնան :*  
«Ան որ Որդւոյն կը հաւատայ, յաւիտեանական կեանք ունի, և ան որ Որդւոյն չի հնազանդիր, անիկա կեանք պիտի չտեսնէ, այլ Աստուծոյ բարկութիւնը անոր վրայ կը մնայ:» 3-րդ. Գ. 36:
20. *Ապաշխարողները ի՞նչպէս կը փրկուին այս բարկութեանէն :*  
«Վասն զի ինչպէս որ մէկ մարդուն անհնազանդութիւնովը շար-

տերը մեղաւոր եղան, այնպէս ալ մէկուն հնազանդութիւնովը շատերը արդար պիտի ըլլան:» Հռովմ. Ե. 49:

21. Ի՞նչ պիտի ընդունին անոնք որ բարեգործութեամբ անմահութիւն կը խնդրեն: — Յաւիտենական կեանք: «Յաւիտենական կեանք անոնց՝ որ բարի գործքերու մէջ համբերութեամբ յարատեւելով, փառք ու պատիւ և անմահութիւն կը խնդրեն:» Հռովմ. Բ. 7:

22. Որ՞ու միջոցաւ՝ անմահութիւնը կամ յաւիտենական կեանքը ի լոյս բերուեցաւ:

«Բայց հիմա յայտնուեցաւ մեր Փրկչին Յիսուս Քրիստոսի երևնալովը, որ մահը խափանեց, և ի լոյս հանեց կեանքը ու անմահութիւնը Աւետարանին միջոցովը:» Բ. Տիմ. Ա. 10:

23. Անմահութիւնը ե՞րբ պիտի արուի Աստուծոյ զաւակներուն:

«Ահա՛ ձեզի խորհուրդ մը կը զրուցեմ. ամէնքս ալ պիտի չընջենք, բայց ամէնքս ալ պիտի փոխուինք, յանկարծակի աչք բանալ գոցելու մէջ՝ վերջին փողին հնչուելու ատենը, որովհետեւ փողը պիտի հնչուի, ու մեռելները շարուրիւն պիտի առնեն առանց ապականութեան, եւ մեք ալ պիտի փոխուինք: Վասն զի պէտք է որ այս ազականացու մարմինը անապականութիւն հագնի, ու այս մահականացու անմահութիւն հագնի:» Ա. Կոր. Ժ. 51—53:

24. Յայնժամ ի՞նչ տեղի պիտի ունենայ:

«Բայց երբ այս ազականացու մարմինը անապականութիւն հագնի, և այս մահականացու անմահութիւն հագնի, այն ատեն պիտի կատարուի այն խօսքը որ գրուեցաւ թէ՛ Մահը յաղթութեան մէջ ընկղմեցաւ: Ո՛ւր է՝ ո՛վ մահ՝ քու խայթոցդ, ո՛ւր է՝ ո՛վ գերեզման՝ քու յաղթութիւնդ:» Հմբք 54, 55:

25. Ո՞վ շնորհակալութիւն ընդունելու է այս բանին համար:

«Բայց զոհուրիւն Աստուծոյ, որ ձեզի յաղթութիւն կուտայ մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռքովը:» Հմբ. 57:



ԻՐԻՍՏՈՍ, ՈՐ Է ՅԱՐՈՒԹԻՒՆ ՆԻ ԿԵԱՆՔ



ՔՐԻՍՏՈՍ՝ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԵԱՆՔԸ

1. *Ի՞նչ է մեղաց վարձքը :*  
«Քանցի մեղաց վարձքը մահ է, բայց Աստուծոյ ձրի պարգեւը յաւիտենական կեանք՝ մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի ձեռքով :» Հռովմ. Զ. 23 :
2. *Մարդը մահէն յետոյ ի՞նչ վիճակի մէջ է :*  
«Բայց մարդը կը մեռնի, ու կ'երթայ. մարդը իր հոգին կ'աւանդէ, ու ետքը ո՞ւր տեղ է : Ինչպէս ջուրերը ծովէն կը պահտին, ու գետը կը չորնայ ու կը ցամքի, այսպէս ալ մարդը գետինը կը պառկի ու չելիք. մինչեւ որ ալ երկինք չըլլայ՝ պիտի չելիք, ու իրենց բունէն պիտի չարքնան :» Յոր Ժ. 10—12 :
3. *Ի՞նչ կը պատահի՞ թէ որ Աստուած իրեն ժողովէ մարդուն շունչը ու հոգին :*  
«Եթէ իր սիրտը այսպէս ուզելու ըլլայ, մարդուս հոգին ու շունչը իրեն կը ժողովէ : Այն ատեն ամէն մարմին մէկէն կը մեռնի, ու մարդը հող կը դառնայ :» Յոր 1Դ. 14, 15 :
4. *Միայն արդարներուն հոգին է որ Աստուծոյ կը դառնայ :*  
«Այն ատեն հողը երկիրը պիտի դառնայ՝ առաջուան եղածին պէս. ու հոգին Աստուծոյ պիտի դառնայ որ զանկա տուաւ :» Ժող. ԺԲ. 7 :
5. *Մարդուն գիտակցութիւնը ի՞նչ կ'ըլլայ մահուան մէջ :*  
«Անոր հոգին կ'ելէ, անկայ իր հողը կը դառնայ. նոյն օրը անոր խորհուրդները կը կորուսին :» Սաղմ. ձԽԶ. 4 :
6. *Մեռելները ո՞րքան կրնան գովել Տէրը :*  
«Իմ՝ արեւնէս ի՞նչ օգուտ կ'ըլլայ եթէ ես գուրը իջնեմ. միթէ հողը Քեզ պիտի գովէ՞, կամ՝ անկա պիտի պատմէ՞ Քու համարուրիւնդ :» Սաղմ. 1. 9 : «Մեռելները Տէրը չեն օրհներ, ոչ ալ այն ամէնը որ գերեզմանը կ'իջնեն :» Սաղմ. ձԺԵ. 17 :

7. Մեռելներուն ի՞նչ պէտք է պատահի՝ որ կարենան գովել Տէրը :
- «Իսկ ես արդարութեամբ պիտի տեսնեմ՝ Քու երեսդ. երբ որ արբնեամ՝ Քու դէմքէդ պիտի կոտանամ:» Սաղմ. Ժ. 45:
8. Ո՞վ միայն կրնայ օրհնել Տէրը :
- «Քանզի գերեզմանը Քեզ չի կրնար օրհնել, մահը Քեզի փառք չի կրնար տալ. գուրը իջնողները Քու ճշմարտութիւնդ չեն կրնար յուսալ: Ապրողը՝ ապրողը Քեզ պիտի օրհնէ:» Ես. ԼԸ. 48, 49:
9. Իրապէս գիտութիւն չկա՞յ գերեզմանին մէջ :
- «Ձեռքդ ի՞նչ որ գտնէ ընելու, բոլոր ուժովդ ըրէ՛. քանզի այն քու երբայու գերեզմանիդ մէջ գործ, խորհուրդ, գիտութիւն ու իմաստութիւն չկայ:» Ժող. Թ. 40:
10. Մեռելները բան մը չեն գիտեր :
- «Որովհետեւ կենդանիները գիտեն որ պիտի մեռնին. բայց մեռելները բան մը չեն գիտեր, ու ալ վարձք մը չեն առներ. վասն զի անոնց յիշատակը մոռցուեցաւ. . . ու անոնք արեւուն տակ եզող բաներուն մէջ՝ ալ յաւիտեան բաժին մը չունին:» Ժող. Թ. 5, 6:
11. Մահը ի՞նչ բանի հետ բաղդատուած է :
- «Նոյնէ՛ ս'վ իմ՝ Տէր Աստուածս, ու պատասխան տուր ինձի. լուսաւորէ՛ իմ աչքերս, որ մահուան քունը չֆնանամ:» Սաղմ. ԺԳ. 3: «Այս բաները ըսելէն ետեւ ըսաւ անոնց, Ղազարոս մեր բարեկամը ֆնացած է, բայց կ'երթամ որ զանկա արթնցնեմ: Իր աշակերտները ըսին, Տէ՛ր՝ եթէ քնացած է, պիտի առողջանայ: Իսկ Յիսուս անոր մեռելուն համար կ'ըսէր, բայց անոնք կը կարծէին թէ քուն քնանալուն համար կ'ըսէր: Այն ատեն Յիսուս՝ յայտնապէս ըսաւ անոնց, Ղազարոս մեռաւ:» Յովհ. ԺԼ. 41—44:
12. Պօղոս ի՞նչպէս կը բացատրէ՝ որ եթէ չկայ յարութիւն, չկայ դատաստան՝ որմէ վախնանք, չկայ վարձք՝ որուն յուսանք, այնպէս որ՝ ամէն խղճահարութիւն պէտք է չքանայ մահուան մէջ :
- «Եթէ եփեստի մէջ մարդոց նման գազաններու հետ մտաւորնչեցայ, ի՞նչ օգուտ է ինձի, թէ որ մեռելները յարութիւն

չառնեն. ուսեմք ու խմեմք, վասն զի վաղը կը մեռնինք:»  
Ա կոր. ԺԵ. 32:

13. Մահը մեր բարեկամն է՝ թէ մեր թշնամին :  
«Վերջին բռնամիտ որ պիտի խափանի, մահն է:» Ա կոր.  
ԺԵ. 26:
14. Ո՞վ ունի «մահուան իշխանութիւն»ը :  
«Ուստի որովհետեւ զաւակները մարմինին ու արիւնին հաղորդ  
եղան, ինքն ալ նմանապէս անոնց բաժանորդ եղաւ, որ իր մա-  
հովը փճացնէ զանիկա որ մահուան իշխանութիւնը ու-  
նէր, այսինքն է Սասանան:» Եբբ. Բ. 44:
15. Որո՞ւն երկիրն է մահուան իշխանութիւնը :  
«Տէրը այսպէս կ'ըսէ, Ռամայի մէջ ձայն մը լսուեցաւ, ողբի ու  
դառնազին լացի ձայն. Ռաքէլ իր տղոցը համար կուլար, և իր  
տղոցը համար մխիթարուել չէր ուզեր, վասն զի անոնք չկային:»  
Տէրը այսպէս կ'ըսէ. Քու ձայնդ լալէն և աչքերդ արցունքէն  
դադրեցո՛ւր, վասն զի քու գործիդ համար վարձք կայ, կ'ըսէ  
Տէրը, ու բռնամիտ երկրէն պիտի դառնան:» Եբ. ԼԱ.  
45, 46:
16. «Հզօր»ին կամ «բռնաւոր մարդ»ուն գերիններուն  
ի՞նչ պիտի պատահի :  
«Հզօրին գերի առածը անգամ պիտի առնուի, ու բռնա-  
ւոր մարդուն աւարը պիտի ազատուի. ու քեզի հետ վի-  
ճողներուն դէմ ես պիտի վիճիմ, և քու տղաքներդ ես պիտի  
ազատեմ:» Ես. ԽԹ. 25:
17. Եսայի ի՞նչ խոստամունք կ'ընէ՝ Քրիստոսի գործին  
նկատմամբ :  
«Քու մեռելներդ պիտի ողջնան, Իմ մեռելներու  
մարմինները յարութիւն պիտի առնեն. արթնցէ՛ք ու  
ցնծութեամբ երգեցէ՛ք՝ ո՛վ հողի մէջ ընակողներ. քանզի քու  
ցօղդ խտտեալ ցօղ է, ու երկիրը իր մեռելները դուրս  
պիտի նետէ:» Ես. ԽԶ. 49:
18. Ովսէէ ի՞նչ կ'ըսէ ԺԳ. զլիսուն 14րդ համարին մէջ :  
«Ջանցնք զերեզմանին ձեռքէն պիտի փրկեմ, զանցնք  
մահուանէ պիտի ազատեմ. Բու ժանտախոյ ո՞ւր է, ո՛վ  
մահ, Բու աւերումդ ո՞ւր է, ո՛վ գերեզման. իմ աչքերէս  
զղջումը պիտի ծածկուի:»



19. Քրիստոս ինչո՞ւ մարդու բնութիւն առաւ իր վրայ :  
«Ուստի որովհետեւ զաւակները մարմինն ու արիւնին  
հաղորդ եղան, Ինքն ալ նմանապէս անոնց բաժանորդ  
եղաւ, որպէս զի Եւ մահովը փնացնէ զանիկա որ  
մահուան իօխանութիւնը ունէր, այսինքն է Սասանան.  
և ազատէ զանոնք որ մահուան վախովը միշտ ծառայութեան  
մէջ կ'ապրէին:» Եբբ. Բ. 44, 45:
20. Ան ո՞րչափ կեցաւ գերեզմանին մէջ :  
»Քանզի ինչպէս որ Յովնան երեք օր ու երեք գիշեր կէտ ձուկին  
փորին մէջ էր, այնպէս ալ Որդի մարդոյ պիտի ըլլայ երկ-  
րիս սրտին մէջ երեք օր ու երեք գիշեր:» Մատթ. ԺԲ. 40:
21. Իր մարմինը ի՞նչ պիտի չտեսնէր :  
«Վասն զի Իմ անձս գերեզմանին մէջ պիտի չլծողուս, ու Քու  
Սուրբիդ ալ ապականութիւն տեսնել պիտի չսաս:»  
Սաղմ. ԺԶ. 40: «Ուստի ուրիշ Սաղմոսի մը մէջ ալ կ'ըսէ.  
Քու Սուրբիդ ապականութիւն տեսնել պիտի չսաս:  
Քանզի Գաւթ իր դարուն մէջ Աստուծոյ կամեաց ծառայելով  
մեռաւ, ու իր հայրերուն քով դրուեցաւ և ապականութիւն  
տեսաւ: Բայց Ան զոր Աստուած յարուց' ապականութիւն  
չտեսաւ:» Գործք ԺԳ. 35—39:
22. Քրիստոս իր յարութեամբ ի՞նչ դարձաւ :  
«Բայց հիմա Քրիստոս մեռելներէն յարութիւն առած է՝ ննջեց-  
եալներուն առջի պսուղը:» Ա. կոր. ԺԵ. 20:
23. Ո՞վ ունի մահուան բանալին :  
«Եւ էս կենդանի եմ, ու էս ան եմ որ մեռայ, և ահա՛ կեն-  
դանի եմ՝ յաւիտեանս յաւիտենից. և էս ունիմ մահուան  
ու դժոխքին բանալիները:» Յայտ. Ա. 48:
24. Յիսուս ի՞նչպէս պիտի բանայ զգերեզմանները :  
«Ասոր վրայ մի՛ զարմանաք, քանզի ժամանակ պիտի գայ՝ որ  
բոլոր գերեզմաններու մէջ եղողները Անոր ձայնը պի-  
տի լսեն, ու դուրս պիտի գան, անոնք որ բարի գործեր են՝  
կենաց յարութեան համար, և անոնք որ չար գործեր են՝ դա-  
տապարտութեան յարութեան համար:» Յովհ. Ե. 28, 29:
25. Ի՞նչ բան՝ անգամ մը եւս մեռելներուն մէջ պիտի  
մանէ :

«Եւ ինծի ըսաւ, Այս սոկորներուն վրայ մարգարէութիւն ըրէ ու անոնց ըսէ՛, Ո՛վ չորցած սոկորներ՝ Տէրոջը խօսքը մտի՛կ ըրէ՛ք, այսպէս կ'ըսէ Տէր Եհովան այս սոկորներուն. Ահա՛ Ես ձեր մէջը հոգի պիտի դնեմ, ու պիտի կենդանանամ...: Եւ տեսայ որ ահա՛ անոնք ջիղերով ու միտով պատեցան, ու վրայէն մորթով ծածկուեցան, բայց անոնց մէջ շունչ չկար: Այն ատեն ինծի ըսաւ, Շունչին մարգարէութիւն ըրէ՛... ու շունչին ըսէ, Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. «Ո՛վ շունչ՝ շորս հովերէն եկո՛ւր, ու այս սպաննուածներուն վրայ փչէ՛ որ կենդանանան: Եւ ես մարգարէութիւն ըրի, ինչպէս ինծի հրամայեց, ու շունչը ամոնց մէջ մտաւ, ու կենդանացան և իրենց ստքերուն վրայ կայնեցան, ու խիստ մեծ զօրք մը եղաւ:» Եղ. ԼԷ. 4, 5, 8—10:

26. Յիսուս Ղազարոսը գերեզմանէ՞ն կանչեց՝ թէ երկինքէն:

«Եւ այս ըսելէն ետքը, մեծ ձայնով մը կանչեց, Ղազարո՛ս, դո՛ւրս եկուր. մեռելն ալ ելաւ ստքերը ու ձեռքերը պատանքով կապած, և երեսը վարշամակով պատած: Յիսուս ըսաւ անոնց, Արձակեցէ՛ք ատիկա ու թողէ՛ք որ երթայ:» Յովհ. ԺԱ. 43, 44:

27. Աստուծոյ ժողովուրդը ո՞ւրկէ դուրս պիտի գան:

«Անոր համար մարգարէութիւն ըրէ ու անոնց ըսէ՛, Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Ահա Ես ձեր գերեզմանները պիտի բանամ, ու ձեր գերեզմաններէն ձեզ պիտի հանեմ՝ ո՛վ Իմ ժողովուրդս, և ձեզ Իսրայէլի երկիրը պիտի բերեմ: Ու երբ ձեր գերեզմանները բանամ, ու ձեզ ձեր գերեզմաններէն հանեմ՝ ո՛վ Իմ ժողովուրդս, պիտի գիտնաք թէ Ես եմ՝ Տէրը:» Եղ. ԼԷ. 42, 43:

28. Աստուծոյ ժողովուրդը ո՞րչափ պիտի մնան իրենց գերեզմաններուն մէջ:

«Բայց ամէն մէկը իր կարգովը, առջի պտուղը Քրիստոս, ետքը Քրիստոսինները՝ Իր դալու ատենը:» Ա. կոր. ԺԵ. 23:

29. Արդարներուն յարութեան ատենն ի՞նչ պիտի կատարուի:

«Ո՞ւր է՝ ո՛վ մահ՝ քու խոյթոցդ, ո՞ւր է՝ ո՛վ գերեզման՝ քու յաղթութիւնդ:» Ա. կոր. ԺԵ. 55:

30. Մեռելիներուն նկատմամբ ի՞նչ է մեր մխիթարութիւնը :

«Ձեռք ուղերձ եղբայրներ՝ որ տգէտ ըլլաք ննջեցեալներուն վրայ յօք, որ չտրամիք ինչպէս ուրիշները՝ որոնք յոյս չունին Քանդի եթէ կը հաւտասանք թէ Յիսուս մեռաւ ու յարութիւն առաւ, այնպէս ալ Աստուած անջեցեալները Յիսուսով պիտի բերէ Անոր հետ: Վասն զի այս կը զրուցենք ձեզի Տէրոջը խօսքովը, թէ մենք որ մինչև Տէրոջը դալուստը սղջ կը մնանք, բնաւ ննջեցեալներէն առաջ պիտի չսնցնինք: Քանդի Տէրը ինքն սգրարարութեան հրամանով՝ հրեշտակապետին ձայնովը ու Աստուծոյ փոզովը երկինքէն պիտի իջնէ, և Քրիստոսով մեռածները առաջ յարութիւն պիտի առնեն: Ետք մենք ալ որ ողջ մնացած ենք՝ աննկմով մէկտեղ պիտի յափճակուինք ամպերով Տէրոջը առջին ելլելու օրին մէջ, եւ այնպէս յաիսեան Տէրոջը հետ պիտի ըլլանք: Ուստի մէկգմէկ մխիթարեցէ՛ք այս խօսքերով:» Ա. Թեո. Դ. 42—47:

---



## Յ Ա Ր ՈՒ Յ Ի Ի Ն Ը

1. *Ինչի՞ վրայ հիմնուած է Քրիստոնէին հաւատքը :*  
«Եւ եթէ Քրիստոս յարութիւն առած չէ, ուրեմն մեր քարոզութիւնը պարապ է, ու ձեր հաւատքն ալ պարապ է:» Ա. Կոր. ԺԵ. 14:
2. *Որո՞ւ միջոցաւ ամէնը կենդանի պիտի ըլլան :*  
«Վասն զի ինչպէս որ Ադամով ամէնը կը մեռնին, այնպէս ալ Քրիստոսով ամէնը կենդանի պիտի ըլլան:» Ա. Կոր. ԺԵ. 22:
3. *Ուստի, Քրիստոս ի՞նչ կ'անուանէ Ինքզինքը :*  
«Ես եմ յարութիւնը եւ կեանքը. ան որ ինձի կը հաւատայ, թէեւ մեռնի, պիտի ապրի:» Յովհ. ԺԱ. 25:
4. *Պօղոս առաքեալ ի՞նչ բան գիտնալ կը ջանար :*  
«Ճանցնալու զԱնիկա եւ Անոր յարութեանը զօրութիւնը ու Անոր շարժարանքներուն հաղորդ ըլլալը, Անոր մահուան կերպարանքը առնելով. որ ըլլայ թէ մեռելներուն յարութեանը հասնիմ:» Փիլ. Գ. 40, 41:
5. *Հայրերուն յոյսը ի՞նչ էր :*  
«Բայց զայս կը խոստովանիմ՝ քեզի՝ թէ այն ճամբուն համեմատ ար ասոնք հերձուած կ'ըսեն, ես այնպէս կը պաշտեմ իմ հայրենի Աստուածս, հաւատալով այն ամէն բաներուն որ օրինաց և մարդարէից մէջ գրուած են: Եւ յոյս ունիմ՝ առ Աստուած՝ ինչպէս ասոնք ալ ակնկալութիւն ունին, որ մեռելոց յարութիւն պիտի ըլլայ, թէ՛ արդարներուն եւ թէ՛ մեղաւորներուն:» Գործք ԻԳ. 14, 15:  
«Եւ հիմա ատենը կեցեր կը դատուիմ՝ Ասուածմէ մեր հայրերուն եղած խոստումնին յոյսին համար. որու, մեր տասներկու ցեղը անդադար գիշեր ու ցորեկ պաշտելով՝ կը յուսան հասնելու. ես այս յոյսին համար Հրեաներէն կ'ամբաստանուիմ ով Ազրիպպաս արքայ, Ի՞նչ, չհաւատալով բան կ'երեւի ձեզի թէ Ասուած մեռելներ կը յարուցանէ:» Գործք ԻԶ. 6, 8:

6. Ի՞նչ խօսքերով Աստուած հաստատեր էր յարու-  
թիւնը՝ հայրերուն :

«Բայց մեռելներուն յարութիւն առնելուն համար՝ չէ՞ք կար-  
գացեր Աստուծո՛վ ձեզի ըսուած խօսքը. Ես եմ Աբրահամի  
Աստուածը, եւ Իսահակի Աստուածը, ու Յակօբի  
Աստուածը. Աստուած մեռելներուն Աստուածը չէ՞,  
հապա կենդանիներուն:» Մատթ. ԽԲ. 31, 32:

7. Աբրահամ ի՞նչպէս վկայեց՝ յարութեան մասին իր  
ունեցած հաւատքին համար :

«Հաւատքով Աբրահամ իր փորձուած տանը Իսահակը պատա-  
րագ մատուց. և ան որ խոստմունքները առած էր, իր մէկ հա-  
տիկ որդին կը մատուցանէր, որու ըսուեցաւ թէ Իսահակով  
քեզի սերունդ պիտի կոչուի: Քանզի կը մտածէր թէ Աս-  
տուած մեռելներէն ալ կարող է յարուցանել. ուրկէ  
օրինակով մը բնդունեց զանիկա:» Եբր. ԺԱ. 17-19:

8. Ի՞նչ էր Յոբի յոյսը :

«Վասն զի գիտեմ որ իմ Փրկիչս ողջ է. ու Անիկա վերջին ժա-  
մանակը պիտի ելլէ երկրի վրայ: Ու թէև մորթես ետքը այս ալ  
փճանայ, բայց իմ մարմնովս զԱստուած պիտի տեսնեմ:»  
Յոբ ԺԹ. 25, 26:

9. Սաղմոսերգուն ե՞րբ կը յուսար տեսնել Աստուծոյ  
երեսը :

«Իսկ ես արդարութեամբ պիտի տեսնեմ՝ Քու երեսդ. երբոք  
արբնեամ Քու դէմէ՛դ պիտի կօտանամ:» Սաղմ. ԺԷ. 15:

10. Եսայի ի՞նչ կերպով կը խօսի յարութեան մասին :

«Քու մեռելներդ պիտի ողջնան, իմ մեռելներուս  
մարմինները յարուրիւն պիտի առնեն. արթնցէ՛ք ու ջըն-  
ծութեամբ երգեցէ՛ք, ո՛վ հողի մէջ բնակողներ. քանզի Քու  
ցօղդ խոտերու ցօղ է, ու երկիր իր մեռելները դուրս  
պիտի նետէ:» Ես. ԻԶ. 19:

11. Դանիէլ ո՞րքան տանն պիտի հանգչէր :

Բայց դուն զնա՛ միւռնչև վախճանը, վասն զի պիտի հանգչես,  
ու օրերուն վերջը քու վիճակիդ մէջը պիտի կայնիս:»  
Դան. ԺԲ. 13:

12. Ի՞նչ գիտէր Մարթա :

«Մարթա ըսաւ Անոր, Գիտեմ որ յարութեան ժամանակը՝ վերջին օրը, յարութիւն պիտի առնէ:» Յովհ. ԺԱ. 24:

13. Պօղոս առաքեալ ինչպէս կը խօսի յարութեան մասին: «Իայց հաւատքի նոյն հոգին ունինք. ինչպէս գրուած է, Հաւատացի, անոր համար խօսիցայ: մենք ալ կը հաւատանք, ու անոր համար կը խօսինք. այս գիտնալով թէ ան որ Տէր Յիսուսը յարուց, մեզ ալ Յիսուսով պիտի յարուցանէ, ու Անոր առջեւ պիտի կայնեցնէ ձեզմով մէկեկ:» Բ կոր. Գ. 43, 44:

14. Եղեկիէլ ինչպէս կը նկարագրէ յարութիւնը: «Ու ես մարգարեութիւն ըրի՝ ինչպէս ինծի հրամայուեցաւ, ու մարգարեութիւն ըրածիս պէս ձայն մը եղաւ. և ահա՛ շարժում մը եղաւ, ու սկոբները իրարու մօտեցան՝ սկոբը իր սկոբին: Եւ տեսայ որ ահա՛ անոնք ջիզերով ու միտով պատեցան, ու վրայէն մտքով ծածկուեցան, բայց անոնց մէջ շունչ չկար: Այն ատեն ինծի ըսաւ, Մտենչին մարգարեութիւն ըրէ, մարգարեութիւն ըրէ, որդի մարդոյ, ու շունչին ըսէ, Տէր Եհովան այսպէս կ'ըսէ, Ո՛վ շունչ՝ չորս հովերէն եկո՛ւր, ու այս սպաննուածներուն վրայ փչէ՛ որ կենդանանան: Եւ ես մարգարեութիւն ըրի, ինչպէս ինծի հրամայեց, ու շունչը անոնց մէջ մտաւ, ու կենդանացան եւ իրենց ոտքերուն վրայ կայնեցան, ու խիստ մեծ զօրք մը եղաւ:

«Եւ ինծի ըսաւ, Որդի՛ մարդոյ՝ այս սկոբները բարձր իտրայէլի տունն է, ահա՛ անոնք կ'ըսեն, Մեր սկոբները չորցան ու մեր յոյսը կտրեցաւ. մենք կորսուած ենք: Անոր համար մարգարեութիւն ըրէ ու անոնց ըսէ՛, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ, Ահա՛ ես ձեր գերեզմանները պիտի բանամ, ու ձեր գերեզմաններէն ձեզ պիտի հանեմ՝ ո՛վ իմ ժողովուրդս, և ձեզ իտրայէլի երկիրը պիտի բերեմ: Ու երբոր ձեր գերեզմանները բանամ, ու ձեզ ձեր գերեզմաններէն հանեմ՝ ո՛վ իմ ժողովուրդս, պիտի գիտնաք թէ ես եմ Տէրը: Եւ իմ հոգիս ձեր ներսիդին պիտի դնեմ, ու պիտի կենդանանամ, ու ձեր երկրին մէջ ձեզ պիտի հանգստացնեմ, ու պիտի գիտնաք որ Ես Տէրս խօսեցայ ու ըրի՛, կ'ըսէ Տէրը:» եղեկ. ԼԷ. 7—14:

15. Որ՞ով ձայնը պիտի արթնցնէ մեռելները: «Ասոր վրայ մի՛ զարմանաք, քանզի ժամանակ պիտի գայ՝ որ



բոլոր գերեզմաններու մէջ եղողները Անոր ձայնը պի-  
տի լսեն, ու դուրս պիտի գան, *անոնք որ բարի գործեր են,  
կենաց յարութեան համար, և անոնք որ չար գործեր են, դա-  
տապարտութեան յարութեան համար:*» Յովհ. Ե. 28, 29:

16. Յարութեան ատեն կարգ մը պիտի ըլլայ:  
«Բայց ամէն մէկը իր կարգովը, առջի պատուը Քրիստոս,  
եօքը Քրիստոսինները՝ իր գալու ատենը:» Ա. կոր. Ժ. Ե. 23:
17. Ըստ Մովսէսի և մարգարէից՝ ո՞վ է նախ՝ կարգով:  
«Թէ Քրիստոս պիտի չարչարուէր, և թէ Անիկա է՞ն առաջ  
մեռելներէն յարութիւն առած՝ լոյս պիտի քարոզէր ժողո-  
վուրդին ու հեթանոսներուն:» Գործք ԻԶ. 23:
18. Տէրոջը եկած ատեն, մեռելոց ո՞ր դասակարգը մի-  
այն յարութիւն կ'առնէ:  
«Տէրը Ինքն ազգարարութեան հրամանով՝ Հրեշտակապետի  
ձայնովը ու Աստուծոյ փողովը երկինքէն պիտի իջնէ, և Քրիս-  
տոսով մեռածները առաջ յարութիւն պիտի առնեն:»  
Ա. Թեա. Գ. 45:
19. Այս յարութիւնը ի՞նչ կոչուած է:  
«... Արդարներուն յարութիւն առած ատենը փոխարէնը  
քեզի պիտի հասուցուի:» Ղուկ. Ժ. Գ. 44:  
«Եւ ուրիշ մեռելները չսպրեցան՝ մինչև որ հազար տարին կա-  
տարուեցաւ. ասիկա է առջի յարութիւնը:» Յայտ. Ի. 5:
20. Յարուցեալ սրբոց մարմինները որ՞ու մարմինին պի-  
տի նմանին:  
«Բայց մեր քաղաքականութիւնը երկինքն է, ուրկէ ալ Փրկչին  
կը սպասենք՝ Տէր Յիսուս Քրիստոսի, որ պիտի նորոգէ մեր  
խոնարհ մարմինը Իր փառաւոր մարմինին կերպարա-  
նակից ըլլալու, այն զօրութիւնովը որ կարող է ամէնը իր  
տակը հնազանդեցնելու:» Փիլ. Գ. 20, 21:
21. Անոնց փառաւորեալ մարմիններուն բնութիւնը ի՞նչ  
պիտի ըլլայ:  
«Արեւին փառքը ուրիշ է ու լուսնին փառքը ուրիշ, և աստ-  
ղերուն փառքը ուրիշ. ու մէկ աստղը միւս աստղէն  
ճարեք է փառքով: Այսպէս ալ է մեռելոց յարու-  
թիւնը. մարմինը ազականութիւնով կը սերմանուի, ու անա-  
պականութիւնով յարութիւն կ'առնէ:» Ա. կոր. Ժ. Ե. 41, 42:

22. Արդարներէն ու է մէկը պիտի կորսուի՞ Տէրօջմէն :  
«Քանի որ աշխարհի մէջ անոնց հետ էի, ես կը պահէի զանոնք  
Քու անունովք. զորոնք որ Գուց Ինձի տուի, Ես պահեցի,  
եւ անոնցմէ մէկը չկորսուեցաւ :» «Եւ ես անոնց յաւի-  
տենական կեանք կուտամ, ու յաւիտեան պիտի չկորսուին,  
եւ մէկը Իմ ձեռքէս պիտի չյափօցակէ զանոնք : Իմ  
Հայրս որ զանոնք Ինձի տուաւ, ամենէն մեծ է, և մէկը չի կրնար  
Իմ Հօրս ձեռքէն յափշտակել :» Յովհ. Ժ. 12, Ժ. 28, 29 :
23. Արդարները ինչո՞ւ կը յառնեն առջի յարութեան ատեն :  
«Իսկ թէ որ Յիսուսը մեռելներէն յարուցանողին Հոգին ձեր  
մէջը բնակած է, ալ Անիկա որ Քրիստոսը մեռելներէն յարուց,  
պիտի կենդանացնէ ձեր մահկանացու մարմիները Իր  
Հոգիովը որ ձեր մէջը կը բնակի :» Հովհ. Բ. 11 :
24. Ուստի հոգին ի՞նչ կոչուած է :  
«Որ մեզ կնքեց ալ, և մեզի տուաւ Հոգւոյն զգալը մեր սիր-  
տերուն մէջ :» Բ կոր. Ա. 22 :
25. Սուրբ Հոգին գրա՞ւն է մեր «վրայէն հագնել»ուն :  
«Վասն զի մենք որ այս վրանին տակն ենք՝ կը հաւաչենք ծան-  
րութիւն քաշելով. վասն զի չենք ուզեր վրանուս հանել, այլ  
անիկա ասոր վրայէն հագնիլ, որ մահկանացութիւնը ընկղմի  
կեանքէն : Իսկ ան որ մեզ այս բանիս կը պատրաստէ՝ Աստուած  
է, որ նաեւ մեզի տուաւ Հոգւոյն զգալը :» Բ կոր. Ե. 4, 5 :
26. Ուստի՞ ի՞նչ բանէ զգուշանալու են :  
«Եւ Աստուծոյ Սուրբ Հոգին մի՛ սրտմեցնէք, որով դուք  
կնքուեցաք փրկութեան օրուանը համար :» Եփ. Գ. 3 :
27. Առաջին յարութենէն ո՞րքան ատեն վերջ՞ ամբա-  
րիչաներուն յարութիւնը տեղի պիտի ունենայ :  
«Եւ աթոռներ տեսայ, ու նստան անոնց վրայ, և անոնց դա-  
տաւորութիւն տրուեցաւ. նաև Յիսուսի վկայութեանը համար  
գլխատուածներուն հոգիները տեսայ, և անոնք որ երկրպագու-  
թիւն չըրին գազանին՝ ոչ ալ անոր պատկերին, ու անոր դրոշմը  
իրենց ճակատներուն վրայ ու իրենց ձեռքին վրայ չընդունե-  
ցին. և սպրեցան՝ ու Քրիստոսի հետ հազար տարի թագաւոր-  
եցին : Եւ ուրիշ մեռելները չապրեցան մինչեւ հա-  
զար տարի կատարուեցաւ. ասիկա է առջի յարու-  
թիւնը :» Յայտ. Ի. 4, 5 :

28. Այս յարութիւնը ի՞նչ կոչուած է :

«Ու դուրս պիտի գան, անոնք որ բարի գործեր են, կենաց յարութեան համար, և անոնք որ չար գործեր են, դատապարտութեան յարութեան համար» Յովհ. Ե. 29:

29. Ի՞նչպէս նկարագրուած է յարութիւնը :

«Եւ ծովը իր մէջի մեռելները տուաւ, ու մահը և դժոխքը իրենց մէջի մեռելները տուին. ու ամէն մէկը իրենց գործերուն համեմատ դատուեցան» Յայտ. Ի. 43:

30. Քրիստոնէին կենդանի յոյսը ի՞նչ է, և ինչո՞վ այս յոյսը ապահովուած է մեզի :

«Օրհնեալ է Աստուած ու մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հայրը, որ Թր առաս ողորմութեանը համեմատ մեզ նորէն ծնաւ կենդանի յոյսի համար՝ Յիսուս Քրիստոսի մեռելներէն յարութիւն առնելովը» Ա Պետ. Ա. 3:

---



## ԱՄԲԱՐԻՇՏՆԵՐՈՒՆ ՎԱԽՃԱՆԸ

1. Ի՞նչ հարցում կ'ընէ Պետրոս՝ Աստուծոյ Աւետարանին չհնազանդողներուն նկատմամբ :  
«Քանզի ժամանակ է որ դատաստանը Աստուծոյ տունէն սկսի. և թէ որ առաջ մեզմէ կը սկսի, հապա անոնց վերջը ի՞նչ պիտի քլլայ՝ որոնք Աստուծոյ Աւետարանին չեն հնազանդիր:» Ա Պետ. Գ. 17:
2. Ի՞նչ է մեղաց վարձքը :  
«Քանզի մեղաց վարձքը մահ է, բայց Աստուծոյ ձրի պարգեւը յաւիտենական կեանք՝ մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի ձեռքով:» Հռովմ. Զ. 23: «Անկէ ետե ցանկութիւնը յղանաւորով՝ մեղք կը ծնանի. և մեղքը որ կատարուի՝ մահ կը ծնանի:» Յակ. Ա. 45:
3. Աստուած ինչո՞ւ Ադամը Եդեմէն արտաքսեց՝ անկումէն յետոյ :  
«Եւ Տէր Աստուած ըսաւ, Ահա՛ Ադամ՝ մեզմէ մէկուն պէս եղաւ՝ բարին ու չարը գիտնալու. եւ հիմա չքլլայ որ իր ձեռքը երկնցնէ, ու կենաց ծառէն ալ առնէ, եւ ուտէ ու յաւիտեան ապրի. ուստի Տէր Աստուած Եդեմի պարտէզէն դուրս ըրաւ զանիկա, որ երկիրը գործէ, ուսկից որ առնուեցաւ: Այսպէս՝ վախեց Ադամը. ու Եդեմի պարտէզին արեւելեան կողմէն քերովբէնէրը ու ամէն կողմ՝ դարձող բոցեղէն սուրը դրաւ, կենաց ծառին ճամբան պահելու համար:» Ծն. Գ. 22-24:
4. Որո՞նք միայն պիտի ապրին յաւիտեան :  
«Ինչպէս կենդանի ՚իջորը զիս զրկեց, ու ես կենդանի եմ՝ Հօրը ձեռքով, այսպէս ալ ան որ զԹս կ'ուտէ, ինքն ալ Իմ ձեռքովս կենդանի կը մնայ:» Յովհ. Զ. 58:
5. Ինչո՞ւ բոլոր մարդիկ կը մեռնին հիմա :  
«Վասն զի ինչպէս որ մէկ մարդէ մը մեղքը աշխարհ մտաւ, և այն մեղքէն մահը, և այնպէս ամէն մարդոց վրայ տարածուեցաւ մահը, բանզի ամէնը մեղանչեցին:» Հռովմ. Ե. 12:

6. Ամէնը կենդանի պիտի ըլլան նորէն :  
«Վասն զի ինչպէս որ Ադամով ամէնը կը մեռնին, այնպէս ալ Քրիստոսով ամէնը կենդանի պիտի ըլլան:» Ա կոր. Ժ. 22:
7. Երկրորդ մահ մը պիտի ըլլայ :  
«Եւ մահը ու զժողովը կրակի լիճին մէջ ձգուեցան. ասիկա է երկրորդ մահը:» Յայտ. Ի. 14:
8. Որո՞ւ վրայ երկրորդ մահը իշխանութիւն պիտի չուենայ :  
«Երանելի եւ սուրբ է ան որ առջի յարութեանը մէջ բաժին ունի. ասոնց վրայ երկրորդ մահը իշխանութիւն չունի, այլ անոնք Աստուծոյ և Քրիստոսի քահանաները պիտի ըլլան, ու Անոր հետ հազար տարի պիտի թաղաւորեն:» Յայտ. Ի. 6:
9. Ինչո՞ւ ոչ. — Որովհետեւ արդարեւերը անմահութիւն հագած պիտի ըլլան :  
«Վասն զի պէտք է որ այս ապականացու մարմինը անապականութիւն հագնի, և այս մահկանացու անմահութիւն հագնի, այն ատեն պիտի կատարուի այն խօսքը որ գրուեցաւ թէ Մահը յաղթութեան մէջ ընկղմեցաւ: Ո՞ւր է՝ ո՞վ մահ՝ քու խոյթոցդ, ո՞ւր է՝ ո՞վ դերեղման՝ քու յաղթութիւնդ: Մահին խոյթոցը մեղքն է, ու մեղքին ուժը՝ օրէնքը: Բայց գոհութիւն Աստուծոյ, որ մեղի յաղթութիւն կուտայ մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռքով:» Ա կոր. Ժ. 53—57:
10. Պօղոս ո՞ր յարութեան մասին կը խօսի Ա կոր. Ժ. Ժի մէջ : — Արդարոց :  
«Վասն զի ինչպէս որ Ադամով ամէնը կը մեռնին, այնպէս ալ Քրիստոսով ամէնը կենդանի պիտի ըլլան. բայց ամէն մէկը իր կարգովը, առջի պատուը Քրիստոս, ետք Քրիստոսին երբ՝ Իր գալու ատենը:» «Եւ ինչպէս որ հողեղէնին կերպարանքը հազար ենք, երկնաւորին կերպարանքն ալ պիտի հազարնեն:» Հմբ. 22, 23, 49:
11. Ամէն մէկը ի՞նչ պիտի հնձէ :  
«Մի՛ խարուիք՝ Աստուած ծաղը չըլլար, վասն զի ինչ որ մէկ

մարդ մը կը սերմանէ՝ նոյնը պիտի հնձէ. ան որ իր մարմինին կը սերմանէ՝ այն մարմինէն ապականութիւն պիտի հնձէ. ու ան որ Հոգիին կը սերմանէ, այն Հոգիէն յաւիտեանական կեանք պիտի հնձէ:» Գաղ. 2. 7, 8:

12. *Ինչո՞ւ արդարեաները հոգեւոր անմահ մարմիններով պիտի յառնեն:*

«Իսկ եթէ Յիսուսը մեռելներէն յարուցանողին Հոգին ձեր մէջը բնակած է, ու Անիկա որ Քրիստոսը մեռելներէն յարուց, պիտի կենդանացնէ ձեր մահկանացու մարմինները Եւ Հոգիովը որ ձեր մէջ կը բնակի:» Հռովմ. Ը. 11:

13. *Ամբարիշտը, որ մարմինին կը սերմանէ, կրնա՞յ՝ երկնաւոր, հոգեւոր անմահ մարմին մը հնձել:*

«Մարմինէն ծնածը մարմին է, ու Հոգիէն ծնածը հոգի է:» Յովհ. Գ. 6:

14. *Ի՞նչ պիտի պատահի անոր որ մարմինին կը սերմանէ և*

«Ան որ իր մարմինին կը սերմանէ՝ այն մարմինէն ապականութիւն պիտի հնձէ:» Գաղ. 2. 8:

«Քանզի եթէ մարմնաւորապէս ապրելու ըլլաք, պիտի մեռնիք. ըսյց եթէ Հոգիով մարմինին գործքերը սպաննէք, պիտի ապրիք:» Հռովմ. Ը. 13:

15. *Ամբարիշտները ո՞ւր պիտի կրին երկրորդ մահը:*

«Եւ մահը ու գոցիքը կրակի լիճին մէջ ձգուեցան. ստիկա է երկրորդ մահը: Եւ ո՛վ որ կենաց գրքին մէջը գրուած չի գտնուեցաւ, կրակի լիճին մէջ ձգուեցաւ:» Յայտ. Ի. 44, 45:

16. *Սատանան հիմա կրակին լիճին մէջն է:*

«Եւ վար ձգուեցաւ մեծ վիշապը՝ այն առաջուան օձը որ Բանսարկու ու Սատանայ կ'ըսուի, որ բոլոր աշխարհ մոլորեցուց. ու իր հրեօսակները իրեն հետ վար ձգուեցան երկրի վրայ:»

«Ասոր համար ուրախացէ՛ք՝ ո՛վ երկինք ու անոր մէջ բնակողներ. վա՛յ երկրի ու ծովու, վասն զի Բանսարկուն ձեզի իջաւ, որ ցաս ըարկութիւն ունի՝ զիտնալով որ քիչ ժամանակ պիտի կենայ:» Յայտ. ԺԲ. 9, 12: «Արժ ո՛ւն կեցէք, հսկեցէ՛ք, քանզի ձեր հակառակորդը Սատանան մահադառնալու պէս կը պարտի, ու կը փնտռէ թէ ո՛վ կ'լլէ:» Ա Պետ. Ե. 8:



17. *Չար ոգիները այժմէն տանջանաց մէջ են :*  
«Եւ ահա՛ աղաղակեցին ու ըսին, Յի՛սուս Որդի Աստուծոյ՛ դուն մեր հետը ի՞նչ բան ունիս, աօսեմէն առաջ մեզ տանջելո՞ւ համար հոս եկար:» Մատթ. Ը. 29:
18. *Ե՞րբ կրակի լիճին մէջ պիտի ձգուին անոնք :*  
«Եւ հազար տարից լրանալուն՝ պիտի արձակուել Սատանան իր բանտէն. և պիտի ելլէ ու մոլորեցնէ երկրի շրջս անկիւնները եղող ազգերը... Եւ երկինքէն Աստուծոմէ կրակ իջաւ ու սպառեց զանոնք. և Քանաւրկուն որ զանոնք մոլորեցուց, ձգուեցաւ կրակի ու ծծումբի լիճին մէջ:» Յայտ. Ի. 7-10:
19. *Ի՞նչ պահուած է դատաստանի օրուան համար :*  
«Եւ հիմակուան երկիցն ու երկիրը նոյն խօսով պահպանուած են, մինչև դատաստանին ու ամբարիշտ մարդոց կորստեան օրը կրակի համար պահուած:» Բ Պետ. Գ. 7:
20. *Երկիրը ձիւթ և ծծո՞ւմբ պիտի ըլլայ :*  
«Քանզի Տէրոջը վրէժխնդրութեան օրը՝ ու Սիօնի վէճին համար հատուցման սարին է: Եւ անոր գետերը ձիւթի, ու հողը ծծումբի պիտի դառնան. եւ անոր երկիրը վառած ձիւթ պիտի ըլլայ:» Ես. ԼԴ. 8, 9:
21. *Ո՞րքան ատեն պիտի տեւէ ասիկա :*  
«Գիտե՛ր ու ցորեկ պիտի չմարի. անոր ծուխը յաւիտեան պիտի ելլէ, և դարէ ի դար աւերակ պիտի մնայ. յաւիտեանս յաւիտեանից անկէ անցնող պիտի ըլլայ:» Հմբ. 40:
22. *Պարագաները երբեմն կը սահմանաւորե՞ն «յաւիտեան» բառով նշանակուած ժամանակի շրջանը՝ Ս. Գրոց մէջ :*  
«Այն ատեն անոր տէրը գատաւորներուն պիտի տանել զանիկա, և դրանք կամ՝ դրանդեացը մօտեցնէ. ու անոր տէրը անոր ականջը հերիւնով պիտի ծակէ, և անիկայ յաւիտեան ծառայ պիտի ըլլայ անոր:» Ել. ԻԱ. 6:
23. *Ի՞նչ օրինակ ունինք՝ ամբարիշտներուն վախճանին նկատմամբ :*  
«Փնջպէս Սողոմ ու Գոմար եւ անոնց բարոսիքը եղած քաղաքները՝ որոնք ասոնց նման պոռնկեցան ընկերներուն մարմինին ետեւէն երթալով, առջեւնիս օրինակ կեցեր են՝

յաւիտեան կրակին դասապարտութիւնը ընդունելով:» Յուգա 7:

24. Այս քաղաքները ջնջող կրակը ո՞ւրկէ եկաւ :  
«Այն ատեն Տէրը Սոգոմի ու Գոմորի վրայ ծծուժք ու կրակ տեղաց Տէրոջը կողմանէ՝ երկիւնէն:» Են. ժԹ. 24:

25. «Յաւիտեան կրակ»ը ի՞նչ կատարեց այն քաղաքներուն համար: Մեծ կրակի լիճը ի՞նչ պիտի պատճառէ:

«Եւ Սոգոմի ու Գոմորի քաղաքները մոխիր դարձնելով ու կործանելով դատապարտեց, ետքէն ամբարշտութիւն ընելու մարդոց օրինակ ընելով զանոնք:» Բ Պետ. Բ. 6:

«Եւ հազար տարին յրանալուն՝ պիտի արձակուի Սատանան իր բանտէն, և պիտի ելլէ ու մոլորցնէ երկրի չորս անկիւնները եղող սղոթերը՝ Գոգը ու Մագոգը, որ զանոնք պատերազմի ժողովէ, որոնց համբանքը ծովու աւազին չափ է: Ու երկրի ընդարձակութեանը մէջ ելան, և սուրբերուն բանակը ու սիրելի քաղաքը չորս կողմէն պատեցին: Եւ երկիւնէն Աստուծմէ կրակ իջաւ ու սպառեց զանոնք. եւ Քանաւրկուն որ զանոնք մոլորցուց, ձգուեցաւ կրակի ու ծծուժքի լիճին մէջ:» Յայտ. Ի. 7—9:

26. Յայնժամ ի՞նչ պիտի պատահի երկրին՝ և անոր մէջը գտնուած գործքերուն:

«Սակայն Տէրոջը օրը դողի պէս պիտի գայ, որ այն ատեն երկիրը սաստիկ շառաչիւնով պիտի՞ անցնի, ու տարեքները բռնկած պիտի լուծուին, երկիրս ալ՝ ու ինչ զործքեր որ անոր մէջը կը գտնուին, պիտի այրուին:» Բ Պետ. Գ. 10:

27. Ի՞նչ պիտի պատահի՝ կրակը իր գործը լմնցնելէն յետոյ:

«Սակայն իր խոստմունքին համեմատ նոր երկիւնքի մը ու նոր երկրի մը կը սպասենք, որոնց մէջ արդարութիւն կը բնակի:» Բ Պետ. Գ. 13:

28. Երբ երկիրն այրի կրակի լիճին մէջ, ի՞նչ պիտի պատահի ամբարիշտներուն:

«Անոնք կորացան ու ինկան, բայց մենք ելանք, ու շիտակ կայնեցանք:» Սաղմ. Ի. 8:

«Քայց ամբարիտները պիտի կորուին, ու Տէրոջը թըշնամիները գառնուկներու ճարպին պէս պիտի սպառին, մուխի պէս պիտի սպառին:» Սաղմ. ԼԷ. 20:

«Մուխին ցրուելուն պէս ցրուէ՛ զանոնք. ինչպէս որ մամբ  
կրակին առջին կը հալի, այսպէս թող կորսուին ամբարիւս-  
ները Ասուածոյ երեսէն:» Մաղժ. ԿԷ. 2:

29. Ո՞ր առակով Տէրը ցոյց կուտայ ամբարիշտներուն  
ջնջումը:

«Եւ արար աշխարհս է. իսկ բարի սերմը անոնք են որ թագաւո-  
րութեանը որդիքն են, բայց որոմը չարին որդիքն են. և թշնա-  
մին որ զանկա ցանեց, Սատանան է, և հունձքը աշխարհիս  
վերջն է. ու հնձողները հրեշտակներն են: Արդ ինչպէս որ  
որոմը կը ժողվուի ու կրակի մէջ կ'այրի, աւխարհիս  
վերջն ալ այնպէս պիտի ըլլայ:» Մատթ. ԺԳ. 38—40:

30. Ո՞րքան կատարեալ պիտի ըլլայ անոնց ջնջումը:

«Քանզի ահա՛ փռուի պէս վառած օրը կուգայ, ու բոլոր հը-  
պարտները և բոլոր ամբարշտութիւն ընողները յարդի պէս  
պիտի ըլլան. ու զպու օրը զանոնք պիտի այրէ՛ կ'ըսէ  
զօրաց Տէրը, այնպէս որ անոնց արմատս կամ ոտս պիտի  
չքողու:» Մաղ. Գ. 4:

31. Ամբարիշտները ի՞նչ պիտի ըլլան:

«Եւ ամբարիշտները պիտի կոխէք, վասն զի իմ գործ տեսնելու  
օրս անոնք ձեր ոտից թաթերուն տակ մնալիս պիտի ըլլան,  
կ'ըսէ զօրաց Տէրը:» Մաղ. Գ. 3:

32. Այն ատեն ո՞վ միայն պիտի բնակի երկրի վրայ:

«Ու Քու ժողովուրդիդ ամէնը արդար պիտի ըլլան, ու  
երկիրը յաւիտեան պիտի ժառանգեն. իմ անկած տունկս՝  
իմ ձեռքերուս գործքը իմ փառքիս համար պիտի ըլլայ:»  
Ես. Կ. 24:

33. Այն ատեն ի՞նչ պիտի կատարուի:

Ու երբ ամէնը Անոր հնազանդ ըլլայ, այն ատեն Որդին ինքն ու  
պիտի հնազանդի Անոր, որ իրեն հնազանդեցուց ամէնը, որպէս  
զի Ասուած ըլլայ ամէնը ամէն բանի մէջ:» Ա կոր.  
ԺԵ. 28:

34. Յայնժամ ի՞նչ պիտի ընէ ամէն բան:

«Եւ բոլոր արարածները որ երկնից մէջ ու երկրի վրայ ու երկրի  
տակը և ծովու մէջ, ու ամէն ինչ որ անոնց մէջը կայ՝ լսեցի որ  
կ'ըսէին, Արողին վրայ նստողին եւ Պառնուկին օրե-  
նութիւն ու պատիւ եւ փառք ու զօրութիւն յաւիտեանս  
յաւիտեանից:» Յայտ. Ե. 13:



## ԺԱՄԱՆԱԿԱԻՈՐ ՀԱԶԱՐԱՄԵԱՆ

1. Քրիստոս ո՞ւր գնաց՝ երբ երկիրը թողուց :  
«Արդ՝ Տէրը անոնց հետ խօսելէն ետքը երկիրն Երուսաղէմ, ու Աստուծոյ աջ կողմը նստաւ :» Մարկ. ԺԶ. 19 :
2. Անիկա պիտի վերադառնա՞յ :  
«Եւ այս բաները որ ըսաւ, երբ անոնք կը նայէին, համբարձաւ, և ամպ մը շրջապատեց անոնց աչքէն առաւ : Ու քանի որ աչքերնին անկած գէպի երկիրնքը կը նայէին Անոր երթալուն վրայ, ահա երկու մարդ իրենց քով կայնեցան ճերմակ հանդերձներով, որոնք նաև ըսին. Ո՛վ Քալիլեացի մարդիկ՝ ինչո՞ւ կայներ գէպի երկիրնքը կը նայիք. այս Յիսուսը որ ձեզմէ երկիրնքը համբարձաւ, ասանկ պիտի գայ՝ ինչպէս որ տեսաք Անոր երկիրն Երուսաղէմ :» Գործք Ա. 9—11 :
3. Երկրի վրայ ի՞նչ կացութիւնք պիտի տիրեն յայնժամ :  
«Եւ զայս գիտցի՛ր որ ետէի օրերը չար ժամանակներ պիտի գան. քանզի մարդիկ պիտի ըլլան անձնատէր, արծաթատէր, ամբարտաւան, հպարտ, հայոյիչ, ծնողաց անհնազանդ, սպերախտ, անտուրբ, անգուժ, անհաշտ, բանտարիւղ, անժուժկալ, դատանարարոյ, բարին չտիրող, մատնիչ, յանդուղն, դուռող, աւելի հեշտատէր քան թէ աստուածատէր, որոնք աստուածպաշտութեան կերպարանքը ունին, բայց անոր զօրութիւնը ուրացած են. և դուն ասոնցմէ մէկդի՛ կեցիր :» ԲՏԻՄ. Գ. 4—5 :
4. Իրերը պիտի բարւոքի՞ն՝ թէ աւելի գէշ պիտի ըլլան :  
«Բայց չար ու խարեբայ մարդիկները չարութեան մէջ պիտի յառաջանան՝ մոլորցնելով ու մոլորելով :» Հմբ. 13 :
5. Այն ատեն դիւրին պիտի ըլլա՞յ Աստուծոյ ծառայել :  
«Եւ ամէն անոնք որ կ'ուզեն աստուածպաշտութեամբ սպրիլ Քրիստոս Յիսուսով հալածանք պիտի կրեն :» Հմբ. 12 :
6. Տէրոջը գալստեան ատեն՝ ո՞ր երկու դասակարգը տակաւին գոյութիւն պիտի ունենայ :

«Քանզի դուք ինքնիրեննիր աղէկ դիտէք թէ Տէրոջը օրը գիշերուան գողի պէս անանկ կը հասնի: Երբ ըսելու ըլլան թէ խաղաղութիւն ու ապահովութիւն է, այն ասե՛ն կորուսը յանկարծակի անոնց վրայ պիտի հասնի յդիմ երկանցը պէս, ու պիտի չազատի: Քայց դու՛ք եղբայրներ՝ խաւարի մէջ չէ՛ք, որ այն օրը գողի մը պէս ձեր վրայ հասնի:» Ա. Թեա. Ե. 2—4:

7. Ի՞նչ պիտի ըսեն անոնք որ խաւարի մէջ են :

«Բայց առաջ այս դիտաք, որ վերջի օրերը ծաղր ընողներ պիտի դան, որոնք իրենց ցանկութիւններուն համեմատ պիտի քալեն, և պիտի ըսեն. «Ո՛ւր է Անոր գալուց խոստումները. վասն զի քանի որ հայրեր բնացան, ամէն բան անանկ կայ կը մնայ արարածոց սկիզբէն հետէ:» Բ. Պետ. Գ. 3, 4:

8. Տէրը ի՞նչ պիտի ընէ ամբարիշտները :

«Զանոնք երկաթէ գաւազանով պիտի կոտրես, բրուտի ամանի պէս պիտի փօրես զանոնք:» Սաղմ. Բ. 9:

9. Իր դարձին, ի՞նչ պիտի պատահի արդարներուն :

«Եւ Անիկա իր հրեշտակները պիտի զրկէ մեծածայն փողով, ու պիտի ժողվեն Թր ընտելացները չորս հովերէն՝ երկիրքի մէկ ծայրէն մինչև միւս ծայրը:» Մատ. Ի. 31:

«Վասն զի ինչպէս որ Ագամով ամէնը կը մեռնին, այնպէս ալ Քրիստոսով ամէնը կենդանի պիտի ըլլան. բայց ամէն մէկը իր կարգովը. առջի պտուղը Քրիստոս, ետք Քրիստոսիցները՝ Թր գալու ասե՛նք:» Ա. Կոր. Ժ. 22, 23:

10. Ի՞նչ անուն յատկացուած է յարութեանը անոնց՝ որ կը ննջեն Քրիստոսով :

«Երանելի և սուրբ է ան որ առջի յարութեանը մէջ բաժին ունի. ասոնց վրայ երկրորդ մասը իշխանութիւն չունի, այլ անոնք Աստուծոյ և Քրիստոսի քահանաները պիտի ըլլան, ու Անոր հետ հազար տարի պիտի թագաւորեն:» Յոյա. Ի. 6:

11. Աստուծոյ զաւակները ո՞ւր պիտի երթան :

«Քանզի Տէրը Ինքն ազդարարութեան հրամանով՝ հրեշտակապետի ձայնովը ու Աստուծոյ փողովը երկիրքէն պիտի իջնէ, և Քրիստոսով մեռածները առաջ յարութիւն պիտի առնեն: Ետքը մենք ալ որ ողջ մնացած ենք՝ անոնցմով մէկտեղ պիտի յափճակուինք ամպերով Տէրոջը առջեւ ելլելու օրին

մէջը, եւ այնպէս յաւիտեան Տէրոջը հետ պիտի ըլլանք:»  
Ա թեւ. Ե. 45, 46:

«Իմ' Լօրս տունը շատ բնակարաններ կան. ապա թէ ոչ Ես ձեզի պիտի ըսէի. հիմա կ'երթամ ու ձեզի տեղ կը պատրաստեմ: Եւ թէ որ երբամ ու ձեզի տեղ պատրաստեմ, նորէն կուգամ եւ ձեզ բովս կ'առնեմ, որպէս զի ո՛ւր որ Ես եմ՝ դուք ալ հոն ըլլաք:» Յովհ. Ժ՛. 2, 3:

12. Ի՞նչ պիտի պատահի այն ամբարիշտներուն որոնք տակաւին ողջ պիտի ըլլան Քրիստոսի միւս անգամ գալստեան:

«Եւ ձեզի նեղութիւն կրողներու՝ մեզի հետ հանգիստ, Տէր Յիսուսի երկինքէն յայտնուելու ատենը Իր զօրաւոր հրեշտակներովը, բորբոքած կրակով վրէժ առնելու անոնցմէ՝ որ զԱստուած չեն հանցնար, եւ որ մեր Տէր Յիսուս Քրիստոսի աւետարանին չեն հնազանդիր. որոնք պիտի պատժուին յաւիտեանական սասակումով՝ Տէրոջը երեսէն ու Անոր զօրութեանը փառքէն:» Բ թեւ. Ա. 7—9:

«Եւ տեսայ երկինքը բացուած, և ահա՛ մէկ ճերմակ ձի մը, ու անոր վրայ հեծնողը Հաւատարիմ ու ճշմարիտ կ'ըսուի. և արդարութեամբ գատաստան կը տեսնէ ու կը պատերազմի. և Անոր աչքերը կրակի բոցի պէս էին. ու Անոր գլխուն վրայ շատ թագեր կային, ու գրուած անուն մը ունէր՝ զոր մէկը չի գիտեր, բայց միայն Ինքը. և արևնով ներկուած հանդերձ մը հագեր էր. ու Անոր անունը Բան Ատուծոյ կ'ըսուի: Ու երկնից մէջ եղող զօրքերը Անոր ետեւէն կ'երթային ճերմակ ձիերով, ճերմակ ու մաքուր բեհեղներ հագած: Եւ Անոր բերնէն սրած սուր մը կ'ելլէր, որ անով ազգերը զարնէ. ու Ինքը երկարէ գաւազանով պիտի հովուէ զանոնք, ու Ամենակալ Աստուծոյ սաստիկ բարկութեանը զինիին հրեճանը Ինքը պիտի կոխէ: Եւ Իր պատմութեան զօրս ու Իր ազգերին վրայ գրուած գիր մը ունէր, ԹԱԳԱՒՈՐ ԹԱԳԱՒՈՐ ԱՅ ԵՒ ՏԵՐ ՏԵՐԱՆՑ:

«Եւ մէկ հրեշտակ մը տեսայ՝ որ արեւին մէջը կայներ էր, ու մեծ ձայնով աղաղակեց երկինքի մէջ թռչող բոլոր թռչուններուն՝ ըսելով. Եկէ՛ք՝ Աստուծոյ մեծ ընթրիքին՝ ժողովուցէք, որ ուսէք բազաւորներուն մարմինները՝ ու հազարապետներուն մարմինները՝ զօրաւորներուն



մարմինները՝ ու ձիերուն եւ անոնց վրայ հեծնողնե-  
ցերուն մարմինները՝ քէ՛ ազատեցնուցնուց եւ քէ ծառանե-  
րուն, քէ պզտիկներուն եւ քէ մեծերուն:

«Եւ տեսայ դառնը ու երկրի թագաւորները ու անոնց զօրքերը  
մէկտեղ ժողովուած պատերազմ՝ ընելու Անոր հետ, որ ձիուն  
վրայ նստեր էր, ու Անոր զօրքերուն» Յայտ. ԺԹ. 44—49:

13. Ուստի, ո՞ր օրերուն բաղդատուած է այս ժամանակը:

«Աւ ինչպէս որ Նոյի օրերը եղաւ, այնպէս պիտի ըլլայ  
Որդւոյ մարդոյ օրերն ալ: Կ'ուտէին՝ կը խմէին՝ ծախու-  
կ'աւելէին՝ կը տնկէին՝ կը շինէին. բայց այն օրը որ Ղոթա Սո-  
դոմէն ելաւ, երկինքէն կրակ ու ծծումբ տեղաց և բոլորն ալ  
կորսնցուց. նոյնպէս պիտի ըլլայ այն օրը՝ որուն մէջ Սրբին մար-  
դոյ պիտի յայտնուի» Ղուկ. ԺԷ. 26—30:

14. Այն ատեն աշխարհ ի՞նչպէս պիտի երեւայ:

«Երկրի վրայ ճնայեցայ, եւ տեսա՛ անձեւ ու պարապ էր.  
երկինքը նայեցայ, ու ըլլա՛ չունէր: Լեռներուն նայեցայ, և տ-  
հա՛ կը դողային, ու ամէն ըլլուրները կը սարսէին: Նայեցայ, և  
տեսա՛ մարդ մը չկար, և երկինքի բոլոր թռչունները փախած  
էին: Նայեցայ, և տեսա՛ պտղաբեր երկիրը անապատ եղած էր,  
ու ամէն քաղաքները Տէրօջը երեսէն՝ Անոր սաստիկ բարկու-  
թեանը երեսէն փլած էին» Երեմ'. Գ. 23—26:

«Երկրի երեսէն ամէն բանը բոլորովին պիտի կորսնցնեմ, կ'ըսէ  
Տէրը: Մարդը ու անասունը պիտի կորսնցնեմ, երկինքին թռչու-  
չունները ու ծովուն ձուկերը և դայթակողութիւնները ամբա-  
րիշտներուն հետ պիտի կորսնցնեմ, ու երկրիս երեսէն մարդը  
պիտի կտրեմ, կ'ըսէ Տէրը... Եւ պիտի ըլլայ որ Տէրօջը զ-  
հին օրը իշխանները ու թագաւորին ազաքները ու բոլոր օտար  
զգեստ հազնողները պիտի պատժեմ» Սոփ. Ա. 2, 3, 8:

15. Ամբարիշտները ո՞ւր պիտի մնան յայնժամ:

«Եւ այն օրը Տէրը բարձրէն՝ այցելութիւն պիտի ընէ հպարտնե-  
րուն զօրքին, ու երկրիս՝ վրայ՝ երկրիս թագաւորներուն: Աւ  
անոնք պիտի ժողվուին, ինչպէս որ բանաւարկեալները  
գուրիս մէջը կը ժողվուին ու բանաի մէջ պիտի զոցուին,  
եւ օտս ասեմէն ետք անոնց այցելութիւն պիտի ըլլայ»  
Ես. ԻԳ. 21, 22:

16. Ո՞րքան ատեն պիտի մնան անոնք զուրին մէջ:

«Եւ ուրիշ մեռելները չսպրեցան մինչեւ որ հազար  
սարին կասարուեցաւ. ասիկա է առջի յարութիւնը»  
Յայտ. Ի. 5:

17. Ի՞նչ պիտի ըլլայ Սատանային վիճակը այդ ժամա-  
նակամիջոցին :

«Եւ հրեշտակ մը տեսայ՝ որ երկինքէն կ'իջնէր, ու անդունդին  
բանալին և մեծ շղթայ մը ունէր իր ձեռքը. ու բռնեց վի-  
ճապը այսինքն առջի օձը՝ որ Քանսարկուն ու Սասա-  
նան է, եւ կապեց զանիկա հազար սարի. ու անդունդը  
ձգեց զանիկա՝ եւ զոցեց ու վրայէն կնկեց, որ ալ չմո-  
լորցնէ ազգերը՝ մինչեւ որ հազար սարին լմննայ, և  
անկէ ետքը պէտք է որ արձակուի անիկա քիչ մը ժամանակ»  
Յայտ. Ի. 4—3:

18. Ի՞նչպէս պիտի կապուի ան. — իր նեղեալ հանգա-  
մանքներովը, արդարները հեռացուած պիտի ըլլան  
իր հասողութենէն անդին, և ամբարիշտները՝ ջըն-  
ջուած. այնպէս որ ո՛չ այս վերջինները պիտի կրնայ  
նեղել, ոչ ալ առջինները մոլորցնել իր փորձու-  
թիւններովը:

19. Այդ ժամանակին մէջ՝ ի՞նչ է արդարներուն գործը  
երկինքի մէջ :

«Եւ աթոռներ տեսայ, ու նստան անոնց վրայ. և անոնց դա-  
սաւորութիւն տեսայ. նաև Յիսուսի վկայութեանը հա-  
մար ու Աստուծոյ խօսքին համար զլխատուածներուն հոգիները  
տեսայ, և անոնք որ երկրպագութիւն չըրին գաղանին՝ ո՛չ ալ  
անոր պատկերին, ու անոր գրոշմը իրենց ճակատներուն վրայ ու  
իրենց ձեռքին վրայ չընդունեցին. եւ ապրեցան՝ ու Քրիս-  
տոսի հետ հազար սարի բազաւորեցին» Յայտ. Ի. 4:

20. Զորո՞ք պիտի դատեն անոնք :

«Զէ՞ք գիտեր որ սուրբերը պիտի դասեն աշխարհը...: Զէ՞ք  
գիտեր որ մենք հեբեոսակներ պիտի դասենք» Ա կոր. 2. 2, 3:

21. Հաղարամեայի վախճանին ի՞նչ տեղի պիտի ունենայ :

«Եւ հաղար տարին լրանալուն՝ պիտի արձակուի Սասանան  
իր բանակէն. եւ պիտի ելլէ ու մոլորցնէ երկրի չորս ան-  
կիւնները եղող ազգերը՝ Գոգը ու Մագոգը, որ զանոնք

պատերազմի ժողովէ, որոնց համբարները ծովու աւազին չափ է:» 3այտ. Ի. 7:

22. Սատանան ի՞նչ պիտի ընէ այն ատեն :  
«Ու երկրի ընդարձակութեանը մէջ ելան, և սուրբերուն բանակը ու սիրելի քաղաքը չորս կողմէն պատեցին:» 3այտ. Ի. 8:
23. Ի՞նչ յաջողութիւն պիտի ունենայ ան :  
«Եւ երկինքէն Աստուծոյ կրակ իջաւ ու սպառեց զանոնք:» 3այտ. Ի. 9 (առաջին մաս):
24. Սիրելի քաղաքը ո՞ւր կէ կուգայ :  
«Եւ սուրբ քաղաքը նոր Երուսաղէմ տեսոյ՝ որ երկինքէն Աստուծոյ կ'իջներ, իր երկանը համար զարդարուած հարսի մը պէս պատրաստուած :  
«Եւ հոգիով մէկ մեծ ու բարձր լեռան մը վրայ տարաւ զիս, և ցուցուց ինձի սուրբ Երուսաղէմ քաղաքը, որ երկինքէն Աստուծոյ կ'իջներ:» 3այտ. Իձ. 2, 40:
25. Ի՞նչ պիտի պատահի ամբարիչտներուն՝ իրենց յարութենէն յետոյ :  
«Եւ Բանասարկուն որ զանոնք մոլորացուց, ձգուեցաւ կրակի եւ ձծումբի լիճի մէջ, ուր որ է գազանը եւ սուս մարգարէն:» 3այտ. Ի. 9 (վերջին մաս):
26. Այժմու երկինքն ու երկիրը ի՞նչ բանի համար պահուուած են :  
«Եւ հիմակուան երկինքը ու երկիրը նայն խօսքով պահպանուած են, մինչև դատաստանին ու ամբարիչտ մարդոց կորստեան օրը կրակի համար պահուած: ... Ապասելով ու արտորալով Աստուծոյ օրուանը գալուն, որուն մէջ երկինքը կրակով այրուած պիտի լուծուի, և տարեբնները բռնկած պիտի հալին:» Բ Պետ. Գ. 7, 12:
27. Իր խոստմունքին համեմատ՝ Աստուծոյ զաւակները ի՞նչ բանի կը սպասեն :  
«Յակայն Իր խոստմունքին համեմատ նոր երկինքի մը ու նոր երկրի մը կը սպասենք, որոնց մէջ արդարութիւն կը ընակի:» Բ Պետ. Գ. 13:
28. Ո՞վ պիտի ժառանգէ նոր երկիրը :



- «Վասն զի չարագործները պիտի կորսուին, սակայն Տէրոջը համբերողները երկիրը պիտի ժառանգեն:» Սաղմ. 1, 12. 9:
29. *Ի՞նչ դիրք պիտի չնորհուի անոնց՝ նոր երկրին վրայ:*  
«Եւ մեզ մեր Աստուծոյ քաղաւորներ ու քահանաները բիր, ու երկրի վրայ պիտի թագաւորենք:» Յայտ. Ե. 10:
30. *Ի՞նչ պիտի վայելեն անոնք:*  
«Սակայն հեզերը պիտի ժառանգեն երկիրը, ու խաղաղութեան առասուրբունովը ուրախ պիտի ըլլան:» Սաղմ. 1, 12. 41:
31. *Արդարները ո՞րքան ատեն պիտի ժառանգեն երկիրը:*  
«Եւ թագաւորութիւնը Բարձրելոյն սուրբերը պիտի ստանեն, ու անոնք պիտի ժառանգեն քաղաւորութիւնը յաւիտեան եւ յաւիտեանս յաւիտենից:» Դան. Է. 48:
-

## ԴԱՐՁԻ ԳԱԼԸ՝ ԸՍՏ Ս. ԳՐՈՑ

1. Ի՞նչ պէտք է ըլլայ ամէն մարդ՝ Աստուծոյ թաղաւորութիւնը մտնել կարենալէ առաջ :
 

«Եւ Յիսուս տղայ մը կանչեց Իրեն, զանկա անոնց մէջտեղը կայնեցուց, ու ըսաւ. ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի, թէ որ դարձի չգամ եւ աղոց պէս չըլլամ, երկնից բազաւորութիւնը բնաւ պիտի չմտնէք:» Մատթ. ԺԸ, 2, 3:
2. Ամբարիշտները ի՞նչ բանէ պէտք է դառնան :
 

«Եւ եթէ ամբարիշտք իր գործած բոլոր մեղքերէն դառնայ, ու իմ բոլոր օրէնքներս պահէ, և իրաւունք ու արդարութիւն բնէ, անկա անշուշտ պիտի ապրի, պիտի չմտնի:»  
 «Թող ամբարիշտք իր նամբայէն՝ ու անօրէն մտորք իր խորհուրդներէն հրաժարի եւ Տէրոջը դառնայ, ու Անկա պիտի ողորմի անոր. ու մեր Աստուծոյն, քանզի Անկա առատաստեպս կը ներէ:» Եղեկ. ԺԸ, 5, ԾԵ, 7:
3. Մեղաւորը ամենէն առաջ ի՞նչ պարտի ճանչնալ՝ նախ քան իր չար ճամբաները մոռնալը :
 

«Գնա՛ սյս խօսքերը... կանչելով ըսէ՛. Գարձի՛ր՝ ս՛ղ ապստամբ Խառայէ՛ւ, կ'ըսէ Տէրը, իմ բարկութիւնս ձեր վրայ չեմ թափեր. քանզի ես ողորմած եմ, կ'ըսէ Տէրը, յաւիտեան սիս չեմ պահէր. միայն թէ քու անօրէնութիւնդ նանչցի՛ր, որ քու Տէր Աստուծոյ ապստամբեցար... և իմ խօսքիս չնազանդութիւն չըրէք, կ'ըսէ Տէրը:»  
 «Ես պիտի երթամ՝ ու իմ տեղս դառնամ, մինչև որ անոնք իրենց յանցաւոր ըլլալը խոստովանին, ու Իմ երես փնտռեն. երբ նեղութեան մէջ մտնեն, զիս կանուխ պիտի փնտռեն:» Երեմ. Գ. 42, 43. Ովս. Ե. 45:
4. Բայց ս՞ուրկէ կուգայ մեղքը ճանչնալը :
 

«Վասն զի Անոր առջեւը մէկ մարմին մը պիտի չարդարանայ օրէնքին դարձքերովը, բանգի օրէնքով է մեղքը նանչնալը:»  
 «Ուրեմն ի՞նչ ըսենք. օրէնքը մե՞ղք է. քա՛ւ լեցի. բայց ես

մեղքը չէի նանչնար, եթէ ոչ օրէնքով, ինչպէս ցանկութիւնն ալ չէի գիտեր, եթէ օրէնքը ըսած չլլար: Մի՛ ցանկար:» Հ. 20. Է. 7:

5. Ուստի, Հին կտակարանը ի՞նչ կ'ըսէ արդէն Աստուծոյ օրէնքին մասին:

«Տերօջը օրէնքը կատարեալ է, հոգին կը նորոգէ. Տերօջը վկայութիւնը ճշմարիտ է, արդէսը իմաստուն կ'ընէ: Տերօջը կանոնները շիտակ են, սիրտը կ'ուրախացնեն. Տերօջը պատուիրանքները պայծառ են, աչքերու լոյս կուտան» Սաղմ. ԺԹ. 7, 8: «Քանզի պատուիրանքը նորոգ, ու օրէնքը լոյս է, և խաւարին յանդիմանութիւնները կենաց ճամբայ են» Առակ 9. 23:

6. Յակորոս ի՞նչ բանի կը նմանցնէ օրէնքը:

«Վասն զի եթէ մէկը միտքն լսող ըլլայ խօսքին ու կատարող ըլլայ, անիկա նման է մարդու մը՝ որ հայելիի մէջ աչքերը տնկած իր բնական երեսը կը գիտէ. որովհետեւ գիտելով տեսաւ ինքզինքը ու անցաւ գնաց, և շուտ մը մտադառ թէ ինչպէս մէկ մըն էր: Բայց ան որ ազատութեան կատարեալ օրէնքին աջ սնկելով կը նայի, և անոր մէջը կը կենայ, անիկա խօսքը լսող ու մտադող ըլլալով՝ այլ գործը կատարող, երանելի պիտի ըլլայ իր կատարելուն մէջ:» Յակ. Ա. 23—25:

7. Ի՞նչ բան նաև կ'օգնէ մեզքի գիտակցութիւնը յառաջ բերելու:

«Բայց ես ճշմարիտը կ'ըսեմ՝ ձեզի, Աղէկ է ձեզի եթէ երթամ. քանզի եթէ ես չերթամ, Միտարիչը ձեզի չի գար. հասցաւ եթէ երթամ, դանիկա ձեզի կը զրկեմ: Եւ ինքք երբ գայ՝ առխարիք պիտի յանդիմանէ մեզքի համար և արդարութեան համար ու դատաստանի համար» Յովհ. ԺԳ. 7, 8:

8. Բուն ապաշխարութիւնը ի՞նչ յառաջ կը բերէ:

«Ուրեմն ապաշխարութեան արժանաւոր պտուղ բերէք» Մատ. Գ. 8:

9. «Ապաշխարութեան արժանաւոր պտուղ»ները որո՞նք են:

«Լուսացուեցէ՛ք, մտքբուեցէ՛ք, իմ աչքերուս առջեւէն ձեր չար գործերը մէկդի՛ բրէք, չարութիւն գործելէն դադարեցէ՛ք, բարութի՛ւն ընել ստուգեցէ՛ք, իրաւունքը փնտռեցէ՛ք, գրկուածին ուղղութի՛ւն բրէք, որքին դա-



առասանը «եսէ՛ք ու որբեւայրիին դասը պաշտպանեցէ՛ք»։ Ես. Ա. 46, 47։

10. Ամբարշտութենէ դառնալով, ապաշխարող մեղաւորը ի՞նչ պէտք է ընէ՝ որքան որ կարելի է։  
«Ու երբ ամբարշտին ըսեմ՝ թէ Գուն անշուշտ պիտի մեռնիս, ու անիկա իր մեղքէն դառնայ և իրաւունք ու արդարութիւն ընէ. ան ամբարիճսր գրաւը ետ առնալ ու յափճակածը հասուցանէ, և անօրէնութիւն չընելով՝ կենաց կանոններուն համեմատ փալէ, անիկա անշուշտ պիտի ապրի, պիտի չմեռնի»։ Եղեկ. ԼԳ. 44, 45։
11. Այսպիսի ի՞նչ օրինակ կը գտնենք Քրիստոսի օրով։  
«Եւ Զաքէոս կայնեցաւ ու ըսաւ Տէրս՛ը, Տէ՛ր՝ ահա՛ իմ ունեցածիս կէտը աղքատներուն կուտամ, ու եթէ գրպարտութեամբ մէկու մը զրկանք ըրած եմ, չորեքպատիկ կը հատուցանեմ անոր»։ Ղուկ. ԺԹ. 8։
12. Երբ Զաքէոս իր դիտաւորութիւնը յայտնեց, Տէրը ի՞նչ ըսաւ անոր։  
«Եւ Յիսուս ըսաւ անոր. Այսօր այս տանը փրկութիւն եղաւ. քանզի ասիկա ալ Արարչամի որդի է։ Այսան զի Որդին մարդոց եկաւ որ կորսուածը փնտռէ ու փրկէ»։ Ղուկ. ԺԹ. 9, 10։
13. Ի՞նչ տեսակ տրտմութիւն պարտինք զգալ մեր մեղքերուն համար։  
«Արդ՝ ուրախ եմ, չէ՛ թէ՛ որ արամեցաք, այլ՝ որ ապաշխարութեան համար երամեցաք. որովհետեւ դուք Աստուծոյ ուղածին պէս արամեցաք.։ Քանզի Աստուծոյուզածին պէս եղած երամութիւնը փրկութեան համար ապաշխարութիւն կը գործէ, որ զզջանալու բան չէ. բայց աշխարհի արամութիւնը մահ կը գործէ»։ Բ. կոր. Է. 9, 10։
14. Ի՞նչ բան կարեւոր է դարձեալ՝ նախ քան որ Տէրը մեր մեղքերը ներէ։  
«Եթէ խոստովանիմք մեղքերնիս, և հաւատարիմ ու արդար է Անիկա մեր մեղքերուն թողութիւն տալու, և մեզ բոլոր անիրաւութենէ սրբելու»։ Ա. Յովհ. Ա. 9։
15. Ի՞նչ ո՞ւր մաքսաւորը իր տունը դարձաւ արդարացած, մինչ Փարիսեցին ոչ։

«Երկու մարդ ելան տաճարը աղօթք ընելու, մէկը փարիսեցի ու միւսը մաքսաւոր: Փարիսեցին կայներ էր, ու առանձին այսպէս աղօթք կ'ընէր. Ո՛վ Աստուած՝ շնորհակալ եմ Քեզմէ, որ ուրիշ մարդոց պէս չեմ, յափշտակող՝ անիրաւ՝ շնացող, և կամ այս մաքսաւորին պէս. այլ շարաթը երկու անգամ ծոմ կը պահեմ, ու բոլոր ստացուածքիս տասանորդը կուտամ: Եւ մաքսաւորը հեռուն կայներ էր, ու չէր ուղեր աչքն ալ երկինքը վերցընել, այլ իր կուրծքը ծեծելով կ'ըսէր. Աստուած՝ ողորմէ՛ ինձի մեղաւորիս: Զեղի կ'ըսեմ թէ ասիկա այն միւսէն աւելի արգարացած իր տունը իջաւ. վասն զի ո՛վ որ իր անձը կը բարձրացնէ, պիտի խոնարհի. եւ ո՛վ որ իր անձը կը խոնարհեցնէ, պիտի բարձրանայ:» Գուկ. ԺԸ. 40—44:

16. Ի՞նչ յարաբերութիւն կայ՝ մարմնաւոր, չվերածնած սրտին՝ և Աստուծոյ օրէնքին միջև:

«Քանզի մարմնաւոր խորհուրդը Աստուծոյ գէմ՝ թշնամութիւն է. որովհետեւ Աստուծոյ օրէնքին չի հնազանդիր, մանաւանդ չի կրնար ալ:» Հռովմ. Ը. 7:

17. Դարձի եկած մարդը ի՞նչ դիրք կ'առնէ:

«Վասն զի ներսի մարդուն նայելով՝ Աստուծոյ օրէնքին կը հաւնիմ:» Հռովմ. Է. 22: «Երանելի է այն մարդը որ ամբարիշտներուն խորհուրդին մէջ չի քայլեր, ու մեղաւորներուն ծամբուն մէջ չի կենար, և ծաղր ընողներուն նստած տեղը չի նստիր. այլ անոր հանութիւնը Աստուծոյ օրէնքին մէջ է, եւ ցորեկ ու գիշեր Անոր օրէնքին վրայ կը մտածէ:» «Նսեւ Քու ծառագ անոնցմով կը խրատուի, ու զանոնք պահելուն վարձքը շատ է:» Սողմ. Ա. 1, 2, ԺԹ. 44:

18. Ի՞նչ պէտք է տեղի ունենայ՝ նախ քան որ այդպիսի հրաշալի փոփոխութիւն մը կարենայ յառաջ գալ:

«Ես ալ առանց օրէնքի տան մը կենդանի էի. բայց երբ պատիրանքը վրաս հասաւ, մեղքը ողջնցաւ, եւ ես մեռայ. ու այն պատիրանքը որ կենաց համար էր, նոյնը ինձի մահուան համար եղաւ:» «Այս գիտնոնք որ մեր հին մարդը Անոր հետ խաչուեցաւ, որ մեղաց մարմինը փնանայ, որ ասկէ ետեւ մեղքի չձառայենք:» Հռովմ. Է. 9, 40. Զ. 6:

19. Մեղաւորը ի՞նչպէս կ'առնէ մեղաց թողութիւնը:

«Անոր կը վկայեն բոլոր մարգարէները թէ՛ ամէն Իրեն հա-

ւատացողները Իր անունովը մեղաց բողոքիւն կ'առնեն:» Գործք Ժ. 43:

20. Բաց ի ապաշխարութենէ՞ ի՞նչ բան կարելոր է:  
«Վկայութիւն տալով շրէից և Յունաց առջև՝ գէպի Աստուած ապաշխարութեան համար, ու մեր Տէր Յիսուս Քրիստոսի վրայ եղած հաւատքին համար:» Գործք Ի. 24:
21. Որո՞ւ զաւակները կը դառնանք հաւատքով:  
«Քանզի ամէնքդ ալ Աստուծոյ որդիք է՞ք՝ Քրիստոս Յիսուսի վրայ եղած հաւատքով:» Գաղ. Գ. 26: «Տեսէ՞ք Հայրը ինչպի՛սի սէր շնորհեց մեզի, որ մենք Աստուծոյ որդիք ըսուինք. ասոր համար աշխարհ մեզ չի ճանչնար, քանզի զԱնիկա ալ չճանչցաւ: Սիբիլներ՝ հիմա մենք Աստուծոյ որդիքն ենք, և տակաւին յայտնի չէ թէ ի՞նչ պիտի ըլլանք. բայց գիտենք որ երբ Անիկա յայտնուի, Անոր պէս պիտի ըլլանք. վասն զի զԱնիկա պիտի տեսնենք ինչպէս որ է:» Ա. Յովհ. Գ. 1, 2:
22. Տէրը ինչո՞վ կը լուայ մեզ մեր մեղքերէն:  
«... Անոր որ մեզ սիրեց, ու մեզ Իր արիւնովը մեր մեղքերէն լուաց:» Յայտ. Ա. 5:
23. Ո՞րքան մաքուր կ'ընէ մեզ:  
«Հիմա եկէ՛ք զի ճարտնիք, կ'ըսէ Տէրը. եթէ ձեր մեղքերը կրկնակի կարմիրի պէս են, ձիւնի պէս պիտի ներմկնան. և թէ որ որդան կարմիրի նման են, ասի պէս պիտի ըլլան:» Ես. Ա. 48:
24. Ասով՝ ի՞նչ կը դառնանք:  
«Ուրեմն եթէ մէկը Քրիստոսի մէջ է, անիկա նոր ստեղծուած մըն է. հիները անցան, և ահա՛ ամէն բան նոր եղաւ:» Բ. կոր. Ե. 17:
25. Մեր Փրկիչը ինչի՞ հետ կը բաղդատէ այս փորձառութիւնը:  
«Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ՝ քեզի, եթէ մէկ մարդ մը նորէն չծնանի, չի կրնար Աստուծոյ բազաւորութիւնը տեսնել: ... Դուն մի՛ զարմանար որ քեզի ըսի, պէտք է ձեզի նորէն ծնանիլ:» Յովհ. Գ. 3, 7:
26. Փրկարար զօրութիւնը ո՞ւրկէ կուգայ:



«Ես ամօթ չեմ սեպեր Աւետարանը, վասն զի Աստուծոյ գորութիւնն է ան բոլոր հաւատացեալներուն փրկութեանը համար, առաջ Հրեային ու ետքը Յոյնին» Հռովմ. Ա. 16:

«Ես որքն եմ ու դուք ճիւղերն էք. ան որ Իմ վրաս հաստատուած է՝ և ես անոր վրայ, անիկա շատ պատու կը բերէ, քան զի առանց Ինձի բան մը չէք կրնար ընել:» Յովհ. ԺԵ. 15:

27. Ս. Հոգին ի՞նչ կը սիրուէ մեր սրտերուն մէջ:

«... Քանզի Աստուծոյ սէրը մեր սրտերուն մէջ տարածուած է Հոգւոյն Սրբոյ ձեռնովը, որ մեզի տրուեցաւ:» Հռովմ. Ե. 5:

28. Ի՞նչ է սէրը:

«Սէրը ընկերին դէշուածիւն չընէր. ուրեմն օրէնքին լրումը սէր է:» Հռովմ. ԺԳ. 10:

29. Այսպէս՝ բո՛ւն ապաշխարութիւնը ի՞նչ յառաջ կը բերէ:

«Եւ դուն քու Տէր Աստուծոյդ դասնաս, և բոլոր սրտովդ ու բոլոր հոգիովդ Անոր խօսքին հնազանդիս՝ թէ՛ դուն և թէ՛ քու որդիքդ: Եւ դուն պիտի դառնաս, ու Տէրոջը խօսքին հնազանդիս, ու կատարես Անոր բոլոր պատիրանքները, զորոնք ես այսօր քեզի կը պատուիրեմ:» Թ. 0ր. Լ. 2, 8:

30. Ի՞նչ է նոր կտակարանին վառաւոր խոստմունքը:

«Քանզի այս է այն ուխտը՝ զոր Խորայէլի տանը հետ պիտի ընեմ այն օրերէն ետքը՝ կ'ըսէ Տէրը. Իմ օրէնքներս անոնց միտքին մէջ պիտի դնեմ, եւ անոնց սրտին վրայ պիտի գրեմ զանոնք, ու Ես անոնց Աստուած պիտի ըլլամ, եւ անոնք Ինձի ժողովուրդ պիտի ըլլան:» Երբ. Ը. 10:

31. Ուստի, Տէրոջը Հոգին ի՞նչ տեսակ ժողովուրդ կ'ընէ մեզ՝ դարձի միջոցաւ:

«Ես ձեզի նոր սիրտ պիտի տամ, ու ձեր ներսիդին նոր հոգի պիտի դնեմ, և ձեր մարմիններէն քարեղէն սիրտը պիտի հանեմ, ու ձեզի մարմնեղէն սիրտ պիտի տամ. և Իմ Հոգիս ձեր ներսիդին պիտի դնեմ, ու ձեզի Իմ օրէնքներու մէջ փախել պիտի տամ, ու Իմ իրաւունքներս պիտի պահէք ու ի գործ դնէք:» Եզեկ. ԼԶ. 26, 27:

ԱՍՏՈՒԾՈՅ ՕՐԷՆՔԸ

1. Ի՞նչ է Աստուծոյ ամոսին հիմը :  
«Արդարութիւնը ու իրաւունքը Քու արողից հիմն են, ողորմութիւնը ու ճշմարտութիւնը Քու երեսիդ առջեւէն կ'երթան» Սաղմ. 2Թ. 44:
2. Ուստի Սաղմոսերգուն ի՞նչ կ'ըսէ Փրկչին համար :  
«Այն ժամանակ ըսի թէ Ահա՛ կուգամ ես. գիւրջի տոմսի մէջ Ինծի համար գրուած է, Ո՛վ իմ Աստուածս՝ Քու կամփղ կասարելու փափաքեցայ, ու Քու օրէնցի Իմ ներսիցիս է: Արդարութիւն քարոզեցի շատուր ժողովքի մէջ. ահա՛ շրթունքներս շարգիլեցի. ո՛վ Տէր՝ Գուն գիտես» Սաղմ. Խ. 7—9: «Անոր համար իր աշխարհ մտնելու ատենը կ'ըսէ, Ձո՛հ ու ընծայ չուզեցիր Գուն, այլ Ինծի մարմին մը պատրաստեցիր. ողջակէզներու ու մեղքի պատարագներու չհաւնեցար: Այն ատեն ըսի. (Ահա՛ կուգամ ես, գիւրջի տոմսի մէջ Ինծի համար գրուած է.) Քու կամփղ ընելու՝ ո՛վ Աստուած:» Եբր. Ժ. 5—7:
3. Աստուած մարդը որ՞ու պատկերովը ստեղծեց :  
«Եւ Աստուած Իր պատկերովը ստեղծեց մարդը, Աստուծոյ պատկերովը ստեղծեց զանիկա. արու և էգ ստեղծեց զանոնք» Ծն. Ա. 27:
4. Ի՞նչ ըսուած է մարդուն վրայօք՝ այն ատեն երբ Աստուծոյ օրէնքն ունէր իր սրտին մէջ :  
«Եւ Աստուած Իր ամէն ըրածը տեսաւ, և ահա՛ ցաւ բարի էր» Ծն. Ա. 31:
5. Որո՞նց սրտերուն մէջ՝ նոյն իսկ մինչև այսօր՝ դեռ Աստուծոյ օրէնքին մէկ մասը կայ :  
«Քանզի հեթանոսները որ օրէնք չունին՝ երբ ընկանտարար օրէնքին գործքերը կը գործեն, օրէնք չունենալով՝ իրենց անձեռու օրէնքը բուն իրենք կ'ըլլան, որ օրէնքին գործքը իրենց սրտերուն մէջ գրուած կը ցուցնեն իրենց խղճին վկայութեամբը, եւ իրենց խոհուրդներուն իբր յանդիմանելովը:» Հոսովմ. Բ. 44, 45:

6. Ո՞ւր կէ կուգայ մեղքին ճանաչումը :

«Ուրեմն ի՞նչ ըսենք. օրէնքը մե՞ղք է. քա՛ւ լիցի. բայց ես մեղքը չէի նախնար, եթէ ոչ օրէնքով. ինչպէս ցանկութիւնն ալ չէի գիտեր, եթէ օրէնքը ըսած չըլլար, Մի՛ ցանկար:» Հռովմ. Է. 7:

7. Հետեւապէս՝ ի՞նչ է մեղքը :

«Ամէն ս՛՛վ որ մեղք կը գործէ, անիկա անօրէնութիւնն ալ կը գործէ, և բուն մեղքը անօրէնութիւնն է:» Ա. Յովհ. Գ. 4.

8. Ի՞նչ է մեղաց վարձքը :

«Քանզի մեղաց վարձքը մահ է, բայց Աստուծոյ ձրի պարգեւը յաւիտենական կեանք՝ մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի ձեռքովը:» Հռովմ. Զ. 23:

9. Մեղքը ո՞րքան կանուխէն կ'երեւայ :

«Եւ Տէր Աստուծոյ ըրած դաշտի բոլոր գազաններէն աւելի խորամանկ էր օձը. ու կնկանը ըսաւ, 'Իրաւ Աստուած ըսա՞ւ թէ Պարտէզին ամէն ծառէն պիտի չուտէք:՝ Եւ կնիկը օձին ըսաւ, 'Պարտէզին ծառերուն պտուղէն կ'ուտենք, բայց պարտէզին մէջտեղը եղած ծառին պտուղէն՝ Աստուած ըսաւ, «Անկէ մի՛ ուտէք, և անոր մի՛ դպչիք, որ չմեռնիք:՝ Եւ օձը կնկանը ըսաւ, 'Չէ՛ թէ անշուշտ պիտի մեռնիք, քանզի Աստուած գիտէ թէ այն օրը որ անկէ ուտէք, աչքերնիդ պիտի բացուին, և աստուածներու պէս պիտի ըլլաք՝ բարին ու չարը գիտնալով:՝ Եւ կնիկը տեսնելով որ ծառը աղէկ էր կերակուրի համար, եւ հանելի՛ աջեբռուն, ու փափափելի՛ խմստուն ընելու համար, առաւ անոր պտուղէն ու կերաւ, եւ իրենց հետ իր էրկանն ալ տուաւ, եւ անիկա կերաւ: Ու անոց երկուքին աջեբեր բացուեցան, ու մերկ ըլլալն ինչ գիտցան. և թղնիի տերեւներ կտրեցին, ու իրենց ծածկոցներ ըրին: Եւ օրուան զով տանը պարտէզին մէջ պտրտող Տէր Աստուծոյ ձայնը լսեցին. և Ադամ՝ ու իր կնիկը Տէր Աստուծոյ երեսէն պարտէզին ծառերուն մէջ պահուեցան: Եւ Տէր Աստուած Ադամը կանչեց ու ըսաւ անոր, 'Ո՞ւր ես': Եւ անիկա ըսաւ, 'Պարտէզին մէջ Քու ձայնդ լսեցի, ու վախցայ, քանզի մերկ էի, ու պահուեցայ:՝ Եւ Աստուած ըսաւ, 'Ո՞վ պատմեց Քեզի քու մերկ ըլլալդ. արդեօր կերա՞ր այն ծառէն՝ որուն ճամար քեզի պատու իրեցի որ անկէ չուտես:՝ Եւ Ադամ՝ ըսաւ, 'Ան կնիկը զոր ինծի հետ ըլլալու տուիր, ան ինծի տուաւ ծառէն,



ու ես կերայ՝ Եւ Տէր Աստուած ըսաւ կնկանը, 'Ի՞նչ է այս քու բրածդ'. և կնկիր ըսաւ, 'Օձը զիս խաբեց, ու ես կերայ': Եւ Տէր Աստուած օձին ըսաւ, 'Չայս ընելուդ համար՝ ամէն անասուններէն և դաշտին ամէն գաղաններէն անիծեալ ըլլաս. փորիդ վրայ քալես, ու կենացդ բոլոր օրերը հող ուտես Եւ քու կին ու կնկանը մէջտեղը, և քու սերունդիդ ու անոր սերունդին մէջտեղը թշնամութիւն պիտի դնեմ. ան քու գլուխդ պիտի ջանջախէ, և դուն անոր գարշապարը պիտի խայթես': Եւ կրնկանը ըսաւ, 'Քու յղութեանդ ցաւերը խիստ պիտի շատցնեմ. ցաւով զաւակ ծնանիս, ու էրկանդ հնազանդ ըլլաս, ու անիկա քու վրայ իշխէ': Եւ Ադամին ըսաւ, 'Որովհետեւ դուն քու կնկանդ խօսքը մտիկ ըրիր, և այն ծառէն կերար, որուն համար պատուիրեցի քեզի՝ ըսելով, Չուտես անկէ, երկիրը քու պատճառով անիծեալ ըլլայ. կենացդ բոլոր օրերուն մէջ նեղութիւնով ուտես անկէ, և փուշ ու տատակ բուսցնէ քեզի, և դաշտին խօսք ուտես Երեսիդ քրտինքովը ուտես քու հացդ, մինչև գետինը դառնալդ, ուրկէ աւանուեցար. քանզի հող էիր դուն, ու հողին պիտի դառնաս':

«... Եւ Տէր Աստուած ըսաւ, 'Ահա՛ Ադամ՝ մեղով մէկուն պէս եղաւ՝ բարին ու չարը գիտնալու, և հիմա չըլլայ որ իր ձեռքը երկնցնէ, ու կենաց ծառէն ալ առնէ, և ուտէ ու յաւիտեան ապրի'. ուստի Տէր Աստուած Եդեմի պարտէղէն դուրս ըրաւ զանիկա, որ երկիրը գործէ, ուսկից որ աւանուեցաւ Այսպէս՝ վաճառեց Ադամը. ու Եդեմի պարտէղին արեւելեան կողմէն քերովրէները ու ամէն կողմ՝ դարձող բոցեղէն սուրբ գրաւ, կենաց ծառին ճամբան պահելու համար:» ԾՆ. Գ: «Վասն զի ինչպէս որ մէկ մարդէ մը մեղքը աօխարհ մտաւ, և այն մեղքէն մահը, և այնպէս ամէն մարդոց վրայ տարածուեցաւ մահը, քանզի ամէնքը մեղանչեցին:» Հոովմ. Ե. 12:

10. Մեղք կա՞յ հո՞ն ուր օրէնք չկայ :

«Վասն զի օրէնքը բարկութիւն կը գործէ. քանզի ո՛ւր որ օրէնք չկայ, օրինազանցութիւն ալ չկայ:» Հոովմ. Գ. 15:

11. Ուստի, ակիրդէն ի՞նչ կար մարդուն սրտին մէջ. — Արդարութեան օրէնքը :

12. Հաւատացեալ Արրահամ արդէն պահե՞ց Աստուծոյ օրէնքը :

«Քանզի Արրահամ իմ ձայնիս ահանջ դրաւ, և Իմ հրաման-

Գերս ու պատուիրանցներս, Իմ կանոններս ու օրէնքներս պահեց:» Ծն. ԻԶ. 5:

13. Ի՞նչ բանի մէջ Տէրը փորձեց զԻսրայէլ՝ նոյն իսկ Սինայէն առաջ:

«Եւ Տէրը ըսաւ Մովսէսին, 'Ահա՛ Ես ձեզի երկիրքէն հաց պիտի տեղամ', և ժողովուրդը պիտի ելլէ ու օրէ օր ժողովէ ամէն մէկ օրուան պէտք եղածը, որ փորձեմ զանոնք՝ թէ Իմ օրէնքիս համեմատ պիտի փախնուի թէ ոչ':» Ել. ԺԶ. 4:

14. Տէրը ի՞նչ պատուիրանքներ յայտարարեց Սինայի վրայ:

«Ես եմ՝ Եհովա քու Աստուածդ՝ որ քեզ եզրիպտոսի երկրէն՝ ծառայութեան տունէն հանեցիս:

«Ինձմէ զատ ուրիշ Աստուածներ չունենաս:

«Իսկն քեզի կուռք չընենս, ո՛չ ալ վերը երկինքի մէջ՝ կամ վարը երկրի վրայ, կամ երկրին տակի ջուրերուն մէջ եղած բաներուն մէկ նմանութիւնը. անոնց երկրպագութիւն չընես, ու զանոնք չպաշտես. քանզի Ես քու Տէր Աստուածդ նախանձոտ Աստուած եմ, որ կը հատուցանեմ հայրերուն անօրէնութիւնը որդւոցը վրայ՝ մինչև անոնց երրորդ ու չորրորդ ազգը՝ որ կ'ատեն զԻս. և կողորմիմ անոնց մինչև հազար ազգը՝ որ կը սիրեն զԻս ու Իմ պատուիրանքներս կը պահեն:

«Տէրոջը քու Աստուծոյդ անունը պարտապ տեղը բերանդ չառնես. քանզի Տէրը Իր անունը պարտապ տեղը բերան առնողը անմեղ պիտի չտեպէ:

«Հանգստութեան օրը մի՛ տքդ բեր՝ զանիկա սուրբ պահելու համար: Վեց օր պիտի աշխատիս ու բոլոր գործդ ընես. բայց եօթներորդօրը Տէրոջը քու Աստուծոյդ հանգստութեան օրն է. այն օրը գործ մը պիտի չգործես, ո՛չ դուն, ո՛չ քու որդիդ՝ ո՛չ քու ազգիկդ՝ ո՛չ քու ծառագ ու աղախինդ՝ ո՛չ քու անասունդ՝ ո՛չ ալ տանդ մէջ եղած օտարականդ. քանզի Տէրը վեց օրուան մէջ ըրաւ երկինքը ու երկիրը, ծովը ու բոլոր անոնց մէջ եղածները, և եօթներորդ օրը հանգստացաւ. անոր համար Տէրը օրհանեց հանգստութեան օրը ու սրբեց զանիկա:

«Պատուէ՛ քու հայրդ ու մայրդ, որ քու օրերդ երկար ըլլան այն երկրին վրայ զոր քու Տէր Աստուածդ կուտայ քեզի:

«Սպանութիւն մի՛ ըներ:

«Շնուութիւն մի՛ ըներ:

«Գողութիւն մի՛ ըներ:

«Քու գրացիիդ դէմ սուտ վկայութիւն մի՛ ըներ:

«Քու գրացիիդ տանը մի՛ ցանկար. քու գրացիիդ կնկանը՝ կամ անոր ծառային՝ կամ անոր ազախինին՝ կամ անոր եզին՝ կամ անոր իշուէն՝ և քու գրացիիդ ամենեւին մէկ բանին մի՛ ցանկար:» Եւ. Ի. 2—17:

15. Տէրը ի՞նչ միայն գրեց՝ Ի՛ր իսկ մատովը:

«Եւ երբ Սինա լեռանը վրայ Մովսէսի հետ խօսիլը լնցուց, վկայութեան երկու տախտակները տուաւ անոր, Ասուծոյ մասովը գրուած քաղ ճախակներ:» Եւ. ԼԱ. 18:

16. Այս պատուիրանքները ո՞րքան մօտ էին Իսրայէլի՞ երբ անոնք կը հաւատային:

«Քանզի այս պատուիրանքը զոր Եսայոր քեզի կը պատուիրեմ, քեզի անիմանալի չէ, ու քեզմէ հեռու ալ չէ: Անիկա երկինքը չէ՛, որ ըսես թէ՛ Մեզի համար ո՞վ պիտի ելլէ երկինքը, և անիկա մեզի պիտի բերէ որ լսենք ու ընենք՝: Եւ զանիկա ծովուն անդիլի կողմն ալ չէ, որ ըսես թէ՛ Մեզի համար ծովուն անդիլի կողմը ո՞վ պիտի անցնի, ու զանիկա մեզի պիտի բերէ որ լսենք ու ընենք՝. Բանզի այս խօսքը քեզի ցառ մօտ է, քու բերնիդ ու սրտիդ մէջն է, որ դուն զանիկա կատարես:» Բ. Օր. Լ. 11—14:

17. Պօղոս առաքեալ ի՞նչպէս կը խօսի պատուիրանքին մօտ ըլլալուն մասին:

«Բայց հաւատքէն եղած արդարութիւնը այսպէս կ'ըսէ, Մի՛ ըսեր քու սրտիդ մէջ, ո՞վ պիտի ելլէ երկինքը, (այսինքն Քրիստոսը իջեցնելու.) կամ թէ ո՞վ պիտի իջնէ անդունդը, (այսինքն Քրիստոսը մեռելներէն հանելու.) այլ ի՞նչ կ'ըսէ, Խօսքը մօտ է, քու բերնիդ մէջը, և քու սրտիդ մէջն է՛, այսինքն հաւատքին խօսքը զոր մենք կը քարոզենք: Հռովմ. Ժ. 6—8:

18. Իսրայէլ ինչո՞ւ չէր կրնար հասնիլ օրէնքին արդարութեանը:

«Բայց Իսրայէլ որ արդարութեան օրէնքին կը հետեւէր, արդարութեան օրէնքին չհասաւ ինչո՞ւ համար. վասն զի չէրէ հաւատքէն, այլ որպէս թէ օրինաց գործներէն ուզեց արդարանալ. քանզի գայթակղութեան վէմին վրայ գլորեցան. ինչպէս որ գրուած է, Վհա՛ Սիօնի մէջ գայթակղութեան քար մը կը դնեմ, գլորելու վէմ մը. և ամէն ո՞վ որ անոր հաւատայ՝ պիտի չամչնայ:» Հռովմ. Թ. 31—33:



19. Հայրը ի՞նչ կ'ըսէ իր Որդւոյն վրայօք :

«Սակայն Որդիին կ'ըսէ, 'Քու աթոռք' ո՛վ Աստուած՝, յաւիտեանս յաւիտենից է. Քու թագաւորութեանդ գաւազանը ուղղութեան գաւազանն է. արդարութիւնը սիրեցիր ու անօրէնութիւնը ատեցիր. անոր համար՝ ո՛վ Աստուած՝ Քու Աստուածդ ուրախութեան իւղով օծեց Քեզ Քու ընկերներէդ աւելի՞» Եբր. Ա. 8, 9:

20. Փրկչին դիրքը ի՞նչ պիտի ըլլար՝ Աստուծոյ օրէնքին հանդէպ :

«Ահա՛ իմ Ծառաս՝ որուն ձեռնտու պիտի ըլլամ, ու իմ Ընտրածս՝ որուն իմ սիրտս հաւնեցաւ. իմ Հոգիս Անոր վրայ դրի. Անիկա ազգերուն իրաւունք պիտի հանէ...: Զախջախած եղէգը պիտի չփշրէ, ու պլլլամծ պատրոյգը պիտի չմարէ. իրաւունքը ճշմարտութեան պիտի հանէ...: Տէրը իր արդարութեանը համար Անոր հաճեցաւ, Իր օրէնքը մեծցուց ու փառաւորեց:» Ես. ԽԲ. 4, 3, 21:

21. Ի՞նչ նկատու՞մով նոր ուխտը հինէն բարձր պէտք է ըլլայ :

«Ահա՛ օրեր կուգան՝ կ'ըսէ Տէրը, որ Իսրայէլի տանը հետ նոր ուխտ պիտի ընեմ, չէ՛ թէ այն ուխտին պէս՝ զոր անոնց հայրերուն հետ ըրի այն օրը որ անոնց ձեռքէն բռնեցի՝ զանոնք Եզրպատսի երկրէն հանելու համար. բանգի անոնք իմ ուխտս զանց ըրին, Ես ալ զանոնք մերժեցի, կ'ըսէ Տէրը. հապա այն օրերէն ետք, Իսրայէլի տանը հետ ընելու ուխտս ասիկա է, կ'ըսէ Տէրը, Իմ օրէնքս անոնց ներսից պիտի դնեմ, ու զանիկա անոնց սրտին վրայ պիտի գրեմ, ու ես անոնց Աստուած պիտի ըլլամ, եւ անոնք Ինձի ժողովուրդ պիտի ըլլան:» Եբրեմ. ԼԱ. 31 - 33:

22. Տէրը ի՞նչ նպատակի համար կը խոստանայ իր Հոգին :

«Եւ անոնց մէկ սիրտ պիտի տամ, ու անոնց ներսիցին նոր հոգի պիտի դնեմ. և անոնց մարմինէն քարեղէն սիրտը պիտի հանեմ, ու անոնց մարմնեղէն սիրտ պիտի տամ. սրպէս զի Իմ օրէնքներուս մէջ փայլեն, ու Իմ իրաւունքներս պահեն, ու զանոնք ի գործ դնեն, եւ անոնք Ինձի ժողովուրդ ըլլան, Ես ալ անոնց Աստուած ըլլամ:» Եզ. ԺԱ. 49, 20:

23. Ո՞րքան ատեն՝ օրէնքին նոյն իսկ ամենէն պզտիկ յովտը կամ նշանագիրը պիտի մնայ :
- «Մի՛ կարծէք թէ ես եկայ օրէնքը կամ մարգարէները ւարելու. չեկայ ւարելու, այլ կատարելու: Քանզի ճշմարտապէս կ'ըսեմ ձեզի, «Մինչեւ որ երկինք ու երկիր անցնին, օրէնքէն յովս մը կամ նշանագիր մը պիտի չանցնի, մինչեւ որ բոլորն ալ կատարուի»:» Մատ. Ե. 17, 18:
24. Տէրը ի՞նչ կը յայտարարէ՞ յաւիտենական կեանքը մտնելու պայմանին նկատմամբ :
- «Եւ Անիկա ըսաւ անոր... «Հապա երէ կ'ուզես կեանք մտնել, պատուիրանքները պահէ:» Մատ. ԺԹ. 17:
25. Նոր Ուխտին փառաւոր խոստումն ի՞նչ է :
- «Քանզի այս է այն ուխտը՝ զոր Խրայէլի տանը հետ պիտի ընեմ այն օրերէն ետքը, կ'ըսէ Տէրը. Իմ օրէնքներս անոց միտքին մէջ պիտի դնեմ, եւ անոց սրտին վրայ պիտի գրեմ զանոնք, ու ես անոց Ասուած պիտի ըլլամ, եւ անոնք Ինձի ժողովուրդ պիտի ըլլան:» Երբ. Ը. 10:
26. Հետեւաբար՝ հաւատքը կը խափանէ՞ օրէնքը, թէ կը հաստատէ զայն :
- «Ուստի մենք հաւատքով օրէնքը կը խափանե՞նք. քա՛ւ լեցի, այլ օրէնք կը հաստատենք:» Հռովմ. Գ. 34:
27. Դաւիթ ի՞նչ կ'ըսէ Աստուծոյ օրէնքին նկատմամբ :
- «Տէրոջը օրէնքը կատարեալ է, հոգին կը նորոգէ. Տէրոջը վկայութիւնը ճշմարիտ է, տգէտը իմաստուն կ'ընէ:» Սաղմ. ԺԹ. 7:
28. Պօղոս առաքեալ ի՞նչպէս կը հաստատէ զայս :
- «Ուստի օրէնք սուր է, ու պատուիրանք սուր եւ արդար ու բարի... վասն զի դիտենք որ օրէնքը հոգեւոր է, բայց ես մարմնաւոր եմ մեղքի տակ ծախուած:» Հռովմ. Է. 12, 14:
29. Ի՞նչպէս կը յայտնենք մեր սէրն առ Աստուած :
- «Քանզի ասիկա է Ասուածոյ սէրը, որ Անոր պատուիրանքները պահենք. և Անոր կատարանքները ծանր բան չեն:» Ա. Յովհ. Ե. 3:

30. Ի՞նչ խոստում եղած է անոնց որ կը պահեն Աստուծոյ պատուիրանքները :
- «Երանելի են անոնք՝ որ Անոր պատուիրանքները կը կատարեն, որ ի իշխանութիւն ունենան կենաց ծառին վրայ, եւ դռներէն ներս բազաբը մտնեն:» Յայտ. ԻԲ. 14:
31. Ի՞նչ բան կ'որոշէ զանոնք որ իրենց Տէրօջը երկրորդ գալուստին կը սպասեն :
- «Հոս է սուրբերուն համբերութիւնը, որոնք Աստուծոյ պատուիրանքները ու Յիսուսի հաւատքը կը պահեն:» Յայտ. ԺԴ. 12:
32. Նոր երկրին ամէնէն փառաւոր հանգամանքն ի՞նչ է :
- «Սակայն իր խոստմանքին համեմատ նոր երկրներ մը ու նոր երկրի մը կը սպասենք, որոնց մէջ արդարութիւն կը բնակի:» Ա. Պետ. Գ. 13:
-



## ԵՐԿՈՒ ՕՐԷՆՔՆԵՐԸ

### 1. Ի՞նչ է Աստուծոյ գլխաւոր յատկանիշը :

«Սի՛րելիներ՝ մէկզմէկ սիրենք, քանզի սերը Աստուծմէ է. ու ամէն ո՛վ որ կը սիրէ, Աստուծմէ ծնած է, ու կը ճանչնայ զԱստուած: Ան որ չի սիրեր, զԱստուած չի ճանչնար. վասն զի Աստուած սէր է:» Ա. Յովհ. Գ. 7, 8:

### 2. Ուստի, ո՞ր երկու սկզբունքներուն մէջ համառոտուած են Անոր տասը պատուիրանքները :

«Եւ անոնցմէ մէկը՝ օրինական մը, հարցուց, զկնիկա փորձելով, ու ըսաւ, Վա՛րդապետ՝ ո՞ր պատուիրանքը մեծ է օրէնքին մէջ: Եւ Յիսուս ըսաւ անոր, «Քու Տէր Աստուածդ սիրես քու բոլոր սրտովդ եւ քու բոլոր անձովդ ու քու բոլոր մտքովդ. այս է առաջին ու մեծ պատուիրանքը: Ու երկրորդը ասոր նման՝ քու ընկերդ սիրես քու անձիդ պէս: Այս երկու պատուիրանքէս կախուած են բոլոր օրէնքը եւ մարգարէները:» Մատ. ԻԲ. 35—40:

### 3. Որո՞ւ սրտին մէջ սիրոյ օրէնքը կար սկիզբէն :

«Զո՛հի ու ընծայի չհաւնեցար, այլ Իմ՝ ականջներս բացիր. ողջակէզ ու մեղքի պատարագ չպահանջեցիր: Այն ժամանակ ըսի թէ՛ Վհա՛ կուգամ՝ ես. գիրքի տամբի մէջ Ինծի համար գրուած է, Ո՛վ Իմ Աստուածս, Քու կամքդ կատարելու փափաքեցայ, և Քու օրէնքդ Իմ ներսիդիս է:» Սաղմ. Խ. 6—8:

«Անոր համար Իր աշխարհ մանելու ատենը կ'ըսէ, Չո՛հ ու ընծայ չուղեցիր Դուն, այլ Ինծի մարմին մը պատրաստեցիր. ողջակէզներու ու մեղքի պատարագներու չհաւնեցար: Այն ատեն ըսի, Վհա՛ կուգամ՝ ես, (գիրքի տամբի մէջ Ինծի համար գրուած է,) Քու կամքդ ընելու՝ ո՛վ Աստուած:» Եբր. Ժ. 5—7:

«Քանզի հեթանոսները որ օրէնք չունին՝ երբ ընականաբար օրէնքին գործքերը կը գործեն, օրէնք չունենալով՝ իրենց անձերուն օրէնքը բուն իրենք կ'ըլլան, որ օրէնքին գործքը իրենց սրտին մէջ գրուած կը ցուցնեն իրենց խղճին վկայու-

քեամբը, եւ իրենց խորհուրդներուն զիրար յանդիմանելովը՝ կամ իրաւունք տալովը:» Հռովմ. Բ. 14, 15. — Յիսուսի սրտին մէջ: Ըստ որում Ադամ Անոր պատկերին պէս ստեղծուած էր, օրէնքը իր սրտին մէջ էր հետեւարար, ինչպէս յատկօրէն կ'երեւայ այս օրէնքին հետքերէն՝ որ կը գտնուին հեթանոսաց սրտերուն մէջ, նոյն իսկ մինչև այսօր:

4. Հաւատքը ի՞նչպէ՞ս յայտնուեցաւ՝ մարդուն մեղանշելէն յետոյ:

«Հաւատեով Արէլ կայէնէն աւելի աղէկ զոհ մասուց Աստուծոյ, որ անով վկայուեցաւ արդար ըլլալը. քանզի իր պատարագներուն վրայ Աստուծմէ վկայութիւն եղաւ իրեն. և անով, թէպէտ մեռաւ, բայց տակաւին կը խօսի» Եբր. ԺԱ. 4:

5. Ի՞նչ պատարագներ կը պահանջուէին՝ իբր արդիւնք մեղքի:

«Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսելով. 'Թէ որ անձ մը մեղանշէ, ու Տէրոջը դէմ՝ յանցանք մը ընէ, ... իր յանցանքի պատարագը Տէրոջը պիտի բերէ, այսինքն հօտերէն անարատ խոյ մը՝ ... քահանային պիտի բերէ յանցանքի պատարագի համար: Եւ քահանան անոր համար քաւութիւն պիտի ընէ Տէրոջը առջեւը. և ի՛նչ բանի համար որ յանցանք ըրած է, թողութիւն պիտի ըլլայ» ան որ. Լև. տե՛ս Գև. 2:

6. Ի՞նչ բան պէտք էր՝ այս զոհերուն կատարմանը համար:

«Քանզի ամէն քահանայապետ պատարագներ ու զոհեր մասուցանելու համար որոշուած է. ուստի հարկ է որ Ասիկա ալ ըսն մը ունենայ մասուցանելու» Եբր. Բ. 3:

7. Ինչո՞ւ պատարագներու և քահանաներու ծիսական օրէնքը աւելցուած էր բարոյական օրէնքին վրայ:

«Հապա ինչո՞ւ համար է օրէնքը. յանցանաց համար վրայ աւելցաւ, (մինչև որ գոյ այն սերունդը՝ որուն խոստացուեր էր,) հրեշտակներով տրուած միջնորդի մը ձեռքով» Պատմ. Գ. 19:

8. Ուրիշ ի՞նչ պատուէր աւելցուած էր նոյն պատճառով:

«Եւ Աստուած ըսաւ Աբրահամին, Ուստի դուն՝ ու քեզմէ ետքը քու սերունդիդ իրենց ազգերուն մէջ՝ պահէք իմ ուխտս Այս է իմ ու ձեր մէջտեղը, ու քեզմէ ետքը քու սերունդիդ մէջտեղը եղած իմ ուխտս՝ զոր պիտի պահէք. ձեզմէ ամէն ա-

րուն քլփատուի. ձեր անթլփատու թեան մարմինը թլփատէք. ու տօրկա Իմ ու ձեր մէջտեղը եղած ուխտս նշանը ըլլայ: Եւ ձեր ազգերուն մէջ ամէն ութօրուան արու զաւակնիդ՝ կամ տունը ծնածը, կամ քու սերունդէդ չեղող բոլոր օտարականներէն ստակով ծախու առնուածը թլփատուի: Քու տունդ ծնածը՝ և ստակով ծախու առնուածը անշուշտ պիտի թլփատուի. և Իմ ուխտս ձեր մարմինին մէջ յաւիտենական ուխտ մը ըլլայ: Եւ անթլփատ արուն՝ որուն անթլփատու թեան մարմինը թլփատուած չէ, այն անձը իր ժողովուրդէն պիտի կորուսի (Եբբ. կարուի) անիկա Իմ ուխտս անարդած է:» Ծն. Ժ. 9—14:

9. Ծիսական օրէնքը նաև կը հրամայէ՞ր տօներ և շաբաթներ, որոնց համար մասնաւոր զոհեր պէտք էր բերուէին:

«Տէրօջը տօները՝ զոր իրենց ատենին համեմատ սուրբ ժողովներ պիտի քարոզէք, ասոնք են. առաջին ամսուն չարեքատասներորդ օրը իրիկուան դէմ Տէրօջը զատիկն է. և նոյն ամսուն հնգետասաներորդ օրը բազարջակերաց տօն է Տէրօջը. եօթը օր բազարջ պիտի ուտէք, առաջին օրը սուրբ ժողով պիտի ունենաք. բնաւ ծառայութեան գործ պիտի չգործէք: Եւ եօթը օր պատարագ պիտի մատուցանէք Տէրօջը. եօթներորդ օրը սուրբ ժողով պիտի ըլլայ. բնաւ ծառայութեան գործ պիտի չգործէք. ... Եւ շաբաթին հետեւեալ օրէն՝ որ դուք նուիրման որան բերիք, լման եօթը շաբաթ պիտի համբէք ձեզի. ... Եւ այն նոյն օրը պիտի քարոզէք որ ձեզի սուրբ ժողով ըլլայ. բնաւ ծառայութեան գործ չգործէք. այս ձեզի յաւիտենական կանոն ըլլայ ձեր բոլոր բնակարաններուն մէջ՝ ձեր ազգերուն մէջ. ... Խօսէ՛ Խորայէլի որդւոցը ու բնէ՛. Եօթներորդ ամսուն մէջ՝ ամսուն առաջին օրը ձեզի հանգստութեան օր՝ փող չնչեցնելուն յիշատակը՝ սուրբ ժողով պիտի ըլլայ: ... Նաև այս եօթներորդ ամսուն տասներորդ օրը քառութեան օրը ըլլալով՝ սուրբ ժողով պիտի ըլլայ ձեզի. և պիտի խոնարհեցնէք ձեր հոգիները, ու պատարագ մատուցանէք Տէրօջը: ... Առաջին օրը սուրբ ժողով պիտի ըլլայ. բնաւ ծառայութեան գործ պիտի չգործէք. եօթը օր պատարագ մատուցանէք Տէրօջը. և ութերորդ օրը սուրբ ժողով պիտի ըլլայ ձեզի, և պատարագ մատուցանէք Տէրօջը. տօնախմբութեան օր է ան. բնաւ ծառայութեան գործ չգործէք:» Ղ. 4—8, 15, 21, 24, 27, 35, 36:



10. **Տէրը միայն տասը պատուիրանքնե՞րը խօսեցաւ ու գրեց, թէ այս ծիսական օրէնքնե՞րը նաև գրեց :**  
«Տէրը այս խօսքերը լեւրանը վրայ կրակին՝ ամպին ու մառախուղին մէջէն բարձր ձայնով ձեր բոլոր ժողովքին զրուցեց, եւ ուրիշ բան չաւելցուց. ու երկու հաս բարէ օտարացի վրայ գրեց զանանկ, ու ինծի տուաւ :» Բ Թր. Ե. 22 :
11. **Ո՞վ գրեց ծիսական օրէնքը, և ո՞ւր :**  
«Ու երբ Մովսէս այս օրէնքիս բոլոր խօսքերը մէկ գիրքի մը մէջ գրեց լինցուցի :» Բ Թր. ԼԱ. 24 :
12. **Բարոյական օրէնքին երկու տախտակները ո՞ւր պահուած էին :**  
«Անկէ դառնալով լեռնէն վար իջայ. ու օտարացիները շինած օտարացիներու մէջը դրի, որ այն տեղը կենան, ինչպէս որ Տէրը ինծի պատուիրեցի :» Բ Թր. Ժ. 5 :
13. **Մովսէս ո՞ւր դրաւ ծիսական օրէնքին գիրքը :**  
«Այս օրէնքիս գիրքը առէ՛ք, ու զանիկա ձեր Տէր Աստուծոյն ուխտի օտարացիներու ֆովը դրէ՛ք, որ հոն քեզի դէմ վկայութեան համար ըլլայ :» Բ Թր. ԼԱ. 26 :
14. **Աստուծոյ բարոյական օրէնքը ի՞նչ կը պարունակէ . — Աստուծոյ արդարութիւնը :**  
«Եայց Խորայէլ որ արդարութեան օրէնքին կը հետեւէր, արդարութեան օրէնքին չհասաւ :» ՀԱ. Ժ. 31 :
15. **Պօղոս առաքեալ ի՞նչպէս կը վկայէ ասոր :**  
«Ուստի օրէնքը սուրբ է, ու պատուիրանքը սուրբ եւ արդար ու բարի :» ՀԱ. Ժ. 12 :
16. **Ի՞նչ կը պարունակէ միայն ծիսական օրէնքը :**  
«Քանզի օրէնքը զալու բարիքներուն ցուր, ու չէ թէ այն բաներուն բուն կերպարանքը ունենալով, միշտ ամէն տարի մաստուցուած նոյն զոհերով երբէք չի կրնար կատարեալ ընել զանոնք որ կը մօտենան :» Երբ. Ժ. 4 :
17. **Օրէնքով մենք ի՞նչ կը ճանչնանք :**  
«Վասն զի Անոր առջեւը մէկ մարմին մը պիտի չարդարանայ օրէնքին գործքերովը, քանզի օրէնքով է մեզի բանջնալը :» ՀԱ. Ժ. 9. 20 :

18. Ծիսական օրէնքը ի՞նչ նպատակի պիտի ծառայէր :  
«Վասն զի եթէ ցուլերուն ու նոխազներուն արիւնը և երինջին մոխիրը սրուկուելով՝ պղծեալները կը սրբէր մարմինի մաքրութեան կողմանէ :» «Բայց անոնցմով ամէն տարի մեղաց յիշատակութիւն կ'ըլլայ :» Եբր. Թ. 13. Ժ. 3 :
19. Տասը պատուիրանքներուն օրէնքին վրայօք ի՞նչ ըսուած է :  
«Տէրոջը օրէնքը կասարեալ է, հոգին կը նորոգէ. Տէրոջը վկայութիւնը ճշմարիտ է, տգէտը իմաստուն կ'ընէ :» Սաղմ. ԺԹ. 7 :
20. Ծիսական օրէնքին մասին ի՞նչ ըսուած է :  
«Քանզի առջի պատուէրը կը խափանուի իր ակարուքեանը ու անգահութեանը համար, (վասն զի օրէնքը մէկ բան մը կատարեալ չըրուէ,) և անոր տեղը կը մտնէ լաւագոյն յոյս մը՝ որով Աստուծոյ կը մօտենանք :» Եբր. Է. 48, 49 :
21. Հաւատացեալը ի՞նչպէս կը նկատէ Աստուծոյ օրէնքը :  
«Վասն զի ասիկա է Աստուծոյ սէրը, որ Անոր պատուիրանքները պահենք. և Անոր պատուիրանքները ծանր բան չեն :» Ա. Յովհ. Ե. 3 :
22. Ծիսական օրէնքին նկատմամբ ի՞նչպէս էր :  
«Փարիսեցւոց աղանդէն հաւատացեալներէն ոմանք ելան՝ ու կ'ընէին թէ՛ Վէտք է թրփատել զանոնք ու պատուիրել որ Մովսէսի օրէնքը պահեն :» ... Ուստի իմա ինչո՞ւ գԱսուած կը փորձէք. առկերսներուն վրայ այնպիսի լուծ մը դնելով. զոր ո՛չ մեր հայրերը՝ ո՛չ ալ մեք կրցանք վերցնել :» Գործք. ԺԵ. 5, 40 :
23. Ծիսական օրէնքին ի՞նչ պիտի ըլլար :  
«Արդ եթէ կատարելութիւնը Վեւտացւոց քահանայութեան ձեռքովն ըլլար, (որովհետեւ ժողովուրդը անոր ատենը օրէնքին տակ դուրս եցաւ,) ի՞նչ պէտք էր որ Մելքիսեղեկի կարգին պէս ուրիշ քահանայ մը ելլէ, ու չըսուի Ահարոնի կարգին պէս Արդ քահանայութիւնը փոխուելուն պէս, հարկ էր որ օրէնքին ալ փոփոխութիւն ըլլար :» Եբր. Է. 41, 42 :
24. Միւս կողմէն՝ բարոյական օրէնքին ի՞նչ պիտի ըլլար :  
«Ուստի ո՛վ որ այս ամենափոքր պատուիրանքներուն մէկը սուրէ, ու մարդոց այնպէս սորվեցնէ, անիկա ամենափոքր պիտի կոչուի

երկնից թագաւորութեանը մէջ. բայց ո՛վ որ ընէ եւ սոր-  
վեցնէ, անիկա մեծ պիտի կոչուի երկնից բազաւորու-  
րեանը մէջ:» Մատ. Ե. 19:

25. Ծիսական օրէնքը ինչո՞ւ պիտի անցնէր:

«Ու ալ աւելի յայտնի է որ փոխուեցաւ, քանի՞որ՝ Մելի-  
սեդեկի նմանութիւնովը ուրիշ քահանայ մը կ'ելլէ:»  
Եբր. Է. 15:

26. Բարոյական օրէնքը ո՞րքան ատեն պիտի մնար:

«Քանզի ճշմարտագէտ կ'ըսեմ ձեզի, լի՛ցի՛նք որ երկինք ու  
երկիր անցնին, օրէնքէն յովս մը կամ նօսազօր մը  
պիտի չանցնի, մինչեւ որ բոլորն ալ կատարուի:»  
Մատ. Ե. 18:

27. Պօղոս առաքեալ ինչ կ'ըսէ՝ ծիսական օրէնքին տի-  
պական շարաթնորոշման մասին:

«Ուստի ալ մէկը քող չդասէ՛ ձեզ ուստելու կամ խմելու՝ կամ  
տօներու կամ ամսագլուխներու կամ շաբաթներու կողմա-  
նէ, որոնք գալու բաներուն շուրջն են, բայց բուն մարմինը  
Քրիստոսինն է:» Կող. Բ. 16, 17:

28. Արդարները ո՞ւր պիտի պահեն նաև բարոյական օ-  
րէնքին շարաթը:

«Քանզի ինչպէս որ Իմ սեղծելու նօր երկինքն ու նօր  
երկիրն Իմ առջեւ պիտի կենայ, կ'ըսէ Տէրը, այնպէս ալ  
ձեր սերունդը ու ձեր անունը պիտի կենայ: Եւ պիտի ըլլայ որ  
նոր ամիսէ նոր ամիս ու շաբաթէ շաբաթ ամէն մարմին  
Իմ առջեւ երկրպագութիւն ընելու պիտի գայ, կ'ըսէ  
Տէրը:» Ես. ԿԶ. 22, 23:

29. Փրկիչը ինչ ըրաւ ծիսական օրէնքը:

«Ու Տրամաններով եղած մեզի հակառակ եղող ձեռադիրք՝ որ  
մեզի դէմ կը կենար, ջնջեց, զանիկա մէջսեղէն վերցուց  
ու խաչափայտին վրայ գամեց:» Կող. Բ. 14:

30. Նոր Ուխտի օրով՝ տասը պատուիրանքները ո՞ւր  
պէտք է գրուին:

«Քանզի այս է այն ուխտը՝ զոր Իսրայէլի տանը հետ պիտի ընեմ  
այն օրերէն ետքը, կ'ըսէ Տէրը, Իմ օրէնքներս անոց միտքին  
մէջ պիտի դնեմ, եւ անոց արտի վրայ պիտի գրեմ գա-  
նոց, ու Ես անոց Աստուած պիտի ըլլամ, և անոք ինձի ժո-  
ղովուրդ պիտի ըլլան:» Եբր. Ը. 10:



## ԱՍՏՈՒԾՈՅ ՀԱՆԳՍՏԵԱՆ ՕՐԸ

1. Որո՞ւ ձեռքով ստեղծուեցան երկինքն ու երկիրը :  
 «Շատ մասերով ու շատ կերպերով առաջուց խօսելով Աստուած հայրերուն հետ մարգարէներով, այս եաքի օրերս իր Որդիովը խօսեցաւ մեր հետը, որ զԱնիկա ամէն բանի ժառանգ դրաւ, որ Անով աշխարհին ալ ստեղծեց: ...Յւ. ԳՌԱՆ, ո՛վ Տէր՝ սկիզբէն երկրին հիմերը դրի, ու երկինքը Քու ձեռ-  
 քերուդ գործին է:» Եբր. Ա. 4, 2, 10: «Քանզի Անով ա-  
 մէն բան ստեղծուեցաւ, ինչ որ երկինքը ու ինչ որ  
 երկրի վրայ, անոնք որ կ'երեւնան, և անոնք որ չեն երեւնար,  
 թէ՛ աթոռները՝ թէ տէրութիւնները՝ թէ պետութիւնները՝  
 թէ իշխանութիւնները. բոլոր բաները Անով ու Անոր  
 համար ստեղծուեցան:» Կող. Ա. 16:
2. Ո՞րքան ժամանակ գործածուեցաւ արարչագործու-  
 թեան ատեն :  
 «Քանզի Տէրը վեց օրուան մէջ բրաւ երկինքն ու երկիրը՝  
 ծովը ու բոլոր անոնց մէջ եղածները, և եօթներորդ օրը  
 հանգստացաւ. անոր համար Տէրը օրհնեց հանգստութեան օրը  
 ու սրբեց զանիկա:» Եւ. Ի. 4:
3. Տէրը ի՞նչ բրաւ եօթներորդ օրը :  
 «Եւ Աստուած իր բրած գործքերը եօթներորդ օրը լմնցուց,  
 ու եօթներորդ օրը հանգստացաւ Իր բրած բոլոր գործ-  
 քերէն:» Ծն. Բ. 2:
4. Տէրը ի՞նչ բրաւ եօթներորդ օրուան :  
 «Եւ օրհնեց Աստուած եօթներորդ օրը, ու սրբեց զա-  
 նիկա. քանզի անոր մէջ հանգստացաւ իր ամէն գործքերէն՝  
 որ Աստուած ստեղծեց ու բրաւ:» Ծն. Բ. 3:
5. Ասով՝ Շաբաթը ի՞նչ դարձաւ :  
 «Վեց օր գործ պիտի գործուի, բայց եօթներորդ օրը հանգստու-  
 թեան շաբաթը սուրբ պիտի ըլլայ Տէրոջը, ո՛վ որ շաբաթ օրը գործ  
 մը գործէ, անշուշտ պիտի մեռցուի... Անիկա յաւիտեանական

նեան մըն է Իմ ու Իսրայէլի որդւոցը մէջսեղը. քանզի Տէրը վեց օրուան մէջ ստեղծեց երկինքն ու երկիրը, և եօթներորդ օրը դադարեցաւ ու հանգստացաւ:» Եւ. ԼԱ. 45, 47:

6. Տէրը ինչո՞ւ օրհնեց ու սրբեց եօթներորդ օրը: «Քանզի Տէրը վեց օրուան մէջ ըրաւ երկինքը ու երկիրը՝ ծովը ու բոլոր անոնց մէջ եղածները, և եօթներորդ օրը հանգրսացաւ. անոր համար Տէրը օրհնեց հանգստութեան օրը ու սրբեց զանիկա:» Եւ. Ի. 44:

7. Շաբաթը որո՞ւ համար եղաւ: «Եւ ըսաւ անոնց, Շաբաթը մաքրումի համար եղաւ, ու չէ թէ մարդը Շաբաթին համար:» Մարկ. Բ. 27:

8. Շաբաթը պարտաւորի՞չ էր՝ Սինայի վրայ օրէնքը տրուելէն առաջ: «Եւ Տէրը ըսաւ Մոսէսին, 'Ահա՛ Ես ձեզի երկինքէն հաց պիտի տեղամ', և ժողովուրդը պիտի ելլէ ու օրէ օր ժողովէ ամէն մէկ օրուան պէտք եղածը, որ փորձեմ զանոնք՝ թէ Իմ օրէնքիս համեմատ պիտի քայլեն թէ չէ': ... Եւ եղաւ որ եօթներորդ օրը ժողովուրդէն ոմանք ժողովելու ելան, ու չգտան: Եւ Տէրը ըսաւ Մոսէսին, 'Մինչև և ե՞րբ չէ՞ ուզեր պահել Իմ պատիւրանքներս ու օրէնքներս:» Եւ. ԺՁ. 4, 27, 28:

9. Տէրը ի՞նչ որոշ պատուէր տուաւ Շաբաթին ի նպատակ: «Հանգստութեան օրը մի՛տքի բեր՝ զանիկա սուրբ պահելու համար: Այն օր պիտի աւստասիս, ու բոլոր գործը ընես, բայց եօթներորդ օրը Տէրոջը ֆաւ Աստուծոյ հանգրստութեան օրն է. այն օրը գործ մը պիտի չգործես, ո՛չ դուն՝ ո՛չ քու որդիդ՝ ո՛չ քու աղջիկդ՝ ո՛չ քու ծառայդ ու ազախինդ՝ ո՛չ քու անասունդ՝ ո՛չ ալ տանդ մէջ եղած օտարականդ. քանզի Տէրը վեց օրուան մէջ ըրաւ երկինքը ու երկիրը՝ ծովը ու բոլոր անոնց մէջ եղածները, և եօթներորդ օրը հանգստացաւ, անոր համար Տէրը օրհնեց հանգստեան օրը ու սրբեց զանիկա:» Եւ. Ի. 8-11:

10. Իսրայէլի որդիքը հաւատարմօրէն պահեցին Շաբաթը՝ անապատին մէջ: «Բայց Իսրայէլի տունը անապատին մէջ Ինծմէ տարստամբեցաւ. Իմ օրէնքներովս չքալեցին, ու Իմ դատաստաններս մերժեցին, որ մարդ անոնցմով կ'ապրի, եթէ զանոնք կա-

տարէ, և Իմ Շարքներս մեծապէս պղծեցին. անոր համար ըսի որ Իմ սրամտութիւնս անոնց վրայ թափեմ՝ անապատին մէջ, ու զանոնք սպառեմ» Եզեկ. Ի. 43:

11. Անոնց որդիքը ի՞նչպէս պատժուեցան նոյն մեղքին համար:

«Բայց անոնց որդիներն ալ Ինծմէ սպասամբեցան. Իմ օրէնքներովս չքալեցին, ու Իմ դատաստաններս կատարելու ուշադրութիւն չբրին, որ մարդ անոնցմով կ'ապրի, եթէ զանոնք կատարէ. և Իմ Շարքներս պղծեցին, ուստի ըսի որ Իմ սրամտութիւնս անոնց վրայ կ'առարեմ: Սակայն Իմ ձեռքս քաշեցի, ու ըրի Իմ անուանս համար, որ չըլլայ թէ պղծուի այն ազգերուն առջին՝ որոնց առջեւը զանոնք հանեցի:

«Նաեւ անապատին մէջ Իմ ձեռքս անոնց վերցուցի, որ զանոնք ազգերու մէջ ցրուեմ, ու զանոնք երկիրներու մէջ ցիրուցան ընեմ. վասն զի Իմ դատաստաններս ի գործ չարին, ու Իմ օրէնքներս մերժեցին, եւ Իմ Շարքներս պղծեցին. ու անոնց աչքերը իրենց հարցը կուսքերուն ետեւէն եզան» Եզեկ. Ի. 24—24:

12. Տէրը ի՞նչ օրհնութիւն խոստացաւ Իսրայէլի որդւոցը՝ եթէ անոնք սրբութեամբ պահէին շարաթը:

«Իսկ եթէ ուշադրութեամբ Ինծի մտիկ ընէք. կ'ըսէ Տէրը, որ Շարաթ օրը այս քաղաքին դռներէն ներս բեռ չբերէք, ու Շարաթ օրը սուրբ պահէք, բնաւ անոր մէջ դործ մը չընելով, այն առեւ Գալիլի արոսին վրայ նստող քաղաւորներ ու իշխաններ՝ կառեւրու ու ձիերու վրայ հեծած՝ այս քաղաքին դռներէն պիտի մտնեն, իրենք եւ իրենց իշխանները՝ Յուդայի մարդիկները ու Երուսաղէմի բնակիչները. ու այս քաղաքը յաւիտեան պիտի մնայ: Եւ Յուդայի քաղաքներէն ու Երուսաղէմի շրջակայ տեղերէն, ու Բենիամինի երկրէն և դաշտերէն ու լեռներէն ու հարաւէն պիտի դան, և ողջակէզ ու զոհ և հացի ընծայ ու կնդրուկ պիտի բերեն, և Տէրոջը տունը շնորհակալութեան ընծաներ պիտի բերեն» Երեմ. ԺԷ. 24—26:

13. Տէրը ի՞նչ պատիժ սպառնաց անոնց՝ եթէ այսպէս չպահէին Շարաթը:

«Բայց եթէ Ինծի մտիկ չընէք, որ Շարաթ օրը սուրբ պահէք,



ու Շարաթ օրը բեռ չվերցնէք ու Երուսաղէմի դռներէն ներս չմտնէք, Ես ալ անօր դռներուն մէջ կրակ պիտի բարնկցնեմ. ու Երուսաղէմի պալատները պիտի ուտէ, ու պիտի չմառի:» Երեմ. Ժ. 27:

14. Այս պատիժը գործադրուեցա՞ւ:

«Բայց անոնք Աստուծոյ զրկած պատգամաւորները կ'անարգէին, Անոր խօսքերը կ'արհամարհէին, ու Անոր մարգարէները ծաղր կ'ընէին. մինչև որ Տէրօջը բարկութիւնը Իր ժողովուրդին վրայ բորբոքեցաւ, այնպէս որ ալ բժշկութիւն չմնաց: Եւ անոնց վրայ Քաղղէացոց բազաւորը հանեց. անիկա ալ անոնց երիտասարդները անոնց սրբարանին մէջ սրով մեռցուց. ու երիտասարդին ու կոյսին, ծերին ու ալեւորին չխնայեց. ամէնն ալ Տէրը անօր ձեռք մասնեց: Եւ Աստուծոյ տանը բոլոր մեծ ու պզտիկ անօթները, ու Տէրօջը տանը գանձերը, և թագաւորին ու անոր իշխաններուն գանձերը՝ ամէնն ալ Բաբելոն տարաւ: Եւ Աստուծոյ տունը այրեցին, ու Երուսաղէմի պարիսպը փլցուցին, ու անօր ամէն պալատները կրակով այրեցին, ու բոլոր գեղեցիկ բաները աւրեցին: Եւ սուրէն փախած մնացորդները Քաբելոն գերի բարաւ. ու մինչև Պարսից թագաւորութեանը հաստատուիլը, անոր և անոր որդւոցը ծառաներ եղան» Ի Մնաց. 1, 2. 46—20:

15. Ինչո՞ւ այս չարիքը պատահեցաւ Երուսաղէմի:

«Եւ Յուդայի ազնուականներուն հետ զիճեցայ ու անոնց ըսի, Այս ի՞նչ գէշ բան է որ դուք կ'ընէք, ու Շարաթ օրը կը պղծէք: Ահա՛ ձեր հայրերն ալ այսպէս բրին, ու մեր Աստուածը մեր վրայ ու այս քաղաքին վրայ այս բոլոր չարիքները բերաւ. և դուք Շարաթը պղծելով՝ Իսրայէլի վրայ բարկութիւն կ'աւելցնէիս նեե. Ժ. 47, 48:

16. Դրիստոս օրէնքը աւրե՞ց:

«Մի՛ կարծէք թէ Ես եկայ օրէնքը կամ մարգարէները աւրելու. չեկայ աւրելու, այլ կատարելու: Քանզի ճշմարտապէս կ'ըսեմ՝ ձեզի, Մինչև որ երկինք ու երկիր անցնին, օրէնքէն յովա մը կամ նշանադիր մը պիտի չանցնի, մինչև որ բոլորն ալ կատարուի: Ուստի ո՞վ որ այս ամենափոքր պատուիրանքներուն մէկը աւրէ, ու մարգոց այնպէս սորվեցնէ, անիկա ամենափոքր պիտի կոչուի երկնից թագաւորութեանը մէջ. բայց ո՞վ որ ընէ և սորվեցնէ, անիկա մեծ պիտի կոչուի երկնից թագաւորութեանը մէջ» Մատ. Ե. 47—49:

17. Քրիստոս ի՞նչ բանի սովորութիւնն ունէր Շարաթ օրը :  
«Ու եկաւ նազարէթ, ուր որ ինքը մեծցած էր. և Իր սովորութեանը պէս Շաբաթ օրը մտաւ ժողովարանը, ու եկաւ որ կարդայ:» Աւեկ. Գ. 46:
18. Ան ի՞նչ պէս սորվեցուց մեզ Շարաթի պահպանութիւնը:  
«Եւ հոն մէկ մարդ մը կար՝ որուն ձեռքը չորցած էր. և հարցուցին անոր ու ըսին թէ՛ Շարաթ օրը բժշկել արժան է՝, որ Անոր վրայօք ամբաստանութիւն ընեն: Ան ալ ըսաւ անոնց, Չեղձէ ո՞ր մարդը կայ՝ որ մէկ ոչխար մը ունենայ, և անիկա Շարաթ օրը փոսի մէջ իյնայ, պիտի չբռնէ՞ ու վեր հանէ զանիկա: Արդ ո՞րչափ աւելի է մարդը ոչխարէն, ուրեմն Շաբաթ օրը բարի գործել արժան է՛: Այն ատեն ըսաւ այն մարդուն, Վրկիցո՛ւր ձեռքդ՝. ան ալ երկնցուց, ու ողջացաւ միւսին պէս: Իսկ փարիսեցիները դուրս ելլելով՝ Անոր վրայօք խորհուրդ կ'ընէին թէ ի՞նչպէս զԱնիկա կորսնցնեն:» Մատ. ԺԲ. 40-44:
19. Քրիստոսի հետեւողները Շարաթը պահեցին՝ Իր յարութենէն յետոյ :  
«Եւ Անոր հետեւէն գացին այն կնիկները՝ որ Իրեն հետ Գալիլեայէն եկած էին, ու տեսան զերեզմանը՝ և թէ ի՞նչպէս Անոր մարմինը հոն գրուեցաւ: Եւ դառնալով՝ խօսեցին ու իւզեր պատրաստեցին. և Շաբաթ օրը հանգստացան պատիրանիցիս համեմատ:» Աւեկ. ԻԳ 55, 56:
20. Ի՞նչ էր Պօղոսի սովորութիւնը :  
«Ու ամէն Շաբաթ օրերը ժողովարանին մէջ կը խօսէր, և Հրեաները և Յոյները կը համոզէր:»  
«Եւ երեւ Շաբաթ օր խօսեցաւ անոնց հետ զիրքերէն:» Գործք. ԺԷ. 4, ԺԷ. 2:
21. Կորնիթոս եղած միջոցին՝ ի՞նչ կ'ընէր ան շաբթուան միւս օրերը :  
«Եւ որովհետեւ ինքը անոնց արհեստակից էր՝ անոնց քօլը կեցաւ և կը բանէր, քանզի արհեստով վրանագործ էին:» Գործք. ԺԷ. 3:
22. Ե՞րբ կը սորվեցնէր ան :  
«Ու ամէն Շաբաթ օրերը ժողովարանին մէջ կը խօսէր, և Հրեաները ու Յոյները կը համոզէր:» Գործք. ԺԷ. 4:

23. Հեթանոսներուն ե՞րբ կը քարոզէր :  
«Ու երբ անկէ դուրս ելան, կ'աղաչէին որ հետեւեալ Շարաբ ալ նոյն խօսքերը իրենց խօսուի: Եւ հետեւեալ Շարաբ օրը գրեթէ բոլոր քաղաքը ժողովուեցաւ Աստուծոյ խօսքը լսելու:» Գործք ԺԳ. 42, 44:
24. Աշակերտները ի՞նչ լանի համար պարտէին աղօթել՝ յարութենէն 40 տարի յետոյ :  
«Եւ աղօթք ըրէք որ ձեր փառչիւր ձմեռը չըլլայ, ո՛չ ալ Շարաբ օրը:» Մատ. ԻԳ. 20:
25. Կա՞յ օր մը՝ զոր Տէրը Ի՛րը կը կոչէ՝ Քրիստոսնէական անտեսութեան միջոցին :  
«Եւ Կիրակի (Տէրունական) օրը Հոգին իմ վրաս եկաւ:» Յայտ. Ա. 10 (Ա. մատ):
26. Ո՞րն է Տէրոջը օրը :  
«... Բայց եօթներորդ օրը Տէրոջը քու Աստուծոյդ հանգստութեան օրն է:» Ել. Ի. 10 (Ա. մատ):  
«Ու Բեթե Որդին մարդոյ Շարաբին ալ Տէրն է:» Մարկ. Բ. 28:
27. Հաւատացեալին համար՝ Շարաթը լ՞ո՞ւծ մըն է թէ՛ բերկրութիւն մը :  
«Եթէ Շարաթը՝ իմ սուրբ օրս քու ցանկութիւնդ կատարելէն սոքա դարձընես, ու Շարաթը՝ քու զուարեութիւնդ, և Տէրոջը նախընտրած օրը պատուական անուանես ու զանկա պատուես, քու ճամբաներուդ չհետեւելով, քու ցանկութիւնդ չկատարելով, ու պարագ խօսք չխօսելով:» Ես. ԾԸ. 13:
28. Ի՞նչ ըսուած է՝ նոր երկրի վրայ Շարաթի պահպանման մասին :  
«Քանզի ինչպէս որ իմ ստեղծելու նոր երկիրքս ու նոր երկիրս իմ առջեւ պիտի կենայ, կ'ըսէ Տէրը, այնպէս ալ ձեր սերունդը ու ձեր անունը պիտի կենայ: Եւ պիտի ըլլայ որ նոր ամիսէ նոր ամիս ու Շարաթէ Շարաբ ամէն մաքմին Թմ առջեւ երկրպագութիւն ընելու պիտի գայ, կ'ըսէ Տէրը:» Ես. ԿԶ. 22, 23:



## ՇԱԲԹՈՒԱՆ ԱՌԱՋԻՆ ՕՐԸ

1. Տէրօջը Խօսքը ի՞նչպէս գրուեցաւ :  
«Բալութ Դիրքը Աստուծոյ շուքն է (կամ ներշնչութիւնն է,) և օգտակար է սորվեցնելու, յանդիմանելու, շիակելու ու արդարութեան խրատելու համար» Բ Տրմ. Գ. 46:
2. Աստուածային ներշնչութեամբ՝ ո՞ր օրը շարթուան առաջին օրը կոչուած է :  
«Եւ Շարթած գիշերը որ մէկաբարի կը լուսնար, եկաւ Մարիամ՝ Մագդաղենացին ու միւս Մարիամը գերեզմանը տեսնելու» Մատ. ԻԷ. 4: «Ու մէկաբարի օրը առտուանց շատ կանուխ գերեզմանը եկան, ու բերին այն խուկերը զոր պատըրասեր էին, և ուրիշ կնիկներ սլաննց հետը» Ղուկ. ԻԴ. 4:
3. Քրիստոս ո՞ր օրը յարեաւ մեռելներէն :  
«Յիսուս մէկաբարի առտուանց յարութիւն առած՝ առաջ Մարիամ՝ Մագդաղենացին երեւցաւ» Մարկ. ԺԶ. 9:
4. Աշակերտները ի՞նչ ըրին նախօրը օրը :  
«Եւ դառնալով՝ խուկեր ու իւղեր պատրաստեցին, և Շաբաթ օրը հանգստացան պատուիրանքին համեմատ» Ղուկ. ԻԴ. 56:
5. Միւս կողմէն՝ ի՞նչ ըրին կնիկները՝ յարութեան առտուն՝ շատ կանուխ :  
«Ու երբ Շաբաթը անցաւ, Մարիամ Մագդաղենացի և Յակոբոսի մայրը Մարիամ և Սաղովմէ խուկեր ծախու առին, որ դան օժեն զձեռնիկս: Եւ մէկաբարի առտուանց շատ կանուխ՝ առեւր որ կը ծագէր եկան գերեզմանը» Մարկ. ԺԶ. 1, 2:
6. Աշակերտները հաւատացի՞ն՝ մէկշարթի օրը Քրիստոսի յարութիւնն առնելուն :  
«Անիկա գնաց անոնց պատմեց՝ որոնք անօր հետ էին, երբ սուգ կ'ընէին ու կուլային: Իսկ անոնք երբ լսեցին թէ կենդանի է և թէ իրեն երեւցաւ, շիտաւացին»:

«Ետքը ուրիշ կերպարանքով երեւցաւ անոնցմէ երկուքին՝ որ քալելով արար կ'երթային: Եւ անոնք դացին ուրիշներուն պատմեցին. ու անոնց ալ չհաւատացին:» Մարկ. ԺԶ. 10-13:

7. Յիսուս ե՞րբ կայնեցաւ անոնց մէջտեղը:

«Աւ ևոյն օրը մէկօտքրի իրիկուեր՝ աշակերտներուն ժող-վուած տեղին դռները դոց ըլլալով՝ Հրեաներէն վախնալնուն համար, Յիսուս եկաւ և անոնց մէջտեղը կայնեցաւ, ու ըսաւ անոնց, 'Խաղաղութիւն ձեզի':» Յովհ. Ի. 19:

8. Ասի կրօնականն հաւաքում մըն էր, թէ անոնք ժող-վուեր էին իրենց երեկոյեան ճայր ուտելու:

«Վերջը տասնումէկին երեւցաւ, երբ սեղան նսած էին, ու երեսնին զարկաւ իրենց անհաւատութիւնը և որտերնուն կարծրութիւնը, վասն զի որոնց որ ինքը երեւցաւ մեռելներէն յարութիւն տուած. իրենք չհաւատացին:» Մարկ. ԺԶ. 14:

«Ու երբ տակաւին իրենց ուրախութենէն չէին հաւատար՝ և զարմանքի մէջ էին, ըսաւ անոնց. 'Ուտելիք մը ունի՞ք հոս': Անոնք ալ կտոր մը խորոված ձուկ ու մեղրախորիսի տուին իրեն: Եւ առաւ կերաւ անոնց առջեւը:» Վուկ. ԻԲ. 41-43:

9. Աշակերտները միասին կ'ապրէին հոն:

«Ու երբ քաղաքը մտան, ելան վերնատունը, ուր որ կը բնակէին Պետրոս և Յակոբոս, Յովհաննէս և Անդրէաս, Փիլիպպոս և Թովմաս, Բարթուղիմէոս և Մատթէոս, Յակոբոս Ալփէոսեան ու Սիմոն Նախանձայոյլ և Յուդա Յակորեան:» Գործք Ա. 43:

10. Աշակերտները՝ Բրիստոսի յարութեան օրը պատուել-լով համար ժողվուեր էին:

«Վերջը տասնումէկին երեւցաւ, երբ սեղան նսած էին, ու երեսնին զարկաւ իրենց անհաւատութիւնը և որտերնուն կարծ-րութիւնը, վասն զի որոնց որ Ինքը երեւցաւ մեռելներէն յարութիւն տուած, իրենց չհաւատացին:» Մարկ. ԺԶ. 14:

11. Տէրը ե՞րբ երեւցաւ յաջորդ անգամ:

«Եւոյց տասուերկուքէն մէկը՝ Երկուորեակ ըսուած Թովմաս անոնց հետ չէր՝ երբ Յիսուս եկաւ: Ուստի միւս աշակերտները կ'ըսէին անոր՝ թէ 'Տէրը տեսանք'. ան ալ ըսաւ անոնց, 'Եթէ իր ձեռքերուն վրայ բեւեռներուն շշանը չտեսնեմ', ու մասս բեւեռներուն տեղը չխորիմ', չեմ հաւատար':»

«Եւ ուրբ օրէն եսեւ դարձեալ առակերտները ներսն էին, Թովմաս ալ անոնց հետ. եկաւ Յիսուս՝ դռները գոց ըլլալով, ու կայնեցաւ անոնց մէջսեղը եւ բառւ, «Խաղաղութիւն ձեզի՛: Ետքը բառւ Թովմասին, «Մտադ չո՛ս բեր և նոյէ՛ իմ՝ ձեռքերուս, ու բե՛ր քու ձեռքդ և իմ՝ կո՛ղս խոթէ, ու մի՛ ըլլար անհաւատ, այլ հաւատացեալ՝:» Յովճ. Ի. 24—27:

12. Ան ե՞րբ ի՞նքզինքն յայտնեց երրորդ անգամ:  
«Ասկէ ետեւ Յիսուս նորէն ինքզինքը իր աշակերտներուն յայտնեց Տիրերիայի ծովուն եզերքը, և այսպէս յայտնեց: Մէկտեղ էին Սիմոն Պետրոս ու Թովմաս Երկուորեակ ըսուածը, և Նաթանայէլ որ Քալիլեայի կանայքազաքէն էր, ու Զերեդէոսի որդիքը և աշակերտներէն ուրիշ երկուք ալ: Սիմոն Պետրոս ըսաւ անոնց, «Էս ձուկ որսալու կ'երթամ՝. ըսին անոր, «Մենք ալ կուգանք քեզի հետ.» ելան և շուտ մը նաւը մտան, ու այն գիշերը բան մը չբռնեցին: ... Այս երրորդ անգամն է որ Յիսուս Թր առակերտներուն երեւցաւ՝ մեռելներէն յարութիւն առնելէն ետեւ:» Յովճ. ԻԱ. 1—3, 14:
13. Պօղոս առաքեալ ո՞րքան ատեն կեցաւ Տրովադա:  
«Մենք ալ բազարջակերոց օրերէն ետեւ Փիլիպպէէն նաւեցինք, և չինք օրուան մէջ Տրովադա եկանք անոնց քովը, ու եօթը օր հոն կեցանք:» Գործք Ի. 6:
14. Ի՞նչ ըրաւ ան՝ իր մեկնումին նախորդ իրիկունը:  
«Եւ մէկշաբթի օրը երբ ժողովուեր էինք հաց կտրելու, Պօղոս անոնց կը քարոզէր, քանզի հետեւեալ օրը ճամբայ պիտի ելլէր. և խօսքը երկնցուց մինչև կէս գիշեր:» Գործք Ի. 7:
15. Ի՞նչ բան ցոյց կուտայ թէ՛ ասի գիշերուան ժողով մըն էր:  
«Ու զայն լապտերներ կային այն վերի սենեակը՝ ուր որ մենք ժողոված էինք:» Գործք Ի. 8:
16. Նոյն միջոցին Պօղոսի ընկերները ի՞նչ կ'ընէին:  
«Իսկ մեմբ նաւը մտնելով՝ նամբայ կլանի դէպ ի Աստուծոյ, ուրկէ Պօղոսը պիտի առնէինք, քանզի այնպէս ապօգրբեր էր, որովհետեւ ինքը ցամաքով պիտի երթար:» Գործք Ի. 13:
17. 24 ժամ եզոզ օրը ե՞րբ կը սկսի:  
«Այս ձեզի հանգստութեան շաբաթ պիտի ըլլայ, և ձեր հոգի-



ները պիտի խոնարհեցնէք, ամսուն իններորդ օրուան իրիկունը  
ձեր շարաթը պիտի պահէք իրիկուրնէ մինչև իրիկուն:»  
Ղ. Ի. Ի. 32: «Եւ Աստուած ըյսին անունը Յորեկ, ու խաւա-  
րին անունը Գիշեր դրաւ. և իրիկուն ու առաւ ըլլալով՝  
առաջին օրը եղաւ: ... Եւ Աստուած՝ հաստատութիւնը կը-  
կինք կոչեց. և իրիկուն ու առաւ ըլլալով՝ երկրորդ օրը  
եղաւ: ... Եւ իրիկուն ու առաւ ըլլալով՝ երրորդ օրը  
եղաւ:» Են. Ա. 5, 8, 13, ևն.:

18. Հետեւաբար՝ Պօղոս կ'ըր խօսած պէտք է ըլլայ յիշ-  
եալ քարոզը: — Մեր Շարաթին իրիկունը, մինչև  
Մէկշարթի առաւօտ: Մէկշարթի առտու Տրովադա-  
յէն ցամաքով ուղղակի Ասոն գնաց — շուրջ վեց  
ժամուան ճամբորդութիւն մը:
19. Պօղոս ինչ խնդրեց կորնթոսի եղբայրներէն որ ընեն  
ամէն մէկշարթի օր: «Ամէն մէկշարթի օրերը ձեզմէ ամէն մէկը իր բո՛վը բող դիզէ  
ինչ որ կը յաջողի:» Ա. կոր. ԺԶ. 2:
20. Ասի ժողովաւեղի՞ն՝ թէ տունը տեղի պիտի ունենար: «Ձեզմէ ամէն մէկը իր աւանը թող գիզէ:» Ասորական Բեշիթօ  
թարգմ. 12:
21. Պօղոս ո՞ր օրը կը սորվեցնէր՝ թէ՛ Հրեաներուն և  
թէ՛ Յոյներուն ի կորնթոս: «Եւ որովհետև ինքը արհեստակից էր՝ անոնց քովը կեցաւ և կը  
բանէր, քանզի արհեստով վրանագործ էին: Ու ամէն Շա-  
բաթ օրերը ժողովարանին մէջ կը խօսէր, և Հրեաները ու Յոյ-  
ները կը համոզէր:» Գործք ԺԸ. 3, 4:
22. Ս. Գիրքը կ'ըսէ՞ մեզի Ս. Հոգւոյն ո՞ր օրը արուիլը:  
— Ո՛չ. Մեկնիչներուն մէջ երեւելի մէկշարթի պա-  
հողներ կը յայտարարեն որ Պէնտէկոստէն Շարաթի  
քան թէ մէկշարթի հանդիպեցաւ, ինչպէս Տէչէլ,  
Օլջօզըն, Քիւհնոլ, Ճէնինկա, ևն.:
23. Ո՞րն է Տէրոջը օրը: «Քայց եօթներորդ օրը Յէրոջը բու Ասաուծոյց հանգր-  
տուրեան օրն է. այն օրը գործ մը պիտի չգործես, ո՛չ դուն՝ ո՛չ


քու որդիդ՝ ո՛չ քու աղջիկդ՝ ո՛չ քու ծառայ ու աղախինդ՝  
ո՛չ քու անասունդ՝ ո՛չ սլ տանդ մէջ եղած օտարականդ, և  
Եւ. Ի. 40: «Զրուցէ՛ նաև Իորայէի որդւոցը՝ ըսելով, «ԱՆ-  
ՇՈՒՇ Իմ Շարքներս պահէ՛. քանզի աս նշան մըն է Իմ  
ու ձեր մէջտեղը ձեր ազգերուն մէջ, որ գիանաք թէ ձեզ սուրբ  
ընող Տէրը Ես եմ՝: Ուստի Շարքք պահէ՛. վասն զի ան ձեզի  
սուրբ է. ով որ զանիկա պղծէ՝ անշուշտ պիտի մեռնի՝ քանզի  
ով որ այն օրը գործ մը գործէ, այն անձը իր ժողովուրդին մէ-  
ջէն պիտի կորսուի» Եւ. ԼԱ. 43, 44:

24. Յովհաննէս իր Աւետարանը Յայտնութենէն առաջ՝  
թէ ետքը գրեց: — Յայտնութիւնը գրելէն գրեթէ եր-  
կու տարի յետոյ գրեց Յովհաննէս Աւետարանը,  
Յ. Տ. 97ին, Պատմոսէ իր վերադարձէն յետոյ:
25. Յովհաննու Աւետարանը ու է է կերպով ցոյց կուտայ  
նախապատուութիւն մը մէկշարթիի համար՝ որ մեզի  
նուիրական օր մը նկատել սոյ գայն:
- «Աւ մէկաբքի օրը Մարիամ Մագդաղենացին աւտուանց  
դեռ չլուցած գերեզմանը կուգայ, ու կը տեսնէ որ քարը գե-  
րեզմանին դռնէն վերցուած է: ... Աւ նոյն օրը մէկաբքի  
իրիկունը՝ աշակերտներուն ժողովուած տեղին դռները գոց ըլլա-  
լով՝ Հրեաներէն վտանալնուն համար, Յիսուս եկաւ և անոնց  
մէջտեղը կայնեցաւ, և ըսաւ անոնց, «Խաղաղութիւն ձեզի»:  
ՅովՏ. Ի. 4, 49:
26. Ե՛րբ ի գուր կը պաշտենք Տէրը:  
«Ու պարագ տեղը զիս կը պաշտեն, մարդոց պատուիւած  
բաները իբրև վարդապետութիւն սօրվցնելով:» Մատ.  
ժե. 9:

## ՀՆԱԶԱՆԴՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

1. **Տէրը ի՞նչ բանէ ամենամեծ հաճոյքը կը զգայ :**  
 «Եւ Սամուէլ ըսաւ, Վիթէ Տէրոջը առջեւը ողջակէզները ու զօհերը Տէրոջը ձայնին հնազանդութիւն ընելու չափ հաճոյ են. ահա՛ նազանդութիւնը՝ գոհէն, ու խօսք մտիկ ընելը նառաջէն աղէկ է:» Ա. ագ. Ժ. 22:
2. **Անհնազանդութիւնը ի՞նչ բանի հետ հաւասար համարուած է :**  
 «Քանզի սպաստամբութիւնը՝ կախարդութեան մեղից պէս, ու կամակորութիւնը՝ կռապաւստութեան պէս է:» Հմբ. 23:
3. **Ի՞նչ բան մահ պատճառեց :**  
 «Բայց բարիի ու չարի դիտութեան ծառէն մի՛ ուտեր. քանզի անկէ կերած օրդ անուշտ պիտի մեռնիս.» «Եւ կնիկը տեսնելով որ ծառը աղէկ էր երակուրի համար, և հաճելի աչքերուն, ու փափաքելի՝ իմաստուն ընելու համար, առաւ տնոր պտուղէն ու կերաւ, և իրեն հետ իր երկամն ալ տուաւ, և անիկա կերաւ: ... Եւ Ադամին ըսաւ, Որովհետեւ դուն քու կնկանդ խօսք մտիկ րրիր, և ան ծառէն կերար, որուն համար պատուիրեցի քեզի՛ ըսելով, Չուտես անկէ, երկիրը քու պատճառովդ անիծեալ ըլլայ. կենացդ բոլոր օրերուն մէջ նեղութիւնով ուտես անկէ. և փուշ ու տատասկ բուսցնէ քեզի, և դաշտին խօսք ուտես: Երեսիդ քրտինքովը ուտես քու հացդ, մինչև գետինը դառնալդ, ուրկէ տանուեցար. քանզի հող էիր, ու հողին պիտի դառնաս:» Ծն. Բ. 47. Ի. 6, 47—49:
4. **Տէրը կը ցանկա՞յ որ պահենք Իր պատուիրանքները ճիշդ ինչպէս որ զանոնք տուած է մեզի :**  
 «Ձեզի պատուիրած խօսքիս վրայ բան մը չաւելցնէ՛ք, ու անկէ բան մը չպակասցնէ՛ք, այլ ձեր Տէր Աստուծոյն պատուիրանքները պահէ՛ք, զորոնք ևս ձեզի կը պատուիրեմ:» Բ. Թբ.





ԱՒԱՁԻ ՎԸՆՑ ՇԻՆՈՒԱԾ ՏՈՒՆԸ ... (Մ--ԴԲ. Է. 26, 27.)

5. Քահանաները ո՞ւր պարտէին պահել կրակը՝ որ խունկ մատուցանելու կը գործածուէր :
- «Աւ Տէրոջը առջեւ եղած սեղանին վրայէն բուրվառը լեցուն կայծեր պիտի առնէ, ու բարակ ձեծուած անուշահոտ խունկէն իր ձեռքերը լեցնէ, ու վարդուրին ներսի դին բերէ: Եւ խունկը կրակին վրայ պիտի դնէ Տէրոջը առջեւը, ու խունկին մոտը վկայութիւնին վրայի քառութիւնը պիտի ծածկէ, որ չմեռնի» Դև. ԺԶ. 12, 13:
6. Ո՞վ արհամարհեց այս բացայայտ հրամանը :
- «Եւ Ահարոնն որդիքը՝ Նադար ու Թրիսեֆ՝ ամէն մէկը իր բուրվառը առաւ, ու անոնց մէջը կրակ դրին, և վրան խունկ դրին, ու Տէրոջը առջեւ օտար կրակ մատուցին, զոր Ենֆր պատուիրած չէր անոց:» Դև. Ժ. 1:
7. Ի՞նչ արդիւնք ունեցաւ այս արարքը :
- «Եւ Տէրոջը առջեւէն կրակ ելաւ, ու սպառեց զանոնք, և Տէրոջը առջեւ մեռան:» Հմբ. 2:
8. Ի՞նչ պիտի պատահէր ամէն անոր որ տապանակին դպչէր :
- «Եւ Ահարոն ու անոր որդիքը բանակին չուած տանը՝ որբարանը ու որբարանին բոլոր կարասիները ծածկելը լինցնեն, ու ետքը Կահաթին որդիքը զանոնք վերցնելու գան. բայց սուրբ բաներու չդպչին որ չմեռնին:» Թառ. Գ. 15:
9. Ի՞նչ պատահեցաւ Ոզայի՝ երբ տապանակին ձեռք զարկաւ :
- «Եւ երբ Նարանին կայը եկան, Ոզա իր ձեռքը Աստուծոյ տապանակին երկնցուց, ու զանիկա բռնեց, քանզի եզները զանիկա ծուր էին: Եւ Տէրոջը բարկութիւնը բորբոքեցաւ Ոզայի դէմ, ու Աստուած զանիկա հոն այս յանցանքին համար զարկաւ. և նոյն տեղը Աստուծոյ տապանակին քով մեռաւ:» Բ Թագ. 2. 6, 7:
10. Տէրը Սաուլը թագաւորին ի՞նչ ընել հրամայեց :
- «Զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ, Միաքս բերի ինչ որ Ամադէկ ըրաւ Խորայէի, անոր Եգիպտոսէ ելած տանը՝ ճամբուն մէջ անոր դէմ դնելով: Հիմա գնա՛ ու Սամադէկը գա՛րկ, եւ անոր բոլոր ունեցածը նզովածի պէս բնաջինջ ըրէ՛, ու անոր չխնայես. եւ Էրիկ մարդէն մինչեւ կնիկ մարդը, ու

«դայլև մինչև կարևկեր, արջառէն մինչև ոչխար, եւ ուղտէն մինչև էօր մեռցնես»:» Ա թագ. ժե. 2, 3:

11. Սաւուղ ըրքան լիտլին կատարեց այս հրամանը :  
«Յայց Սաւուղ ժողովուրդին հետ՝ Աղազը, և ոչխարներուն ու արջառներուն աղէկները ու գէրերը, և գառները, ու ամէն պատուական բաները խնայեցին, եւ չուզեցին զանոնք ջարդել, այլ բոլոր անարդ ու անպիտան անասունները ջարդեցին:» Հմբ. 9:
12. Սաւուղ ի՞նչ ըրած ըլլալը յայտարարեց :  
«Եւ Սամուէլ Սաւուղին քովը գնաց. ու Սաւուղ անոր ըսաւ, 'Գու՛ն Տէրոջմէն որհնեա՛լ ըլլաս. Տէրոջը խօսքը կատարեցի':» Հմբ. 13:
13. Ի՞նչ չքմեղանք ներկայացուց՝ երբ Սամուէլ մարգարէն յանդիմանեց զինքը :  
«Եւ Սամուէլ ըսաւ, 'Հապա այս ոչխարներուն ձայնը ի՞նչ պիտի ըլլայ՝ որ իմ ականջիս կուգայ, ու արջառներուն ձայնը զօր ես կը լսեմ':» Եւ Սաւուղ ըսաւ, 'Չանոնք Ամաղէկացիներէն բերին. Բանգի ժողովուրդը է՛ն աղէկ ոչխարները ու արջառները ողջ բողոցին, որ զանոնք Բու Տէր Ասուծոյդ զոհ մատուցանեն. սակայն միւսները ջարդեցինք':» Հմբ. 44, 45:
14. Այս անհնազանդութիւնը Սաւուղին զլսուն ի՞նչ բերաւ :  
«Յանգի ապստամբութիւնը կտխորդութեան մեղքին պէս, ու կամակորութիւնը կռապաշտութեան պէս է. որովհետեւ դուն Տէրոջը խօսքը մեքմեցիր, Անիկա ալ քեզ մեքմեց՝ որ քագաւոր չըլլաս:» Հմբ. 23:
15. Յուդայէն մէկ մարգարէ մը ի՞նչ պատուէր ստացած էր, երբ Իսրայէլի կռապաշտութեանը դէմ պիտի վկայէր :  
«Եւ Ասուծոյ մարդը թագաւորին ըսաւ, 'Եթէ ինձի քու տանդ կէսն ալ տաս. քեզի հետ պիտի չերթամ', ու այս տեղս հաց պիտի չուտեմ, ո՛չ ալ ջուր խմեմ. վասն զի Տէրը Իր խօսքովը ինձի այսպէս պատուիրեց ու ըսաւ, Հաց չուտես ու ջուր չխմես, ու գացած նամբայէդ չդառնաս':» Գ թագ. ժ. Գ. 8, 9:



16. Ի՞նչ առերեւոյթ հակառակ պատուէր զինքը մղեց  
եա դառնալու, երբ տուն կը դառնար ինքը :  
« Բայց անիկա ըսաւ անոր, ես ալ քեզի պէս մարգարէ եմ, ու  
մէկ հրեշտակ մը ինծի հետ Տէրոջը խօսքովը խօսեցաւ ու ըսաւ,  
Ջանիկա քեզի հետ տանի դարձուր՝ որ հաց ստէ ու  
ջուր խմէ: Սակայն սոսք գրուցեց անոր:» Հմբ. 48:
17. Ի՞նչ յառաջ եկաւ, երբ ան՝ Աստուծոյ որոշ խօսքէն  
աւելի հնազանդեցաւ այս պատուէրին :  
« Աւ անիկա Յուդայէն եկող Աստուծոյ մարդուն կանչելով ը-  
սաւ, 'Տէրը այսպէս կ'ըսէ, որովհետեւ դուն Տէրոջը խօսքին ան-  
հնազանդութիւն բերի, ու քու Տէր Աստուծոյդ քեզի պատ-  
ուիրած պատուէրը չպահեցիր, և դարձար, ու հաց կերար ու  
ջուր խմեցիր այն անգը՝ որուն համար քեզի ըսած էր որ հաց  
չուտե՛ս ու ջուր չխմե՛ս, քու մեռելիք քու հայրերուդ գե-  
րեզմանը պիտի չմտնէ':  
« Եւ հաց ուտելէն ու ջուր խմելէն ետքը անիկա իր ետ դարձու-  
ցած մարգարէին էլը պատրաստեց. ան ալ գնաց, ու ճամբուն  
մէջ մէկ առիւծ մը գտաւ զանիկա ու մեռցուց. և ա-  
նոր մեռելը ճամբուն վրայ փռուած մնաց, ու էլը անոր  
քովը կայներ էր, առիւծն ալ մեռելին քովը կայներ էր:» Հմբ.  
21—24:
18. Տէրը բծախնդիր է նաև Նոր Կտակարանին մէջ :  
« Աւստի ո՛վ որ այս ամենափոքր պատուիրանքներուն մէկը աւ-  
րէ, ու մարդոց այնպէս սորվեցնէ, անիկա ամենափոքր պիտի  
կոչուի երկնից թագաւորութեանը մէջ. բայց ո՛վ որ ընէ և  
սորվեցնէ, անիկա մեծ պիտի կոչուի երկնից թագաւորութեանը  
մէջ:» Մատ. Ե. 49:
19. Նոր Կտակարանին մէջ ունինք օրինակ մը՝ Աստու-  
ծոյ բացայայտ տնօրէնութեան, ինչպէս Հինին մէջ :  
« Բայց մէկ մարդ մը Անանիա անունով իր կնիկանը Սափիրայի  
հետ մէկտեղ սաացուածք մը ծախեց. և անոր գինէն խորեց,  
զոր կնիկն ալ գիտէր, ու մէկ բաժինը բերաւ առաքելոց ոտքը  
դրաւ: Եւ Պետրոս ըսաւ, 'Անանիա՛ ինչո՞ւ Սատանան քու  
սիրտդ լեցուց, որ դուն Հագույն Արքայ սուտ խօսիս, ու ազարա-  
կին գինէն խորես. չէ՞ որ քուկդ էր ան՝ քանի որ կեցեր էր, ու  
ծախուած ալ՝ քու իշխանութեանդ տակն էր. այդ ի՞նչ է որ

քու սրտիդ մէջ այս բանը գրիր. չէ՛ թէ մտրգոց սուս խօսեացար, այլ Աստուծոյ՛: Եւ Անանիա այս խօսքերը լսելով՝ ինկաւ ու հոգի տուաւ. և մեծ վախ ինկաւ ամենուն վրայ որ զայս լսեցին: Ու երիտասարդները ելան ու պատնեցին զանիկա, և դուրս հանելով թաղեցին: Ու երբ երեք ժամու չափ վրան անցաւ, անոր կնիկը չգիտնալով ինչ որ եղեր էր, ներս մտաւ. և Պետրոս ըստ անոր, Վսէ՛ ինձի, ագարակը ա՞յնչափ գնով ծախեցիք՝, ան ալ ըսաւ, Վայ՛, այնչափ: Ու Պետրոս ըստ անոր, Վայդ ի՞նչ է որ դուք մտարանեցաք Տէրոջը Հոգին փորձելու. ահա՛ քու էրկիդ թաղողներուն սաքերը գրանը քոֆն են, քեզ ալ դուրս պիտի հանեն՝: Եւ խկոյն՝ անոր սաքերուն քովը ինկաւ ու հոգի տուաւ. և երիտասարդները ներս մտնելով զանիկա մեռած գտան, ու հանեցին իր էրկանը քով թաղեցին: Եւ մեծ վախ մը ինկաւ բոլոր եկեղեցիին վրայ ու ամենուն վրայ որ այս բաները լսեցին:» Գործք Ե. 1—11:

20. Ինչո՞ւ գրուած են այս բոլոր բաները:

«Բայց այս ամէն բաները իբրև օրինակ կը պատահէր անոնց, իսկ մեզի որոնց դարերու վերջը հասաւ, խրատ ըլլալու համար գրուեցան:» Ա. կոր. Ժ. 11:

21. Յակոբոսի սորվեցուցածին համեմատ՝ ի՞նչ պարտինք ըլլալ ամէնքս ալ:

«Ուստի ամէն ազտեղութիւնը ու շարութեան տուաւելու թիւնը մկդի ձգելով, հեղութեամբ ընդունեցէ՛ք ձեր մէջը սերմանուած խօսքը, որ կրնայ ձեր հոգիները փրկել:

«Բայց խօսքը կասարողներ եղէք, եւ չէ՛ք միայն լսողներ՝ ինկզիցիցի խաբելով: Վասն զի եթէ մէկը միայն լսող ըլլայ խօսքին ու կատարող չըլլայ, անիկա նման է մտրգու մը՝ որ հայելիի մէջ աչքերը անկած իր բնական երեսը կը գիտէ. քոնի գիտելով տեսաւ ինքզինքը ու անցաւ զնաց, և շուտ մը մոռցաւ թէ ի՞նչպիսի մէկ մըն էր: Բայց ան որ ազատութեան կատարեալ օրէնքին աչք անկելով կը նայի, և անոր մէջ կը կենայ, անիկա խօսքը լսող ու մոռցող չըլլալով՝ այլ գործը կատարող, երանելի պիտի ըլլայ իր կատարելուն մէջ:» Յակ. Ա. 22—25:

22. Հա՞րկ է որ բոլոր պատուիրանքները պահենք:

«Բայց թէ որ աշառութիւն կ'ընէք, մեղք կը գործէք, ու օրէնքէն կը յանդիմանուիք օրինազանցներու պէս: Քանզի ո՛վ որ

բոլոր օրէնքը պահէ, ու մէկ բանի մը մէջ յանցաւոր  
ըլլայ, անիկա ամէնուն պարտական կ'ըլլայ:» Յակ. Բ.  
9, 10:

23. Ո՞վ միայն պիտի մտնէ Աստուծոյ թագաւորութիւնը :  
«Ո՛չ թէ ամէն մէկը որ ինծի 'Տէ՛ր՝ Տէ՛ր'՝ կ'ըսէ, պիտի մտնէ  
երկնից թագաւորութիւնը, այլ անիկա որ Իմ երկնաւոր  
Հօրս կամքը կը կատարէ:» Մատ. Է. 21:
24. Աստուծոյ խօսքին հետեւողները ի՞նչ բանի նման-  
ցուած են :  
«Արդ ո՞վ որ այս Իմ խօսքերս կը լսէ ու կը կատարէ զանոնք,  
զանիկա պիտի նմանցնեմ խելացի մարդու մը՝ որ իր տունը  
վէժի վրայ շինեց. և անձրե իջաւ ու գետերը վաղեցին ու  
հովերը փչեցին, և զարկին այն տանը, ու չփլաւ քանդի վէժի  
վրայ հաստատուած էր:» Հմբք. 24, 25:
25. Անհնազանդները ի՞նչ բանի նմանցուած են :  
«Եւ ո՞վ որ այս Իմ խօսքերս կը լսէ ու չի կատարէր զանոնք, կը  
նմանի անխելի մարդու մը՝ որ իր տունը աւազի վրայ  
շինեց. և անձրե իջաւ ու գետերը վաղեցին ու հովերը փչեցին,  
և զարկին այն տանը, ու փլաւ, և մեծ էր անոր կործանումը:»  
Հմբք. 26, 27:
26. Մեր առ Աստուած ունեցած սէրը ի՞նչպէս կ'ապա-  
ցուցանենք :  
«Քանզի ասիկա է Աստուծոյ սէրը, որ Անոր պատի-  
րանքները պահենք, և Անոր պատուիրանքները ծանր բան  
չեն:» Ա Յովհ. Է. 3:
27. Տէրը ի՞նչ կանոն կուտայ մեզի՝ որով կարենանք  
դատել մեր հնազանդութիւնը :  
«Ան որ քիչ բանի մէջ հաւատարիմ է, շատի մէջ ալ հաւա-  
տարիմ է. և ան որ քիչի մէջ անիրաւ է, շատի մէջ ալ անի-  
րաւ է » Ղուկ. ԺԳ. 10:





Միջազգային Տետրակի Ընկերութիւնը կը հրատարակէ Գրիստոնէական գիրքեր, թերթեր եւ տետրակներ աւելի քան 50 լեզուներով: Անգլիերէն, Գերմաներէն, Ֆրանսերէն, Սպաներէն, Հոլանտերէն, Տանիաարբերէն եւ Շուէտերէն գրացուցակները ճոխ են պարունակութեամբ: Նաեւ առատ հրատարակութիւնը կան Ռուսերէն, Փոլներէն, Պոնէմերէն, Էստոներէն, Լէտոներէն, Հունգարերէն, Իտալերէն, Փորթուկէզերէն, Բուլմաներէն, Հայերէն, Տաճկերէն, Յունարէն, Արաբերէն, եւն. լեզուներով: Գրացուցակներ ծրի կը ղրկուին:

Հասցէ. —

Société Internationale de Traités, Agence du Levant,  
Poste Allemande, Boîte 109.

(Turquie)

Galata, Constantinople.

**Hambourg**, Grindelberg 15a, Allemagne.  
**Bâle**, Nonnenweg 22, Suisse.  
**Watford**, Stanborough Park, Herts, Angleterre.  
**Christiania**, Akersgaden 74, Norvège.  
**Riga**, Kl. Newastr. 12, Russie.  
**New York City**, 32 Union Square East, Etats Unis.  
**Washington D. C.**, Takoma Park Station, Etats Unis.  
**Mountain View**, Santa Clara Co., California, Etats Unis.  
**Ottawa**, 173 Second Ave., Ontario, Canada.  
**Tacubaya**, D. F., 1420 Avenida 20, Mexico.  
**Port of Spain**, 31 Dundonald Street, Trinidad.  
**Sao Bernardo**, Estação S. P. R., Sao Paulo.  
**Buenos Aires**, Florida, F. C. R., Argentine.  
**Santiago**, Casilla 43, Correo 3, Chilie.  
**Cape Town**, 56 Roeland Street, Afrique de Sud.  
**Lucknow**, Banks Road; Inde.  
**Singapore**, 12 Dhoby Ghaut, Inde Oriental.  
**Shanghai**, Box 993, U. S. Postal Agency, Chine.  
**Tokio**, 30 Oiwake-cho Hongo-ku, Japon.  
**Warburton**, Victoria, Australie.  
**Cooranbong**, Avondale, N. S. W., Australie.

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԹԷՍՆԱՆ. Կ. ՊՈԼԻՍ, 1911

